ՊԱՐՈՒՅՐ ԶՈԹՅԱՆ

ԳԵՐՎԱԾ ԱՂՋԻԿԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

891.99
Զ-75
10299
Զորյան, Դ.
Գերված աղջիկը։
10ռ.
26/լii 695
10/x 73
758

ՊԱՐՈՒՅՐ ՋՈԹՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԳԵՐՎԱԾ ԱՂՋԻԿԸ

ՎԵՊ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ * 1947

ПАРУЙР ДЖОТЯН
Плененная девушка
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947

Նվիրում եմ Հայրենական Մեծ Պատերազմի ճակատներում զոհված հերոսների անմահ հիշատակին:

ՀԵՂԻՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1.

Աշնանային մռայլ երեկո էր։ Կովկասյան լեռներից փչում էր ցուրտ, դառնաշունչ քամի, որը սուլում էր դաշտավայրում և այդ սուլոցը խառնվում էր արդեն պարզորոշ լսվող թնդանոթային որոտի ու մարտի աղմուկի հետ։

Այդ ժամանակ դաշտավայրով դեպի Ներքին Նաուր գյուղն էր շարժվում Կարմիր Բանակի մի զորամաս։ Ճանապարհը ցեխ էր, և գումակի ձիերն անգամ դժվար էին քայլում, իսկ ճանապարհի փոքր վերելքների ժամանակ կանգ էին առնում փնչացնելով և հրաժարվում քայլ անգամ փոխելուց։

Մարտիկներն ստիպված էին ոչ միայն եռանդակներով տարվող սպառազինության մի մասը վերցնել, այլև այդպիսի տեղերում, չնայած և իրենց անասելի հոգնածությանը, օգնել ձիերին, հրել ձեռքերով և ուսերով, դուրս բերել թաղված անիվները։

— Հապա՛, մեկ էլ վերցնե՛լ...— ձայն էր տալիս գնդացրային դասակի հրամանատար՝ լեյտենանտ Գրիգոր Գրիգորյանը՝ իր հաղթ մարմնի ողջ ուժերը լարելով և ուսով մտնելով իր դասակի եռանդակի տակ, որի երկու անիվներն այդ ժամանակ խորը թաղվել էին։

— Բոլորդ միանգամից,— լսվում էր սերժանտ Հրմայակ Վարդանյանի ձայնը։ Նա քրտնած քաշում էր թաղված անիվների մեկի ձողերից։

Վասկա՛,— խռպոտ ձայնով գոչում էր կառավարը՝

անխնա հարվածելով ձիերից մեկին, որը համառում էր, չէր քաշում և ամեն զարկի հետ աքացի էր տալիս:

— Սերժա՛նտ, կանչիր մարտիկներին, բոլորը չեն օգնում, սա ի՛նչ բան է,—ասաց Գրիգորյանը, երբ տեսավ, որ միայն մի քանի մարտիկներ են հրում իր հետ և լայն ճակատից քրտինքը մաքրելով, խորը շունչ քաշեց:

Սերժանտ Վարդանյանը կատարեց հրամանը՝ վազելով, դասակի առաջ ընկած մարտիկներին ետ բերեց, որոնք եռանդագին գործի կպան:

— Է՛յ, ո՞ւր է կավալերիստը, թող ձիու սանձից քաշի,— մեկ էլ ձայն տվեց լեյտենանտ Գրիգորյանը, հայացքը հածելով շուրջը:

— Ա՛յ, ի՛նչ եմ ասել, իսկական նրա գործը գտար, ընկեր լեյտենանտ,— կատակեց մի մարտիկ, որը մինչև ծնկները խրվել էր ցեխի մեջ:

— Չէ, թող ձիուն նստի,— ավելացրեց մի ուրիշը՝ քիթը ցեխոտ ձեռքով մաքրելով և ծիծաղելով:

— Կ. բանակային Իսաև,—բղավեց սերժանտ Վարդանյանը, բայց պատասխան չկար:

— Կավալերիստ,— ձայնեցին ոմանք: Դարձյալ ոչ մի ձայն:—Է՛, երևի... դե արդեն ճակատին շատ ենք մոտեցել,— ասաց Պետրովը:

— Ետ ընկած կլինի,— առանց նայելու կասկած հայտնողին, հարեց լեյտենանտը և թողնելով եռանդակը, որն արդեն շարժվել էր տեղից, դարձավ Վարդանյանին ու հրամայեց.

— Անմիջապես գտնել Իսաևին: Քեզ հետ վերցրու մարտիկ Գրոմովին, իսկ մեզ կգտնեք Ներքին Նաուրում:

— Գտնել Իսաևին,— պատվի վերցնելով ասաց Վարդանյանը, որը Գրիգորյանի մոտիկ ազգականն էր՝ հորեղբոր տղան, չնայած տարբեր ազգանունով էր գրվում և ի դեպ ասած, դիմագծերով զարմանալի նման էր նրան: Նա իր հետ վերցնելով կարմիր բանակային

Գրոմովին, անջատվեց ընկերներից ու Գրոմովի հետ դարձավ եկած ճանապարհով, գտնելու կորած Իսաևին, որին դասակում Կավալերիստ մականունն էին տալիս։

— Օ՛ֆ, այդ մարդը կատարյալ փորձանք դարձավ մեր գլխին,— կրկնում էր Վարդանյանը՝ միաժամանակ հայհոյելով Կավալերիստին։

Գրոմովը, որ շատ վաղուց չէր, ինչ ուրիշ դասակից տեղափոխվել էր այդ դասակը, լավ չէր ճանաչում Իսաևին և Վարդանյանի հետ ուղարկվեց՝ միայն տեղանքին լավ ծանոթ լինելու պատճառով։ Նա իր մանկական անմեղությամբ և հետաքրքրությամբ լի հայացքը հառելով Վարդանյանի դեմքին հարցրեց.

— Էդ ո՞ր մեկն է ու ինչո՞ւ են անունը Կավալերիստ դրել։

— Դա աշխարհիս առաջին սրիկան է, ես դրա...— ասաց Վարդանյանը սայթաքելով և քիչ էր մնացել ընկնի, եթե ձեռքը չգցեր Գրոմովի հակագազի պայուսակից, ու խոսքը շարունակեց.

— Դա, ախպերս, կատարյալ սիմուլյանտ է, մի պատիժ ու փորձանք։ Թե գտել եմ, դու տես՝ ավազակին ինչ եմ անելու...

— Ախր էդ ո՞ր մեկն է։

— Սև աչք-ունքով, կարճ բեղերով...

— Հա՜, հա՜, իմացա, ուրեմն սիմուլյա՞նտ է։

— Սիմուլյանտ, թե սիմուլյանտի նմա՛ն։ Ես ո՞ր մեկն ասեմ դրա արարքներից։ Ա՛յ սիրելիս, ա՛յ, օրինակի համար վերցնենք ամենահասարակ բանը. հագուստի հարդարանքն ի՞նչ է, չի սովորել։ Դրան չկարողացանք գոտին մարդավարի կապել տալ, շինելն ինչպես հարկն է կոճկել տալ։ Նայելիս՝ կարծես հագուստը թափվում է վրայից, իսկ վերակարգի գնալիս մեկը պետք է, որ դրա գոտին ձգի, հագուստը հարդարի։

— Այդ բոլորն անելուց հետո, հիմա դու տես Կավալերիստիս, կանգնած է պահակակետում և ասենք,

հանկարծ նկատում է հրամկազմից ու հատկապես բարձըր հրամկազմից որևէ մեկին գալիս, տես ի՛նչ է անում...

Մի անգամ դրան նորահարսի նման երեք–չորս հոգով զուգեցինք, և դա պահակ կանգնեց զորանոցի մուտքի առաջ։ Ես էլ լավ բացատրել էի, թե չապես ու չապես, որ հանկարծ մայորը գա, ինչպես պիտի պատվի առնես, կամ ասենք՝ ինքը գնդապետը գա...

— Հիմա դա կանգնած է, սատանան տանի, ես էլ ջոկի հետ պարապում եմ. մեկ էլ օրապահը գոռաց. «Զգա՜ստ...» Ամեն մի շարժում դադարեց, բոլորս զգաստ կանգնեցինք, գնդապետն էր գալիս, դիվիզիայի հրամանատար՝ ընկեր Մելիքյանը, մի կրակոտ մարդ, կարգ ու կանոնի շատ նախանձախնդիր։ Միայն աչքս Կավալերիստի կողմն էր, թե տեսնեմ ո՛նց է եֆրեյտորական բարև տալու գնդապետին։ Սատանի ծընունդը գնդապետին նկատեց թե չէ, ի՛նչ տեսնեմ, ինչպես մի գժված, քաշեց գոտու ծայրը՝ գյուղական գալլաքի նման առջևից կախ գցեց, շինելը ծալ-ծալ հավաքեց փորի վրա, գլխարկը ճմռեց ու կծկված կանգնեց հրացանը գրկած...

— «Եֆրեյտորական բարև...»

Ճիշտ և ճիշտ, բայց դեռ լսիր. գնդապետը դրան նկատեց, մոտեցավ և սկսեց ծիծաղել։ Մինչդեռ գնդի օրապահ լեյտենանտը շնչասպառ վազելով մոտեցավ և պատվի վերցնելով սկսեց արագ զեկուցել, թե ամեն ինչ կարգին է, գունդը պարապում է, գնդապետը ձեռքով արհամարհական նշան արավ և ակներև դժվարությամբ զսպելով ծիծաղը, դեմքին մռայլ արտահայտություն տվեց ու գոռաց՝ հեգնական տոնով կրկնելով օրապահի բառերը. «Ամեն ինչ կարգին է, իսկ ձեր այս խրտվիլակը ճիշտ որ գերազանց է։ Անմիջապես փոխել դրան, դասակի հրամանատարին կանչել ինձ մոտ»։

Կավալերիստի երեսից լեյտենանտ Գրիգորյանը հանդիմանություն ստացավ։ Ախր ո՛ր մեկն ասեմ. մի

օր քիչ էր մնացել, որ մեր բանակայիններից՝ Սիմոնյանին սպանի... Եվ ահա թե ինչպես. զորանոցում պարապմունքից հետո զենքն էինք մաքրում: Գրիգորյանը մի երկուսին նկատողություն արավ, թե՝ տղերք, միշտ զգույշ՝ վայրիջույց մեխանիզմն ստուգելիս հրացանի փողը բարձր կպահեք: Լավ իմացեք, ասավ,— որ հրացանը տարին մի անգամ, թեկուզ և դատարկ, ինքն իրեն կրակում է: Միշտ զգույշ, կարող է փամփուշտ մոռացած լինեք:

Լեյտենանտի խոսքը դեռ բերանումն էր, երբ էդ մեր ապուշը բղավեց, թե՝ ընկեր լեյտենանտ, ես վերջացրի մաքրելը և հրացանը հորիզոնական բռնած քաշեց ձգանը, որպես թե մարտական ոտքից ազատելու համար: Հրացանը որոտաց, Սիմոնյանի գլխարկը գըլխից թռավ և գնդակը հող ու փոշի բարձրացնելով մեխվեց պատի մեջ...

Տաս օր էլ այս անգամ կալանք ստացավ Կավալերիստը, բայց թե ի՞նչ օգուտ: Սկզբում այդպես ապուշ էր ձևանում, չէր սովորում, կարծելով թե այդպիսով կազատվի բանակից: Ա՛յ, լավ հիշեցի. մի անգամ էլ...

Սակայն Վարդանյանն ընդհատեց պատմությունը, նկատելով, որ ճանապարհով մարդիկ են գալիս ու դարձավ Գրոմովին:

— Ուշադիր եղիր, հանկարծ դրանց մեջ կլինի «հերոսը»:

Բանակայինները մոտեցան, և Վարդանյանի այն հարցին, թե այսպիսի բանակային չե՞ք տեսել, նրանք բացասական պատասխան տվին ու անցան:

— Պատմությունդ շարունակիր,— մի քիչ լուռ քայլելուց հետո ասաց Գրոմովը:

— Արի մեկ-մեկ հատ ծխենք, հետո:

— Ծխենք:

Նրանք մեկական ծխախոտ վառեցին ու ծխելով շարունակեցին ճանապարհը:

Վարդանյանը շարունակեց.

Այս բոլորից հետո տեսնելով, որ բան չի դուրս գալիս, անվերջ անհերթ վերակարգ է ստանում, կամ արգելափակվում, սկսեց հիվանդ ձևանալ: Ռոքերը հազիվ քարշ էր տալիս ու մեկ էլ տեսար փորը բռնեց, թե՝ վայ մեռա...

«Այ ջհանդամին մեռնես, էդ հենց վերակարգի ժամանա՞կ է բռնում քո փորացավը»,—բղավում էր լեյտենանտը շարունակ, նկատելով, որ նա ձևացնում է, մանավանդ, որ բժիշկն էլ լավ քննելուց հետո, միշտ գլուխն էր շարժում և ասում՝ «ոչինչ չկա»:

— Իսկ ինչո՞ւ են Կավալերիստ ասում,— հարցրեց Գրոմովը:

— Որովհետև դասակի հրամանատար ընկեր Գրիգորյանը մի անգամ, երբ հեծելազորային դպրոցի համար մարդիկ էին պահանջել, մեր դասակի երկու ճարպիկ տղաների հետ, թե ինչպես պատահեց, դրան էլ ուղարկեց: Անցավ տասնհինգ օր, և մի գեղեցիկ երեկո, երբ պարապմունքից նոր էինք վերադարձել, մեկ էլ աչքդ բարին տեսնի, տեսնենք մեր Իսաևին «հանդիսավոր» քայլվածքով՝ կաղալով, գլխաբաց (հետո իմացանք, որ գլխարկը ճանապարհին կորցրել է...), առանց գոտու, մի բանակայինի ուղեկցությամբ մտավ զորանոց:

Անծանոթ բանակայինը ինչ որ զեկուցեց Գրիգորյանին և թողեց գնաց: Բոլորս ծիծաղելով հավաքվեցինք Իսաևի շուրջը:

— Օ՜, բարև, բարով ես եկել, սիրելի Կավալերիստ, իսկ ո՞ւր են խթանները, սուրդ,— ասաց հեգնանքով լեյտենանտը՝ միաժամանակ ձեռքը մեկնելով նրան:

Կավալերիստը տեսնելով հետաքրքրությամբ իրեն նայող ու ժպտացող դեմքերը, ինքն էլ ժպտաց:

— Խե՛ր լինի, ինչո՞ւ ես կաղում, երևի ձիուց ընկա՞ր,— շարունակեց լեյտենանտը՝ մեզ աչքով անելով: Ապա դրանից հետո, միշտ, Երեկոները քնելու ժամանակ, մենք Կավալերիստին գրկելով էինք բարձրացնում նառի վրա, իսկ առավոտներն էլ նա դարձյալ օգնու-

Թյամբ էր իջնում այնտեղից, երբ Թե չէր կարողանում...

Միայն զարմանքն այն է, որ սկզբում, նոր բանակ եկած ժամանակ, դա այդպես չէր: Նույնիսկ մի անգամ շնորհակալություն ստացավ շարքի առաջ: Տեսքին նայողն էլ, հենց դեմքից դատելով կասեր, որ կարգին տղամարդ է. բայց Թե ինչո՞ւ այդպես փչացավ, ոչ մեկս չկարողացանք իմանալ:

Վարդանյանն ու Գրոմովը երկար ժամանակ շարունակում էին որոնումը՝ խճուղով գնալով: Նրանք հարցնում էին բոլոր պատահողներին, բայց ոչ ոք տեղեկություն չուներ Կավալերիստի մասին:

Հանկարծ մոտիկից մեկն սկսեց ավտոմատից կրակել և մի քանի գնդակներ բզզալով անցան Վարդանյանի ու Գրոմովի գլխավերևով:

— Պառկե՛լ,— կարճ հրամայեց Վարդանյանը՝ երկար ու մեկ շրմփալով ճանապարհի ցեխի մեջ: Գրոմովը հետևեց նրան: Նույն պահին մեծ ոստյուններ գործելով, մի մարդ պառկածների առջևից կտրեց- անցավ ճանապարհը: Նա չերքեզական տարազով էր: Հանկարծ ճանապարհի կողքից, այն ուղղությամբ, ուր անհայտացավ վազող մարդը, պայթյուն լսվեց ու դրա հետ միաժամանակ՝ ճիչ և մի քիչ հետո, պարզորոշ կերպով՝ հետևյալ բառերը.

— Վա՛յ, օգնեցեք...

— Արևովս եմ երդվում, այս մեր Կավալերիստի ձայնն է,— ասաց Վարդանյանը՝ տեղից կանգնելով և խողովակը սրած սկսեց նայել ձայնի ուղղությամբ:

— Սա ի՞նչ հանելուկ է,— խոսեց և Գրոմովը: Նույն պահին, երբ Վարդանյանն ու Գրոմովը պատրաստվում էին շարժվել օգնություն խնդրող ձայնի ուղղությամբ, հանկարծ ավտոմատը ձեռքին մի բանակային հայտնվեց՝ վազելով ու նկատելով ճանապարհին կանգնած երկու բանակայիններին, ինքն էլ կանգառավ և հևալով հարցրեց,— ո՞ր կողմը փախավ, չիմացա՞ք...

— Իսկ ո՞վ էր այդ փախչողը...

— Դիվերսանտ էր, բռնել էինք, շտաբն էի տանում, փախավ շան որդին. ո՞ր կողմը փախավ,— ասաց վրա տալով բանակայինը և հարցական նայեց տղաներին:

— Ա՛յ, այսպես փախավ,— պատասխանեց Գրոմովը և ձեռքով ցույց տվեց ճանապարհի ձախ կողմը:

Բանակայինն ավտոմատի մեջ նոր դիսկ դրեց և շարունակեց վազել ցույց տված ուղղությամբ, Վարդանյանն ու Գրոմովն ուղղվեցին օգնություն կանչողի կողմը, որն սկսել էր երգեցիկ ձայնով հառաչանքներ արձակել:

Նրանք ճանապարհից դուրս գալով զգուշությամբ շարժվեցին դեպի ձախ և արդեն մոտ էին հառաչող մարդուն, երբ մոտիկում կարմիր ու դեղին երանգի՝ սուր լեզվակներով մի բոց երևաց գետնի վրա և դարձյալ ուժեղ պայթյուն լսվեց ու ծանր շրմփոցով մեկը տապալվեց:

Վարդանյանն ու Գրոմովը կանգնեցին, և Վարդանյանը տխուր շեշտով ասաց.

— Մենք գտնվում ենք ականապատված դաշտում. այլևս ոչ մի շարժում...

— Երևի հետապնդող բանակայինն էր, որ ականի պատահեց,— ասաց Գրոմովը հառաչելով:

— Ափսո՜ս:

— Դե, առաջին պայթյունի ժամանակ էլ սրիկան ընկած կլինի,— խոսեց Վարդանյանը:

— Վա՜յ, վա՜յ,— լսվեց դարձյալ և այս անգամ արդեն շատ մոտիկից: Պառկածներն ամպի տակից նոր դուրս եկած լուսնի լույսով տեսան մի բանակայինի կերպարանք, որը ճոճվելով ու հառաչելով, շարժվում էր դեպի իրենց:

— Իսաև՞,— ձայն տվեց Վարդանյանը:

— Ես ե՛մ, ես ե՛մ, ընկեր սերժանտ...

— Վայ շան մե՛ծ, հիմա ո՞նց ես քեզ շան սատակ

անեմ,— ասաց Վարդանյանն սպառնագին և ավելացրեց,— ինչո՞ւ ես հառաչում, չլինի՞ կպավ։

— Կպա՛վ, կպա՛վ, ձեռքիս է կպել։

— Դե ես գիտեմ, որ վերջը դու հենց էդպես չան սատակ պիտի լինես, առանց մի հիտլերական անգամ սպանելու։ Մի հարցնող լինի, ինչի՞ ես եկել ընկել, ի՞նչ ես շինում այստեղ...

— Հոգնել էի, մութն ընկավ, ճանապարհը կորցրի, ընկեր սերժանտ։

— Իսկ վերքդ մեծ է՞, կապիր և մի շարժվիր տեղից, հասկանո՞ւմ ես, թե չէ երեքս էլ օդը կթռչենք։ Մենք ականապատված դաշտ ենք ընկել։

— Բա հիմի ես ի՞նչ անեմ։

— Կանգնի՛ր անշարժ, ինչպես պոստում։ Ոչ մի քայլ չանես, մինչև լուսանա և մի կերպ, գուցե անփորձանք դուրս գանք այս անիծյալ դաշտից։

Վարդանյանն ինքն էլ մնաց մեխված վիճակում և նույնը հրամայեց անել Գրոմովին ու Կավալերիստին։

Այդպես նրանք մնացին մի քանի ժամ կանգնած՝ երբեմն բառեր փոխանակելով և ապա լռելով՝ ամեն մեկը տարված իր մտքերով։ Հաճախ հնդյունով նրանց գլխավերևից օդանավեր էին անցնում դեպի ռազմաճակատի գիծը։ Շուտով, ակամա «պահակ կանգնածների» ուշադրությունը գրավեցին մի երեք կիլոմետրի վրա երևացող կրակի օձագալար, մուգ բոսորագույն հսկա լեզուները։

— Այդ Բեսլան կայարանն է այրվում,— ասաց Գրոմովը։

Մինչ այդ լսվող ճակատամարտի աղմուկն ավելի սաստկացավ։ Այրվող Բեսլանի վրա բորբոքվում էր օդային մարտը։

— Այո՛, այդ Բեսլանն է այրվում, ա՛խ,— հանկարծ ծանր թառանչ արձակեց Կավալերիստը։

— Ի՞նչ, Իսաև, ինչպես տեսնում եմ, մարդկային բոլոր ազնիվ զգացմունքները կարծես չեն մեռել քո մեջ... Քեզ ցա՞վ է պատճառում մեր հայրենիքի ավե-

րումը... բայց ի՞նչպես հասկանալ քո ամոթալի արարքները:

— Սերժա՛նտ, ամոթանք քիչ տուր ինձ: Ես լեռնցի եմ... այսօր կամ վաղը ճակատ ենք մտնելու և շատ հավանական է, որ այս ճանապարհներով էլ ետ չդառնանք: Ուզում եմ սրտաբաց լինել, սիրտս լիքն է, ուզում եմ դատարկել և հատկապես քո առաջ պիտի բանամ սիրտս, որովհետև դու վատ չես եղել իմ հանդեպ:

— Այն, ինչ որ ես արել եմ, արել եմ գիտակցաբար. կեղծել եմ, ձևացրել, ինչպես դու ես հաճախ ասել՝ սիմուլյանտություն եմ արել: Իմ ողջ նպատակն է եղել, որպես անպետքի ազատվել բանակից և ոչ այնքան բանակից, որքան ճակատից: Այդ բանի համար ես ստորացել եմ մինչ այն աստիճան, որ ինքս էլ իմ աչքում զզվելի եմ դարձել. բայց, բարեկամս, չկարծես, թե այդ բոլորը այն բանի համար, որ ես դողացել եմ մահից կամ սիրահարված եմ կյանքի վրա... Ես վրեժ ունեմ լուծելու, արյան վրեժ... Եվ այդ է պատճառը, որ ամեն ինչ արել եմ մինչ օրս՝ բանակից ազատվելու համար: Դրա պատճառով է, որ սարսափում եմ ճակատից՝ վախենալով, որ կարող է հանկարծ սպանվեմ և վրեժս մնա չլուծված...

— Ժամանակ ես գտել անձնական վրեժի մասին մտածելու,— ասաց Վարդանյանը կշտամբական շեշտով, իսկ Գրոմովը մտածում էր, թե արդյոք այդ ինչ վրեժ պիտի լինի: «Հնարում է երևի»,— եզրափակեց նա:

— Մենք բոլորս հիմա մի մեծ վրեժ ունենք լուծելու, Իսաև, արյունակզակ ֆաշիստներից լուծելիք վրեժն է այդ... Դու կարող ես և պիտի դառնաս իսկական մարտիկ և միայն այդ ժամանակ կարժանանաս բոլորիս անկեղծ սիրուն և բարեկամությանը,— ասաց Վարդանյանը:

Արդեն արշալույս էր: Ցուրտը սաստկացավ: Իսաևը, որ սերժանտի և Գրոմովի պես հարյուր անգամ նստել էր ու կանգնել իր տեղում, ցրտից ատամ-ատա-

մի էր խփում և փչելով աշխատում էր տաքացնել ձեռքերը:

— Ա՛խ, Իսահ, Իսահ, էս ինչ բերիր դու մեր գլխին,— ասաց Գրոմովը հառաչելով,— հիմի տղերքը լավ հանգստացած, իսկ մենք էստեղ...

— Արդեն լույս է, մնում է մի քիչ խելքով շարժվել, թե չէ կորած ենք,— ընդմիջեց նրանց Վարդանյանը:

— Ի՞նչպես դուրս գանք,— հարցրեց տեղում կկըդած Գրոմովը, նայելով ցրտից գունատված Վարդանյանի գեղեցիկ դեմքին, որի մի այտը հագուստի նման ցեխոտվել էր:

— Ինչպես դուրս գա՞նք, հենց բանն էլ այդ է:

— Գնանք դեպի ճանապարհը, էդ էլ մեր բախտը, ինչ կլինի, կլինի,—ասաց Իսահը նայելով արդեն պարզ երևացող ճանապարհին:

— Ո՛չ, բախտն այստեղ գործ չունի,— ասաց Վարդանյանը,—լավն այն է, որ հենց կարգին ցեխ է: Մենք պետք ուշադիր դիտենք և վերադառնանք ճիշտ այն տեղով, որով եկել ենք— մեր հետքերով: Հիմա խնդիրն այն է, որ Իսահը անփորձ հասնի մեր կանգնած տեղը:

Իսահը մի հինգ մետր հեռու էր գտնվում Վարդանյանից և Գրոմովից և այդ հինգ մետրն անցնելը ճակատագրական կարող էր լինել երեքի համար...

— Իսկ ես ո՞նց անեմ, ընկեր սերժանտ,— հարցրեց Իսահը:

— Դարձյալ հույսներս հետքերի վրա պետք դընենք, բայց ինչպես տեսնում եմ, հարևան ականի պայթյունից ցրված հողն այդտեղ ծածկել է ամեն մի հետք և դու էժան ես պրծել, Իսահ...

— Վա՛հ, այս ի՞նչ է,— բացականչեց հանկարծ Իսահը՝ իրենից մոտիկ մի տարօրինակ բան նկատելով:

— Աստված իմ, ձեռք է, մարդու ձեռք,— ավելացրեց նա այլայլված դիտելով:

Նրանք երեքով սկսեցին ուշադիր դիտել և տեսան՝

ուսից կտրված, շինելի հոշոտված, արյունոտ ու ցեխոտ թևքի մեջ ընկած մի ձեռք, որի մատները չռված էին այնպես, կարծես ուզում էր ինչ որ բան բռնել:

— Ա՜խ, դա հետապնդող բանակայինն է. տես, այնտեղ հեռվում էլ դիակն է ընկած,— նկատեց Վարդանյանը:

— Դիվերսանտից ոչ մի հետք չկա, երևի հօդս է ցնդել. հարյուր կտոր եղած կլինի,— խոսեց և Գրոմովը:

— Ի՞նչ իմանանք, գուցե մեր Իսաևի նման թեթև վերքով է պրծել:

Այնուհետև Վարդանյանն սկսեց ուշադիր զննել այն տարածությունը, որ ընկած էր իրենց մոտից մինչև ճանապարհը, աշխատելով որոշել իրենց թողած հետքերը:

— Դե անցնենք գործի,— ասաց Վարդանյանը, դիտելով տեղում մեխված Կավալերիձեին ու ձեռքը դրեց ճակատին:

— Իսաև, ուրիշ հնար չկա, ես այս կողմից, դու այդ կողմից, շատ զգուշությամբ՝ բահերով հողը քանդենք. այսինքն թեթև քերենք, ականները շատ խորը չեն թաղում, եթե լինեն, կնկատենք: Նրանք այդպես էլ արին ու շուտով ստուգվեց Իսաևից մինչև Վարդանյանն ու Գրոմովը եղած տարածությունը:

Բարեբախտաբար այդտեղ ականներ չկային թաղված: Կավալերիձեն անցավ Վարդանյանի մոտ: Այնուհետև Վարդանյանն սկսեց ուշադիր զննել այն տարածությունը, որը բաժանում էր իրենց՝ ճանապարհից:

Ցեխի պատճառով բավականին պարզ նկատվում էին այդ հետքերը և ահա նրանք միմյանց հետևից, մեծ զգուշությամբ ու մի քիչ էլ սրտի դողով, դարձան իրենց հետքերով և հասնելով խճուղուն, նոր միայն ազատ շունչ քաշեցին:

***

Դեպի ներքին Նաուր գյուղը տանող խճուղով շտապ քայլերով գնում էին Վարդանյանն ու իր երկու բանակայինները: Գնում էին ցեխի մեջ ամբողջապես կորած, հոգնած ու քաղցած:

— Շա՞տ է հեռու այդ Նաուրը,— հարցրեց Վարդանյանը իր կողքով քայլող Գրոմովին:

— Երեկոյան որ հասնենք, լավ է: Դեռ մի գյուղ էլ պիտի անցնենք, հետո:

Նրանք շարունակեցին դարձյալ լուռ ընթանալ:

— Սերժա՛նտ, տեսնո՞ւմ ես ճանապարհի եզրին ընկած եգիպտացորենի արտը,— տես, այս ուշ աշունքին անքաղ է մնացել,—հանկարծ խոսեց Գրոմովը:

— Տեսնում եմ, տեսնում, ա՛խ, ես այդ գերմանացիների...

— Իսաև, դե, մի պատմիր քո վրեժի պատմությունը,— ասաց Գրոմովը՝ հանկարծ հիշելով այդ մասին ասած Իսաևի խոսքերը:

— Հետո, Գրոմով, մի ուրիշ անգամ,— առանց ընկերոջը նայելու, խոսեց Իսաևը մտախոհ:

— Փախչել էիր ուզում երևի,— անկեղծ ասա,— հարեց Վարդանյանը՝ չեղակի նայելով նրան:

— Ոչ, ընկեր սերժանտ, ես փախչել չէի ուզում, չնայած մեր գյուղն այստեղ շատ մոտ է... ես մեկ մըտածեցի հանդիպել տուն... Բայց հետո մտածեցի, որ նա՝ իմ թշնամին, որ բանդիտ էր դարձել ու հաճախ գաղտնի լինում էր գյուղում իր բարեկամների մոտ, հիմա գերմանացիների կողմն անցած կլինի:

— Ա՛յ ինչ եմ ասել, խելոք ես մտածում, անպայման նրանց միացած կլինի, այլ կերպ չի կարող: Դըրանից էլ հաջող բա՞ն,— միասին կգնանք ռազմաճակատ ու դու անպայման նրան այնտեղ կհանդիպես:

— Կգնա՛նք, կգնա՛նք,— տնքալով պատասխանեց Իսաևը:

Արդեն երեկո էր, երբ երեք մարտիկներն իրենց

486—2

առջևում նկատեցին ծառերի մեջ կորած մի գյուղ: Շուտով նրանից հեռու նկատվեց և մի երկրորդը: Այն պահին, երբ երեկոյան աղջամուղջն իջավ ծածկելով դաշտավայրը, նրանք մտան գյուղ: Դա փոքր գյուղ էր: Փողոցը, որով նրանք սկսեցին քայլել, երկու կողմից ծառապատ էր, տները մեծ մասամբ մի հարկանի, դրսից սպիտակացրած: Նրանց մեծ մասի պատուհանները փակ էին:

Գյուղի ծայրամասում կիսաքանդ և լքված տներ կային: Նոր էր մթնել, սակայն փողոցում բնակիչներից ոչ ոք չէր երևում, երբեմն միայն բանակայիններ էին անցնում՝ հեծյալ կամ հետիոտն:

Վարդանյանը շտապեց մի բանակայինից տեղեկանալ, թե այդ ո՞ր գյուղն է: Բանակայինը, որ երկու պղնձակով ընթրիք էր տանում, ուսերը թոթվեց ու անցավ:

— Սարի Յուրդն է,— շտապեց հաղորդել Գրոմովը: Այստեղ և ռուսներ են ապրում և ինգուշներ,— ավելացրեց նա:

— Դե, տղերք, շտապենք Ներքին Նասր հասնել, անչափ ուշացանք, զորամասը կարող է այնտեղից շարժվել,— շտապեցրեց ընկերներին Վարդանյանը:

— Ախր սոված մեռանք, գոնե մի բան ճարեինք ուտելու,— ասաց Գրոմովը:

— Ինձ այնքան քաղցը չի տանջում հիմա, որքան ծարավը,— խոսեց Իսաևը, որ մինչ այդ լուռ էր:

— Լավ, տղերք, որ այդպես է, եկեք մտնենք այս տներից մեկը, ջուր խնդրենք, գուցե կարողանանք ուտելիք էլ գնել, ինձ մոտ փող կա,— ասաց Վարդանյանը:

Նրանք երեքով ուղևորվեցին մոտակա տնակը, որն առանձին էր կանգնած մյուսներից և որի վարագուրված փոքրիկ պատուհանի մի ճեղքից լույս էր երևում: Վարդանյանը դուռը բախեց: Ներսում լսվեցին աթոռներն այս ու այն կողմ հրելու ձայներ և մի առժա–

մանակ պատասխան չկար։ Վարդանյանը նորից բախեց դուռը և քրթմնջաց.

— Այստեղի բնակիչներն այնքան էլ բարյացակամ մարդիկ չեն երևում։

— Ո՞վ է,— լսվեց ներսից։

— Բաց արա, կարմիր բանակայիններ ենք, մի քիչ ջուր տուր խմենք։

Մեկը փնչալով և ոտքերը քստքստացնելով մոտեցավ դռանը։ Լսվեց փականի չխկոցը և դուռը բացվեց ու չեմքում երևաց կորացած մեջքով, ալեհեր, թավ հոնքերով ու ջրակալած աչքերով մի ինգուշ՝ ճրագը ձեռքին։ Նա մի դաժան հայացք գցեց ցեխոտված բանակայինների վրա և խուպոտ ձայնով ասաց.

— Ջուր ե՞ք...— այդ ժամանակ նրա հազը բռնեց և այնպես սկսեց հազալ, կարծես ուր որ էր, թոքերը բերանից դուրս էին թռչելու։

— Նայլա՛թ, նայլա՛թ,— ասաց նա՝ դադարելով հազալուց և հարցը լրացրեց՝ ճրագը մոտեցնելով Վարդանյանի դեմքին,— ջո՞ւր եք ուզում։

— Այո, հայրիկ, մեզ ջուր տուր խմենք։

— Ձեզ ջուր տամ խմեք,— կրկնեց ծերունի ինգուշը և ճակատը կնճռեց ու կարծես մոռանալով բանակայիններին, ինչ որ մտածմունքի մեջ ընկավ։

— Է՛յ, ծեր դև, մի՞թե այդպես է ձեր գյուղի կարգը. դուռը կտրել կանգնել ես ու ներս էլ չես հրավիրում, որ մի տաքանանք, մենք հո գերմանացի չե՞նք, որ այդպես խեթ-խեթ ես նայում,— ասաց Վարդանյանը՝ չկարողանալով բարկությունը զսպել։

— Համեցե՛ք, համեցե՛ք,— ձայնին սիրալիր տոն տալով, ասաց ծերունին և մի կողմ քաշվեց։

Տղաները մտան սենյակ և բոլորվեցին պատուհանի մոտ դրած վառարանի շուրջը։

— Օխա՛յ...— ասաց Գրոմովը,— սառած ձեռքերը մոտեցնելով վառարանին, իսկ Իսաևը նստելով հատակին, սկսեց թրջված կոշիկները հանել։

— Չեղավ, բարեկամ, մենք այդքան ժամանակ

չունենք,— ասաց Վարդանյանը՝ նրա ոտք չորացնելու պատրաստությունը տեսնելով,— չտապենք, գնանք:

Մինչ տղաները տաքանում էին, ծերունին ճրագը գնելով սեղանին, որի վրա բուխարայի մորթուց կարված մի ընտիր փափախ էր դրված, գնաց սենյակի անկյունը և վերցնելով այնտեղ դրված ջրի պղնձյա սափորը, մոտեցավ նրանց:

Վարդանյանը, որ ավտոմատը գիրկն առած նստել էր թախտին, վառարանի մոտ, ջուր խմելուց հետո սկսեց աչքի անցնել սենյակը:

Սենյակը բավականին ընդարձակ էր և կահավորված էր աղքատիկ: Բացի հնամաշ սեղանից ու ոտքը կոտրած աթոռներից, կար մի աթոռ և մի թախտ, որի վրա նստել էին տղաներից երկուսը: Սենյակի վերևի կողմը մի փոքրիկ պահարան էլ կար, որի վրա երկու միանման, բայց տարբեր մեծությամբ կճուճներ էին դրված, իսկ պահարանի կողքին մի քանի մեծ և փոքր արկղներ՝ **ֆաներից** պատրաստած:

— Քեզ բան ասի, չէ՞, կոշիկդ հագիր,— ասաց Վարդանյանը՝ հրելով հատակին նստած Իսաևին և ապա դիմեց ծերունուն, որը կրծքով հենվել էր սեղանին և արմունկներով կռթնել նրա վրա այնպես, որ բուխարայի փափախը ծածկել էր կրծքով.— Հայրի՛կ, այս ինչպե՞ս է, մենա՞կ ես ապրում:

— Մենակ եմ:

— Իսկ չե՞ս կարող մեզ մի քիչ հաց տալ փողով:

— Եվ կամ թե սապնով,—ասաց Գրոմովը ու սկսեց քանդել իր իրերի տոպրակի բերանը:

— Գրոմով, էդ արդեն չեղավ,— գլուխն օրորելով ասաց Վարդանյանը:

— Հա՞ց, հաց որտեղի՞ց տամ, գերմանացիք հացը տարել են,— խոսեց ծերունին և այնպես հորանջեց, որ թվաց թե կլանելու է իր առջև դրած ճրագը:

— Իսկ եթե նայեմ, քո արկղներում հաց չի՞ լինի,—ասաց Իսաևը: Ծերունու աղմկալի հազը այդ ժամանակ նորից բռնեց, որի պատճառով և ճրագը հան-

դավ։ Նույն բոպեին պահարանի մոտ դրված մեծ արկղներից մեկը ծածկող տախտակը զգույշ բարձրացավ և նրա տակից մարդկային մի զույգ աչքեր սկսեցին դիտել խավար սենյակը։ Մինչդեռ Վարդանյանը պատրաստվում էր վառել իր զաժիգալկան և այն որոնում էր գրպանում, Իսաևը լսելով արկղների կողմից եկած թեթև շրշյունը, հայացքը հառեց այն կողմը։ Նրա սրատես աչքերը վառարանի դռան անցքերից ընկած թույլ լույսի տակ նկատեցին բարձրացած կափարիչը և նրա տակ փայլող աչքերը և սարսուռ անցավ նրա մարմնով։ Նա բղավեց ձեռքը պարզելով՝ թե մարդ կա այնտեղ, ապա ոտքի փաթաթանը ձեռքից գցելով վեր թռավ տեղից,

— Ի՞նչ մարդ, որտե՞ղ,— ասաց Վարդանյանը՝ արդեն գտած զաժիգալկան վառելով։

Արկղի տախտակը վայր ընկավ աղմուկով ու արկղի միջից մի մարդ դուրս թռավ խռիվ մազերով, չերքեզկան հագին, դաշույնը ձեռքին։ Ծեր ինգուշն այդ նկատելով, նետվեց դեպի դուռը, դուրս փախավ սենյակից բղավելով.

— Փախի՛ր, շատվոր են...

Սակայն Վարդանյանը կանգնեց դռան մոտ և ավտոմատն ուղղելով արկղից հայտնված ու փախչել ցանկացող մարդուն, կտրեց նրա ճանապարհը որոտալով.

— Չշարժվես, կխփեմ։

Տեսնելով իրեն ուղղված ավտոմատի սև փողը, մարդը վարանեց և մի ցատկումով կպավ պատին, ձախ ձեռքը կիսով չափ առաջ պարզած ու մատերը չռած. կարծես ցանկանալով Վարդանյանի կրակելու դեպքում գնդակը բռնել, իսկ աջը, որով դաշույնն էր պահել՝ կրծքին կպցրած, սկսեց ահաբեկ հայացքով դիտել՝ մերթ սպառնագին զենքն իրեն ուղղած Վարդանյանին, մերթ Իսաևին, որ մի ոտքը բոբիկ կանգնած, ուշադիր և ստեպ-ստեպ նրան էր նայում և միաժամանակ իր հրացանի փականակը բանալով ու առաջ տալով, փամփուշտ էր տալիս փամփշտանոցը։

Գրոմովն էլ էր հրացանն էր ուղղել անծանոթին և նրա ուշադիր հայացքը անծանոթից անցնում էր Վարդանյանին՝ զգաստ սպասելով սերժանտի հրամանին։

— Գցիր դաշույնը և ձեռքերդ վեր,— խիստ տոնով հրամայեց Վարդանյանը։

Անծանոթը գցեց դաշույնը, որն ուղղահայաց ընկնելով ցցվեց հատակին, նրա ոտքերի մոտ և ձեռքերը կամաց վեր բարձրացրեց։

— Գրոմով, վառիր ճրագը,— լսվեց նորից Վարդանյանի ձայնը։

Մինչդեռ Գրոմովը վառարանից վառեց ճրագը և դրեց սեղանին, ձեռքերը բարձրացրած մարդու հայացքը հանդիպեց հրացանը դեպի իրեն ուղղած Իսակի հայացքին։

Իսակի դեմքը կենտրոնացավ. մի քանի վայրկյան նա աչքերով կարծես լափում էր նրան և հանկարծ ահեղագոչ ձայնով բղավեց.

— Ի՞նչ, այդ դո՞ւ ես, Քյազիմ։ Ես չե՞մ սխալվում...

Վարդանյանն ու Գրոմովը զարմացած նայելով մերթ նրան, մերթ ձեռքերը բարձրացրած հաղթանդամ մարդուն, նկատեցին, թե ինչպես մինչ այդ իրեն այնքան էլ չկորցրած, արտաքուստ ոչ այնքան վախեցած անծանոթը գունատվեց, դարձավ մահատիպ և գլխի խուփ մազերը ոզնու փշերի նման ցցվեցին։

— Ես եմ,— մի պահ լռելուց հետո պատասխանեց սարսափած անծանոթը։

— Դու ինձ ճանաչո՞ւմ ես,— գոչեց Իսակը՝ այտի մկանները դողացնելով ու հրացանը գցելով հատակին, ողջ իրանով առաջ ձգվեց։

— Լա՛վ եմ ճանաչում, Հեյդա՛ր,— եղավ պատասխանը։

— Ո՛չ, դու ինձ դեռ լավ չես ճանաչում, հիմա կճանաչես,— պատասխանեց Իսակը՝ հատակից վերցնելով դաշույնը։— Թող ձեզնից որևէ մեկը ձեռք չտա

այս մարդուն ու թող ոչ ոք էլ ինձ չօգնի այստեղ,—դիմեց նա ընկերներին:

— Դե կռվի՛ր, Քյաղիմ, թե տղամարդ ես, ես էլ եմ անզեն,— գոչեց Իսաևը և դաշույնը մի կողմ նետելով, ոստնեց Քյաղիմի վրա:

Ապշած Վարդանյանի ու Գրոմովի աչքերի առաջ սկսվեց մի մոլեգին մենամարտ:

Քյաղիմը, որի տարազն ու հասակը մարտիկներին համոզեցին, որ նա ականապատված դաշտով փախած դիվերսանտն է, Իսաևից հաղթանդամ մարդ էր և առաջին պահ թվաց Վարդանյանին, որ նա ջարդ ու փշուր կանի Իսաևին, նամանավանդ, որ Իսաևի ձեռքը մի փոքր վիրավոր էր և չնայած նրա զգուշացմանը` չմիջամտել, զենքը ձեռքին վազեց ընկերոջն օգնության, սակայն Իսաևը, որ արդեն մի ձեռքը գցել էր Քյաղիմի կոկորդից, աքացի տվեց Վարդանյանին, ի նշան այն բանի, թե հեռացիր...

Գրոմովը պահել էր ճրագը և այս ու այն կողմ էր փախցնում, որ կռվողները չհանգցնեն, իսկ Վարդանյանը մի պահ շփոթվեց` չիմանալով ինչ անել: Նա մեկ որոշեց մի գնդակով «հանգստացնել» դիվերսանտին, բայց և մտածեց, որ կենդանի լեզու է ընկել ձեռքը ու սկսեց բղավել` Քյաղիմին խեղդող Իսաևի վրա, թե բաց թող դրան, սակայն շուտով Քյաղիմին հաջողվեց իր կոկորդից պոկել Իսաևի պիրկ սեղմված ձեռքը և մի քանի ուժգին հարվածներ հասցնել նրա գլխին: Միմյանց ձգձգելով ու փոխադարձաբար հարվածներ տեղալով, նրանք կպան սեղանին, որը շրխկոցով տապալվեց գետին: Հանկարծ Իսաևն անսպասելի կերպով գործադրեց Կովկասյան գոտեմարտի ձևերից մեկը` ձեռքերը գցելով հակառակորդի գոտուց, ցնցումով քաշեց դեպի իրեն և վայրկենապես նստեց, որի հետևանքով Քյաղիմի հսկա մարմինը շեշտակի թռավ նրա գլխի վրայով և տապալվեց հատակին:

Աչքերն արյուն լցված Իսաևն անմիջապես թռավ

տեղից ու նստելով նրա կրծքին, զույգ ձեռքերով սկսեց խեղդել նրան:

Լսվեց Քյազիմի խռխռոցը և ոտքերի դոփյունը հատակին:

— Մի՛ սպանիր, մի՛ սպանիր,— բղավեց Վարդանյանը՝ նետվելով նրանց կողմը և աշխատելով Իսաևին հեռացնել Քյազիմից:

— Գրոմով, օգնի՛ր, պոկել չի լինում,— ասաց հուսահատված Վարդանյանը:

Այն պահին, երբ Գրոմովը ճրագը գնելով, պատրաստվում էր գնալ Վարդանյանին օգնության, նկատեց, որ խռխռացող և աչքերը դագաթը թռած Քյազիմն աջ ձեռքը մեկնած, ճանկռում էր հատակը՝ աշխատելով այնտեղ ընկած դաշույնը վերցնել: Գրոմովը ոտքով հեռու նետեց դաշույնը և Վարդանյանի հետ սկսեց քաշել Իսաևին՝ աշխատելով պոկել նրա ձեռքերը Քյազիմի կոկորդից, բայց հնար չեղավ: Իսաևը նրա կոկորդը բաց թողեց միայն այն ժամանակ, երբ նկատեց, որ թշնամու բերանից արյուն ժայթքեց և դուրս ընկած աչքերը հանգան: Ծանր հևոցով նա բարձրացավ դիակի վրայից՝ իր ճանկռված դեմքից արյունը սրբելով, ոտքով հրեց դիակն ու ասաց.

— Վերջապե՛ս վրեժս առա ես, և հիմա արդեն ես լավ կկռվեմ...

Այս խոսքերը նա արտասանեց առանց Վարդանյանին կամ Գրոմովին դիմելու: Վարդանյանն ու Գրոմովը մեկ դիակին էին նայում, մեկ Իսաևին, իսկ Իսաևը դեռ կրկնում էր,—առա՛, առա՛, վրեժս առա...

***

— Ապա մի ստուգիր դրա գրպանները,— դիմեց Վարդանյանը Գրոմովին ու մի ծխախոտ վառելով, նստեց դեռ հևացող և այլայլված Իսաևի մոտ, թախտի վրա:

Գրոմովը սպանվածին մանրակրկիտ խուզարկելուց

հետո նրա ծոցագրպանից հանեց թղթերի մի փոքր կապոց և հանձնեց Վարդանյանին:

Վարդանյանը ճրագին մոտենալով, սկսեց ուշի ուշով զննել թղթերը, որոնց մեջ կային գերմաներեն լեզվով գրված մի քանի գրություններ և ապա մի գյուղի հատակագիծ, որի վրա կարմիր խաչերով նշված էին մի քանի կետեր: Պլանի վրա նշումները կատարված էին ռուսերեն:

Վարդանյանն սկսեց ուշադիր դիտել այդ պլանը՝ կռթնելով սեղանին, նախօրոք Գրոմովին կանգնեցնելով դռան մոտ՝ դիվերսանտների այդ որջում հանկարծակիի և անակնկալի չհանդիպելու համար:

Կարմիր խաչով նշումներից մեկի տակ, որը գյուղի ծայրամասին մոտ և կենտրոնական փողոցի վրա էր գտնվում, գրված էր՝ դիվիզիայի շտաբ, գերեզմանոցին մոտ գտնված կետում՝ զինամթերքի պահեստ և այդպես, նշված էին ճակատամերձ գոտում գտնվող այդ բնակելի կետի ռազմական բոլոր օբեկտներն ու պահեստի ուժերի դասավորության տեղերը:

Վարդանյանը վերցրեց գերմաներեն գրություններից մեկը և սկսեց կարդալ՝ «Befehl»: «Ուրեմն՝ հրաման»,— մտածեց նա: Նա շարունակեց կարդալ, բայց հրամանի բովանդակությունը լավ չհասկացավ, որովհետև թերի բարձրագույն կրթություն ուներ: Եվ նա առաջին անգամ դառն կերպով զղջաց իր՝ լավ գերմաներեն չիմանալու համար, ու նրա առաջ կենդանի կանգնեց իր գերմաներենի դասախոսի ազնիվ դեմքը, որը վրդովված հայացքով դիտելով Վարդանյանին, կարծես հանդիմանելիս լիներ, ճիշտ այնպես, ինչպես դասերին՝ նրա վատ պատասխանների ժամանակ: Վարդանյանը թերթը դրեց սեղանին հեկեկանքի ձայն լսելով, ետ դարձավ դեպի թախտի վրա նստած Խասեն, որի ուսերը ցնցվում էին հեծկլտանքից:

— Խասե, այդ ի՞նչ է, դու լալիս ե՞ս, ի՞նչ է պատահել, կարծեմ այլևս տխրելու բան չունես: Դու լուծեցիր վրեժդ և այն էլ այնպիսի մի մար-

դուց, որը միայն քո Թշնամին չէ... Այ, ինչպես երեվում է այս Թղթերից, մի շատ վտանգավոր լրտես է եղել սա և երբ մենք այս Թղթերն ուր հարկն է հանձնենք, դու կտեսնես, որ փոքր գործ չենք կատարել:

Խասեը չպատասխանեց և ցեխոտ ձեռքով սրբեց իր արցունքները:

Վարդանյանը կարեկցանքով մոտեցավ նրան, ձեռքը դրեց ուսին և դիտելով նրա վշտահար դեմքը, ասաց,— ասա Խասե, ինչո՞ւ ես լալիս և վերջապես պատմիր, ո՞վ էր այս մարդը, որին դու խեղդամահ արիր:

— Երկար ու հին պատմություն է, սերժանտ, ես ըսպանեցի Քյազիմին, որն արյուն էր պարտք ինձ և այժմ, այդ պատմության հետ կապված հիշատակները նոր ուժով արթնացան իմ մեջ, հին վերքս բացվեց, սկսեց մխալ, կարծես կրակ կա դրված կրծքիս տակ...

— Իսկ ո՞ւմ էր սպանել Քյազիմը:

— Ում էր սպանե՞լ: Յոթ տարի աքսոր գնացած և նոր վերադարձած եղբորս է սպանել. հենց վերադարձի օրը, ճանապարհի վրա, մեր տուլի մոտ...

— Ի՞նչ ես ասում, Խասե...—կարեկցանքով լի ձայնով բացականչեց Վարդանյանը և խնդրեց նրան, որ մի քիչ հանգամանորեն պատմի:

— Լա՛վ,— ասաց Խասեր, էլի մի քիչ լռեց, ապա շարունակեց:— Ես մի մեծ եղբայր ունեի, անունը Ահմադ: Ահմադը ծեծել էր մեր տանուտերին ու հարկահավաքին, հարկի տեղ մեր ձին տանելու ժամանակ, և այդ պատճառով աքսորել էին նրան և լուր էինք ստացել հետո, որ իբր աքսորում մահացել է: Մեր ընտանիքում բոլորս, չնայած այն բանին, որ կորած էինք համարում նրան, սակայն մի գաղտնի հույս էինք փայփայում, որ ով գիտե, գուցե մի օր հայտնվի...

Գյուլումը— այդպես էր եղբորս կնոջ անունը—հաճախ լուռ արտասվում էր: Գյուլումը ձյունի և արյան խառնուրդի գեղեցկություն ունեցող մի ջահել կին էր, բոցոտ աչքերով: Եղբորս կորստից հետո, շատ երիտասարդներ փորձեցին տիրանալ նրան, շատերն էին այր—

վում այդ ցանկությունից, բայց նա այլև չէր համա-
րում իրեն և բոլորին մերժում էր, պատասխանելով,
որ նա կգա, նա կենդանի է:

Այդպես անցան երկար տարիներ: Ես, որ երե-
խա էի ու եղբորս հազիվ էի հիշում և ավելի շատ նրա
մասին պատկերացում ունեի մերոնց պատմածներից,
միշտ պատկերում էի նրան որպես ուժեղ ու ճարպիկ
մի կորիճ, բարի ժպիտը սիրուն աչքերում, սանձակո-
տոր նժույգին նստած ու երազում էի նրա մասին,
տենչում էի նրա վերադարձը:

Հաճախ պառկելով մեր տան մոտ ձորաբերա-
նին, ապառաժներից մեկի վրա, տարված այդ մտքով,
դիտում էի երկնի անտակ կապույտը, այդ կապույտի
մեջ լողացող ձյունաթույր ամպերը, որոնք մերթ վա-
զող եղնիկի, մերթ ուղտի ձևեր էին ընդունում:

Իսկ ներքևում, խորը ձորում, աղմկում էր լեռ-
նային գետակը, որի ջուրը վճիտ էր ինչպես կռունկի
աչք: Մի անգամ այդպես մի ապառաժի վրա պառ-
կած, լսելով ջրերի քաղցր ձայնը, միաժամանակ էլի
դիտում էի երկինքը, աշխարհից ամբողջապես վերա-
ցած:

...Ահա քիչ առաջ ցրված մի քանի ամպի քուլա-
ներ սկսեցին իրար միանալ և երկնքի փիրուզե վրա
գծագրվեց մի ջահել հեծյալ, ձին քառատրոփ վազքի
մեջ... Իսկ նրա առջևից `փախչող եղնիկը:

Օ՜, դա եղբորս պատկերն էր, սերժանտ, նրան
միշտ ես այդ դիրքով էի պատկերում: «Նա երկնքումն
է, նա որս է անում, արդյոք նա գիտե՞, որ ես՝ իր
փոքրիկ, բայց իրեն այնքա՜ն սիրող եղբայրը, դիտում
եմ իրեն»,—մտածում էի ես: «Ազի՛զ, մի ցած նայիր, մի
իջիր էլի, ախր կարոտից մենք պապանձվեցինք»,—
մրմնջում էի ես, ու անդունդի մեջ հոսող վտակի ձայ-
նը, երբեմն մոտիկս ճռվողյունով թռչող թռչունները և
այն ամենը, ինչ կար իմ շուրջը, ցնորք էր թվում, իսկ
իրականը՝ այն եթերային, ձյունի երանգով՝ կապույտ
դաշտերում արշավող կորիճ հեծյալը, որ իմ եղբայրն

էր… Եվ այդպես, ես միշտ երազում էի… Ու ինչպես ասացի, սիրելի սերժանտ, մենք ողջ ընտանիքով մի մուրազ ունեինք, մի կարոտ…

Եվ ահա մի օր, կարո՞ղ ես պատկերացնել, լուր ենք ստանում, այդ արդեն սովետական իշխանության օրով, որ եղբայրս գալիս է… Կենդանի է… Ազատվել ու տուն է գալիս, նրան հարևան գյուղում էին տեսել, և մեր բարեկամներից մեկը ձի նստելով, առաջ-առաջ եկել էր ուրախ լուրը հայտնելու: Մեր տունը կատարյալ հարսանքատուն դարձավ, ուրախությունից քիչ էր մնում խելագարվեինք:

Չեմ կարող նկարագրել այդ ցնծությունը: Լուրը տարածվեց, մեր հարևանները, բարեկամները իսկույն թափվեցին, «աչքալո՛ւյս, մաղարի՛չ»,— բղավում էին նրանք բոլորը և համբուրվում մերոնց հետ: Իսկ ես ի՞նչ էի անում… Նախ մի քանի անգամ գըլխակոնծի տվի և շրջեցի կաթով լի դույլը, բայց թե ո՛վ էր բարկացողը, ապա դուրս վազեցի և փաթաթվեցի մեր գամփռ շանը և բղավեցի. «Ահմադը գալիս է…»

Գյուղումն էլ զուգվում էր և ուրախության արցունքներ էր թափում, անընդհատ կրկնելով, «որ ասում էի՞, որ ասում էի՞…»

Ապա մենք խմբով գնացինք դիմավորելու աղիզ եղբորս: Գյուղը դուրս էր թափվել, ոմանք ձիով, ոմանք ոտքով, ու մեր բարեկամները, մերոնք, ի՛նչ չախ ու չուխ էին անում, ուրախության բացականչություններով, փափախներն օդի մեջ շպրտելով առաջ էին գնում: Արդեն գյուղից դուրս էինք եկել, մեկ էլ ճանապարհի ոլորանում, մեզնից ոչ շատ հեռու, մի քանի մարդիկ երևացին, որոնք շտապ քայլվածքով դեպի մեզ էին գալիս:

Եկողներից մեկը քայլերն արագացնելով, առաջ անցավ ընկերներից, ձեռքերը տարածելով սկսեց բղավել,— «բարև, ա՛յ հարազատներ, բարև, ա՛յ սիրելիներ…»

Մայրս ու Գյուլումը, ես էլ նրանց հետ, բոլորից առաջ անցանք։ Մի քանի քայլ էր բաժանում մեզ եղբորիցս, երբ հանկարծ անտառից մի ծպտված, դեմքը սև շորով փաթաթած ձիավոր հայտնվեց՝ կարաբինը ձեռքին ու կրակեց...

Կրակոցի հետ եղբայրս ընկավ... Մայրս, որ ձեռքերը տարածած պատրաստվել էր գրկել գտնված որդուն, մազերը պոկելով, Գյուլումի հետ չոքեց նրա դիակի առաջ...

Լաց ու կոծն աշխարհ թնդացրին։ Մարդիկ սեվակնած հոգով հավաքվեցին դիակի շուրջը։

— Ո՞վ էր, ո՞վ էր,— սկսեցին բղավել ոմանք...

Մինչ պատմում էր Իսաևը, և Վարդանյանն ու կիսաբաց դռան մոտ կանգնած Գրոմովը լսում էին նրան, ճակատամարտի աղմուկն ավելի մոտեցավ և պատմության այդ տեղում, հանկարծ փողոցում տանկերի հռնդյուն լսվեց, ապա մոտոցիկլետների դռոց և այդ ձայներին միախառնվեցին ավտոմատների ու ձեռքի գնդացիրների ճարճատյուններ։

Իսաևն ընդհատեց պատմությունը և Վարդանյանի հետ հրացանը վերցնելով վազեց դուրս։

— Օհո՜, բարեկամներ, այս գերմանական մոտոմեխ-զորամասի ավանգարդն է, որ մտավ գյուղ,— ասաց Վարդանյանը տագնապալի շեշտով։ Եվ իսկապես, շուտով այդ գյուղը լցվեց գերմանական զորքով։

— Իսկ ի՞նչ անենք մենք հիմա,— ասաց տարակուսած Գրոմովը՝ աշխատելով չմատնել իր ծայրահեղ անհանգստությունն ու ներքին տագնապը. «Հանկարծ մեզ չգերեն այս Ֆրիցները...»,— մտածեց նա։

— Ներս գնանք, շշնջաց Վարդանյանը և երբ երեքով սենյակումն էին, նա դարձյալ խոսեց՝ նախօրոք գցելով դռան փականը։— Բարեկամներս, լուրջ է մեր դրությունը,— ասաց նա ուշադիր դիտելով Իսաևի և Գրոմովի մտազբաղ դեմքերը և շարունակեց.

— Այժմ մեզ շտապել է հարկավոր... քանի շուտ

է, մենք մեզ մի կերպ պիտի գցենք մոտակա անտառը, որտեղ և կկշտացնենք մեր անելիքը, իսկ այստեղ այլևս երկար մնալը վտանգավոր է։

Նրանք երեքով պատրաստվեցին դուրս գնալ։ Վարդանյանը դռան մոտից մտազբաղ ետ դարձավ ու ասաց.

— Մի ստուգենք այս դեղի արկղները, գուցե մի քիչ պաշար վերցնենք։

Պահարանում բավականին թարմ հաց գտնվեց, որը եգիպտացորենի ալյուրից էր պատրաստված, իսկ կճուճներից մեկն էլ լիքն էր պանրով։ Այդ բոլորը երեք ընկերները տեղավորեցին իրենց իրերի տոպրակներում և միմյանց հետևից թողին սենյակը։

— Ինչ վերաբերում է ինձ, նրանք կարող են գերել միայն իմ դիակը և ես կարծում եմ, որ դուք էլ կունենաք բավականաչափ տղամարդություն և հոգու կորով, որ արհամարհեք գերու խղճուկ ու անպատիվ կյանքը,— ասաց շշուկով Վարդանյանն իր ընկերներին, երբ արդեն անտառ էին մտել և որոշ չափով իրենց ապահով էին զգում։

— Ի՞նչ անենք հիմա,— հարցրեց Գրոմովը՝ ճակատը կնճռելով։

— Հրամայիր, սերժանտ և ես ամեն բան կանեմ, մինչև թեկուզ կրակն ընկնելը,— խոսեց Իսաևը։

— Ահա թե ինչ.—գտնվելով թշնամու թիկունքում, մենք նրան հենց թիկունքից էլ պիտի հարվածենք։ Մենք պետք է դառնանք պարտիզաններ...

Մինչ այժմ եթե ես միայն ձեր սերժանտն էի, սրանից հետո ցանկանում եմ լինել և ձեր եղբայրը. եկե՛ք իսկական եղբայրներ դառնանք ու գործենք և կտեսնեք, որ մենք շատ բան կանենք։

Իսաևի դեմքը լուսավորվեց մի ներքին ջերմությունից, որը բորբոքվեց նրա սրտում, Վարդանյանի ինտիմ քաղցր խոսքերից և Իսաևը նկատելի հուզված ձայնով ասաց.

— Եղբայրներ դառնա՛նք, ես հո եղբայրության

համար գլուխ եմ դրած մարդ եմ և ես կարծում եմ, որ մենք կդառնանք շապիկ փոխող եղբայրներ...

— Ի՞նչ կնշանակի դա,— հարցրեց Վարդանյանը, սակայն այդ ժամանակ ոռնաձայն լսվեց և մարտիկները լռեցին ու շունչները պահած սկսեցին լսել՝ մի թփի հետևում թաքնված:

***

Այն զորամասը, որից անջատվել էր Վարդանյանն իր ընկերներով, Նաուրում մի քանի օր, ապա ուրիշ գյուղերում մոտ մի ամիս պաշտպանության մեջ մնալուց հետո, մի օր, երկարատև երթ կատարելով, կեսօրին հասավ Կալինինսկ գյուղը:

Գյուղը գրեթե լքված էր բնակիչների կողմից, որովհետև մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցել և բնակիչների մի մասն էլ Գերմանիա էր քշվել:

Այստեղ ու այնտեղ կային բազմաթիվ ավերված շենքեր ու արկերի ձագարներ: Զորամասին հրամայված էր պաշտպանություն բռնել գյուղի հարավ արևմտյան մասում, ուր խրամատներ ու հողատնակներ (բլինդաժ) պիտի պատրաստեին:

Չնայած անասելի հոգնածությանը, երբ գնդի հրամանատարի հրամանը լեյտենանտ Գրիգորյանը փոխանցեց իր դասակին, մարտիկները ժրաջան կերպով գործի անցան: Տաք հողատնակում, կրակի առաջ նստելու, այդ անիծյալ՝ երկար ճանապարհից հետո հանգստանալու քաղցր միտքը ոգևորեց բոլորին:

Սերժանտ Վարդանյանի ուշանալու պատճառով ժամանակավորապես Գրիգորյանի դասակում փոխդասակապետ էին նշանակել կրտսեր սերժանտ Զավարյանին, որը լոռեցի կոլխոզնիկ էր, և չնայած իր մեծ հասակին, շատ աշխույժ և կենսուրախ մարդ էր:

Թեք դրած պիլոտկայի տակից, որի մի ծայրը իջնում էր մինչև աջ հոնքը, նայում էին նրա փոքր ինչ կկոցած, խաժ աչքերը, որոնք սովորաբար ծիծաղկոտ

արտահայտություն ունեին։ Նրա առնական դեմքին մի առանձին գրավչություն էր տալիս շրթունքներում միշտ թաղնված մեղմ ժպիտը։

— Դիվիզիա՛, լսի՛ր իմ հրամանը,— կատակով դիմեց նա իր մարտիկներին՝ դադարելով հողատնակի հիմքից հող դուրս շպրտելուց և քարի կտորով մաքրելով իր ցեխոտված բահը։ Ապա շեղվելով կանոնադրությունից, հրամանի շարունակությունը վերջացրեց տնավարի ոճով.— Այ կոտորվեք դուք, մի հալա նայեք, մինամյոտչիկները պրծան, իսկ մենք դեռ կեսը հազիվ ենք քանդել... Արագ աշխատել։ Վա՛յ, վա՛յ, վա՛յ, գլխիս ցավը բռնեց, հրեն վառելափայտ էլ ճարեցին, մի տեսնես էդ ո՞րտեղից ճանկեցին սատանի ճուտերն էն չոր գերանը,— ասաց նա՝ ցույց տալով երկու ցածրահասակ ականաձիգների, որոնք տնքալով ուսերին դրած փայտի մեծ կտորը գցեցին իրենց՝ արդեն պատրաստի հողատնակի առաջ։

— Է, ի՞նչ անենք, հիմի քանդե՞նք, թե փետի գնանք,— հարցրեց կարմիրբանակային Սիմոնյանը, որն առիթի էր սպասում՝ հողային դժվար աշխատանքից խուսափելու համար։

— Այ դելն ուտի քեզ, դա ի՞նչ հարց է... Իհարկե պիտի գնանք։ Բայց դու կաց, տեսնում եմ, որ մեռնում ես՝ հող քանդել չես սիրում, բայց դեռ կտեսնենք։ Քեզ ասեն՝ գնդի ձիերը ջարդիր,— ասաց Զավարյանը՝ աչքով անելով՝ ժպտալով աշխատող ընկերներին, ակնարկելով Սիմոնյանի հետ պատահած ոչ վաղուցվա արկածը, երբ նա մի մութ գիշեր պահակ կանգնած ժամանակ սպանել էր գնդի հիվանդ ձիերից մեկին, որը դեպի պահակակետն էր գնացել և չնայած Սիմոնյանի եռակի հարցմանը, թե՝ «ո՞վ է գալիս, կանգնի՛ր»,— չէր պատասխանել...

Զավարյանը դիմեց իր բանակայիններից մեկին.

— Պետրո՛վ, վազքո՛վ, Սահակյանի հետ գնացեք փայտի, դատարկ ետ չգաք։

Գևորգովն ու Սահակյանը հրացանները վերցնելով գնացին։

— Ընդմիջում, տղերք, հերիք է քանդենք, էլ հարկավոր չէ, մնաց որ ծածկենք,— մի քիչ հետո ասաց Զավարյանը։

Սիմոնյանն անմիջապես ընդհատեց աշխատանքը, չնայած իր մասում դեռ էլի մի փոքր աշխատանք կար։ Զավարյանն այդ նկատելով ասաց.

— Ականջը կանչած Կավալերիստի կտորըն եմ էլի··· Կավալերիստը դեռ ջհանդամը, բա մեր սերժանտըն ու Գրոմովն էս ի՞նչ եղան,— կարծես ինքն իրեն հարցնելով, մտքի մեջ ընկավ Զավարյանը։

— Հա՛, իսկապես,— ձայն տվին միանգամից մի քանի բանակայիններ, որոնց միտքն էլ այդ մոմենտին զբաղված էր իրենցից անջատված ընկերներով։

Շուտով հողատնակի կառուցումն ավարտվեց. երկու բանակայինների հետ Զավարյանն ուղարկեց չոր խոտ բերելու, որ փռեն հողե հատակին և կարգադրեց մյուսներին, որ զենքը ներս տանեն։ Ապա տեսնելով Գևորգովին ու Սահակյանին, որոնք գալիս էին մի ծառ քարշ տալով, ուրախացած մտավ հողատնակը և ասաց.

— Տղերքը հրեն մերին դվեր տված բերում են։ Փայտը կջարդեք, իսկ ես գնում եմ էս մոտիկ տնից մի կրակ բերեմ։

Զավարյանը դուրս եկավ բլինդաժից ու հրացանն ուղղելով ուսին, քայլեց դեպի մոտակա տունը, որի ծխնելույզից ծուխ էր բարձրանում։ Նա գնաց խճուղուց բաժանվող արահետով, որն անցնում էր մարգերի միջով և հանկարծ զգաց իրեն այնքան ծանոթ և հարազատ կարտոֆիլի բույրը, որ կանգնած էր այնտեղ աշնանային գաղջ օդում և արտաբերվում էր հանված կարտոֆիլի այս ու այն կողմ խուխ թափված, դալկացած թփերից։

Այդ բույրը մի շատ խնդագին զգացում առաջացրեց նրա հոգում ու Զավարյանի արդեն արծաթվող մա-

գերով ծածկված դեմքի վրա վառվեց ակամա մի թախծոտ ժպիտ, ինչպես աշնանային ցնդող մշուշից ծագող արեգակ:

Նա մտովին գնաց իր ծննդավայրը՝ Լոռին, լսեց Դեբեդի քաղցր վշշոցը և տեսավ իր երկրի ծաղկուն դաշտերն ու հովիտները ու կարծես շնչեց Լալվարից եկող հովերի բույրը: Ապա նայելով առաջ, ուր հեռաստանում երևում էին Կովկասյան լեռների ամպոտ գագաթները, նա իր սրտի մեջ կարոտից լացեց:

— ...Ամեն տարի այս ուշ աշունքին կարտոֆիլները վաղո՛ւց հանած էինք լինում ու բերքը բաշխած... Ա՛խ, ֆաշիստներ,— ասաց նա ինքն իրեն և գլխահակ առաջ գնաց: Երբ հասավ խրճիթին, մի պահ կանգ առավ դռան առաջ: Տան դուռը ճռռաց և մի կին դուրս եկավ, որը նկատելով կանգնած բանակայինին, ասաց.

— Բանակային աղբեր, ինչո՞ւ եք կանգնել, տուն համեցեք:

Զավարյանը մտավ տուն:

Սենյակում վառվող փռի կողքին մի խարտյաշ, փոքրիկ աղջիկ էր նստած՝ կապույտ շորը հագին: Նա խաղում էր կատվի ձագի հետ՝ մերթ նրա պոչից և կամ ականջներից քաշելով: Կատուն փշտացնելով, զույգ թաթերով փաթաթվում էր նրա ձեռքերին:

Աղջիկը տեսնելով ներս մտնող Զավարյանին, ընդհատեց խաղը, թողեց ձագին, որը սրընթաց վազեց դեպի տան անկյունը, ապա կանգնելով, չարաճճի դեմքին զարմացական արտահայտություն տվեց, աշխուժով լի, պսպղուն աչիկները հառեց Զավարյանի դեմքին, տարածեց ձեռքերը և վազեց դեպի նա՝ «պապան եկա՛վ, պապան եկա՛վ» բղավելով, գրկեց նրա ոտքերը:

Զարմացած և զգացված Զավարյանը գրկեց նրան և համբուրեց, իսկ աղջիկը զույգ ձեռքերով փաթաթվեց Զավարյանի պարանոցին ու գլուխը հենելով նրա մազոտ այտին, սկսեց լուսաշող աչքերով դիտել նրան:

Աղջկա մայրը, որի նուրբ դեմքի վրա վիշտն իր մահառիթ դալուկն էր փռել, իր փոքրիկ ու անմեղ մանկան այդ միամիտ և սրտահույզ արարքից այնպես զգացվեց, որ աչքերը մշուշվեցին, ներքևի շրթունքը դողդողաց և արցունքն իջավ աչքերից: Նա թաշկինակով սկսեց մաքրել աչքերը և մրմնջաց.

— Հոր տեղն է դրել, հոր տեղն է դրել...

Զավարյանը կնոջ հուզմունքից կռահելով, թե բանն ինչումն է, սաստիկ հուզվեց ու երեխային, որն արդեն զգացել էր իր սխալը և ուզում էր իջնել նրա գրկից, սեղմելով կրծքին նորից համբուրեց, ապա դիմեց կնոջը.

— Քույրիկ ջան, երևի տեղեկություն չունես ամուսնուցդ:

— Ախ, ախպեր ջան, նրա սև գիրն եկավ, արևս հանգավ, իմ ազիզ բալեն որբ է հիմա... Ախր մի անգամ մոտ ժամանակներս, ճակատ գնալուց առաջ, տուն եկավ էդպես շորերով...

Զավարյանը հառաչեց և նստելով կնոջ ցույց տրված աթոռին, աղջկան դրեց ծնկներին ու գրպանից մի կտոր շաքար հանելով, տվեց նրան:

Մի առժամանակ երեքն էլ լուռ էին: Միայն լսվում էր սադափե մանրիկ ատամների տակ աղմուկով ջարդվող շաքարի ձայնը:

— Լաց մի լինի քույրս, կարող է սխալ լինի, շատ է պատահում...—ասաց մխիթարական տոնով Զավարյանը՝ ինքն էլ չհավատալով իր ասածին:

— Ախր ո՞նց չհավատամ, բոլորը որ սխալ լինի, բա ո՞վ է էնտեղ... Ա՜խ...,— հառաչեց կինն ու սկսեց հեկեկալ: Զավարյանը տեսնելով, որ իր ուժերից վեր է նրան մխիթարելը և զգալով, որ մի բան սեղմում է իր կոկորդը, որոշեց շուտով հեռանալ:— Քույրիկ ջան,— ասաց նա,— նրանք, ովքեր այսքան արյուն-արցունքի պատճառը դարձան, հո չե՞ն մարսելու: Մերոնք արդեն լավ ջարդ են տալիս գերմանացիներին: Այ, մենք էլ եկել ենք, որ ճակատ գնանք: Մենք

գնալու ենք՝ ձեր նմանների վրեժը լուծելու: Այդ վրեժը կլուծվի, այլ կերպ չի լինի:

— Գնացե՛ք, եղբայրներ, հաղթեք ու բարով դարձեք,— ասաց կինը հառաչելով:

Զավարյանը չնայած կնոջ թախանձանքներին՝ նստել, մի կտոր հաց ուտել, շնորհակալություն հայտնեց և մի անգամ էլ համբուրելով արդեն իր գրկից իջած գեղեցիկ մանկանը, կրակ վերցրեց և շտապ դուրս եկավ՝ հրաժեշտ տալով, իսկ ներսում դեռ լսվում էր աղջկա ճռվողյուն հնչեցնող ձայնի դայլայլը՝ «Պապան եկել է...»

«Երանի այդ տունը սուգ դրած չլինի»,— մտածեց Զավարյանը՝ դուրս գալով այնտեղից և ազատություն տվեց իր զգացմունքներին: Նրա կոկորդը սեղմող ուժը ելք գտավ աչքերից գլորվող երկու կաթիլների ձևով, որոնք գլորվեցին այտերի վրայով՝ նրա փոշոտ դեմքին նկատելի հետք թողնելով:

Միշտ կենսուրախ, նա այժմ արտասվում էր և այրի կնոջ վշտահար դեմքն ու փոքր մանկան կարոտով լեցուն աչքերը չէին հեռանում նրա մտքից:

Զավարյանը որոշեց, որ եթե իրեն երբևէ վերադարձ վիճակվի, անպայման նորից այցելի այդ տունը և ձեռքից եկածի չափով օգնի այդ ընտանիքին:

***

Զավարյանը մտավ հողատնակ և կրակը դրեց օճախում արդեն դասավորված չոր փայտերի տակ ու նստեց հատակին փռած փափուկ խոտի վրա, Սիմոնյանի մոտ, որը խիստ արտահայտությամբ՝ աչքերն իրենց բներում պտտեցնելով, նստած տեղից ստեպ-ստեպ դիտում էր մեկին, մյուսին և թութուն էր ծամում: Մյուս բանակայինները, բացի օրապահից, որը կանգնել էր մուտքի առաջ, տարբեր դիրքերով պառկել ու զրուցում էին:

Պետրովը, որ շատ էր մրսում, անմիջապես

ելավ տեղից ու չոքելով օճախի առաջ, սկսեց փչել, բորբոքել կրակը։ Զավարյանը մի քիչ նստելուց հետո պառկեց խոտի վրա և սկսեց երգել։ Ապա երգն ընդհատելով, նա հանկարծ մի ծխախոտ խնդրեց Սիմոնյանից։ Ժլատ Սիմոնյանը զարմացած ու ծիծաղելիորեն խիստ մի հայացք գցեց նրա դեմքին և մեքենայորեն կրկնեց նման պահանջների համար իր պատրաստի պատասխանը՝ «չունեմ», բայց նկատելով նրա մշտուրախ դեմքի անսովոր թախիծը և հիշելով, որ նա ծխող չէ, ինքն իրեն մրթմրթաց. «Վայ թե ունենամ...»

Ապա նա ծուլորեն սկսեց քանդել իր իրերի տոպրակի բերանը և այնտեղից ծխախոտ հանելով, մի քիչ տվեց Զավարյանին։

Բանակային Սահակյանը տեսնելով Զավարյանին անվարժ մատներով ծխախոտ փաթաթելիս, ընդհատեց իր զրույցը Պետրովի հետ, մոտեցավ նրան ու ասաց.

— Դու էլ ես սկսե՞լ, ընկեր Զավարյան։— Ապա նկատելով նրա տխրությունը, շարունակեց։— Քեֆդ էդ ինչո՞ւ է խարաբ...

Զավարյանը պատմեց, թե ինչու է տխրել և բոլորն ունկնդրելով նրա պատմությանը, համակվեցին նույն զգացմունքով։ Մի առ ժամանակ բանակայինները լուռ էին։

— Զավարյան, այդ բոլորի համար շուտով մենք անձամբ վրեժ կլուծենք, ոչինչ,— խոսեց Սահակյանը։

— Իհարկե կլուծենք, և բոլորդ էլ մի բան շատ լավ պիտի իմանաք, որ արդարությունն ու ճշմարտությունը երբեք չեն մեռնում...

Զավարյանն ինչ որ գործով դուրս գնաց հողատընակից։

— Ի՛նչ հոգի մարդ է մեր Զավարյանը,— բացականչեց Էդինբրաշվիլին։

— Ուրիշ մարդ է,— պատասխանեց Սահակյանը.— հարևան գյուղերից ենք, այնպես որ շատ լավ եմ ճանաչում։ Մեր գյուղերում Զավարյանին մեծից փոքրը այնպես են սիրում ու հարգում, ինչպես որդիներն ի-

րենց ծնողին, և դա զարմանալի չէ։ Նա իր առաքինությամբ, մարդասիրությամբ ու պատվով և լավ գործերով նվաճել է բոլորի սերն ու համակրանքը։ Նրանց կոլխոզը Զավարյանի շնորհիվ դարձել է մի մեծ այգուտեր, որից տարեկան տոննաներով տանձ ու խնձոր է ստացվում...

— Երևի սեփական մեծ այգի է ունեցել և նվիրել է կոլխոզին, այո՞,— հարցրեց Էդիներաշվիլին։

— Չէ, ի՞նչ սեփական այգի. բանը ուրիշ է... Մեր անտառները շատ հարուստ են վայրի տանձի ու խնձորի ծառերով, տեղեր կան, որ անտառի հսկա տարածություններում հենց միայն էդ ծառերից են աճում։ Մենք էդ տեղերին՝ տանձուտ, խնձորուտ ենք ասում։ Էս Զավարյանը տեսնելով, որ իրենց հարևան կոլխոզներից շատերն այգի ունեն, իսկ իրենք՝ ոչ,— էդ էլ էն պատճառով, որ իրենց գյուղը ձորից հեռու է ու այգետեր գյուղերի նման՝ ձորում հողամաս չունեն, ուր հրաշալի աճում են մրգի ծառերը,—մտածում է, որ անտառի պտղատու ծառերը կարելի է պատվաստել...

Մի օր կոլխոզի ժողովում նա խնդիր է դնում, թե եկեք էսպես անենք...

— Պարապ բաներ ես մտածել, քեֆիդ չկպչի, ընկեր Զավարյան,— ասում է կոլխոզի նախագահը։ Գյուղացիներից մի երկու սրախոսներ էլ հեգնում են, բայց Զավարյանը դրանց ասածները բանի տեղ չի դնում, չնայած ինչպես հետո ինքն էր ասում, իրեն սիրտն էլ է կասկած ընկնում, թե դուցե իսկապես բան դուրս չգա դրանից։ Բայց և այնպես, բոլորից գաղտնի, դընում է մի հեռու տանձուտում մոտ տասի չափ ծառեր է պատվաստում։

Սահակյանը պատմեց, թե ինչպես այդ դեպքից երեք տարի անց, աշնան մի օր, տանձի գնացած մի քանի կանայք շնչասպառ գյուղն են ընկնում ծանր շալակներով ու պատմում են, թե հրաշք բան է կատարվել, «քոլի տանձերը բաղի ծառերի բերք են տվել էս տարի»... Շատերն իհարկե չեն հավատում և գնում են

անձամբ ստուգելու, և նույնպես ուրախացած, ցնծալով վերադառնում են՝ ընտիր մրգերով բեռնված: Մի հին տիրացու որոշում է մեկնել հրաշքը և ասում է. «Օրհնվածներ, զարմանալու ոչինչ չկա, սուրբ գրքում գրած է, որ դրախտն առաջ էս կողմերում է եղել... Մեղքեր շատ ունեինք, տերը դրախտը հեռացրել էր ի բարձունս, բայց հիմա, իր ամենայն գթասրտությամբ և հանապազօրյա զորությամբ ու սրբությամբ հետ է բերել... էդ է, ծառերն ուղարկել է...»

— Կացո, ասել կուզի տեր աստվածը էդ տիրացուի ասածի համաձայն դրախտն էդտեղից էվակուացիայի ենթարկած է եղել:

— Հետո՞, հետո՞,— հարցրեց Սիմոնյանը:

— Հետո էն, որ էդ ցնդած տիրացուի խոսելու ժամանակ Զավարյանն էլ է պատահմամբ էնտեղ լինում ու հեգնանքով դիմում է նրան, ասելով՝

— Իմաստո՛ւն, ախր էդ ես եմ սանձի ծառերը երեք տարի առաջ պատվաստել...

— «Սրբապղծություն մի անի,— Զավարյան»,— զայրացած գոչում է տիրացուն. իսկ Զավարյանը ծիծաղելով հեռանում է և հենց էդ երեկոյան, կոլխոզի ժողովում հայտնում է ամեն ինչ:

Մարդիկ գնում են տեսնում, որ բոլորը՝ տեղը-տեղին, զուտ ճշմարտություն է:

Կոլխոզի նախագահը Զավարյանի աշխատանքի պտուղները տեսնելով հիանում է ու վարչության նիստում որոշումն են, որ կոլխոզն օգնի նրան ուրիշ ծառեր էլ պատվաստելու: Ոգևորված Զավարյանը հենց այդ աշնանը մի հսկա տանձուտի բոլոր ծառերը պատվաստում է, ուր և հիմա կոլխոզի ընտիր այգին է գտնըվում...

Այդ աշխատանքի համար կոլխոզը Զավարյանին պարգևատրեց, իսկ նրա պատվաստած ծառերից ստացված պտուղները՝ ասում էին, որ գյուղատնտեսական ցուցահանդեսում մրցանակ են շահել:— Ա՛յ, էդպիսի մարդ է մեր Զավարյանը...

— Նկատել եմ, շատ էլ աներկյուղն է,— ասաց Էգիներաշվիլին:

Սահակյանի պատմությունից հետո բանակայինները սկսեցին զրուցել իրենց առօրյա կյանքի դեպքերից:

— Ասում են սրա հարևան գյուղը և ուրիշ գյուղեր գիշերը վերցրել են գերմանացիք: Կնշանակի, այստեղ պաշտպանության մեջ մենք երկար չենք մնա: Պարզ է նաև այն, որ գերմանացիներին ետ շպրտելու համար գործն առանց մեզ յոլա չի գնա,—դարձյալ խոսեց Սահակյանը:

— Ասել կուզի, մեր Վարդանյանն ու Գրոմովը հավալերիստի հետ գերված կլինեն, ափսո՛ս տղերք,— հարեց Զավարյանը, որ հենց նոր՝ հողատնակ էր մտել:

— Այդպես է երևում, թե չէ՝ Վարդանյանն այսքան ի՞նչու պիտի ուշանար: Միայն թե, Կավալերիստը հենց ինքը գերի հանձնված կլինի,— նկատեց Պետրովը:

— Խելքի մոտ բան է,— ասաց Զավարյանը,—գերի ընկնել էլ կա, սպանվել էլ: Մասխարություն չի, հո չամիչ չեն բաժանում, միայն իսկական տղամարդը, ազնիվն ու փչացածը, իսկական էստեղ է հայտնի անելու... Հիմի էստեղ՝ այսինքն Ֆրոնտում, մարդուս իսկական ազնիվ ընկեր է հարկավոր, ընկեր, որ գլուխը ետ դնի, թե չէ, որ մեկ մեկու էս դժվար տեղը չպահենք, եթե ես մենակ իմ մասին մտածեմ, ժամանակին օգնություն չհասնեմ ընկերոջս, երբ նա՝ ասենք վիրավոր ընկած է գնդակների տակ ու մի նոր գնդակ ստանալով կըսպանվի, կյանքս ռիսկի ենթարկելով նրան իրամատը չքաշեմ, կամ ամենամարտի ժամանակ ինձ առաջ չգըցեմ... որ մեկն ասեմ...

— Շատ ճիշտ է, իսկական մարդը էդպես պիտի լինի,— ասաց Սահակյանը, իսկ շատերն էլ հավանության նշան տվին իրենց գլխի շարժումներով:

— Դու անձնազոհություն կանես, Սիմոնյանն էլ քեզ համար անձնազոհություն կանի, Զավարյան,— ասաց Էգիներաշվիլին կատակով և հեգնական նայեց

Սիմոնյանի կողմը, որը հայտնի էր ոչ միայն իր առասպելական ժլատությամբ, այլև սոսկալի էգոիստ էր:

Էդիներաշվիլին նշանակալից աչքով անելով Սահակյանին, դիմեց Սիմոնյանին.

— Ամենասիրելի Սիմոնյան, խելքդ ի՞նչ է կտրում էս Զավարյանի ու Սահակյանի ասածներից. ես կարծում եմ, որ սրանք մեծախոս մարդիկ են և եթե անձնազոհության տեղը գա, վայթե քեզանից հետո, ոչ ոք այդ բանը չանի:

— Ի՞նչ բան:

— Անձնազոհություն:

— Անձնազոհությո՛ւն...

— Այո՛:

— Աղբեր, մի գլխիցս քաշվի, մի կյանք ունեմ, էն էլ զոհեմ, բա ինձ ի՞նչ մնա...— դժկամ տոնով ասաց Սիմոնյանը:

— Դե ես քեզնից ավելին չէի էլ սպասում,— արհամարհանքով նկատեց Էդիներաշվիլին և երեսը թեքեց:

— Էս բոլորն էսպես, բա ճաշն ինչի՞ ուշացավ: Տղերք, Էդիներաշվիլի և Սահակյան, պղնձակները հավաքեցեք, գնացեք խոհանոցը ճաշի, իսկ մենք գնդացիրը մաքրենք,— ասաց Զավարյանը և մոտենալով հողատնակի դռան առջևում, խրամատի մեջ դրված գնդացրին, Պետրովի հետ սկսեց քանդել այն:

Երբ Սահակյանն ու Էդիներաշվիլին պղնձակները հավաքելով դուրս եկան, հարևան հողատնակի առաջ պառահեց ավագը՝ երկու դատարկ դույլ ձեռքին և հայտնեց, որ ճաշն ուշանում է, որովհետև դաշտային խոհանոցը դեռ տեղ չի հասել:

Ճաշի գնացողները դժկամությամբ լսեցին տհաճ լուրը և վերադարձան հողատնակ:

— Երևի խոհանոցը խրվել ա ճանապարհին,— ասաց Զավարյանը՝ յուղոտ ձեռքերը քսելով գնդացրի փողին:

Սիմոնյանը լսելով որ ճաշն ուշանում է, շալակից իջեցրեց իրերի պարկը, որից երբեք չէր բաժանվում, վախենալով, թե ընկերները հանկարծ ձեռք կտան, միջից ուտելու բան կվերցնեն: Պարկի բերանը բանալով, նա այնտեղից հանեց մի քանի թզաչափ եգիպտացորեն:

Էգլիներաշվիլին, որ այնտեղ կանգնած հետևում էր նրա շարժումներին ու լավ քաղցած էր, միաժամանակ մի քիչ որկրամոլ լինելով, սկսեց պտույտ գալ նրա շուրջը և մի երկու անգամ խծահաղ տվեց, սակայն Սիմոնյանն անտարբեր նայեց նրան և մոտենալով օջախին, եգիպտացորենները դրեց կրակին:

Էգլիներաշվիլին որոշեց շողոքորթել և ասաց.

— Իսկապես, Սիմոնյան, շատ թադարեքով մարդ ես, որտեղից էլ ճարել ես, մալադեց, մալադեց, էն մեկը պտտացրու, վառվում է...

— Բան չկա, թող վառվի,— առանց նրան նայելու ասաց Սիմոնյանը և դժկամությամբ նայեց իր շուրջը խմբվող մյուս բանակայիններին:

— Տղերք, մինչև ճաշի հասնելը Սիմոնյանը մեզ եգիպտացորենով կհյուրասիրի,— ասաց Սահակյանը:

— Կհյուրասիրի՞, արևդ վկա,— փնթփնթաց Սիմոնյանը և արդեն խորոված եգիպտացորենը վերցնելով կրակից, դրեց գրպանը և պարկից նորերը հանեց՝ ցանկանալով դարձյալ խորովել.

— Չես դա՛րձ,— բացականչեց Էգլիներաշվիլին՝ կանգնելով օջախի առաջ:— Որ էդպես է, չեմ թողնի էլ խորովես, փայտը դու չես բերել,— ասաց նա:

— Հա՛, որ չթողիր, կարծես ես չեմ կարող կրակ անել, էլի...— ասաց Սիմոնյանը և կրակից հեռանալով, նստեց ու մեծ ախորժակով սկսեց ուտել խորոված եգիպտացորենը:

— Լավ, դու մեզ վայ տաս,— քրթմնջաց Սահակյանը:

— Տո հեռացեք դրանից, արև դառնա, մարդու բույս չի տա,— գոչեց Զավարյանը և Սահակյանին ու Էգլիներաշվիլուն իր մոտ կանչեց.

— Տղերք, էստեղ մոտիկ կարտոֆիլի մարգեր կան, բահերն առեք, գնացեք: Լավ չի հավաքած, միջով անցնելիս, ոտքիս հետ էլ կարտոֆիլ էր դուրս գալիս:

Տղաները գնացին և մի քիչ հետո վերադարձան, երկու պղնձակ կարտոֆիլ բերելով:

— Էդ ո՞րտեղից,— զարմացած հարցրեց Սիմոնյանը՝ երբ տեսավ կարտոֆիլը:

— Եգիպտացորենիդ մոտից,— հեգնանքով պատասխանեց Էդիներաշվիլին:

— Չէ, կուրթմանից բերեցին,— ասաց Զավարյանը ծիծաղելով: Մինչ տղաները լվանում էին կարտոֆիլը՝ խաշելու համար, Սիմոնյանը տոպրակը չալակելով, դուրս եկավ հողատնակից:

— Կրակը թեժ արեք, որ շուտ եփի, լեյտենանտներին շտաբը կանչեցին, կարող է շարժվենք,— զգուշացրեց Զավարյանը:

— Ասում են երկար ենք մնալու այս գյուղում,— ասաց Էդիներաշվիլին:

— Չի իմացվի:

— Այ Զավարյան, գլուխս էլի ցավում է, ի՞նչ անեմ,— ասաց Սահակյանը:

— Սանհրահանգչուհուն դիմիր, թող են փոշուց տա, խմիր, կանցնի:

— Ա՛յ, լավ ասացիր, հենց իրեն տեսնելու համար արժե գնալ սանմաս. մի չարմաղ աղջիկ է...

— Ո՞նց թե:

— Առաջվանը, էն կատակասեր տղան փոխվել է, կարծեմ հիվանդացել է. այ տղա էր հա՛, հիշո՞ւմ ես, որ մի անգամ, երբ էլի Կավալերիստի փորացավը բռնել էր, փորին յոդ քսեց, ասելով, թե՝ կլավանա: Ինչքա՛ն ծիծաղեցինք, ախր նա էլ լավ գիտեր, որ Կավալերիստը կեղծում է:

Զավարյանի և Սահակյանի խոսակցության այդ պահին դրսում, գնդացրի մոտ պահակ կանգնած Պետրովը ձայն տվեց.

— Մի դո՛ւրս եկեք:

— Ի՞նչ կա,— հարցրին ոմանք՝ դուրս գալով:

— Մի էն կողմը նայեք, Քրիստոս է գալիս,— ասաց Գեորգը՝ ցույց տալով մոտակա բլրից իջնող բանակայինին, որը փայտե մի մեծ խաչ ուսին դրած, գալիս էր դեպի հողատնակը:

— Գետինը մտած Սիմոնյանն է, իսկական Քրիստոս, միայն էն տարբերությամբ, որ ասում են՝ Քրիստոսը խաչն ուսին սարն է բարձրացել, իսկ սա իջնում է,— ասաց Զավարյանը:

Մինչ բանակայինները սրախոսություններ էին անում, Սիմոնյանը մոտեցավ և հողատնակի առաջ դցեց փայտի խաչը, որի վրա գերմաներեն մակագրություն կար՝ «Hans Schulz»

— Սիմոնյան, էս ո՞րտեղից, ինչի՞ ես բերել,— հարցրեց Սահակյանը:

— Որ չթողիք, հենց էն է՝ ասիք էլ փետ չի ճարվի, է՛լի,— պատասխանեց Սիմոնյանը և ուզում էր խաչը կոտրել, երբ հանկարծ երևաց լեյտենանտ Գրիգորյանը՝ թևի տակ մի արկղ:

Նա ողջունեց՝ պատիվ առնելով, և բանակայինները միաբերան պատասխանեցին նրա ողջույնին:

Փայտե խաչը Գրիգորյանի ուշադրությունն էլ գրավեց և նա հարցրեց, թե այդ որտեղի՞ց է, երբ կարդաց գերմաներեն մակագրությունը:

— Էդ թմբի մյուս երեսից, տնկած էր էնտեղ, գետնին:

— Էս մեկն էր, թե՞ էլ կա:

— Շարքով տնկած են, լիքն է, ընկեր լեյտենանտ,— պատասխանեց Սիմոնյանը:

— Այդպես, հրաշալի է. ուրեմն այդտեղ գերմանական գերեզմանոց է: Հիտլերը դրանց մեծ խոստումներ էր տվել... Ամեն մեկը մի-մի կալվածատեր էին դառնալու: Հողի ծարավով նրանք խուժեցին մեր երկիրը և այն ստացան... Իսկ դու, Սիմոնյան, ասացիր եղիպտացորեն խորովելու համար ե՞ս բերել: Շատ էլ լավ կանես, «հավերժացրու դրանց հիշատակը»,— ա-

սաց Գրիգորյանը և մի փոքր լռելուց հետո իր երկար թարթիչներով գրավիչ աչքերը, որոնք արտակարգ ուժեղ փայլ ունեին, հառեց Սիմոնյանի դեմքին. «Լավ, եգիպտացորենը մի ուրիշ անգամ, իսկ հիմա գնանք ներս»,— ասաց ու ինքը մտավ հողատնակ:

Բանակայինները հետևեցին նրան:

— Հը, չա՞տ եք քաղցած, ճաշը ուշացավ,— դիմեց նա բոլորին:

— Ոչինչ, ընկեր լեյտենանտ, կարտոֆիլ ենք եփում, հիմա պատրաստ կլինի. նստիր միասին ուտենք,— ասաց Զավարյանը:

— Ուտենք, Զավարյան, բայց թե մենակ կարտոֆիլով ի՞նչ կդառնա:

— Սիմոնյանը կուկուռուզ էլ ունի,— խորամանկ ժպիտով ընդմիջեց Էդիներաշվիլին:

— Հում է, ընկեր լեյտենանտ,— չտապեց «փորձանքի առաջն առնել» Սիմոնյանը և հոնքերը խոժոռելով, չեղակի նայեց Էդիներաշվիլուն:

— Ի՞նչ անենք, ընկեր լեյտենանտ, բան չէ, պատերազմը վերջանա, ողջ-առողջ պրծնենք, ու դու մի մեր գյուղն ընկնես, ինձ հյուր գաս...

— Իսկ հարո՞ւստ է ձեր կոլխոզը,— հարցրեց Գրիգորյանը և թևի տակի արկղը դրեց օջախի մոտ ու վրան նստեց:

— Հարո՛ւստ, միլիոնատեր կոլխոզ է: Աշխօրին հարյուր գրամից ավելի հենց յուղ ենք ստանում: Բա մյուս բարիքնե՞րը... Այ, առաջներիս նոր տարի է. ի՛նչ գաթաներ ենք թխում, ընկեր լեյտենանտ...

Զավարյանի պատմության այս մասում Էդիներաշվիլին թուքը կուլ տվեց:

— Գաթա եմ ասում է՛,— համը բերանից չի գնա:

— Այ մի այդ գաթաներից լիներ, Զավարյան:

— Ո՞վ է տվել էդ բախտը,— Զավարյանի փոխարեն խոսեց Էդիներաշվիլին:

— Բախտն այստեղ է, Էդիներաշվիլի, այս արկ-

ղում: Մեզ ծանրոց են ուղարկել Հայաստանից,—ասաց Գրիգորյանը կանգնելով ու բացեց արկղի ծածկոցը, որը նախօրոք արդեն բացված էր և մի գոտիով նորից ամրացած:

Լեյտենանտի սյուրպրիզը բարձրացրեց բոլորի տրամադրությունը: Էդիներաշվիլու աչքերը կատարյալ երջանկության փայլ ստացան, երբ Գրիգորյանը մի շինել փռել տալով սկսեց արկղից հանել զանազան փաթեթներ, ապա չորս հատ մեծ գաթա, երկու շիշ գինի:

— Էդ թղթերի միջինն ի՞նչ է,— հարցրեց Էդիներաշվիլին:

— Այս մեկը հավ է, սա՝ կարագ... Ո՞ր մեկն ասեմ:

Դեմքերը փայլում էին:

— Չէ՛, մեզ չեն մոռացել, ախ, Հայաստան, հողիդ ու ջրիդ մեռնեմ,— ասաց Զավարյանը:

Գրիգորյանը հավասարապես բաժանեց ուտելիքը:

Այնուհետև նա մի բաժակ պահանջեց ու բացելով շշերի բերանը, բանակայիններին գինի ավեց: Բանակայիններն ուտելու ժամանակ նաև զրուցում և կատակներ էին անում: Ապա խոսք բացվեց ճակատի մասին, և Սահակյանը հարցրեց.

— Ընկեր լեյտենանտ, ճի՞շտ է, որ գերմանացիները այստեղ—այս գյուղի ուղղությամբ առաջ են եկել:

— Ճիշտ է, այստեղ, այս հատվածում, նրանք թվական գերակշռություն են ստեղծած եղել, սակայն շուտով մեզ մոտ էլի նոր ուժեր կժամանեն՝ ռուսական դիվիզիաներ և այն ժամանակ... Շատ հավանական է, որ մեզ էլ բախտ կվիճակվի նրանց հետ ճակատ մտնել,— ասաց լեյտենանտ Գրիգորյանը:

— Ճակատում չենք, ի՞նչ ենք, ընկեր լեյտենանտ, ճակատամարտի աղմուկը ականջներումս դռռում է, մեկ-մեկ էլ ախր էս կողմն են բաժին ուղարկում գերմանացիք,— ասաց Էդիներաշվիլին՝ ակնարկելով այն մի քանի արկերի մասին, որ այդ օրն արձակվել էին

Կալինինսկի վրա, հայտնի չէ՝ պատահակա՞ն կերպով, սխա՞լ նշանառությամբ, թե դիտավորյալ, որովհետև չնայած, որ գյուղը մերձճակատային գոտումն էր գտնվում, բայց դեռ կռվի թատերաբեմ չէր հանդիսանում:

— Էդ մեզ խամից են հանում,— հարեց Զավարյանը ծիծաղելով:

Լեյտենանտը պատրաստվեց գնալու և դիմեց Զավարյանին.

— Զավարյան, այնպես արեք, որ գնդացիրը պատրաստ լինի ավտոմատ կրակի և զգույշ եղեք, այս գիշեր կարող է տագնապ տրվի և ուղևորվենք հենց առաջավոր գիծը:

— Պատրաստ է, ընկեր լեյտենանտ:

— Ընկեր լեյտենանտ, էդ դժոխքից փախածների հախից ո՞նց ենք գալու... Ասում են...— դիմեց Գրիգորյանին Սահակյանը, որին Գրիգորյանի պարզ ու ազնիվ բնավորությունը քաջ ծանոթ էր, և ինչպես բանակայիններից շատերը, Սահակյանը նույնպես իրեն հուզող խնդիրների մասին միշտ, ամենայն անկեղծությամբ զրուցում էր նրա հետ և հարկ եղած դեպքում խորհուրդներ ստանում:

— Ի՞նչ են ասում:

— Ո՞ր մեկն ասեմ, դրանց տեխնիկայի մասին հազար ու մի բան են պատմում:

— Ես քեզ կպատասխանեմ ընկեր Ստալինի խոսքերով,— մի քիչ մտածելուց հետո ասաց Գրիգորյանը.— «Սատանան այնքան սարսափելի չէ, որքան նրան պատկերում են»: Այ, նրանք խորամանկություններ էին անում և անում են. օրինակ, մի այսպիսի դեպք.— պատմում են, որ մի անգամ մեր մի զորամաս հարձակման գնալիս հանդիպում է թշնամու գնդացրերի մրրկային կրակին, և մարտիկները ստիպված են լինում կպչել գետնին, ու հենց որ մերոնք փորձում են գլուխ բարձրացնել, դարձյալ սկսվում է ուժեղ, խափանիչ կրակը: Չնայած մերոնց պատասխան կրակին,

հնարավոր չի լինում լռեցնել նրանց: Նկատվում է
այն, որ այդ մորկային կրակից, վազե-վազքի ժամա
նակ անգամ նույնիսկ վիրավորվող էլ չի լինում, բա
ցի մի նեղ հատվածում գրոհող մարտիկներից, որոնք գ
հեր են տալիս: Վերջապես գնդացրային կետերին հաս
նելուց հետո մերոնք տեսնում են, որ գնդացրային կե
տերում ոչ գնդացիր կա և ոչ անձնակազմ. այդ դեր
քերում միայն ռադիո-բարձրախոսներ են դրված լի
նում, որոնք միացրած են լինում ձախ թևում տեղա
վորված մի հաստոցավոր գնդացրի խրամատում գտնը
վող հաղորդչի: Այդ գնդացրի միակ գնդացրորդը, ո
գերի է ընկնում, հայտնում է, որ իրեն խնդիր է տր
ված պաշտպանել իր զորամասի նահանջը: Եվ այդ-
պես, նման խորամանկություններ նրանք անում են,
այս լավ պիտի իմանալ: Արդեն գերմանական բանակը
սոսկալի ջարդ է կրել Ստալինգրադի տակ և ետ է
շպրտվել: Մեզ էլ բաժին է ընկել մասնակցելու մեր
չքնաղ Կովկասի ազատագրման գործին, և մենք պետք
է ազնվությամբ ու պատվով կատարենք այդ:— Բայց
մեր տղաներին՝ Վարդանյանին, Գրոմովին և Իսաևին
ի՞նչ պատահեց, որ այսքան ուշացան,—շարունակեց նա
զգալի մռայլվելով և մի ծխախոտ վառելով սկսեց
ծխել:

— Իսկ հիմա մաքրեցեք հրացանները,— ասաց նա և դուրս եկավ հողատնակից:

— Ընկեր լեյտենանտ, թույլ տվեք սանմաս գնամ,— դիմեց Գրիգորյանին Սահակյանը՝ նույնպես դուրս գալով հողատնակից:

— Ի՞նչ կա:

— Գլուխս ցավում է:

— Գնա՛, շուտ կվերադառնաս: Բայց սպասիր, ես էլ գործ ունեմ այնտեղ, միասին գնանք,— ասաց Գրիգորյանը և սկսեց զննել գնդացիրը, թե արդյոք լա՞վ են մաքրել, որից հետո Սահակյանի հետ ուղևորվեց սանմաս:

***

Նրանք անցնում էին գյուղի կենտրոնական փողոցով, որը դղրդում էր անցնող տանկերի ու հրանոթներ քաշող մեքենաների ձայնից: Հաճախ պատահում էին շարքերով անցնող առանձին զորախմբեր, իսկ փողոցի նեղ մայթերով հապճեպ անցնում էին բանբերներն ու այլ մարտիկներ՝ հրամանատարների ուղեկցությամբ և կամ առանձին:

Դռների առաջ խմբված սակավաթիվ տեղացիները հետաքրքրությամբ դիտում էին զորքերի շարժումը:

— Մեծ ուժ ժամանեց այստեղ, վաղը գերմանացիների սևը կտանք,— ասաց Գրիգորյանը Սահակյանին՝ կանգ առնելով փողոցների խաչաձևման մասում, գերմանական ռումբի հարվածից ավերակ դարձած մի մեծ շենքի մոտ, և ասաց,— այս կողմն է, կարծեմ:

Նրանք շարժվեցին և առաջացան այդ փողոցով:

— Տես, է՛, անտերը քարը քարի վրա չի թողել, հարևան շենքերի պատերն էլ են խարխլվել,— նկատեց Սահակյանը՝ դիտելով շենքի մոտ բացված մեծ ձագարը:

Ապա իրեն շատ մոտիկ, քարերի և ջարդված փայտերի կույտի վրա նա մի քանի թերթ թուղթ նկատեց, որոնք փոքրիկ պտուտահողմի ուժով պտտվում էին համարյա քարերին քսվելով. Սահակյանն անմիջապես վազեց այն կողմ, թերթերից մեկը բռնեց ու բացականչեց.

— Լավ էլ բարակ թուղթ է, կարելի է պապիրոս քաշել:

— Հապա մի տեսնեմ,— դիմեց նրան Գրիգորյանը և Սահակյանի ձեռքից առավ՝ մի ծայրն այրված գրքի թերթն ու սկսեց կարդալ.

Բարձրացրի անձեռակերտ ես հուշարձանն իմ վեհ,
Չի մամռոտի դեպ այն տանող՝ ժողովրդի ճամբան,
Անհնազանդ գլխով նա բարձրացավ ավելի վեր
Հուշասյունից Ալեքսանդրյան:

684—4

... Պուշկինի ջերմ երկրպագու, հոգով բանաստեղծ Գրիգորյանն այս տողերը կարդաց սրտի մորմոքով ու մի այնպիսի հայացքով նայեց Սահակյանին, ինչպես ծնողն իր որդու մահվան բոթն իրեն բերողին:

Այդ ցավատանջ հայացքի ու դիմախոսության իմաստը չհասկանալով, Սահակյանը միայն կշտամբանք կարդաց նրա մեջ և ուսերը թոթվեց զարմացած ու ասաց.

— Ինչ է որ, չի քաշվի՞...

Գրիգորյանը պատասխանելու փոխարեն, ի զարմանս Սահակյանի, մի ծայրն այրված և փոշոտ թերթը դրեց շրթունքներին ու համբուրեց, դանդաղ առաջ գընաց և դեռ հետաքրքրությամբ ու զարմանքով իր դեմքին նայող ու կողքից քայլող Սահակյանին ասաց տրագիկ տոնով.

— Նրանք Պուշկինին են այրում... Այդ ահավոր է և ավելի, քան մանկասպանությունը: Օ՜հ, ցավում է գլուխս, Սահակյան: Այս չափազանց է, նրանք հրի են մատնում մեր սրբությունները, նրանք մեր հոգու գանձերն են ուզում կողոպտել, բայց անհնարին է, անկողոպտելին չես կողոպտի... Այդ սրբությունները մեր արյան մեջ են:

Հուզված Գրիգորյանը քայլում էր և մտածում. «Այդպիսի վերավորանքները արյունով են սրբվում, և ես երդվում եմ, պոետ, քո «հուշարձան»-ի այս սուրբ տողերով, որ, որպեսզի անմահ մնա «համբավը քո ռուս», կյանքս զոհաբերեմ»:

Եվ զոհաբերման միտքն այդ պահին նրան սրտագին ու քաղցր էր թվում...

Լեյտենանտ Գրիգորյանը բարձրագույն կրթություն ուներ և այն մարդկանցից էր, որոնք կյանքի, երջանկության բուն իմաստը պոեզիայի մեջ են գտնում: Նա Պուշկինի հանդեպ խորին սեր ու ակնածանք էր տածում, անգիր գիտեր նրա բանաստեղծություններից շատերը, «Եվգենի Օնեգին»-ից ամբողջ հատվածներ: Լինելով պոեզիայի սիրահարներից, նա լավ գիտեր ոչ

միայն մայրենի ու ռուս պոետներին, այլև դասական գրականության համաշխարհային մյուս սյուներին, սակայն հիանալով հանդերձ աշխարհահռչակ մյուս բանաստեղծներով, նա իր սրտի մեջ դարձյալ առաջնությունը Պուշկինին ու Թումանյանին էր տալիս:

Մինչ բանակ կանչվելը Գրիգորյանը դիսերտացիա էր գրում Պուշկինի և Թումանյանի արվեստի մասին, որը կիսատ էր մնացել... Եվ ահա այդ այրված թերթն այնպես վրդովեց ու դառնացրեց նրա ազնիվ հոգին, որ կարծես Պուշկինի դագաղի մոտ կանգնած Տուրգենևի ապրումներն ունեցավ նա այդ պահին...

Գրիգորյանի մտքում սկսեցին վերակենդանանալ նվիրական հուշեր, որոնք այս կամ այն կերպ առընչվում էին Պուշկինի անվան հետ:

Առաջին անգամ, երբ նա սիրահարվեց,— իսկ դա վաղուցվա պատմություն չէր,— Ցողիկին, որը նույնպես գրական ֆակուլտետից էր, միայն իրենից ցածր կուրսում, նվիրեց Պուշկինի «Կապիտանի աղջիկը» գրքի շքեղ հրատարակության մի օրինակ: Նա հիշեց Ցողիկին, այն քնքշաժպիտ աղջկան, որին ինքն էլ չգիտեր ինչու, նմանեցնում էր Միրոնովի աղջկան և նրա անունով Մաշա էր կանչում:

«Իսկ ինչո՞ւ հատկապես այս գիրքն ես նվիրում ինձ»,— ասաց աղջիկը՝ գեղեցիկ նազանքով այն իր ձեռքից վերցնելով ու իր աստղաբիբ ճառագայթող աչքերով նայելով Գրիգորյանին:

Առաջին անգամն էր նա այդքան բարեհամբույր կերպով խոսում իր հետ, և Գրիգորյանին թվում էր, որ եթե ինքը հենց այդ րոպեին մեռնի էլ, մի մեծ ցավ չի լինի իրեն համար, որովհետև նա երազել էր միայն այդ օրն ու րոպեն, երբ Ցողիկը կընդուներ իր նվերը, զրույցի կբռնվեր իր հետ... Այդ պահին Գրիգորյանը մոռացավ այն բոլոր խորիմաստ ու իր կարծիքով ոչ ոքի կողմից չասված սիրային քնքուշ խոսքերը, որոնք այնպես խնամքով ու երկար նախապատրաստել էր նա, և աղջկա հարցին կարողացավ միայն

պատասխանել, թե՝ որովհետև քեզ սիրում եմ այնպես, ինչպես Գրինյովն էր սիրում...

«Օ՜հ, դու իմ քաջ Գրինյով, շատ շնորհակալ եմ»,— ասաց աղջիկը բարձր ծիծաղելով, այնպես, որ Գրիգորյանի սիրտը տեղից թռավ այն մտքից, թե արդյոք այդ ծիծաղը հեգնանք չէ՞ նշանակում...

Բայց ոչ, հեգնանք չէր: Կախարդիչ աչքերը սիրով կապվեցին իր աչքերի հետ և այդ օրվանից կյանքի հմայքը հարյուրապատկվեց Գրիգորյանի համար: Հաճախակի տեսակցություններից նա տուն էր դառնում միշտ ջերմացած հոգով ու խանդավառված: Այդ տեսակցությունների ընթացքում նրանք ավելի շատ երազում էին, քան թե զրուցում: Գրիգորյանի քաղցր հուշերն ինչպես միշտ, այս անգամ էլ վանվեցին այն տխուր վերհուշով, որը կապված էր իր բանակ գալու հետ: Վերջապես նա դառնությամբ հիշեց իր հրաժեշտը հարազատների ու հայրենի քաղաքի հետ և այն դեպքը, որ մինչև հիմա կեղեքում էր նրա սիրտն անանց մորմոքով...

Այդ՝ իր բանակ գալու օրն էր: Կայարանը լիքն էր ժողովրդով: Կառամատույցում ամեն կողմից լսվում էին հրաժեշտի ջերմ ու տխուր խոսքեր: Այստեղ ու այնտեղ՝ մայրական սրտից պոռթկվող հեկեկանք... Գրիգորյանի հարազատներն էլ իրեն էին շրջապատել. մայրը գրկից բաց չէր թողնում նրան, բայց նրա հայացքը ժողովրդի մեջ որոնում էր մեկին:

«Այս ի՞նչու չեկավ, չէ՞ որ նա գիտեր»,—մտածում էր Գրիգորյանը և որոնում Ցոլիկին: Հնչեց արդեն երկրորդ զանգը: Նորից, արդեն տասներորդ անգամ համբուրվելով մոր և փոքր եղբայրների հետ, նա վագոն բարձրացավ: Դառն է անջատումը, բայց այն ավելի դառնացավ Գրիգորյանի համար: «Ո՞վ գիտե, արդյոք էլ երբևիցե կտեսնվե՞մ նրա հետ, այս ինչո՞ւ չեկավ»,— մտածում էր նա այն ժամանակ և դարձյալ որոնում: «Ա՜խ, գուցե նա ինձ...»

Գնացքը շարժվեց, էլի նա չկար, արդեն արագա-

ցավ ընթացքը․ նա չէր հեռանում դռնից, մայրը դեռ չարժում էր թաշկինակը: Եվ հանկարծ, Գրիգորյանը նկատեց Ցոլիկին, որը պոկվելով կառամատույցի ամբոխից, խելակորույս սկսեց վազել՝ ձեռքն օդում շարժելով... Ինքն այլևս չտեսավ նրան, միայն այդ պահին լսեց կոնդուկտորի ձայնը, որը Գրիգորյանի թևից քաշեց՝ հասկացնելով, որ ուզում է դուռը կողպել:

Այդ օրից արդեն կես տարի էր անցել, Գրիգորյանը վերջացրել էր լեյտենանտական դպրոցը, ճակատ էր մեկնում, սակայն միայն երկու անգամ էր նամակ ստացել Ցոլիկից ու իր վերջին նամակի պատասխանը դեռ չկար: Գրիգորյանը հազար ու մի վատ ենթադրություններ էր անում: Նրան միայն մխիթարում էր Ցոլիկի փոքր լուսանկարը, որը նա խնամքով պահում էր ձախ ծոցագրպանում, սրտի վրա և մենակ մնալիս, հաճախ հանում, դիտում էր երկար ու համբուրելով էլի տեղն էր դնում:

Այժմ նա նորից հանեց նկարը, նորից կարոտագին նայեց նրա լուսեղեն դեմքին, մտերիմ աչքերին ու կարծես զգաց այն քաղցր բույրը, որ միշտ գալիս էր Ցոլիկի մազերից, ապա դրեց գրպանը՝ Պուշկինի հատորի այրված թերթի հետ միասին...

Նրանք մոտեցան մի երկհարկանի շենքի, որի առաջ բանակայիններ կային խմբված: Դրանք հիվանդ մարտիկներ էին, որոնք սպասում էին բժշկական օգնության՝ ոմանք նստարանների վրա նստած, ոմանք կանգնած: Առաջին հարկի մի սենյակի կիսաբաց դռան առաջ կանգնած էր մի քույր՝ սպիտակ գոգնոցով, կարդում էր ձեռքում բռնած ցուցակը և հիվանդներին մեկ-մեկ ներս էր թողնում բժշկի մոտ:

— Ա՛յ, հենց դա է մեր զումարտակի նոր սան հրահանգչուհին,— ասաց Գրիգորյանը Սահակյանին:

Մի բանակային, որ սանմասի դռան առջևի ծառերից մեկին հենված, ինչ որ գիրք էր կարդում, հայացքը գրքից կտրելով, նկատեց Գրիգորյանին ու ձայն տր-

վեց՝ ուղղվելով և ձեռքը դեպի Գրիգորյանը պարզելով.

— Գրիգո՞ր...

Գրիգորյանը զարմացած կանգ առավ և նկատելով իրեն ժպտացող բանակայինին, շարժվեց դեպի նա՝ աչքերին չհավատալով:

— Վա՜հ, Թոշակի խնդիր, այդ դու ե՞ս...

Բանակայինը, որին դիմեց Գրիգորյանը, իր համալսարանական ընկերներից էր և նրան Թոշակի խնդիր մականունն էին տվել նրա համար, որ մի անգամ սեսիաների ժամանակ մի քանի առարկաներից կտրվել էր, որի պատճառով և թոշակը կտրել էին ու դրանից հետո, ինչ խոսակցություն էլ լիներ ընկերական շրջանում, նա ընդմիջում էր այս խոսքերով. «Տղերք, էդ բոլորը հեչ է, բանը թոշակի խնդիրն է»:

— Այ բա՜րև, սիրելի Թոշակի խնդիր,— ասաց Գրիգորյանը՝ նրա հետ դրկախառնվելով,— հիմա ի՞նչն է կարևորը, էլի՞ թոշակի խնդիրը:

— Ոչ, հիմա արդեն՝ վրեժի՛ խնդիրը,— ասաց բարեհոգի ժպտալով Հայկը,— այդպես էր նրա անունը:

— Դե մի պատմիր, այս ի՞նչ բան է, ախր դու նույնպես սովորում էիր լեյտենանտական դպրոցում, այդ ինչպե՞ս, մի՞թե չվերջացրիր, ես քեզ շարքայինի հագուստով եմ տեսնում...

— Դու չգիտե՞ս, որ ես առհասարակ ձախորդ մարդ եմ, սիրելիս, իհարկե ավարտեցի և կոչում ստացա, բայց...

— Բայց ի՞նչ, ի՞նչ պատահեց:

— Դեռ կպատմեմ, բայց չմոռանամ քեզ մի ուրախալի լուր հաղորդել, միայն աչքալուսանքը քեզ վրա է...

— Աչքիս վրա,— ասաց Գրիգորյանը սաստիկ հետաքրքրված և հուզմունքով մոտենալով, թե չլինի նրա մասին է խոսքը:

— Ցոլիկն այստեղ է, մի կես ժամ առաջ մեզ հետ ժամանեց:

— Աստված իմ, մի՞թե, հո չե՞ս սխալվում, գուցե դու ուրիշի՞ն ես նրան նմանեցրել...

— Չէ՛, ի՞նչ ես ասում, հետը խոսել եմ, նա կապավոր է, կամավոր է եկել և N գնդի կապի դասակումըն է։ Նրանք տեղավորվել են կարծեմ այս մասերում,— ասաց Հայկը՝ ձեռքով ցույց տալով գյուղի հյուսիսային կողմը։

Գրիգորյանի ուրախությունն աննկարագրելի էր։ «Վերջապես ես նրան կտեսնեմ», կրկնում էր նա մտքում։

Մի առժամանակ նա խորասուզվեց քաղցր մտորումների մեջ՝ երևակայելով իր հանդիպումը Ցողիկի հետ, ապա դիմեց նույնպես ժպտացող Թոշակի խնդրին,— դե մի պատմիր քո պատմությունը, այդ ի՞նչպես եղավ, ա՛յ ճախորդ Թոշակի խնդիր։

— Ձախորդ ասացիր ու Թողիր, դե այսպես եղավ, էլի, զորքս կորցրի...

— Ի՞նչպես թե...

— Է՛, դու ինձ չգիտե՞ս, հո խամ չես, իմ ցրվածությունը միշտ տունս քանդում է, էդ անտեր առարկայի պատճառով եղավ բոլորը։

— Ի՞նչ առարկա։

— Ախր բարձրագույն մաթեմատիկայից պարտք մնացի, գրքերը հետս բերել եմ, ազատ ժամերին միշտ զբաղվում եմ, դե պատերազմն էլ հո հավիտենական չէ՞, կպրծնենք, կգնանք, իսկ Մայսևիչի ձեռքից հեշտ չես ազատվի, սեսիայի ժամանակ մեկ էլ տեսար, նորից կտրեց...

— Ի՞նչ, երևի մտադիր ես այդ գրքերը հետդ նաև ֆրո՞նտ բերել...

— Բա, դե իհարկե, կարծում ես այնտեղ ժամանակ չկա՞, դու պարապող ասա,— խորիմաստ կերպով եզրափակեց Թոշակի խնդիրը։

— Այդ բոլորը լա՛վ,— հեգնանքով դիմեց Գրիգորյանը նրան,— հիմա գանք քո ատրճանակազրկմանը։

— Ատրճանակազրկումս այսպես եղավ.— մի երկու օր

առաջ, երբ դպրոցն ավարտելուց հետո մեզ ուղարկեցին այստեղ, Ասլանբեկ գյուղը, որտեղ և նշանակում պիտի ստանայինք,— նոր ժամանած պահեստայինների հրամանատարությունն էինք ստանձնելու: Երեկոյան ցուցակները տվեցին մեզ և հայտնեցին մեր դասակների համարները: Բոլորը քնեցին «ատբոյից» հետո, իսկ ես խրճիթում նստած, ատացի մի քանի խնդիր վճռեմ մոմի լույսով: Մեկ էլ քունս տարավ, գլուխս դրեցի սեղանին և այդպես կես–քուն, կես–արթուն, աչքս ընկավ պատուհանով նայող լուսնին: Լուսինն ինձ թվում էր քառակուսի արմատի տակ և մտածում էի, թե ի՞նչպես հանեմ արմատի տակից: Մեկ էլ ընկերներիցս մեկը բղավեց,— հե՛յ, ի՞նչ ես անում, պաժար տվիր, է...— Վեր թռա և ի՞նչ.— մոմն այրվել, թափվել էր դասակիս ցուցակի վրա ու այժմ էլ ցուցակն էր այրվում: Հանգցրի ու հազիվ էի պառկել տեղիս մեջ, մեկ էլ՝ տագնապ... Վազեցինք դուրս: Մեզ կարգադրվեց շտապ շարել մեր դասակները: Դե հիմա արի դասակ շարի, ցուցակ չունեմ, միայն հիշում եմ, որ երրորդ դասակն է իմը: Շուտով այստեղ ու այնտեղ իրենց դասակները շարքի կանգնեցրած լեյտենանտներն սկսեցին հրահանգներ տալ և դեկուցել: Շտապ կերպով պիտի այդտեղից շարժվեինք: Ես դես ու դեն ընկա՝ երրորդ դասակ բղավելով: «Այստեղ է,»—մոտիկից պատասխանեցին ինձ: Գնամ ի՛նչ տեսնեմ. դասակը շարքի է կանգնած և մի լեյտենանտ հրահանգներ է տալիս. «Երրորդ դասակ, լսիր իմ հրամանը», դիմեցի ես մարտիկներին:

— Թողնել, ես եմ այստեղ հրամանատարը,— բարկացած բղավելով, մոտեցավ ինձ նրանց հրահանգներ տվող լեյտենանտը:

— Ո՛չ, ես եմ այստեղ հրամանատար,— բղավեցի ես,— մի՞թե սա երրորդ դասակը չէ...

Տեսնելով, որ լեյտենանտի հետ գլուխ չեմ հանում, անցա դասակի մյուս կողմը և նույնպես սկսեցի հրահանգել:

Բանակայինները չէին իմանում թե ինչ անեն և ոմանք ծիծաղում էին։ Հակառակի պես հանկարծ մեզ մոտեցավ գնդի հրամանատարը և ապշած մի քիչ մեզ նայելուց հետո, սկսեց, ինչպես մի կայծակ... Պարզվեց, որ դա երկրորդ գումարտակի երրորդ դասակն է, իսկ ինձ տրված է եղել առաջին գումարտակինը, ու ես մոռացել էի, ցուցակ էլ չունեի, էլ ի՞նչ երկարացնեմ...

— Օ՜հ, իսկապես որ անմահ ես, Սերվանտես,— ընդմիջեց Գրիգորյանը և հարցրեց,— հետո՞։

— Հետո էլ ի՞նչ, մի բարկացավ վրաս, որ աստված հեռու տանի։ Ասում է. «Ես դու դեռ ճակատ չընկած, գլուխդ կորցրել ես, լա՛վ ճակատամարտ կչահես, խոսք չկա», և այդպես, հարց հարուցեց ինձ աստիճանազրկելու, և զրկեցին...

— Բա ի՞նչ ես մտադիր անել։

— Ճակատում այնպիսի մի խենթ քաջություն պիտի անեմ, որ էլ դու պրծար... Եվ կոչումս նորից կըստանամ։

Գրիգորյանն ու Թոշակի խնդիրը դեռ զրուցում էին այսպես, երբ սանմասի դռների միջև երևաց մի ուրիշ քույր։ Թոշակի խնդիրը, որ այն կողմն էր նայում, այդ քրոջը նկատելով ասաց.

— Մեր տղա, այսօր հա՛ ծանոթների եմ պատահում, ա՛յ, նա էլ քրոջս ընկերուհին է, կներես, մի րոպե...

Ու վազեց քրոջ կողմը։ Հասնելով նրան, առանց այլևայլության հիմա էլ նրա հետ գրկախառնվեց և համբուրվեց։ Դեռ նրանք երկու բառ էլ չէին փոխանակել, երբ քրոջը ներսից կանչեցին։ Քույրը ներս գընաց, իսկ Թոշակի խնդրին, որ ուզում էր հետևել նըրան, չթողեցին և նա վերադարձավ Գրիգորյանի մոտ։

Գրիգորյանն այդ պահին Ցոլիկի մասին էր մտածում։ Շուտով Թոշակի խնդրին իրենց սանհրահանգիչը կանչեց։ Նրանց հիվանդներին բոլորին բժիշկն արդեն նայել էր և նրանք գնում էին։ Թոշակի խնդիրը սրտա-

ուշ հրաժեշտ տվեց Գրիգորյանին և գնաց: Գրիգորյանը, որ մտածում էր անմիջապես գնալ Ցոլիկին գտնելու, Սահակյանի հետ շտապ մտավ սանմաս՝ իր գործը վերջացնելու: Նա անձնական փաթեթներ վերցրեց իր դասակի մարտիկների համար, ապա մի քիչ փոշի էլ՝ Սահակյանի համար, և վերջինիս հետ շտապ դուրս եկավ, որ անմիջապես սկսի որոնումը: Բոլեն թանկ էր, ո՞վ գիտե, գուցե այդ օրը կամ հետևյալ օրը շարժվեին այդտեղից: Գրիգորյանն այս խորհրդածություններով գնում էր Սահակյանի հետ, երբ հանկարծ, հեւիհև վազելով երևաց նրա կապավորը և պատվի վերցնելով, հայտնեց, որ նրան շտապ կանչում են շտաբում...

Ինչպես սառը ջուր լցնեին Գրիգորյանի գլխին...

Նա լսեց կապավորին՝ հոնքերը խոժոռած և հուզմունքից շրթունքները կրծելով ու Սահակյանի ուղեկցությամբ սրտաբեկ շարժվեց շտաբի կողմը:

***

Արդեն գիշեր էր: Հողատնակում բոլորը քնած էին այն խոր ու քաղցր քնով, որով միայն բանակայիններն են քնում:

Հողատնակի առաջ, խրամատում դրված գնդացրի մոտ պահակ էր կանգնած Պետրովը, հրացանը ձեռքին և զգաստ հսկում էր՝ աչքերը հառած գիշերվա խավարին ու լռությունը սրած:

Հանկարծ նա զգույշ ոտնաձայն լսեց ոչ այնքան հեռվից և հրացանի փողն առաջ ուղղելով, ձայն տվեց.

— Կանգնի՛ր, ո՞վ է գալիս:

Պատասխան չկար և քայլերը մոտենում էին:

— Կանգնի՛ր ո՞վ է գալիս,— սպառնալի շեշտով ու ձայնն ավելի բարձրացնելով բղավեց Պետրովը և հրացանի փականակը շրխկացրեց:

— Ես եմ, Պետրով, կեցցե՛ս, լավ ես հսկում,— լսվեց մի ձայն:

— Ընկեր լեյտենա՞նտ:

— Ես եմ, այդ ինչպե՞ս է՝ քեզ դեռ չեն փոխել,—

ասաց Գրիգորյանը նրան մոտենալով,— ասենք՝ էլ կարիք չկա, հիմա գնում ենք...

Գրիգորյանը մտավ հողատնակ, հանեց իր գրպանի լապտերը, վառեց և որոտընդոստ ձայնով բղավեց.

— Ոտքի՛, ի զեն...

Նրա ահեղադղորդ կանչից ցնցվելով բոլոր բանակայինները վեր թռան տեղերից՝ «ի զեն» հրամանի ձայնը լսելով, և նրանք, ովքեր առանց հանվելու էին քնել, իսկույն վազեցին դեպի զենքերը, իսկ նրանք, ովքեր հանել էին կոշիկները, սկսեցին հապըշտապ հագնել:

— Շո՛ւտ, շարվել դըրսում,— լսվեց Գրիգորյանի նոր հրամանը՝ արդեն դըրսից:

Բանակայինների մեծ մասն իսկույն վերցնելով իրենց հրացաններն ու գնդացրի փամփուշտներով լի արկըղները, դուրս վազեցին:

— Էս դեռ քնա՞ծ է, ա՛յ սրա տունը քանդվի,— ասաց Եղիներաշվիլին ոտքի փաթթանն ամրացնելով և նայելով դեռ մուշ-մուշ քնած Սիմոնյանին, որն իր կողքին էր պառկած: Ապա ոտքո՛վ խփեց Սիմոնյանի կոշիկին՝ բղավելով «վե՛ր կաց»:

Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ հեշտ չէր իսկույն արթնացնել խորը քնող Սիմոնյանին:

— Ոտիցը քաշի,— ասաց արդեն կազմ-պատրաստ Զավարյանը:

Եղիներաշվիլին փոխանակ ոտքից քաշելու, թեքվեց նրա վրա և երկու ձեռքով սկսեց ցնցել նրան ու բղավել,— վեր կա՛ց, տնաքանդ, կուկուռուզդ տարան...

Սիմոնյանը նստեց տեղում՝ աչքերը տրորելով, ապա ձեռքով ստուգեց գլխատակը, որտեղ իր իրերի տոպրակն էր դրված, ու հնարավորին չափ շտապելով, ինքն էլ զինվեց, բայց գլխարկը չէր գտնում: Սկսեց որոնել:

— Շո՛ւտ արա,— ասաց Եղիներաշվիլին և դուրս գնաց:

Այդ ժամանակ, Զավարյանի հանձնարարությամբ

Պետրովը մտավ հողատնակ՝ Սիմոնյանին շտապեցնելու և բղավեց․

— Շտապի՛ր, գումարտակի հրամանատարն եկել է, ի՞նչ ես անում։

Այստեղ Պետրովն իրեն համար մի շատ սովորական հիշոց էլ ավեց, որն ի դեպ, նա գործ էր ածում ոչ միայն բարկանալիս, այլև ուրախ ժամանակ, որպես «կոմպլիմենտ»՝ այս կամ այն ընկերոջն ուղղված։

Վերջապես Սիմոնյանը գլխարկը գտավ և շտապ դուրս գնաց՝ բահը մոռանալով ու բոլորից վերջում շարքի կանգնեց։

— Զավարյա՛ն, գնդացիրը պատրա՞ստ է ավտոմատ կրակի,— հարցրեց Գրիգորյանը։

— Այո, ընկեր լեյտենանտ։

— Բոլորն այստե՞ղ են։

— Բոլորը, բացի հետ ընկած երեք հոգուց։

— Գնդացրի հաստոցը տվեք Սիմոնյանի շալակը,— կարգադրեց Գրիգորյանը․— դե՛, այժմ, առանց շշուկի, առանց որևէ չխկոց-թխկոցի, քայլով մարշ...

Կալինինսկում պաշտպանություն բռնած ամբողջ զորամասն այդ րոպեին այդպիսի շարժման մեջ էր գտնվում։ Լսվում էին միայն հրամանատարների զուսպ, ցածր ձայնով տրված հրամանները և դումակի ձիերի փնչոցն ու վատ յուղած անիվների երբեմնակի ճռինչը։

— Գնացի՛նք,— խորհրդավոր տոնով ասաց Զավարյանն Էդիներաշվիլուն։

— Գնա՛ցինք, կացո...— պատասխանեց նրա կողքից քայլող Էդիներաշվիլին։

Եվ այդպես, նրանք ճակատ էին գնում, որը միայն մի հինգ կիլոմետր էր հեռու նրանցից։

Լեյտենանտ Գրիգորյանը քայլում էր դասակի կողքից և ծխում էր լուցկու տուփի մեջ քողարկած իր ծըխախոտն ու մտածում․ «Ախ, դժբախտ եմ ես... Նա այնքան մոտ էր ինձ և ես էլի չկարողացա տեսնվել։ Գոնե կյանքիս այս վճռական մոմենտին հանդիպեի

նրան: Արդյոք գոյություն չունի՞ ճակատագիր, որին այնպես հավատում էին հին հույները: Հապա սա ի՞նչ է...»: Եվ մի ներքին ձայն նրան ասում էր՝ «դու այլևս չես տեսնի նրան», ու խորապես հուզվում, մղկըտում էր նրա սիրտը, բայց նա միաժամանակ աշխատում էր քաջալերել իրեն այն հույսով, որ գուցե ամեն ինչ բարեհաջող վերջանա, և պատերազմից հետո, որից իրենք հաղթանակով կդառնան, որից Ցողիկն էլ անվնաս կվերադառնա, հայրենի նվիրական եզերքում իրենք կգտնեն և կվայելեն այն քաղցր կյանքը, լի պոեզիայով, որի շեմքին էին և որից այնպես անսիրտ ու չարաղետ կերպով զրկեց պատերազմը...

Այդպես, մոտ երկու կիլոմետր անցնելուց հետո, նրանք ուրիշ մասերի հետ կանգ առան մի շատ ընդարձակ, գոգավոր տարածության վրա, որն ընկած էր երկշարք դասավորված ցածր բլուրների միջև և այդ մոմենտին իրենից ներկայացնում էր անաղմուկ եռ ու զեռով կենդանացած մի հսկա ճամբար, որտեղ սակայն պակասում էին միայն վրանները: Հսկա քանակությամբ զորք էր կուտակված այնտեղ, և մի կողմից էլ դեռ ուրիշ միավորումներ էին ժամանում:

Այդ տարածության վրա, ըստ գումարտակների, վաշտերի խմբված մասերում, այդ ժամանակ մթերք և տաք հագուստ էր բաժանվում:

Գրիգորյանի դասակն ըստ հրամանի կանգ առավ այնտեղ, իրենց վաշտի դասակների մոտ, մի բլրի ըստորոտում, ուր երևաց շուտով և մի բեռնված եռանդակ: Վաշտի ավագի հետ, փոխադասակապետերը և մի քանի բանակայիններ դիմեցին այնտեղ՝ հանդերձանք և պարեն ստանալու:

Մի տաս րոպեից հետո, Զավարյանը, որ նույնպես գնացել էր Սահակյանի ու Պետրովի հետ, վերադարձավ: Նրանք իրենց հետ բերին նոր շինելներ, համազգեստ, պաքսիմատ, ծխախոտ:

Զավարյանը վար դնելով պաքսիմատով լի տոպրակները իրեն շուրջը խմբվող ընկերների մոտ, ասաց.

— Սիմոնյա՛ն, շուտ, մի աման վերցրու և գնա խմիչքի։

— Բայց տես, ճանապարհին չխմես...— կատակով ավելացրեց Խդինեբաշվիլին՝ լավ իմանալով, որ նա ոգելից խմիչքներ գործ չի ածում։

— Ընկեր փոխգասակապետ, սուխարին բաժանիր, հետո գնամ։

— Տո գնա՛, մի վախի, քո բաժինը բոլորից շատ եմ տալու, այ տրաքվես դու, ինչքան էլ ագահ. հիմի խըմիչքն էնտեղ վերջացրին...

Սիմոնյանը գնաց օղի բերելու, իսկ Զավարյանը գործի անցավ՝ սկսեց բաժանել պարենն ու հացուստը։

Մինչդեռ շարքայինները պաշար և նոր հագուստ էին ստանում, նույն ժամանակ, բանակայիններով ամբոխված այդ տարածության վրա, այստեղ ու այնտեղ, ազատ տեղերում, աստղերի աղոտ լույսի տակ երեվում էին փոքր խմբերով հավաքված զինվորականներ, որոնք շրջանաձև կանգնած, լսում էին իրենցից մեկի շշուկով արտասանվող բառերը։ Այդ՝ լեյտենանտներն էին և միջին հրամկազմի ուրիշ հրամանատարներ, որոնք լսում էին շտաբից տրված նոր հրամանների հաղորդումը և հրահանգավորումը, որը կատարվում էր մայորների կամ կապիտանների միջոցով։

Շուտով այդ նախապատրաստական աշխատանքները ավարտեցին և ողջ զորամասը շարասյունով շարժվեց այդտեղից։

Չնայած այն բանին, որ բոլորն էլ լավ գիտեին, թե ուր են գնում, աշխույժ տրամադրություն էր իշխում շարքերում։ Խդինեբաշվիլին, որ իր բաժին ծխախոտի մի մասը տալով խմել էր նաև Սիմոնյանին տրված օղին, ցածր ձայնով անվերջ կատակներ էր անում ընկերների հետ և իր կատակներով խաղում էր հատկապես Սիմոնյանի հոգու հետ։

— Խդինեբաշվիլի, քանի մոտենում ենք ռազմաճակատին, սերս դեպի կյանքը մեծանում է,— ասաց Սահակյանը։

— Զարմանալի ի՞նչ կա որ... Սիմոնյանի մոտ էլ դեպի կուկուռուզն է մեծանում սերը:

— Հա՛ դուրս տո՛ւր, զավզակ,— քրթմնջաց Սիմոնյանը:

— Խոսակցություններին վերջ տվեք,— լսվեց շարքի մոտով գնացող Գրիգորյանի ձայնը, և մարտիկները մի առ ժամանակ լռեցին:

Մի քանի կիլոմետր առաջ գնալուց հետո, զորասյունը կանգ առավ մի ճամբաբաժանում, ուր մի սյունի վրա՝ սպիտակ սլաք նկարած տախտակ էր ամրացված: Զորասյունի ավանգարդը հասնելով տախտակին, փոխեց ուղղությունը և ճանապարհի մի ճյուղով սկսեց հակառակ՝ Թիկունքի ուղղությամբ ընթանալ:

— Ա՛յ տղա, ետ դառանք,— զգալի կերպով ուրախացած, ասաց Սիմոնյանը:

— Հա է՛, հա՛, կացո, տուն ենք գնում, իսկույն հեգնանքով մեջ մտավ Էդիներաշվիլին:

— Տուն գնացող էլ կլինի, ինչո՞ւ չէ...— նկատեց Զավարյանը:

Մի քիչ հետո երբ զորասյունը դարձյալ փոխեց ուղղությունը և սկսեց ընթանալ դեպի ճակատ, հուսախաբված Սիմոնյանը մոռանալով որ արգելված է ծխել, մի ծխախոտ վառեց:

— Թողնել ծխելը, ո՞վ է այդ ապուշը,— խիստ տոնով ձայն տվեց Գրիգորյանը՝ նկատելով ծխախոտի կրակը:

— Ծամի՛, ծամի՛, կացո,— օգնության հասավ Էդիներաշվիլին և զայրացած Սիմոնյանն այդպես էլ արավ:

Շուտով սկսեց անձրև գալ, որը բարեբախտաբար շուտ կտրվեց· ուժեղացող քամու հետևանքով ամպերը քշվեցին դեպի Կովկասյան լեռները, պարզորոշ երևաց լուսաստղը և ուժեղ ցրտեց:

Արդեն պարզ որոշվում էին առարկաները, երբ զորամասն ընդհուպ մոտեցավ ճակատին, որի գիշերային

համեմատական թույլ աղմուկը զարթնող օրվա հետ սկսեց ուժեղանալ և մոլեգնել:

Զորամասն առանց բացազատվելու, դեռ քայլում էր քողարկված տեղանքով, որը մի օր առաջ պատերազմի բուն թատերաբեմ էր եղել և այժմ Կարմիր Բանակի առաջ գնալու հետևանքով դարձել էր մերձավոր թիկունք:

Այդ տարածությունների վրա, այստեղ ու այնտեղ, խրամատների ու արկերի ձագարների մոտերքում և այլուր դեռ թափված էին լիովին չհավաքված զենքերի զանազան տեսակներ, ինչպես և սաղավարտներ, հակագազերի տուփեր ու պայուսակներ: Մի տեղ էլ ձիերի դիակներ կային ընկած՝ կիսով չափ ջարդված ու այրված անիվներով և ճաշը շուրջը թափված դաշտային խոհանոցի մոտ:

Երբ դուրս եկան քողարկված տեղամասից, որը մի հեղեղատ էր, հրաման տրվեց բացազատվելու: Բացազատվեցին հենց շարժման ընթացքում և շարունակեցին դարձյալ առաջ գնալ:

Շուտով այդ զորամասի վերևում երևաց հակառակորդի հետախույզ սավառնակը, որին կատակով ճակատի ավագ էին անվանում:

Տեղանքը հարթ էր ու ավազոտ, և ահա դեռ նոր ճակատ մտնող բանակայինների ուշադրությունը գրավեցին վառոդի ծխի հոտով հագեցած վաղորդյան կիսախավարի մեջ երևացող լուսատու վարդագույն գընդակները, որոնք սուրում էին երամով՝ թռչող սրընթաց լուսատտիկների նման:

— Ինչքան էլ սիրուն են անտերնները, հենց իմանաս թե կայծոռիկ լինեն,— անկեղծ հիացմունքով ասաց Սիմոնյանը:

— Գեղեցիկ են, բայց զգույշ, ճակատիդ չնստեն, շատ թունդ են կծում,— հարեց Զավարյանը:

— Խրամատավորվե՛լ,— լսվեց Գրիգորյանի հրամանը և մարտիկներն իսկույն գործի անցան:

Նոր մարտի մտնող այդ զորամասը, որ օգնության

էր գնում և համալրելու էր առաջին գծում կռվողներին, խրամատավորվեց լայն ճակատով, մինչ նոր հրաման կլիներ առաջ գնալու:

Նրանք գտնվում էին Կարմիր Բանակի կռվող զորամասերի թևում և նշանակված էին առայժմ հակառակորդին թևային հարված հասցնելու համար: Եվ այժմ իրենց դիրքերից՝ սոսկ հանդիսականների նման դիտում էին իրենց առջևում հետզհետե ավելի ուժեղ թափով ծավալվող գործողությունները՝ դեռևս անձամբ չընդգրկվելով կրակի և արյան կատաղի հորձանքի մեջ:

Գրիգորյանն իր խրամատից ուշադիր դիտում էր ռազմադաշտը: Արդեն ծագել էր արեգակը և ամեն ինչ պարզ երևում էր: Ռազմադաշտում, այստեղ ու այնտեղ, ուր հաճախակի ընկնում էին ականներն ու արկերը, սպիտակ մեծ քուլաներով ծուխ էր բարձրանում, որին անմիջապես հաջորդում էին պայթյունները: «Բո՛ւմ, ճո՛ւկ...»— լսվում էին ամեն կողմից արձակված ականների կրկնակի պայթյունները մեկն առաջին ձայնն արձակելիս և երկրորդը՝ արդեն ականի ընկնելուց հետո՝ պայթելիս: Երկուստեք գնալով ուժեղանում էր մարտկոցների տեղատարափ կրակը հսկայական տարածության վրա, և այդ կրակին կոորդինացված, այդ ժամանակ գործում էին զենքի մյուս բոլոր տեսակները: Անթիվ հրազենների երախներից դուրս ժայթքող բոցն ու ծուխը, ցնցող պայթյունների ու որոտների հետ այնպիսի մի դիվական հանդես էին ստեղծել, որ թվում էր, թե առասպելական տարտարոսից դուրս են խուժել բոլոր մթին ուժերը և միացած որոտի, կայծակի ու բնության մյուս ահեղ երևույթների հետ, բռնվել են անասելի, չտեսնված երկունքով, որ սարսափ ծնեն...

Հեռադիտակը աչքերին պահած Գրիգորյանը նկատում էր, թե ինչպես այնտեղ, ուր արկն էր ընկնում և հոշոտելով երկրի կուրծքը հողի վիթխարի զանգված էր շպրտում դեպի երկինք, վայրկենապես փոշուց ու

ծխից կազմված, վերևից ծվատված կիսաշրջանի ձևով, մահվան մի վարագույր էր ստեղծվում, որի հետևում և ծալքերի մեջ ընդմիշտ մարում էր արևի լույսը՝ մոտերքում գտնվող մարդկանց համար...

Ամենուր լսելի էին նաև գնդակների բզզոցն ու սուլոցը, իսկ վերևում, օդում սովետական ինքնաթիռները, թվով տաս հատ, երբեմն ծածկվելով ամպերի ետևում և նորից հայտնվելով՝ կռիվ էին մղում հակառակորդի ինքնաթիռների դեմ՝ բազմազան ձևերի թռիչքներ կատարելով և անընդհատ կրակելով:

Երբեմնակի սուլելով, մի քանի գնդակներ էին անցնում Գրիգորյանի մարդկանց խրամատների վրայով. սակայն պարզ էր, որ դրանք նպատակով այդ կողմն ուղղված գնդակներ չէին, և քանի որ դեռ այդ խրամատները չէին գնդակոծվում, բանակայինները կարճ տպավորություններ էին հաղորդում միմյանց:

Սիմոնյանը, որ թեպետ արդեն սարսափով էր համակվել, սակայն աշխատում էր քաջասիրտ երևալ,— ինքն էլ երբեմն բարձր ձայնով իր խոհերն ու տպավորություններն էր արտահայտում:

— Այ տղա՛, էս անտեր պատերազմը ի՞նչ հետաքրքիր բան է եղել, ես չեմ իմացել, միայն որ սպանվելն էլ չլիներ...

***

Ճիշտ այնպես, ինչպես դաշտի մի մասի վրա եկող ուժեղ կարկուտը հանկարծ իր ոլորտի մեջ է վերցնում փրկված թվացող կանաչ արտերը, ահա այդ ձևով, հանկարծակի մի քանի հաստոցավոր գնդացրերից գերմանացիք սկսեցին հարվածել այն դիրքերին, ուր ամրացել էին նոր ժամանածները:

Գրիգորյանի գնդացրային դասակը խրամատավորվել էր նույն գնդի երկրորդ գումարտակի ձախ թևում՝ խնդիր ունենալով իր կրակով պաշտպանել հետևակի առաջխաղացումը: Այն պահին, երբ հակառակորդն

սկսեց գնդակոծել նրանց դիրքերը, գումարտակի հրամանատարի հրամանի համաձայն, հետևակն սկսեց համազարկերով պատասխանել թշնամուն։ Գրիգորյանը նկատեց դեպի իրենց շարժվող հակառակորդի գորշ մասսան։ Գերմանացիք այդ հատվածում կարճ վազեվազքով առաջ էին գալիս։

— Կարճ հերթերով հակառակորդին կրա՛կ,— հրամայեց Գրիգորյանը՝ նախօրոք նշելով նշանացույցը։

Զավարյանը կրկնեց հրամանը, և առաջին համար Պետրովը, որ Էդինէրաշվիլու հետ պառկած էր գնդացրի հետևում ու սրտատրոփ այդ հրամանին էր սպասում, գործի անցավ։ Գնդացիրն սկսեց ճարճատել։

Մաքսիմի մյուս համարներն էլ սկսեցին հրացաններից կրակել, իսկ Գրիգորյանը՝ իր ավտոմատից։

Կրակելու հետ միաժամանակ, Գրիգորյանը հաճախ դիտում էր հեռադիտակով։ Երբ առաջացող թշնամին բավականին մոտեցավ, Գրիգորյանի գնդացիրն անցավ անընդմեջ, ավտոմատ կրակի։ Լսվում էին նաև փոքր տրամաչափի ականանետային մարտկոցի հրամանատարի և մարտիկների ձայները։ Նրանք իրենց ականանետները տեղավորել էին գնդացրորդներին մոտիկ ու հաճախ լսվում էին և նրանց հրազենների պայթյունները։

Գրիգորյանը շուտով նկատեց, որ իրենց հատվածում առաջացող թշնամու շղթան, ընդդիմադիր ուժեղ կրակի հանդիպելով, գետնին կպավ և սկսեց խրամատավորվել։

«Ա՛յ տերը մեռնի, ես որի՞ պատասխանը տամ հիմի, վե՞րև կրակեմ, թե՞ առաջ...»— ասաց Սիմոնյանն ինքն իրեն և գլուխը թաղեց խրամատի մեջ։

— «Բո՛ւմ, ճո՛ւկ...»— լսվում էին ամեն կողմից և նրան թվում էր, թե երկինքը փլվում է գլխին։

Հանկարծ երկրորդ գումարտակի դիրքերի առաջ ընկավ մի ական, ապա՝ երկրորդը, երրորդը...

Ականների բեկորները սփռվեցին չուրջը, մոտ թռչող բոռերի բզզոցի նման ձայն արձակելով։ Ապա լսվեցին մի քանի ճիչեր։

— Առա՛ջ, առա՛ջ,— հրաման տվեց իսկույն, և հետևակը դուրս եկավ դիրքերից: Մի քանիսը հենց այդտեղ ընկան՝ խրամատների առաջ, իսկ մյուսները կարճ վազելվազքով առաջ գնացին: Նույն մոմենտին մոտիկ թաքստոցում գտնվող սանիտարներն ու քույրերն սկսեցին վիրավորներին խրամատները քաշել և առաջին օգնություն ցույց տալ ուժեղ կրակի տակ:

Գրիգորյանի գնդացիրը տեղավորված էր համեմատաբար բարձր տեղանքում, մի փոքր բլրի վրա: Այդհամար դիրքից գնդացրորդները շարունակեցին կրակ վարել այնքան ժամանակ, մինչև երկրորդ գումարտակի բանակայինները հասան նոր բնագծի և պառկեցին: Այդպիսով, հետևակի առաջխաղացումը պաշտպանելուց հետո, Գրիգորյանը հրամայեց գնդացիրը երկու հարյուր մետր առաջ տանել՝ նախօրոք ընտրելով հարմար մի կետ, որը դարձյալ, խրամատավորվող հետևակի ձախ թևում էր գտնվում:

Հաստոցավոր գնդացրի առաջին և երկրորդ համարները,— Պետրովն ու Խդինեռաշվիլին,— կուզեկուզ սկսեցին գնդացիրն անիվների վրա առաջ տանել և արագությամբ անցան այդ տարածությունն ու առանց փորձության տեղ հասան՝ չնայած իրենց շուրջը բարձրացող փոշու ամպիկներին:

Գնդացրի մյուս համարները վերցրին արկղերը, որոնց մեջ տեղավորված էին փամփուշտով լի ժապավեններ, և նույն ձևով, միայն երբեմն պառկելով ու բարձրանալով, գնացին հասան իրենց նոր բնագծին:

Սիմոնյանը նույնպես դուրս եկավ խրամատից և չնայած Գրիգորյանի հրամանին՝ վազելվազքով հասնել նշված բնագծին, պառկեց խրամատի առաջ՝ արկղը մի ձեռքով բռնած և գրեթե գլխով վարելով ավազոտ հողը, սկսեց առաջ սողալ, չնայած այն բանին, որ սովետական հրետանու դիպուկ կրակի շնորհիվ, հակառակորդի դիմադրությունն այդ ժամանակ անչափ թուլացել էր:

Երբ Սիմոնյանը խրամատից բավականին հեռացել

էր, հանկարծ նրա մոտերքում ականներ ընկան և մի փոքր բեկոր կպավ Սիմոնյանի ազդրին ու աննշան վերք առաջացրեց։

Սիմոնյանն անմիջապես շոշափեց բեկորի կպած տեղը, մատերը հազիվ արյունոտվեցին, և նա հասկացավ, որ վերքը չնչին է, ու սաստիկ ցավելով այդ բանի համար, սկսեց մտքում հայհոյել, «Անտե՛ր, դե էն է՝ կարգին կկպչեիր, էլի...»

— Տո՛ւտ, վազեվազքով անցիր այդ տարածությունը, դուրս արի կրակի շերտից,— բղավում էր բարկացած Գրիգորյանը՝ խրամատից դիտելով նրա շարժումները։

— Ընկեր լեյտենանտ, ես վիրավորվեցի։

— Վիրավորվեցի՞ր,— ասաց Գրիգորյանը և խրամատից դուրս թռչելով, հասավ նրա մոտ։

— Որտե՞ղից է կպել։

Տեղում անշարժ պառկած Սիմոնյանը ցույց տվեց ազդրը։

— Ոչինչ չկա, շտապի՛ր առաջ, այնտեղ կկապենք,— ասաց Գրիգորյանը՝ դիտելով բեկորի կպած տեղը, ու Սիմոնյանին իր հետ տանելով, հասավ մարտիկների մոտ, որոնք հապճեպ կերպով նոր խրամատներ էին պատրաստում։

Այդ պահին, ճակատի լայն հատվածով, Կարմիր Բանակի զորամասերի մյուս, հիմնական շղթան նույնպես, մարտով առաջ էր գալիս։ Շուտով այդ շղթան հավասարվեց նոր ճակատ ժամանածներին, որոնք որոշ տարածությամբ առաջ էին գտնվում, որովհետև թևից էին մոտեցվել։

Շղթաների գրեթե մի գծի վրա դասավորվելուց հետո, սկսվեց հակառակորդի դիրքերի ուժեղ, ինտենսիվ ռմբակոծություն, որը տևեց մոտ մի ժամ և որին մասնակցում էին ոչ միայն հրանոթային և ականանետային բոլոր մարտկոցները, այլև ավիացիան։

Գերմանական առաջավոր դիրքերի վրա այդ ժա-

ժամանակ մի շատ ահավոր և հետաքրքիր պայքար էր գընում օդում։

Սովետական և թշնամու՝ մոտ երկու տասնյակ ինքնաթիռներ, մեծ հնդյունով, ամպերին հասնող բարձունքում մեկ մեկու վրա էին խոյանում՝ չեղակի և ալիքաձև թռիչքներ կատարելով, միմյանց վրայից և տակից անցնելով և կատաղությամբ կռվող արծիվների նման, որոնք թևերի շառաչով իրար են հասնում՝ միմյանց վրայից փետուր պոկելու, երբեմն ուղղակի իրար էին կպչում՝ խոյահարելու նպատակով և կրակում էին հրազեններից։

Խրամատներից այդ մարտը դիտող մարտիկները տեսնում էին, թե ինչպես նրանց կրակոցներից առաջացած ծխի սև ֆոնի վրա, որը ցերեկով պարզ երևում էր նրանց հրազենների փողերից ժայթքած հրացոլքը՝ շանթի սլաքի խրձերի և կամ չխկացած գնդակների կարկուտի տարափի ձևով։

Մինչդեռ որոշ թվով սովետական կործանիչները կռվում էին հակառակորդի «Մեսսերշմիդտների» դեմ, սովետական թեթև ռմբակոծիչներն ու կործանիչների մի մասը նրանց արանքից ճողոպրելով, ներքև էին սլանում և խուզող թռիչքներ կատարելով թշնամու դիրքերի վրա, գնդակոծում էին այդ դիրքերը փոքր բարձրությունից։

Այդ բոլորը տևեց մոտ մի ժամ, որից հետո ռմբակոծությունը դադարեց։ Սովետական ինքնաթիռներն իրենց խնդիրը կատարելով և երեք «Մեսսերշմիդտ» վայր գցելով հեռացան, իսկ հրետանին այժմ սկսեց հարվածել հակառակորդի զորաշղթայի թիկունքին՝ օժանդակ ուժերի առաջխաղացումը կասեցնելու համար։

Սովետական հրետանային հզոր նախապատրաստական կրակից հետո մի քանի հրթիռներ թռան օդի մեջ։ Այդ ազդանշան էր գրոհի համար։ Եվ ահա լայն ճակատով, հետևակը գրոհի գնաց արդեն մոտ գտնվող գերմանական դիրքերի վրա։

— Գրոհի՛, առա՛ջ,— լսվում էին այստեղ ու այն-

տեղ՝ հրամանատարների խրոխտ ձայները, որանց անմիջապես հաջորդում էր հուժկու ռուսական ուռան: Լավայի նման թշնամու դիրքերի վրա հորդող հետևակը՝ շողուն սվիններն առաջ պարզած, գնաց գրոհի:

Բզկտված թշնամին չդիմացավ գրոհը և մեծ զոհեր տալով անկարգ նահանջեց, ու մեր հետևակը գրավեց նրանց դիրքերը:

Այդ օրը նման ձևով թշնամու մի քանի ընագծեր գրավվեցին և ահա վերջապես իջավ երեկոն: Մարտի ժամերի վերջանալուց, սկսեցին խտանալ ստվերները, կամաց-կամաց թուլացավ և ճակատամարտի աղմուկը, ու կարծես վախից գունաթափ լուսինը նայեց դաշտերին...

Հակառակորդները այլևս չէին կրակում: Կարծես հանգստանում էին օրվա արյունալի աշխատանքից հետո: Միայն այստեղ ու այնտեղ, խրամատներից և կամ բաց դաշտից լսվում էին դեռ չհավաքված վիրավորների կսկծալի հառաչանքները:

— Սանիտա՛ր,— բղավում էր մեկը:

— Վա՛յ, վա՛յ, օգնություն,— հեծեծում էր մի ուրիշը՝ ինչ որ տեղից: Իսկ սանիտարները տենդագին աշխատում էին՝ հավաքելով դեռ մնացած վիրավորներին և կապելով նրանց վերքերը:

— Շո՛ւտ, պատգարակն այստեղ բերեք,— ձայն տվեց որոնող երկու սանիտարներին՝ վայելչահասակ և գլուխը բինտով ու կապույտ թաշկինակով կապած մի աղջիկ՝ չոքելով խրամատի առաջ ընկած ու ծանր հառաչող մի բանակայինի մոտ և կապելով նրա ոտքի մեծ վերքն իր անձնական վիրակապով:

Պատգարակը բերին երկու սանիտարներ և երբ վերքն արդեն կապված էր, երեքով վիրավորին դրին պատգարակի վրա:

— Ընկեր, դուք ո՞վ եք,— հարցրեց սանիտարներից մեկը աղջկան՝ դիտելով նրա պայուսակը և նկատելով, որ սանիտարական չէ:

— Ո՛չ, ես կապավոր եմ և հրաման էի տարել կը-

տրված հեռախոսալարը միացնելու. արդեն միացրե և...— ասաց աղջիկը, որ Ցողիկն էր։

Ցողիկը՝ Գրիգորյանի սիրած աղջիկը, որ կամավոր էր բանակ եկել ու այդ առաջին օրն էր, ինչ լինում էր ճակատում, հենց այդ օրը թեթև վիրավորվել էր գլխից՝ թշնամու ականանետային ուժեղ կրակի ժամանակ մի ծանր վիրավորված բանակայինի կրակի տակից դուրս բերելիս։ Չնայած գլխի վերքը խիստ կսկծում էր, նա գտնվում էր հոգեկան այն ինքնաբավ, արտաքուստ չարտահայտվող, բայց ներքուստ հրճվող վիճակի մեջ, որ ունենում են միշտ, ազնիվ ու անձնազոհ գործ կատարող մարդիկ՝ գիտակցելով իրենց կատարած գործի վսեմությունը և վայելելով նրա պատճառած ու նրանից անբաժան հոգեկան քաղցր վայելքը։

Ցողիկը գոհ էր իրենից, նա քայլում էր ահի ու մահի այդ սև դաշտերով, ուշ երեկոյին և զարմանում էր ինքն իր վրա, թե ինչպես ինքը, այնքան զգայուն ու վախկոտ աղջիկը, որ սարսափում էր արյուն տեսնելիս և պատահած ժամանակ,— օրինակ, երբ իր հայրենի քաղաքում՝ Երևանում, տրամվայի կամ ավտոյի տակ մարդ էր ընկնում, և մարդիկ, շատերը լոկ հետաքրքրությունից դրդված ամբոխվում էին դժբախտի շուրջը,— ինքը հեռու էր փախչում, որ արյուն չտեսնի, այժմ այդպես շուտ կարողացավ ընտելանալ...

Սպա նա մտածում էր Գրիգորյանի մասին և մտքում շարունակ կրկնում էր. «Ա՜խ, արդյոք նորից մենք կտեսնվե՞նք։ Ո՞վ գիտե, որ ճակատում է գտնվում նա հիմա»։

Այսպես խորհելով նա մոտեցավ մի խրամատի, որն արդեն առաջ անցած սովետական զորաշղթայի թիկունքում էր գտնվում և լուսնի լույսով տեսավ, թե ինչպես մի բանակային է չոքած այնտեղ՝ գլուխը կախած։ Ցողիկը նրան կողքից էր տեսնում և այդ դիրքից թվում էր, թե բանակայինը հրացանը կրծքին է սեղմել ու պատրաստվել կրակելու։

«Սա ինչո՞ւ է ետ ընկել»,— մտածեց Ցողիկը՝ նրան մոտենալով և երբ հավասարվեց բանակայինին, ձայն տվեց.

— Ընկեր ջան, ինչո՞ւ չես առաջ գնում...

Սակայն պատասխան չկար և աղջիկն ավելի մոտենալով համոզվեց, որ նա սպանված է և խփվել է հենց կրակելու պահին ու մի քիչ առաջ թեքվելով, հենվել է խրամատի առաջամասին և հենց այդպես էլ, հրացանը ձեռքին, քարացել...

Աղջիկն այնքան ազդվեց այդ բանից, որ չկարողանալով դիմադրել իրեն համակող ցավի անտանելի զգացմանը, սկսեց արտասվել և հեկեկալով շարունակեց ընթանալ:

Առաջին գծի այն հատվածում, ուր նոր խրամատներ էին պատրաստել Գրիգորյանի գնդացրորդները, երեկոյան այդ պահին մարտիկներն օգտվելով դադարից, աշխատում էին հնարավորին չափ հարմար ու հանգիստ տեղավորվել խրամատներում՝ կարճատև հանգիստը լավագույն ձևով օգտագործելու: Ոմանք դուրս գալով խրամատներից, քաղում էին մոտերքում տեղ-տեղ լավ աճած խոտից և բերում փռում էին խրամատների հատակին ու պառկում վրան:

Ավելի եռանդոտները մտածում էին նույնիսկ վերմակի մասին և այնքան էին խոտ բերում, որ մի մասով էլ հնարավոր էր լինում ծածկվել:

Ուշ աշնան դառը ցուրտն արդեն իրեն զգացնել էր տալիս:

Այդ ժամանակ խնամքով քողարկված Գրիգորյանի գնդացրի մոտ գտնվող խրամատում, խոտի վրա պառկել էին Զավարյանն ու Խդրներաշվիլին. վերջինս ծխում էր՝ բերանքսիվայր պառկած, դեմքը համարյա գետնին կպցրած. միաժամանակ ձեռքի ափերով նա կողքերից քողարկել էր իր ծխախոտը, որ կրակը չերևա:

— Զգույշ,— պաժար կտաս էս անտերը,— ասաց Զավարյանն Խդրներաշվիլուն:

— Քո տունն էլ չինվի, էդ հո կարգին կտաքանանք, ինչի՞ց ես վախում:

— Վերջը էստե՛ղ էլ չես մոռանում է՛լի քո կատակները:

Էդլիներաշվիլին ոչինչ չպատասխանեց և վերջացնելով ծխելը, կրակը հանգցրեց ու կողքի շրջվելով ասաց.

— Կացո, ցիվա՛, ցիվա՛...

— Ես էլ եմ մրսում, Էդլիներաշվիլի, լավ կանենք մի քիչ էլ խոտ բերենք և մի լավ ծածկվենք:

— Դե վեր կաց գնանք:

Այն է, երկուսով ուզում էին գնալ խոտի, երբ գերմանական դիրքերից երկինք սլացան բազմաթիվ հրթիռներ, որոնք կանոնավոր ընդմիջումներով շարվեցին օդում և էլեկտրական պայծառ լույսերի նման այնպես լուսավորեցին սովետական դիրքերը, կարծես ցերեկ լիներ:

— Պառկե՛ք, չշարժվել,— հրաման տրվեց այդ ժամանակ սովետական դիրքերից: Հրամանը շղթայում ծայրից-ծայր փոխանցվեց և վայրկենապես դադարեց ամեն մի շարժում, բոլորը պառկեցին խրամատներում և կամ այն տեղում, ուր գտնվում էին այդ պահին, թշնամու կողմից չհայտնաբերվելու համար:

Մի քանի րոպեից լույսերը հանգան: Գրիգորյանն իր մոտ կանչեց Զավարյանին ու երկու բանակայիններին հետ ուղարկեց, որ ընթրիք բերեն, նախօրոք նկարագրելով, թե արդեն դիրքերին մոտեցած դաշտային խոհանոցը որտեղ է գտնվում:

Մոտ մի ժամից հետո վերադարձան ընթրիքի գնացածները՝ պղնձակներով մսից ու բրնձից պատրաստված չիլա բերելով, ինչպես և՝ ծխախոտ ու հաց:

Ընթրիքն իսկույն բաժանեցին և նստելով խրամատներում, սկսեցին ընթրել:

— Ուտելը կերանք, բա ջրի համար ի՞նչ անենք, ընկեր լեյտենանտ,— դիմեց Զավարյանը Գրիգորյանին, որովհետև սաստիկ ծարավել էր:

— Էդ է դժվա՞րը, Սիմոնյանը թող սաղ լինի, մեզ համար. վախենում ես չկարողանա՞ ջուր ճարել. Թեկուզ ինքը Հիտլերն էլ նստած լինի ջրի վրա, նա ջուր կբերի,— ասաց Եղիներաշվիլին:

Դողն ընկավ Սիմոնյանի մարմինը և նա սկսեց մըտածել, թե հանկարծ այդ խենթի խոսքերին լսելով, իրեն ջրի չուղարկե՞ն... Եվ ասաց.

— Դու գնա, էլի, որ էդպես մեծ մեծ բրդում ես:

— Լա՛վ, եկեք վիճակ գցենք,— առաջարկեց Ջավարյանը:

— Ականջդ կանչի, սիրելի՛ Զորյան,— ժպտալով մտածեց Գրիգորյանը խրամատում նստած, հիշելով նրա «Ջրհորի մոտ» պատմվածքի նույնանման մոմենտը և ասաց.— վիճակի կարիք չկա, ու կարգադրեց Եղիներաշվիլուն ու Ջավարյանին, որ ջրի գնան:

Ջավարյանն ու Եղիներաշվիլին իսկույն վերցրին չորս հատ պղնձակ, մի քանի բակլաշկաներ և գնացին ջուր բերելու: Նրանք, ինչպես և իրենց ընկերներից ոչ ոք, ջրի տեղը չգիտեին, միայն լսել էին, որ իրենց թիկունքի կողմը, մի կիլոմետրի չափ տարածության վրա, ջրհոր կա: Ջավարյանն ու Եղիներաշվիլին գնում էին այդ ջրհորը գտնելու:

Ճանապարհին պատահողներին հարց ու փորձ անելով, հրթիռների բարձրանալու պահերին նստելով և ապա ճանապարհը շարունակելով, նրանք վերջապես կես ժամից հետո հասան ջրհորին:

Դա կռունկավոր մի ջրհոր էր, գտնվում էր առաջին գծից մի կիլոմետրից մի քիչ ավելի հեռավորության վրա: Երբ Ջավարյանն ու Եղիներաշվիլին հասան այնտեղ,— տեսան, որ բազմաթիվ բանակայիններ են խմբված ջրհորի մոտ: Դրանք ճակատի մյուս զորամասերից ջրի եկած բանակայիններ էին: Ջավարյանն ու Եղիներաշվիլին դժվարությամբ հասան ջրհորի եզրին, սակայն տեսան, որ միակ դույլը դժվար թե շուտով իրենց ձեռքն ընկնի, որովհետև հերթի համար վիճողներ ու կոպտություն անողներ էլ կային: Ջավարյանը որո-

չեց հենց իրենց տարած պղնձակներից մեկով ջուր հանել, սակայն ջրհորը շատ խորն էր ու հիմա էլ պարանի խնդիրն էր մնում անլուծելի։ Զավարյանն սկսեց քանդել իր ոտքերի փաթաթանները՝ խորհուրդ տալով Էդինբրաշվիլուն՝ նույնն անելու, և վերջապես շուտով նրանք այդ փաթաթաններն իրար ծայրի կապելով, մի երկար պարան ունեցան, որը կապելով պղնձակից, ըսկսեցին ջուր հանել։ Նախ իրենք մի կուշտ խմեցին, ապա լցրին իրենց վերցրած բոլոր ամանները և հեռացան ջրհորից։

Երկու հարյուր մետրի չափ հազիվ էին հեռացել, երբ դարձյալ հրթիռներ երևացին, շուրջը լուսավորվեց ու մի ինքնաթիռի ձայն լսվեց հենց ջրհորի վերևում։

Ցրվե՛լ,— բղավեց ինչ որ մեկը ջրհորի մոտ հավաքվածների միջից, և բոլորը վայրկենապես նետվեցին այս ու այն կողմ, ջրհորից հեռացան ու պառկեցին։

Այդ հրամանը շատ տեղին ու ժամանակին էր տըրվել, որովհետև մի քանի վայրկյան հետո ջրհորի շուրջը պայթյուններ լսվեցին։ Այդ՝ գերմանական ինքնաթիռից նետված ռումբերն էին։

Զավարյանն ու Էդինբրաշվիլին, որ ինքնաթիռի երևալու պահին նույնպես կանգ էին առել ու նստել տեղներում, պայթյուններից հետո մի քանի րոպե ևս սպասեցին ու երբ մարեց հրթիռների լույսը, դարձյալ շարունակեցին ընթանալ։ Նրանք արդեն հարթության վրա էին, երբ շուրջը նորից լուսավորվեց.

— Կանգնի՛ր,— ասաց Զավարյանն Էդինբրաշվիլուն։

— Կացո, էսպես կանգնելով ու նստելով մենք էս տարի վայթե տեղ չհասնենք ու մինչև գնանք, պատերազմը վերջացած կլինի։

Զավարյանն ակամայից հետևեց նրան։

Հենց այդ մոմենտին, «վո՛ւո՛ւ-ճո՛ւ», ձայներ լըսվեցին և քայլող երկու բանակայիններին բավականին մոտիկ, երեք ականներ ընկան իրար հետևից՝ ուղիղ դըծով միմյանց կողքի շարվելով։

Զավարյանն ու Էդինբրաշվիլին, յուրաքանչյուրը երկուական ջրով լի պղնձակ բռնած ու մի քանի բակլաշկաներ գոտիներից կախած, անմիջապես իրենց գետնին նետեցին ու կպան հողին: Պղնձակների ջուրն ամբողջապես թափվեց, իսկ բակլաշկաներից նրանք, որոնք ապակյա էին, կոտրվեցին: Մի քանի վայրկյանից հետո, երբ լույսը հանգավ, նրանք պոկվեցին իրենց տեղերից և առաջ գնացին:

— Ես կատակ արի, բայց թե ճիշտ դուրս եկավ, ինչպես որ Հիտլերը ջրի վրա էլ է նստել վիշապի նման և ջրի ճանապարհին սրիկաներն ուզում են մեզ սպանել,— ասաց Էդինբրաշվիլին՝ դատարկ պղնձակները ձեռքին, Զավարյանի կողքից վազելով:

Վերջապես նրանք տեղ հասան՝ ողջ դասակի համար բերելով միայն երկու բակլաշկա ջուր...

※※※

Առավոտյան, արևածագի հետ, սովետական հրետանին ուժեղ կրակ սկսեց: Գործի անցան և զենքի մյուս տեսակները: Ռազմադաշտն սկսեց շնչել բոցի ու ծխի անհաելի շնչով և կապար թքել: Հակառակորդը գիշերն ամրացրած իր նոր դիրքերից պատասխան կրակ էր վարում:

Դարձյալ հրաման տրվեց երկրորդ գումարտակի մարտիկներին, ինչպես և մյուս հետևակայիններին, առաջ գնալ: Նրանք դադարեցնելով համազարկերը, էլի կարճ վազեվազքով առաջ շարժվեցին: Գրիգորյանի խրամատին մոտեցավ կապավորը և հրաման հայտնեց՝ գնդացիրն առաջ տանելու և հետևակի աջ թևում տեղավորելու: Գրիգորյանի հրամանով, որոշ ժամանակից հետո, ընդհատվեց գնդացրի կրակը: Նա նշեց տեղն ու հեռավորությունը և հրամայեց իր մարտիկներին գընդացիրը առաջ տանել: Պետրովն ու Էդինբրաշվիլին անիվների վրա գնդացիրն սկսեցին առաջ հրել՝ վահանի պաշտպանության տակ, իսկ մյուս համարներն էլ վեր-

ցրին արկղերը և միմյանց հետևից, կարճ ընդմիջումներով, սկսեցին վազել դեպի նշված կետը։

— Բո՛ւմ, վո՛ւո՛ւ, ճո՛ւկ,— լսվում էին շարունակ այստեղ ու այնտեղ և վազող գնդացրորդները, մյուս մարտիկների նման ամեն անգամ, երբ եկող ականի ձայնից իմանում էին, որ մոտ է ընկնելու, քարի նման շմփում էին գետին՝ իրենց ապավինելով մայր հողին, որը միայն կարող էր այդ մոմենտին փրկել նրանց կյանքն այնքան մոտ սավառնող մահվան թռչունից։

Այդ մահաբեր «թռչուններից» մեկն ահա շաչյունով վայր իջավ գետնին ընկած Զավարյանից ոչ այնքան հեռու և սկսեց ֆշշյուն արձակելով պտտվել գետնին...

Ահ առած Զավարյանի ճակատը սառը քրտինք պատեց և նրա գլխի մեջ այդ վայրկյանին միայն մի հարց էր պտտվում «կպչի՞ արդյոք...»

— «Ճո՛ւկ»,— լսվեց պայթյունը և ապա կարծես գազազած, իրենց բներից դուրս թափված շնաճանճերի պարս էր, որ սկսեց բզզյունով և գոռոցով թռչել նրա շուրջը։

— Բու՛ու՛,—ականի մի մեծ բեկոր ընկավ նրա մոտ, ու մի քանիսն էլ վրայից անցան։

— Էս անգամ էլ պրծա...,— ասաց մտքի մեջ Զավարյանը՝ տեղից բարձրանալով, ու առաջ նետվեց։ Նա հասավ նշված բնագծին, որտեղ պիտի հաստատվեր գնդացիրը։

— Անիծյալ տեղանք,— քրթմնջաց նա՝ տեսնելով, որ ոչ մի թումբ, կամ փոս չկար պաշտպանվելու համար, մինչև նոր խրամատ փորելը։

Նա իսկույն պառկեց մի քանի մացառների ետևում, այն փոքր խրամատից մի քիչ հեռու, ուր Պետրովն ու Էդինբերաշվիլին արդեն հաստատել էին գնդացիրը և մեծացնում էին խրամատը։

Զավարյանը կողքի պառկելով, սկսեց իր համար խրամատ փորել՝ հրացանը դնելով մի կողմ։

Գնդացրի մյուս բոլոր համարները ևս, խրամատա-

վորվում էին։ Գրիգորյանն ինքն էլ էր խրամատ փորում, սակայն շուտով թշնամին նկատելով նրանց, սկսեց կրակ տեղալ այդ ուղղությամբ։

— Հողը կփրկի՛,— կայծակի նման նույն միտքն էր անցնում այդ պահին բոլորի գլխով։ Եվ տենդագին, մահվան ու կյանքի շեմքի մեջտեղ գտնվող այդ մարդիկ, որոնք բոլորն էլ այնպե՛ս ապրել էին ուզում,— գործում էին, փոքր բահերով։ Պատահում էր, որ երբեմն գնդակը կպչում էր որևէ բահի՝ հողը ցցելիս, և անդրադառնալով, հատու չխկոց էր արձակում։

Սիմոնյանը, որ շարունակ մեծ խնամքով էր պահում իր իրերի տոպրակը, բահը թողել էր բլինդաժում և այժմ, օրհասի առաջ զգալով իրեն, ձեռքերով չանգռում էր գետինը՝ աշխատելով մի փոքր փոս փորել, որ գեթ գլուխը պաշտպանի այնտեղ...

Զավարյանը մտածելով, որ այդ դժոխային կրակի տակ կարգին խրամատ փորել չի լինի, ինչպես և հնարավոր չէ երկար դիմանալ,— զգուշությամբ լավ զննեց շուրջը և մի քանի մետր հեռավորության վրա նկատեց մի խրամատ, որն ըստ երևույթին դատարկ էր։

Նա իսկույն դուրս եկավ իր կիսավարտ խրամատից և հապշտապ սողաց այն կողմը։ Խրամատը դատարկ էր։ Զավարյանն այլևս ապահով էր նրա մեջ։

Իր նոր խրամատից նա դիտեց ընկերների կողմը և նրա ուշադրությունն առաջին հերթին գրավեց Սիմոնյանը։ Զավարյանը խղճահարվելով, իր բահը նետեց նրա կողմը։ Բահը չրմփոցով ընկավ նրա մոտ, Սիմոնյանն այդ երկնային պարգևն առաջին պահ չնկատելով և միայն նրա ձայնը լսելով, կարծեց թե ական էր, որ հատկապես իր վրա արձակեցին և քիչ մնաց վախից խելքը թռցներ, սակայն դա միայն մի վայրկյան տևեց...

Զավարյանը տեսավ և Գրիգորյանին, որը նույնպես դեռ չարչարվում էր գնդակների տակ մի բանակայինի հետ, աշխատելով լավ խրամատավորվել և ձայն տվեց.

— Ընկեր լեյտենանտ, էստեղ խրամատ կա:

Գրիգորյանն իր փոքր հողաթմբի ետևից բահով ստուգեց կրակի խտությունը և տեսնելով որ այն մի փոքր թուլացավ, շտապով, դարձյալ փորսողով անցավ այն տարածությունը, որն իրեն բաժանում էր Զավարյանից և իրեն գցեց խրամատի մեջ:

Նրանք երկուսով սեղմվեցին նեղ խրամատում, որը միայն մի մարտիկի համար էր պատրաստված:

Այստեղից Գրիգորյանը հեռադիտակով նայեց առաջ և արդեն հրամանի սպասող Պետրովին ու Էգիներաշվիլուն կարգադրեց կրակ սկսել:

— Փամփուշտ,— հանկարծ բղավեց Էգիներաշվիլին:

Սահակյանը դուրս եկավ իր խրամատից ու փամփուշտներով լի արկղը ձեռքին, կուզեկուզ վազեց դեպի գնդացիրը, սակայն կես ճանապարհին վիրավորվելով, ընկավ:

Զավարյանն այդ նկատելով, դուրս նետվեց իր խրամատից և սողալով,—որովհետև տեղանքն ուժեղ գնդակոծվում էր,— մոտեցավ Սահակյանին և նրան քաշեց հենց իրեն՝ Սահակյանի խրամատը ու իր անձնական ծրարի վիրակապով սկսեց կապել նրա վերքը:

Փամփուշտը տվող բանակայինները դանդաղում էին: Գրիգորյանը, որ իր խրամատից դիտում էր ամեն ինչ, բղավեց.

— Սիմոնյան, առա՛ջ, փամփուշտ հասցրու:

Սիմոնյանը Գրիգորյանին մտքում լավ հայհոյելով, դուրս սողաց խրամատից և փամփուշտի արկղը քարշ տալով իր հետ, սկսեց առաջանալ:

Հանկարծ մի ական պայթեց մոտիկում և չնայած միայն հողի կտորներ թափվեցին սարսափած Սիմոնյանի վրա, նրան թվաց, թե կպավ իրեն ու մտածեց.

«Արդեն մեռա...»:

Բայց այդ պահին մի ավելի զարմանալի բան կատարվեց նրա հետ, որը նրան համոզեց, որ դեռ չի մե-

ձել… Նա խենթացած, հանկարծ վեր թռավ տեղից և ուղիղ կանգնեց կրակի տակ:

Թե Զավարյանը, և թե մյուսները, որ կրակում էին հրացաններից, լսելով նրա տագնապալի բացականչությունները և տեսնելով նրան կանգնած ու խենթի շարժումներ անելիս, սկսեցին ուշադիր դիտել: Սիմոնյանի գոտու վրա ամրացած կաշվե փամփշտանոցից որի մեջ խիտ լցված էին նրա հրացանի փամփուշտները, թույլ կրակոցների ձայներ էին լսվում և փամփշտանոցը տեղ-տեղ հոշոտվում էր ու նրա անցքերից գնդակներ էին դուրս թռչում՝ վառոդի ծխի հետ միասին: Այդ բանն առաջացել էր նրանից, որ ականի մի բեկոր էր կպել փամփշտանոցին: Չնայած հետագայում Սիմոնյանն այդ բացատրում էր նրանով, որ չախմախի պատրույգը երևի առանց լավ հանգցնելու դրել էր այնտեղ, մոռանալով, որ այդ առաջին օրն էր արել և շուտ զգալով, էլի հանել էր ու հանգցրել:

Իսկապես, կյանքում պատահում են այնպիսի բաներ, որոնք շատ սակավադեպ են: Ո՞վ կհավատա այս իրական դեպքին, եթե մեկի մոտ պատմես,— մտածում էր Գրիգորյանը՝ նրան նայելով:

Բարեբախտաբար, Սիմոնյանի հրդեհված «արսենալի» պայթյունները շուտ դադարեցին՝ առանց տիրոջը վնաս տալու, որը նույնպես զարմանալի էր և փամփուշտի արկղը մի ուրիշը հասցրեց գնդացրորդներին:

Թշնամին համալրում էր ստացել և լավ ամրացել էր՝ նախորդ օրը մի քանի բնագիծ հանձնելուց հետո: Այժմ նա ուժեղ դիմադրում էր, այնպես որ, այդ օրը կարմիր բանակայինների կողմից զգալի առաջխաղացում չեղավ:

Դրա հաջորդ օրը, կեսօրին արդեն, հաստատ որոշմամբ՝ հետ խլել հանձնած բնագծերը, գերմանացիք ճակատի այդ հատվածում տանկեր նետեցին սովետական զորամասի դեմ: Ռազմաճակատի հյուսիս արևելյան կողմում բլուրներ էին ընկած, որոնք ոչ այնքան խիտ, ցածրահասակ անտառով էին ծածկված: Թշնա-

մու տանկերը հայտնվեցին բլուրների ստորոտից և ճակատի համեմատաբար նեղ հատվածի վրա սլացան, ակներև՝ սովետական պաշտպանության մեջ սեպաձև մտնելու համար: Բազմաթիվ գերմանական տանկերի հետևից գալիս էր նրանց հետևակը:

Նկատելով դեպի իրենց դիմող մետաղակուռ սև հրեշներին, որոնք չարժական մոլոխներ էին կարծես՝ մարդկային արյան ու մսի ծարավ, կարմիր բանակայիններն ու հրամանատարներն իսկույն պատրաստվեցին նրանց «ընդունել»:

Հակատանկային հրացաններով զինված ստորաբաժանումներն արդեն կազմ ու պատրաստ, սպասում էին հրամանի: Մյուս մասերում մարտիկները նռնակների խրձերն էին կանոնավորում, հակատանկային նռնակների մեջ պայթուցիչներ դնում, հրկիզող շշերը պատրաստում նետելու: Միաժամանակ և չարունակվում էր կրակը: Տանկերը դեռ հեռու էին և առայժմ նրանց աշտարակներից տրվող կրակին պատասխանում էր հատկապես հրետանային ուժեղ կրակը: Չնայած այն բանին, որ հրանոթային դիպուկ զարկերի շնորհիվ մի քանի տանկեր հրդեհվեցին և ջարդվելով, գլուխը ջախջախված հսկա դոդոշի նման փռվեցին գետնին, այնուամենայնիվ, նրանցից շատերը դեռ առաջ էին գալիս՝ իրենց ուժեղ, միալար դռռոցով ու թրթուրների աղմուկով լցնելով դաշտը:

Երբ տանկերն այնքան մոտեցան, որ արդեն հնարավոր էր զենքի մյուս տեսակներով հարվածել, այդ ժամանակ ականջ խլացնող որոտներով սկսեցին հակատանկային հրացանների զարկերը թնդալ:

Այդ զարկերից, սև հրեշներից մի քանիսը խոցվելով, շարքից դուրս եկան, սակայն մյուսները շարունակում էին առաջանալ, դիրքերը գնդակոծելով:

— Նռնակները պատրա՛ստ, ուղիղ թրթուրների տակ,— հրամաններ էր տալիս Գրիգորյանն իր մարտիկներին և յուրաքանչյուրն ամուր սեղմում էր արդեն պատրաստի բռնած նռնակի կոթը:

Սիմոնյանի շունչը կտրվում էր, երբ տեսնում էր գնալով ավելի մոտեցող և ուղիղ իրենց վրա եկող տանկերն ու մտածում էր բարձրանալ, փախչել, բայց մյուս կողմից՝ սարսափը զրկել էր նրան շարժվելու ընդունակությունից։

— Եթե տանկերին հաջողվի շատ մոտենալ, կպեք խրամատի հատակին, վրայից կանցնի, ապա հետևից նռնակներով...— շարունակում էր հրահանգներ տալ մարտիկներին Գրիգորյանը։

Վերջապես մոտ մի տասնյակ տանկ, նռնակների հասողության տարածության չափ մոտեցան երկրորդ գումարտակի և Գրիգորյանի գնդացրորդների դիրքերին։

Այդ ժամանակ իրար հետևից սկսեցին շապիկ հագցըրած նռնակների խրձեր և հրկիզող շշեր թռչել դեպի նրանց։ Տանկերից երկուսն ևս դուրս եկան շարքից ու կտրվեցին նրանց թրթուրները։ Այդ տանկերը տեղում մնացին և անմիջապես խփվեցին հակատանկային հրացաններով, իսկ մնացած ութից յոթ տանկն անմիջապես փոխեցին իրենց ուղղությունն ու սկսեցին արագ հեռանալ։ Միայն մի մեծ տանկ, դեռ բոլորովին անվնաս մնացած, կրակելով շարունակեց խոյանալ ուղիղ Գրիգորյանի գնդացրի խրամատի վրա։

Չնայած նրա ուղղությամբ ևս շարունակ նռնակներ ու հրկիզող շշեր էին թռչում, բայց նպատակակետին չէին կպչում և իր շուրջը՝ գետնին կոտրված հրկիզող շշերի բոցի միջով արագությամբ առաջ էր սողում վիթխարի տանկը, որպես հեքիաթային կրակաբնակ մի ահռելի սողուն՝ իր քթածակերից հուր վիժելով։

Երկրորդ գումարտակի մի ռուս բանակային դուրս եկավ իր խրամատից, հպարտ կեցվածքով կանգնեց մոտեցող տանկի հանդիման, նռնակների կապոցը ձեռքին և Պետրովի սիրած հիշոցը տալով, արագությամբ մի քանի մետր առաջացավ ու մեծ վարպետությամբ նետելով նռնակների կապոցը, անմիջապես պառկեց տեղում։

Լսվեց պայթյուն ուղիղ տանկի թրթուրների տակ: Տանկը մնաց տեղում՝ անզոր շարժումներ անելով: Նույն պահին, այդ տանկի վրա նետված մի քանի հրկիզող շշերը հրդեհեցին մոտորի մասը և անձնակազմն անմիջապես դուրս եկավ տանկից ու հենց այնտեղ, տանկից մի քիչ հեռու, կպչելով գետնին, սկսեց կրակ վարել կարմիր բանակայինների դեմ:

Տանկը շարքից հանող բանակայինը, որ դեռ պառկած էր, նորից մի փոքր բարձրացավ տեղից և այժմ մի նռնակ նետեց դիմադրող անձնակազմի վրա, որով նրանց բոլորին լռեցրեց, սակայն ինքն ևս ծանր վիրավորվեց իր նետած նռնակի մի բեկորով:

Նա ընկավ գնդացրորդների խրամատներից ոչ այնքան հեռու, թշնամու գնդակների տակ: Այդ բանը տեսնելով, բոլորի, ինչպես և Գրիգորյանի սիրտը ճմլվեց ցավից: Նա, որ ականատես եղավ այդ անձնազոհ սխրագործությանը, որոշեց անմիջապես օգնության հասնել: Եվ կարգադրելով, որ շարունակեն կրակը՝ ետ չպրտված տանկերից անջատված ու մոտիկում ամրացած գերմանական հետևակի դեմ, ինքը դուրս եկավ իր խրամատից ու շարժվեց դեպի վիրավորը: Նա փորսողով էր առաջ գնում: Կես ճանապարհին հակագազի տուփն ընկավ նրա փորի տակ և սկսեց խանգարել շարժմանը: «Ահա թե ինչ պահերումն է, որ մարտիկներին խանգարում է հակագազը»,—մտածեց Գրիգորյանը՝ հակագազի պայուսակը կողքի քաշելով և էլի շարունակեց ընթանալ: Նա հաջողությամբ հասավ վիրավորին: «Ս՛ս՛, ս՛ս՛»,— սուլում էին գնդակները Գրիգորյանի և վիրավորի շուրջը: Գրիգորյանը, որ մտադիր էր վիրավորին հետ տանել դեպի իրենց խրամատները, նկատելով հակառակորդի կրակի ուժեղացումը, մտածեց, որ տանելու ընթացքում, ամենայն հավանականությամբ իրենք՝ երկուսն էլ կխփվեն ճանապարհին: Նա մեկ մտածեց այդտեղ, վիրավորի մոտ նոր խրամատ փորել, բայց առաջ նայելով, շատ մոտիկ մի խրամատ տեսավ, և ձեռքը գցելով վիրավորի մի թևի տակից,

պառկած վիճակում սկսեց քաշել ծանր հառաչներ արձակող մարտիկին և հասցնելով խրամատին, ինքը մտավ մեջը, ապա մի քիչ բարձրանալով, երկու ձեռքով բռնեց վիրավորի գոտուց, նրան ևս խրամատի մեջ քաշելու համար։

Այդ պահին, սնայպերի ձեռքով արձակված մի անվրեպ գնդակ խոցեց նրան կրծքից։ Մահացու վերք ըստացած Գրիգորյանի թուլացած ձեռքերը պոկվեցին վիրավորից և նա ընկավ խրամատի մեջ՝ մեջքով հենվելով խրամատի պատին։

Պայծառ արևի լույսի ներքո գիշեր էր իջնում նրա շուրջը. մի գիշեր, որ էլ երբեք չէր լուսանալու...

Աշնանային այն բացառիկ տաք ու գեղեցիկ օրերից մեկն էր, երբ արևի կենսաբեր ջերմությունը թափանցում է մարդու էության մթին խորքերը, մարդու հոգին լցնում է անհուն սիրով դեպի կյանքը և ստիպում երազել ու սիրել...

Բայց մեռնող Գրիգորյանը, որ շատ էր ունեցել այդ ապրումներն ու զգացմունքները, այժմ անտարբեր էր գեղեցիկ օրվան և պատերազմի խոլ աղմուկներին։ Նա արյունաքամ էր լինում ավազոտ խրամատում ու նրա տենդորեն գործող երևակայության ու դեռ բոլորովին չմթագնված մտքի մեջ, կինո-ժապավենի նման անցնում էին իր կյանքի գլխավոր դեպքերը։

Օրհասի այդ անկրկնելի ոխուր պահին նա ուզում էր գոնե մտովին տեսնել նրանց, որոնց համար արևից էլ ջերմ էր եղել իր սիրող սիրտը։ Ու գալիս էին այդ պատկերները՝ պայծա՜ռ ու պայծա՜ռ... Գալիս էին նրանք,— անցած օրերի տխուր և ուրախ հիշատակները,— և այդ ամբոխվող բազում դեմքերը ձուլվում էին կարծես, մշուշոտ դառնում և աղոտացող նրանց ֆոնի վրա, մոր դեմքն էր միայն հառնում վերստին՝ այնպե՜ս տիրաբար, և մերթ ժպտում էր ու արևում էր՝ կարծես աչքերով... Ճիշտ այնպես, ինչպես մանուկ օրերին, երբ նա այլ արև դեռ չէր ճանաչում, բացի այդ ջերմին, քաղցր աչքերից։ Գրիգորյանի կյանքի

արշալույսին, դեռ նրա օրորոցի վրա ճառագած այդսիրագորով աչքերը հիմա էլ, կարծես վերջին հրաժեշտն էին տալիս նրան, նրա կյանքի այդ վաղահաս չար գիշերի մեջ: Ապա փոխվում էր պատկերը, մոր դեմքը մթագնվում էր վշտի մշուշով ու նրա խորշոմներով պատած դեմքի վրա երևում էին արցունքի կաթիլներ: Գրիգորյանին թվում էր, թե իր գլուխը հենված է մայրական կրծքին և աշխատում էր իր թույլ՝ ավազին հենված գլուխն ավելի ամուր սեղմել խրամատի պատին:

***

Այն պահին, երբ Զավարյանն ու ընկերները տեսան, թե ինչպես Գրիգորյանը վիրավորվեց և ուզեցին օգնության գնալ, շտապ հրաման եղավ առաջ շարժվելու:

Զավարյանն իր վրա վերցնելով դասակի հրամանատարությունը, մարտիկների հետ առաջ գնաց՝ արցունքները բռունցքով մաքրելով, և իրենց թիկունքում մնացած Գրիգորյանին առաջին օգնություն ցույց տալու գործը թողնելով քույրերին և սանիտարներին, որոնք անձնուրաց կերպով աշխատում էին:

Երբ առաջացած շղթան և գնդացրորդները նոր դիրքերի հասան և ամրացան այնտեղ, գերմանական հրետանին, տանկերի ձախողված հարձակումից հետո սկսեց ուժեղ կրակ, որին իր խորտակիչ կրակով պատասխանում էր սովետական հրետանին:

Չնայած հակառակորդի ուժեղ կրակի պատճառած ավերումներին ու զոհերին, Կարմիր Բանակի զորամասերն առաջին գծում աներեր մնացին:

Հակառակորդի հրետանին, որ անմիջապես աշխատում էր հարվածել առաջավոր դիրքերին, որոշ ժամանակից հետո հարվածը տեղափոխեց թիկունքը՝ արգելափակիչ կրակ ստեղծելու:

Գերմանական հրետանու հետ, նրանց ականանետային մարտկոցներն ու հաստոցավոր գնդացրերն են սկը-

սեցին առաջին գծի թիկունքին հարվածել: Ռազմադաշտի ամեհի և ահասարսուռ որոտների մեջ, հրազենների բոցի, ծխի, կապարի հախուռն ժխորի մեջ, հանկարծ լսվեցին փողային նվագախմբի նվագի հնչյուններ: Այդ գերմանական դիրքերից էին նվագում:

Նվագախմբի նվագի հետ, էս-էս-ական մի զորամաս, որը հազիվ այդտեղ էր նետվել, դուրս եկավ խրամատներից և շիտակ կանգնեց՝ ավտոմատներն առաջ պարզած: Այդ զորամասի զինվորները, որոնք բոլորն էլ հաղթանդամ, ընտրովի մարդիկ էին, խիտ շղթայով, հանդիսավոր քայլվածքով, ինչպես շքերթի գնալիս, գերմանական հիմնի հնչյունների տակ, ավտոմատներից հերթեր տալով ու մի քիչ օրորվելով, որովհետև հարբած էին, սկսեցին շարժվել դեպի սովետական դիրքերը: Նրանք մեծ մասամբ թեթև էին հագնված, ոմանք միայն մայկայով և չափազանց լայն, երկարավիզ կոշիկներ ունեին, իսկ այդ կոշիկների ճտքերի մեջ, յուրաքանչյուրը մի քանի պահեստի ավտոմատային սկավառակներ էին տեղավորել:

Քայլում էին նրանք կրակելով, միաժամանակ հարբած բացականչություններ անելով, և ոմանք մի պահ դադարելով կրակելուց, գլխարկները վերցնում ու շպրտում էին մերոնց կողմը:

— Խփե՛ք ֆաշիստական սողուններին,— լսվեց մի հուժկու ձայն՝ սովետական դիրքերից:

Այդ՝ երկրորդ գումարտակի հրամանատարի ձայնն էր: Չնայած, որ գերմանացիների նախապատրաստական՝ թնդանոթա-ականանետային կրակի ժամանակ սովետական կրակային կետերի մի մասն ավերվել էր և որոշ անձնակազմեր շարքից դուրս էին եկել, առաջին գծի մարտիկներն անսասան մնացին և ընդդիմադիր ուժեղ կրակով պատասխանեցին հոգեբանական գրոհ կատարողներին, այնպես որ, «հանդիսավոր» քայլերով եկող շղթայի զինվորներից շատերը հանդիսավոր կերպով թավալվեցին գետին՝ ճիչեր ու վայնասուն բարձրացնելով... Սակայն գործը դրանով չվերջացավ: Ար-

դեն կիսով չափ ոչնչացած առաջին շղթային կանոնավոր ալիքի ձևով փոխարինելու եկավ հոգեբանական գրոհ կատարողների երկրորդ շղթան, դարձյալ նույն ձևով, բայց այս անգամ արդեն, նրանց ավտոմատային անկարգ կրակին կոորդինացվեց իրենց հաստոցավոր գնդացրի մի մասի կրակը:

Հոգեբանական գրոհ կատարող երկրորդ շղթայի երևալու ժամանակ մի դեպք կատարվեց, որը Զավարյանի հատվածում դրությունը ժամանակավորապես փոխեց հօգուտ գերմանացիների:

Զավարյանը ղեկավարում էր իրենց գնդացրի կըրակը: Պետրովը կատաղի կրակում էր՝ գրեթե անընդմեջ հերթեր տալով ու ճակատի մեծ հատվածում ցրելով գնդակները: Եվ ահա փամփուշտը վերջանալու վրա էր:

— Փամփո՛ւշտ,— բղավեց Զավարյանը, սակայն երրորդ համար Սիմոնյանը չէր երևում: Նա այնպես էր պառկել խրամատում և գլուխը խոթել ավազի մեջ ու կափկափում էր ատամներով, որ թեպետ լսեց Զավարյանի ձայնը, բայց չլսելու տվեց:

— Սիմոնյա՛ն,— նորից բղավեց Զավարյանը: Այս անգամ արդեն վախեցած Սիմոնյանը գլուխը բարձրացրեց հենց այն պահին, երբ արդեն երկրորդ շղթան էր գալիս գրոհի:

«Էս ի՞նչ բան է, ձե՛զ մատաղ, դե արի սրանց դեմ կռվի»,—մտածեց նա՝ լեղապատառ եղած և մահառիթ երկյուղով բռնված ու խելակորույս սկսեց փախչել: Նրան հետևեցին մի քանի բանակայիններ:

***

Կապի դասակի մի քանի մարտիկներ հեռախոսային նոր գիծ էին անցկացնում՝ Կարմիր Բանակի առաջացած զորամասերը շտաբի հետ կապելու համար: Նըրանց հետ էր և Ցոլիկը: Աշխատող կապավորները շուտով նկատվեցին հակառակորդի դիտողների կողմից և ընկան կրակի տակ: Կապավորներն շտապով իրենց նետեցին մոտերքում եղած խրամատները:

Ցոլիկն էլ, որ նույնպես խրամատ էր որոնում, վազեց դեպի այն խրամատը, որի մոտ ընկած էր՝ տանկը շարքից հանելու ժամանակ վիրավորված մարտիկը... Երբ հասավ խրամատի եզրին, նա տեսավ նրա մեջ ընկած լեյտենանտին և հայացքը դամվեց մեռնողի դեղնադալուկ, սրված դեմքին, նրա կիսախուփ աչքերին, ինչ որ բան չշնչացող, դանդաղորեն շարժվող դունատ շրթունքներին, և աղջիկը ճանաչեց նրան... Աղջկան թվաց, թե արեր հանգավ, լռեցին ճակատամարտի աղմուկները, նա այլևս ոչինչ չէր լսում, միայն ականջները խուլ թշշում էին: Մի սարսռեցնող ցուրտ հոսանք անցավ նրա ողջ մարմնով և այդ չինել հագած, դեղեցիկ աղջկա դեմքն այլակերպվեց մահասիթ վշտից: Ու նա հենց այնտեղ, թուլացած նստեց խրամատի եզրին: Եվ անուշադիր իր շուրջը փոշու ամպիկներ բարձրացնող գնդակներին, Ցոլիկը փորձեց ոտքի կանգնել, Գրիգորյանի մոտ նետվելու համար, բայց ոտքերը չենթարկվեցին և նա քարի նման գլորվելով, իրեն գցեց խրամատը, երկու ձեռքով պինդ գրկեց Գրիգորյանի գլուխն ու նրա դեմքը ծածկեց համբույրներով:

— Սիրելի՛ս, հոգի՛ս, ո՞րտեղից է կպել, խոսիր, դե խոսիր,— ասում էր աղջիկը, բայց լաց չէր լինում, որովհետև անհատակ վիշտն արցունքներ չունի...

— Կրծքից է կպե՞լ...— անարցունք հեծկլտանքով կրկնում էր նա:

Գրիգորյանի կիսախուփ աչքերը բացվեցին, նա լուռ դիտեց Ցոլիկի դեմքը և հանկարծ ժպտաց ու շշուկով, դանդաղ արտասանեց.

— Ցոլի՛կ, այս դո՞ւ ես, ուրեմն եկա՞ր, մենք հանդիպեցինք... Հիմա արդեն հանգիստ կմեռնեմ...

— Ես ե՛մ իմ անգին, մենք միասին ենք, բայց ի՛նչ ես ասում, այդ ի՞նչ խոսքեր են, քեզ ոչինչ չկա... Վերքդ հիմա ես լավ կկապեմ:

— Ո՛չ, ուշ է արդեն, այս անգա՛մ էլ դու մի քիչ ուշացար... ասաց Գրիգորյանը և նորից լռեց: Փակվեցին մշուշված աչքերը: Նրան գրկած Ցոլիկի աչքերի

առաջ սև շրջաններ նկարվեցին, և աղջիկը գլուխը խոնարհեց Գրիգորյանի կրծքին ու նրա դեմքը ջերմացավ վիրավոր կրծքից ցողված արյունով։ Ցոլիկը կիսաուշաթափ վիճակում լսեց մեռնողի սրտի թույլ զարկերը։

— Վրե՛ժ եմ ուզում իմ երկրի համար, Պուշկինի համար և սիրուս համար, որ մնաց այստեղ...— հանկարծ նորից, բավականին բարձր արտասանեց Գրիգորյանը։

Աղջիկը գլուխը բարձրացրեց և սևեռուն նայեց նրա դեմքին, որի մթագնած աչքերից արցունքի երկու շիթեր էին կախվել։

— Վրե՞ժ ես ուզում, ես այն կլուծեմ։ Ասաց աղջիկը բեկբեկուն ձայնով ու նորից սկսեց համբուրել սիրածին, դեմքը հենեց նրա դեմքին և վերջապես վշտից քարացած նրա սիրտն էլ փղձկած և ինքն էլ սկսեց արտասվել։

— Վրե՛ժ եմ ուզում,— մի վերջին անգամ խոսեց Գրիգորյանը և ընդմիշտ լռեց...

— Այո, մենք կլուծենք, ես այն կլուծեմ, բայց ո՞վ պիտի քեզ ինձ ետ տա նորից, իմ սրտի արև։— Գոչեց ցավից խենթացած աղջիկը և թուլացած ընկավ ավազների վրա։

«Գնա՛ց, նա թռա՛վ»,— մտածում էր Ցոլիկը՝ մեռած Գրիգորի մոտ նստած, շարունակելով գրկի մեջ պահել սառչող դիակը և դիտելով մեռածի բաց, այլևս ոչինչ չասող՝ ապակեփայլ, հանգած աչքերը, որոնց երբեմնի կրակից միշտ շիկնում էր իր դեմքը, որոնցից մի քաղցր և անանուն հուզմունք առաջացնող լույս էր ծորում միշտ, ամեն անգամ, երբ նա նայում էր իրեն՝ Ցոլիկի դեմքին, մի լույս, որի ցոլքերից աղջկա անանուն բախտի և երջանկության ծիածանն էր հյուսվում...

Եվ այդ էր կյանքը աղջկա համար։ Այժմ, սև հողմի ուժով խորտակվել էր այդ ծիածանը ու խրամատի

ավազների վրա փայլող արյան ու արցունքի կաթիլները կարծես այդ ծիածանի բեկորները լինեին...

«Էլ ո՞ւր եմ ապրում, էլ ինչի՞ համար...»,— մտածում էր Ցոլիկը՝ ձեռքը հենած ալյուին և աչքերը փակած։ Նա լուռ էր և նրա հաճախակի ցնցվող դեմքի մկաններն էին միայն, որ կարծես ճչում էին ցավից։

«Արդյոք նա՞ մեռավ, թե՞ ես եմ մեռել։ Ոչ, մենք երկուսով ենք թաղված այս փոսում, և չկա միջոց, չկա մի թովանք ավեր աշխարհում, որ թռած կյանքը ետ դարձնի նորից»— շարունակում էր մտածել աղջիկը։

Ապա նա բացեց աչքերը, նորից նայեց դիակին, հետո՝ արյունոտ ավազներին ու ծիծաղեց... Եվ ձեռքով սկսեց խաղալ ավազների հետ։

«Եվ ո՞վ արավ այս, այդ ո՞ր դահիճն էր...»— ճչաց նա հանկարծ։

Այդ պահին, սոսկալի հնդյունով և ցածրասլաց թռիչքով դերմանական մի ինքնաթիռ անցավ խրամատի վրայով, և նրա թևերի վրա պարզ երևացին էմբլեմայի եղկելի ճանկերը։ Աղջիկը բնազդաբար վեր թռավ տեղից և նայելով օդից բոց ու ծուխ վիժող ինքնաթիռին, գոչեց.

«Այս նրա՛նք արին, ա՛խ, նրանք արին»։

Ապա նա նայեց պայծառ արևին, որն այդ պահին նրան վերք թվաց, մի արյունավառ վերք՝ բացված երկնքի կապույտ կրծքի մեջ...

«Ո՞վ պիտի կապի այդ վերքը հիմի»— մտածեց նա. «ով կուզե կապի, հիմա ես արդեն ժամանակ չունեմ...»

Նա հանկարծ մարդկային ձայների աղմուկ լսեց և ճակատի ուղղությամբ նայելով, տեսավ մի քանի բանակայինների, որոնք ետ էին գալիս։

Ցոլիկը հասկացավ, թե ինչ էր եղել ու անմիջապես թեքվելով դիակի վրա, մի վերջին համբույր դրոշմեց Գրիգորի սառը ճակատին և շտապ վերցնելով նրա մոտ ընկած ավտոմատը, դուրս ցատկեց խրամա-

տից վրեժի անհագ, տոչորող ծարավով համակված։ Սիմոնյանն առաջինը հասավ Ցոլիկին։

— Այդ ո՞ւր— գոչեց դեմքն արյունից սարսափելի արտահայտություն ստացած աղջիկը՝ կտրելով փախչող Սիմոնյանի ճանապարհը։

— Էկա՛ն,— գոչեց Սիմոնյանը՝ շնչահեղձ լինելով։

Ցոլիկն ահեղագոչ ձայնով բղավեց.

— Դարձի՛ր, սրիկա...

Բղավելու հետ միաժամանակ նա ավտոմատը պարպեց Սիմոնյանի կրծքին։

«Տեր իմ աստված, էս ինչ խաթա էր...»—մտածեց Սիմոնյանը և ակամայից ենթարկվելով նրա հրամանին, ետ դարձավ։ Մյուսները ևս հասան աղջկան։

— Առա՛ջ ընկեք,— բղավեց Ցոլիկը։

Մարտիկները հետևեցին Ցոլիկին։

Ցոլիկը հասնելով առաջավոր դիրքերին, կանգ չառավ և առաջ նետվեց, արդեն հակագրոհի անցնող՝ այդ հատվածի մարտիկների հետ միասին։

—«Առա՛ջ»— բղավում էին շղթայի այս ու այն կետից լեյտենանտները։

Եվ ահա, միահամուռ ուռա բղավելով, զորամասը նետվեց հակագրոհի՝ հոգեբանական գրոհ կատարող արդեն երրորդ շղթայի դեմ։

Ճարճատյունների ու որոտների մեջ լսվում էր նվագախմբի ձայնը։ Էս-էսականների երրորդ շղթան շքերթային քայլվածքով առաջ էր գալիս։ Բայց երբ նրանք տեսան լավայի նման դեպի իրենց հորդող կարմիր բանակայիններին ու դիպուկ կրակոցներից հնձվող իրենց շարքերը, հարբած հիտլերականների գինովությունն անցավ։

Նրանք մի պահ մեխվեցին իրենց տեղում, և այդ պահին, նրանցից մեկն ուշադիր նայելով հակագրոհ կատարողների առջևից ընթացող, գլուխը կապած և մազերը քամուն տված աղջկան, որը մոլեգին կրակում էր, ձայն տվեց.

— Sie ist neue Joanna— d'Ark, zuruk![1])

— OWeh, oWeh![2]),— արձագանքեցին մի քանիսը և ծրես դարձնելով, խուճապահար սկսեցին փախչել:

Այնպիսի անասնական սարսափ էր ազդում նրանց վրա մոտեցող ուռայի ձայնը, որ փախչողները խանգարում էին միմյանց, ընկածներին տրորում, իրարից կախվում...

Եվ ինչպես միշտ, այս անգամ էլ մասսայական խուճապի ենթարկված զորամասից քիչ մարդ մնաց կենդանի: Երբ նրանք հասան իրենց դիրքերին, այնտեղ էլ կանգ չառան և վարակելով այնտեղ եղողներին, նրանց էլ տարան իրենց հետ: Թշնամու խուճապահար չվթան փախչում էր գլխապատառ, բայց գերմանական արգելափակող զորամասը կրակոցներով կտրեց փախչողների առաջը և երբ շատ առաջ անցածներից մի քանիսն ընկան յուրայինների գնդակներից, այն ժամանակ փախչողները կանգ առան և ետ դառնալով, ստիպված եղան ընդունել մարտը:

Հետապնդող սովետական զորամասն ընդհուպ մոտեցավ նրանց և ձեռնամարտն արդեն անխուսափելի էր: Որպես այդ բանի սկիզբ, երկու կողմերից էլ նռնակներ սկսեցին թռչել:

Ցողիկը, որ գտնվում էր գրոհող զորամասի առաջից ընթացող մարտիկների մեջ, տեսնելով, որ իր ավտոմատի փամփուշտները վերջացան, մի կողմ նետեց ավտոմատը և գետնից շտապ վերցրեց մի ընկած ավինավոր հրացան, բայց այդ ժամանակ մի նռնակ ընկավ ուղիղ նրա ոտքի տակ: Վրիժառության տարերքի մեջ, աղջիկն առանց իրեն կորցնելու, վայրկենապես վերցրեց նռնակը և ամբողջ ուժով շպրտեց թշնամու զինվորների վրա ու թեթև ոստյուններով, ավինավոր հրացանն առաջ պարզած, մտավ թշնամու շարքերի մեջ: Նրա այլայլված կանացի կերպարանքը, գրոհողների

---

1) Սա նոր Ժաննա—դ'Արկ է,. ետ դարձեք.

2) Օ՜ փորձանք, օ՜ դժբախտություն...

ավանդարդում գտնվելը, և նամանավանդ՝ նռնակի հաջող նետումը գերմանացի զինվորներից շատերի մեջ սնոտիապաշտական սարսափ առաջացրին: Զորքի այն մասում, ուր նա հայտնվեց, շատերն ահաբեկ փախան նրա առաջից, իսկ մի քանիսն էլ,— որ դողացող ձեռքերով կրակ բաց արին, վրիպեցին և ընկան Ցողիկի հետևից եկող բանակայինների կրակոցներից: Աչքերից շանթեր արձակելով ու ատամներն իրար սեղմելով, Ցողիկը նետված նռնակի արագությամբ անջատվեց յուրայիններից, հասավ դրոշակը ձեռքին փախչող մի գերմանական զինվորի հետևից և սվինով խոցեց նրան: Զինվորն ընկավ՝ իր հետ տապալելով դրոշակը: Երկու գերմանացիներ իսկույն նետվեցին ընկած դրոշակի կողմը: Ցողիկը տորրելով դրոշակը, առաջ անցավ: Դրոշակը փրկել ցանկացողներից մեկն այն է, ուզում էր բարձրացնել այն՝ գետնից, երբ բահով, սրի նման հատու մի հարված ստացավ աջ անրակից՝ Ցողիկին օգնության հասած երեք բանակայիններից մեկի ձեռքով: Այդ բանակայինը Զավարյանն էր: Նրանց գնդացիրը դուրս էր եկել շարքից և նա այժմ, իր անձնակազմի հետ գործում էր որպես հետևակ:

Դրոշակը վերցնելու վազողներից մյուսը, որ օբեր լեյտենանտ էր, ատրճանակից կրակեց Զավարյանի վրա և վիրավորեց նրան աջ ձեռքից: Սակայն հենց նույն մոմենտին Ցողիկը խոյացավ օբեր լեյտենանտի վրա և՝ «առ քեզ Ֆրից» ասելով, սվինով հարվածեց նրա փորին: Սակայն նա սվինն այլևս չկարողացավ ազատել: Օբեր լեյտենանտը խոցվելուն պես ձեռքից թողեց ատրճանակը և ականջ ծակող ճիչ արձակելով, երկու ձեռքով բռնեց կիսով չափ իր փորը մտած սվինից և սկսեց ցատկոտել:

Ցողիկը հիշեց, թե նման դեպքերում ինչպես են վարվում և անմիջապես քաշեց ձգանը, բայց ձիգ չառաջացավ... Չորս ուժեղ ձեռքեր բռնեցին նրան: Ցողիկն աշխատում էր ազատվել նրանցից, սակայն վրա

հասած մի երրորդն ավտոմատի խզակոթով հարվածեց աղջկա գլխին և աղջիկն ուշաթափվեց:

Կարմիր բանակայիններից մի քանիսը, որ օգնության էին շտապում հերոս աղջկան, կռվի բռնվեցին գերմանական ուրիշ զինվորների հետ, և ուշաթափ Ցողիկին գերմանացիները փախցրին իրենց թիկունքը: Ձեռնամարտի բռնված գերմանացիների մեծ մասն ընկան այդ կռվում, շատերը նետելով զենքերը, գերի հանձնվեցին, իսկ չնչին մասը, դարձյալ փախուստի դիմեց: Շուտով պարտված և փախչող գերմանացիներին օգնության եկող շղթաներ երևացին:

— Խրամատավորվե՛լ,— հրաման տվեց կարմիրբանակայիններին:

———

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

***

Ծեր լեռնցին դուրս վազելով սենյակից, իրեն գցեց փողոց և ցանկապատի տակ մի պահ վարանմունքով կանգ առավ:

«Ի՞նչ անել»,— սկսեց մտածել նա՝ իր դարանից նայելով դեպի տան դուռը, և երբ որոշ ժամանակ անցավ ու Քյազիմը չերևաց, և կրակոցներ էլ չլսվեցին տնից, Համզալոն,— այդպես էր ծերունու անունը,— մտածեց, որ երևի Քյազիմի կյանքին սառը զենքով վերջ տվին:

»Դրանն էլ էդտեղ էր հատել»,— ասաց իր մտքում Համզալոն և որոշեց անմիջապես ուղևորվել անտառ, այնտեղ, թավուտի խճճված, բայց իրեն քաջ ծանոթ կածաններով, օգտվելով գիշերվա խավարից, անցնել ռազմաճակատի գիծը և հասնել այդ հատվածի գերմանական շտաբը, իր մոտ գտնվող կարևոր թղթերը (այդ թղթերը Քյազիմի մոտ գտնվածների բնույթի էին) հանձնելու համար:

Համզալոն արդեն փորձված դիվերսանտ էր, բայց սրտի ցավով նկատում էր, որ այդ գործի մեջ Քյազիմը գերազանցում է իրեն՝ թե ճարպկությամբ, թե հնարագիտությամբ։ Եվ այժմ, երբ համոզված էր նրա սպանության մեջ, ոչ միայն մազաչափ ցավ ու ափսոսանք չէր զգում նրա կորստի համար, այլ ընդհակառակը, ծեր գայլը նույնիսկ ուրախացել էր։ Համզալոն Քյազիմին դիտում էր սոսկ որպես մրցակցի, որը եթե կենդանի մնար, գերմանացիների վերջնական հաղթանակից հետո, իսկ այդ հաղթանակը Համզալոյի կարծիքով օրերի խնդիր էր միայն, կբաժաներ իր հետ՝ իրեն հասնող դափնիները։

«Քիչ օգուտ չեմ տվել... Այս էլ ո՛րերորդ անգամն է տեղեկություններ եմ տանում՝ ծերության օրով կյանքս վտանգելով։ Եթե այսպես հաջող գնա, կարող է ինձ երկաթե խաչ էլ տան, ու կգա՛ն նրանք... Դո՛ւ, Համզալո, շունչ կառնես նորից, կոլխոզը դրողի հոր ծոցը կուղարկեն, ու էլի հին խանը կդառնաս, նորից ոչխարի հոտերի, ձիերի երամակների տեր կդառնաս, բատրակներդ ու հովիվներդ կդողան առաջիդ։ Բոլորը կսարսափեն, երբ հոնքերդ կկիտես...»

Այսպես երազելով ու ինքն իրեն հետ խոսելով, գնում էր նա, ապա մտածում էր, թե իր այդ ծառայությունների համար ի՞նչ պաշտոն կտան իրեն։

«Եթե գլավայություն չտան, տանուտերությունը կա ու կա»,— եզրակացրեց նա։ Պատկերացրեց, թե ինչպես է քեֆի նստելու և բաժակ-բաժակի խփելու ուեզդնի նաչալնիկի հետ, որն իհարկե գերմանացի կլինի։

Նա հասավ անտառ։ Անտառում դեռ մի քանի քայլ էլ չէր արել, երբ «halt![1])» բղավելով երկու գերմանա-

1) Կանգնիր։

կան զինվորներ զենքերը պարզած, նրա առաջը կտրեցին:

Համզալոն հանկարծակիի գալով, վախից պապանձվեց՝ սկզբում նրանց կարմիր բանակայինների տեղ դընելով, բայց հետագա խոսակցությունը լսելով և զննելով նրանց տարազը, զգաց իր սխալը և չերքեզական մաշված փափախը վերցնելով, նրա մեջ թաքցրած թղթերից մեկը հանեց և տվեց զինվորներին: Դա «անցագիր» էր:

Զինվորները, որոնք այդ գծով առաջ անցած գերմանական զորամասից էին, հրաման էին ստացել իրենց ծանր վիրավորված լեյտենանտին սան-մաս հասցնելու: Հրամանը կատարելուց հետո, այժմ գնում էին միանալու զորամասին:

Զինվորներից մեկը, որ նիհար և բավական բարձրահասակ երիտասարդ էր, քիթը վեր քաշելով դիմեց ընկերոջը.

— Շուլթեռլե,—վառիր լեյտենանտի գրպանի լապտերը, մի տեսնենք այս ինչ թուղթ է դեմ անում մեզ այս կովկասյան վայրենին:

— Լապտերն էլ դու վերցրիր ժամացույցի հետ, ինձ մոտ դրամապանակն է, համարյա դատարկ դրամապանակը,— պատասխանեց Շուլթեռլեն տխուր շեշտով և մտածկոտ:

— Իսկապես,— ասաց Հանսը,—այդպես էր նիհարի անունը:

Մինչդեռ նա պատրաստվում էր վառել լապտերը՝ թուղթը կարդալու, Շուլթեռլեն բարկանալով արդելեց, թե այդպիսով կարող են իրենց տեղը մատնել թշնամու որևէ սնայպերի, և ասաց.

— Ինչի՞դ է պետք, թե ինչ թուղթ է... Չլինի՞ սրան Բրաուխիչի համհարզի տեղն ես դրել: Պետք է վերջ տալ, մանավանդ որ կարող է հենց պարտիզան լինել...

Եվ այդ խոսքի հետ նա ձեռքը գցեց Համզալոյի

երկար մորուքից, ուժեղ թափ տվեց, այնպես որ կայծեր թռան Համզալոյի աչքերից, և բղավեց.

— Դու պարտիզան ե՞ս, այո՞, պարտիզա՞ն:

— Ո՛չ, ո՛չ, պարտիզան չկա,— կմկմալով և անասնական սարսափով բռնված, գոչեց ծերունին:

— Մի ռեխին նայիր, ոնց է մորթվող խոզի նման բղավում ստոր ռասայի այս ավանակը,— ասաց հեգնական շեշտով Շուլթեուլեն:

— Դե, սրա հետ էսքան երկարացնել իսկապես որ հարկավոր չէ,— ասաց Հանսը և ինքն իրեն հրահանգելով՝ «կարճ խոցի՛ր»,— ուժգին ետ տարավ երկու ձեռքով պատրաստ բռնած սվինավոր հրացանը և հաջորդ վայրկյանին Համզալոյին խոցեց կողքից...

Փտած կոճղի նման խուլ թմփոց բարձրացնելով, ընկավ Համզալոն իր «փայլուն կարիերայի» կես ճանապարհին...

Ինչպես կենդանի մարդկանց, նույնպես և մեռելներին թալանելու գործի մեջ հմուտ Շուլթեուլեն ու Հանսն սկսեցին խուզարկել նրա գրպանները:

— Բռնի՛ր, դանակ է, էս էլ ինձ,— ասաց Հանսը՝ աստղերի լույսից արծաթի փայլ ստացած ինչ որ իր թաքցնելով ափի մեջ և գրպանը դնելով, որից հետո՝ ծանրակշիռ, ամեն մի բառը շեշտելով, շարունակեց.

— Տեսնո՞ւմ ես, ինչ ձեռքս է ընկնում, եղբոր նման հետդ կիսում եմ:

— Էն ի՞նչ էր,— ըստ երևույթին ընկերոջ վերջին խոսքերին ոչ մի նշանակություն չտալով և Համզալոյի գրպանից մի քանի թղթեր ու ծխախոտատուփը հանելով,— հարցրեց Շուլթեուլեն:

— Ոչինչ:

— Ինչպես թե ոչինչ: Կարծում ես չտեսա՞:

— Որ տեսար... կարծես թե գողության մեջ ես բռնել: Ժամացույց էր:

— Ժամացո՞ւյց: Այդ է՞ քո ընկերությունը: Լեյտենանտի ժամացույցն ինքդ վերցրիր, հիմի էլ սա՞: Դեռ այն էլ չեմ ասում, որ այս պարտիզանին առաջի-

նը ես նկատեցի, թե չէ՝ աչքերդ խփած անց էիր կենում,— ասաց վշտացած Շուվթեուլեն՝ դիակի կողքին նստելով և դիակի մյուս կողքին գայլի նման կկզած Հանսի երեսին նայելով:

— Է՛, սիրելիս, էլի կպատահի, քեզ համար էլ կճարենք, դեռ ինչեր ենք անելու...

— Էդպես մի խոսիր, կատաղությունս արդեն բռնում ես: Ես զարմանում եմ հենց միայն քո ագահության վրա: Երկու ժամացույցն ի՞նչ պիտի անես: Եթե ընկեր ես, դե մեկը տուր ինձ:— Ախր, սիրելիս, նախ սրանք տարբեր ֆիրմաների արտադրանք են, և հետո, մեկը հարսնացուիս եմ ուղարկելու...

— «Սիրելիս»... Դու ինձ կատարյալ էշի տեղ ես դրել, և ես տեսնում եմ, որ իսկապես քո մեջ բարձր ռասայի հատկություններ գրեթե չկան, այո, ես այդ բանը վաղուց եմ նկատել: Եթե արիական ազնիվ գծերից գեթ նշույլ ունենայիր...

— Այն ժամանակ ռազմական ավարս բոլորը քեզ կտայի, այնպես չէ՞,— ասաց դեռ իրեն սառնասիրտ պահող Հանսը:

— Հիմա չես տալի՞ս: Տուր ինձ մի ժամացույցը:

— Լեյտենանտի դրամն ամբողջը դու վերցրիր, է՛, հիմա էլ դանակը տվեցի քեզ և դա հասարակ դանակ չիմանաս: Էլ ի՞նչ ես ուզում:

— Ոչինչ, շա՛տ լավ ես անում, տեղն է ինձ նման հիմարին: Ես քո այդքան կեղտերը ծածկեմ, ու դու այդպես վարվես, ոչինչ, ոչինչ...

— Այդ ի՞նչ կեղտեր ես ծածկել:

— Ապո՛ւշ, հենց միայն եթե ես զեկուցեի Հելմհոլցի մասին, հիմա որտե՞ղ կլինեիր,— զայրացկոտ բացականչեց Շուվթեուլեն, տեղից կանգնելով, դրանով հիշեցնելով նախորդ օրվա ճակատամարտի ժամանակ Հանսի ձեռքով թիկունքից խփված՝ իրենց մի զինվորի մասին, որը մեծ գումար էր թալանել և Հանսն այդ բանը գիտենալով, նրան խփեց թիկունքից, երբ նա Հելմհոլցը ուզում էր խրամատը փոխել, ու վազելով,

որպես թե վերքը կապելու, սպանվածի մոտի ողջ դը-րամը վերցրեց:

— Նախ չպետք է մոռանալ սեփական կեղտերը, ե-թե դու ասածդ կեղտ ես համարում,— ազդեցիկ տոնով պատասխանեց Հանսը և հորդորեց, որ իրենք էլի շա-րունակեն լավ հարաբերությունների մեջ մնալ:

— Հիմա չես տալի՞ս:

— Վա՛հ, սպանեցիր, էլի:

— Ախ դու, խառնածին անասուն: Որ ասում եմ արխայի չե՞ս: Հենց ամբողջ դեմքդ այդ է վկայում: Ճակատդ նեղ, դեմքդ անարտահայտիչ... Ո՞վ գիտե ինչ ստոր ցեղից ես սերվել:

— Շուլթեսլե՛, դու գիտես, որ ես վիրավորանք-ներ կուլ տվող մարդ չեմ և բավական է, ինչ հոխոր-տացիր: Դեռ համբերում եմ, ասում եմ՝ վերջ տուր: Տես, ուրիշ զինվորներ են գալիս, ոտնաձայն եմ լսում, չտապենք— գնանք:

— Գնա՛նք, բայց երդվում եմ Ֆյուրերի անունով, որ երկու ժամացույցը դու չես մարսելու:

— Վերջ տուր այդ մանկամիտ խոսքերիդ, հերիք է,— ասաց Հանսը ու սկսեց քայլել, երբ նրա ականջին ավելի որոշակի հասան լսվող ոտնաձայնները:

Շուլթեսլեն հետևեց Հանսին՝ մտքում միջոցներ որոնելով վրեժխնդիր լինելու համար:

***

Ռմբակոծությունից բզկտված անտառում՝ ճյուղա-կոտոր տապալված մի մեծ ծառի մոտ, այնտեղից ոչ շատ հեռու, ուր ընկած էր Համզալոյի դիակը, կանգ ա-ռան երեք կարմիր բանակայիններ և սկսեցին ուշադիր լսել:

— Ոտնաձայնները հեռանում են,— ասաց նրանցից մեկը:

— Այո, բայց իմացիր, որ այս անտառներում չոր-քոտանի գազանների էլ կարող է հանդիպենք,— խոսեց երկրորդը:

— Ուրեմն որսով հարո՞ւստ անտառներ են, Գրոմով։

— Առաջ շատ հարուստ էին, ընկեր սերժանտ, բայց հիմա գազան կկանգնի՞ այս որոտմունքների մեջ...

— Ինչևիցե, տղերք, զգույշ և ուշադիր լինենք, որ գերմանացի, թե գազան, մեզ հանկարծակիի չբերեն։ Իսկ այժմ ավելի պիտի խորանանք անտառի մեջ՝ որևէ հարմար ու պաշտպանված այնպիսի մի տեղ, որ թաքստոց լինի, և խորհենք մեր անելիքի մասին։

— Բարձրանանք սարն ի վեր,— ասաց Գրոմովը,— այստեղ մոտերքում ճանապարհ պիտի լինի։ Ես առիթ եմ ունեցել այս վայրերում շրջելու որսորդության նպատակով։ Հետո լավ քարայրեր էլ կան, միայն մի քիչ հեռու են և նրանց ճանապարհը դժվար մատչելի է։ Բայց եթե գտնենք, հենց իմացիր, թե բերդի մեջ ենք։ Բերդ ասելն էլ քիչ է, նստիր միջին ապահով, թեկուզ գերմանական մի դիվիզիա գա, հենց երեք հոգով ջարդ ու փշուր կանենք ու ետ կքշենք։

— Միայն թե գտնենք, գոնե ցերեկ լիներ,— ասաց Կավալերիձեն։

— Լավն էլ հենց այն է, որ գիշեր է, թե չէ այս վիճակում, ցերեկով չէիր կարող դուրս պրծնել վանդալների ճանկից,— ասաց Վարդանյանը և ապա ավելացրեց՝ արտահայտելով այն միտքը, որ այդ գիշերվա անսպասելի ու ցնցող դեպքերից հետո զբաղեցնում էր նրան,— ո՞նց պիտի անենք, որ մի գնդացիր ձեռք գցենք։ Գնդացրորդներ ենք և միայն հրացաններով։ Բանի նման չէ։ Գոնե թեկուզ ձեռքի գնդացիր։

Ապա հենց ինքն էլ պատասխանեց իր հարցին՝ «ձեռք ենք գցելու...»

— Իսկ մոտավորապես չե՞ս հիշում, թե քո այդ քարայրները ո՞ր կողմն են ընկնում։ Եթե գտնենք, դրանք կլինեն մեր պլացդարմը,— կիսակատակով խոսեց նորից Վարդանյանը։

— Սերժանտ, որ ասեմ հիմա ցնդածի նման եմ, վրաս կծիծաղես։ Միշտ այդպես է լինում ինձ հետ,

որ շատ քաղցած եմ լինում: Աշխարհը գլխիս մթնում է, ախր մեռանք, բերեք մի քիչ հաց ուտենք, հետո հեշտ է:

— Լավ, եկեք մի քիչ էլ առաջ գնանք, մտնենք այն թփուտները, այնտեղ կուտենք,— ասաց Վարդանյանը:

Երեք ընկերները շարժվեցին փոքր բացատի եզրին երևացող թփուտների կողմը:

— Ըհը՛, այս էլ իմ ասած ճանապարհը: Չէ, երևում է, որ գտնելու ենք, էլ չմտածեք,— ասաց Գրոմովը՝ տեսնելով ծառերի արանքով ձգվող ճանապարհի սպիտակին տվող շերտը:

— Դե, քեզ տեսնենք, Գրոմով, մի լավ հիշիր:

— Եկեք, գտնելու եմ: Բայց տղերք, դուք ձայներ լսո՞ւմ էք:

— Չէ,— միաժամանակ պատասխանեցին Վարդանյանն ու Կավալերիստը:

— Լավ ականջ դրեք:

— Ես միայն խոտերի ու ճյուղերի սվսվոց եմ լսում,— ասաց Վարդանյանը՝ աչքերը փակելով և լսողությունը սրելով:

Գրոմովը չոքեց և ականջը դրեց գետնին, ապա բարձրանալով ու նշանակալից կերպով աջ ցուցամատը ցցելով (դա նշանակում էր, որ նա ուզում է կարևոր բան ասել), ասաց.

— Լավ որսորդը, տղերք, լավ աչք ու լսողություն է ունենում, իսկ ես վատերից չէի... Այս ճանապարհով սայլեր են գալիս...

— Դե լավ, կտեսնենք, ճանապարհից շատ հեռու չենք նստելու,— ասաց Կավալերիստը:

— Հալալ է քեզ, Գրոմով, ճիշտ ես ասում,— խոսեց դեռ լսողությունը լարած Վարդանյանը, երբ ճանապարհի ուղղությամբ, հեռվից, անիվների ընդմիջվող թույլ ճռինչ լսեց:

«Գումակ կլինի»,— մտածեց նա:

— Ես էլ լսեցի: Սայլի կամ ֆուրգոնի ձայն է, ե-

քևի հենց գերմանական լինի,— մի քիչ հետո ասաց Կավալերիձեն:

— Անշուշտ գումակ կլինի: Կարծում եմ, որ շուտով առիթ կունենանք նրանց հետ տեսնվելու,— կարծիք հայտնեց Վարդանյանը:

— Ուրեմն հաց ուտելը դարձյալ հետաձգե՞նք,— հարցրեց Գրոմովը:

— Ոչ, հաց հանենք և ուտելով առաջ գնանք, միայն պիտի որոնենք և այս ճանապարհի մի վտանգավոր մասում դարան մտնենք, որ ազատվելու հնարավորություն չունենան:

— Խելոք ես, սերժանտ, արևս վկա,— ասաց Գրոմովը՝ անկեղծ հիանալով Վարդանյանի այդ ծրագրից,— հենց այդպիսի մի տեղ ունի այս ճանապարհը:

Ձայնը արդեն պարզ լսվում էր: Եվ իսկապես, անտառի ճանապարհով շարժվում էր գերմանական մի գումակ՝ մոտ տասը ֆուրգոններից կազմված:

Երեք ընկերներն շտապ բացեցին իրենց իրերի տոպրակները և վերցնելով Համզալոյի տնից վերցրած հացից, ուտելով շարունակեցին գնալ Գրոմովի ետևից:

Լուսնկա գիշեր էր և մոտակայքում լավ որոշվում էին առարկաները: Նրանք գնում էին ճանապարհին զուգահեռ, ծառերի միջով, խշխշացնելով առատորեն թափված տերևները:

Երբ բավականին առաջ գնացին, հանկարծ նրանց ականջին հասավ ջրի թույլ խշշոց, որը կարծես գետնի տակից էր գալիս:

— Եկե՛ք, բարեկամներս, ահա և առուն: Հիմա ես արդեն կգտնեմ, ճանապարհն անտառի այս մասում ձորի եզերքով է անցնում,— ասաց Գրոմովը՝ ագահությամբ կծոտելով եգիպտացորենի հացը և առաջ գնաց՝ ձախ ձեռքում սեղմելով պատրաստի բռնած հրացանը:

Նրանք փոքր թեքություն ունեցող տեղանքով էին շարժվում, բայց շուտով այդ թեքությունն զգալիորեն մեծացավ, ճանապարհի ուղղությամբ պառիվեր սկըսվեց, այնպես որ երեք ընկերներն սկսեցին ծանր շնչել և

դժվարությամբ քայլել՝ երբեմն սայթաքելով, ուժ տալով ծնկներին ու բռնելով ճյուղերից և մացառներից: Մի մեծ ժայռի մոտ ճանապարհը թեքվեց, և ավելի որոշակի լսվեց ջրի ձայնը գիշերային անդորրի մեջ: Ճանապարհի ներքևի մասով արդեն շարժվել հնարավոր չէր.— այդտեղից սկսվում էր անդնդախոր մի ձոր, որի հատակին մի անասելի քաղցր վշշոցով լեռնային-գետակն էր հոսում՝ արծաթերանգ և ոլորուն ձգված:

Քարավազերում, ուր լուսնի լույսով պարզ երևում էին գետակի ձյունաթույր ալիքներն ու փրփրադեզ հորձանքը, թվում էր թե գիշերվա այդ ուշ ժամին փերիներ են լողանում, իսկ ձորի վրա թեքված դարավոր կաղնիները կարծես հիացքից քարացած ու բազկատարած հսկաներ լինեին, որ գաղտնի դիտում էին գիշերային այդ հրաշալիքը:

Գրոմովն ընկերների հետ այդ տեսարանից հափշտակված, կանգնեց անդունդի եզրին ու սրտի խորքից մի «ախ» քաշեց՝ գուցե հիշելով իր որսորդական անցյալի, այդ տեղերի հետ կապված դեպքերը: Սակայն կարծես մոռանալով զգուշությունը, նա բավականին բարձըր բացականչեց.

— Ջա՜ն, ձենից մեռնեմ, դու է՞լ ես հիմի տխուր երգ ասում...

— Կամա՛ց, Գրոմով, հիշիր որտեղ ենք,— ասաց Վարդանյանը, բայց այնպիսի մի ձայնով, որ պարզ երևում էր, թե համզգում ու բաժանում է նրա զգացմունքները, սերը՝ բնության այդ վեհաշուք գեղեցկությունների հանդեպ. գեղեցկություններ, որոնցով պակաս հարուստ չէր իր հայրենի Ղարաբաղը:

Վարդանյանը բաժանում էր և կարոտը՝ ազատորեն ու անկաշկանդ վայելելու այդ՝ բնության բարձր, վսեմացնող ու ազնվացնող տեսարանների պատճառած բերկրանքը... գեղեցկություններ, որոնք անեացնում, վերացնում են մարդու և ստիպում մտածել բարու, իդեալականի և հարմոնիայի մասին, որոնք հոգու մեջ փոխվում են տիեզերական մի գողտրիկ, գերող երաժշտու-

թյան, այնպիսի երաժշտության, որը մատչելի է միայն սրտի ականջին, որը չի դրվել ու երբեք էլ հնարավոր չէ հնչյունների վերածել...

— Ընկեր սերժանտ, ձայները շատ մոտեցան, ինչ որ անելու ենք, անենք,— դիմեց Վարդանյանին Գրոմովը:

— Նռնակների պայթուցիչները դրեք,— մի փոքր ուշացումով պատասխանեց Վարդանյանը՝ ընկերոջ ձայնից ցնցվելով:

Գրոմովն ու Կավալերիստը նռնակների պայթուցիչները դրեցին: Ինքը Վարդանյանն էլ նույնն արավ և ընկերների հետ շարժվեց ճանապարհից վերև, դագաթը տանող ուղղությամբ, ուր ոչ այնքան հեռու, անշուշտ լեռնային փլուզումների ժամանակ վայր գլորված մի քանի հսկա քարաբեկորներ կային:

Վարդանյանի հրամանով նրանք տեղավորվեցին այդ քարերի հետևում: Նրանք իրենց դարանից զգույշ և ուշադիր դիտում էին ճանապարհը, որն ընդամենը վաթսուն մետր հազիվ հեռու լիներ իրենցից:

Գումակի ձայնն ավելի մոտեցավ, արդեն լսելի էին խոսակցության ձայներ.— զգույշ, այստեղ անդունդ կա,— ասում էր մեկը: Ոմանք ծիծաղում էին:

Գրոմովը, որ մի քիչ անհամբեր մարդ էր և շուտ հուզվող, հանգիստ չէր կարողանում նստել տեղում: Զգում էր, որ գնալով ուժեղանում են իր սրտի զարկերը, քներակներն ավելի հաճախ էին խփում և նա մերթ մի ծնկի վրա էր չոքում, մերթ մյուսի, ինչպես արջավորսի գնացած ժամանակ, երբ այդպես դարան էին մտնում ընկերներով:

Վարդանյանն ու Կավալերիստը համեմատաբար հանգիստ էին:

— Ամեն ինչ կախված է անվրեպ կրակից, տեսանելիությունը վատ չէ, նռնակները վերջին մոմենտին,— շշուկով հրահանգներ էր տալիս Վարդանյանն իր ընկերներին:

— Լսում ենք, ընկեր սերժանտ, դիպուկ կրակի կողմից դու ողջ լինես,— ասաց Գրոմովը:

— Դու լավ էիր կրակում, այո, բայց Իսաևը...

— Սերժանտ, դու կտեսնես, որ ես այդ կողմից այլևս առաջվանը չեմ,— նույնպես շշուկով, նկատեց Կավալերիստը:

— Եթե մեծ ուժ եղավ, կրակ չսկսեք, թող մի քիչ հեռանան, հետո: Մի խոսքով, առանց հրամանի չսկըսեք: Ես կհարվածեմ առջևից գնացողներին, դու, Իսաև, կենտրոնին, իսկ Գրոմովը՝ վերջիններին: Հրացանները մի անգամ էլ ստուգեցեք,— ասաց Վարդանյանը և մարտական ոտքի դրեց իր ավտոմատը:

Անցան սպասումի էլի մի քանի երկար րոպեներ: Վերջապես երևաց զումակի ծայրը:

Առջևից գալիս էր մի բեռնված ֆուրգոն՝ երկու ձի լծած: Երբեմն, երբ պայտերը ուժգին կպչում էին ճանապարհի խիճերի մեջ գտնվող որձաքարերին, ձիերի ոտքերի տակից կայծեր էին թռչում: Ֆուրգոնի առաջամասում նստած և ձիերը ղեկավարող զինվորը ծընկներին դրած ինչ որ բան ուներ, անշուշտ՝ հրացան: Ապա երևացին և ուրիշ ֆուրգոններ ու եռանդակներ՝ թվով տասը հատ: Դարան մտածներն այդ թիվը որոշեցին՝ միմյանցից համաչափ հեռու երևացող, նստած զինվորների թվից: Միայն վերջինի վրա երկու մարդ էին նստած, իսկ զումակի կողքից ձիով գալիս էր ինչ որ մեկը՝ անշուշտ տնտեսական մասի սպաներից: Հեծյալը ձին քշում էր կենտրոնի ֆուրգոններից մեկի կողքով և զրուցում էր ֆուրգոնը ղեկավարողի հետ:

Վարդանյանն սպասեց, մինչև առաջին ֆուրգոնը հավասարվեց իրենց, ապա քարի վրայով պարզած ավտոմատն ուղղեց, խորը շունչ առավ և նշան վերցնելով առաջին մարդուն, քաշեց ձգանը, ապա զենքն ուղղելով ձիերին, մի կարճ հերթ տվեց:

Միաժամանակ որոտացին և նրա ընկերների հրացանները: Վարդանյանի արձակած առաջին գնդակներն ըստ երևույթին վրիպեցին, որովհետև զինվորը չըն-

կավ, սակայն ձիերին ուղղված գնդակները չէին վրիպել.— լավեցին վիրավորված զույգ ձիերի ականջ ծըվատող, սուր, տանջալի խրխինջները: Նրանք երկուսն էլ ծառս եղան՝ կանգնելով հետևի ոտքերի վրա ու հաջորդ վայրկյանին դուրս նետվեցին ճանապարհից ձորի կողմը՝ իրենց հետ տանելով բեռնված ֆուրգոնը և անսպասելի հարձակումից գլուխը կորցրած կառավարին, որն անմիջապես ձեռքն առավ իր ավտոմատը, բայց չհասցրեց ճանապարհից քամու արագությամբ դուրս քաշված ֆուրգոնից իջնել, և ձիերի հետ գլորվեց սառիթափ քարերի վրայով դեպի ձորի հատակը:

Գրոմովի և Կավալերիստի կրակոցներից երկու հոգի ընկան, ու մինչ երեքն իրենց զենքերն ուղեցին ուղղել մյուսների վրա, նրանք,— գերմանական զինվորները,— վայրկենապես վայր թռան ֆուրգոններից ու մի քիչ հեռանալով, պառկեցին գետնին, ճանապարհի եզրի մի քանի քարերի ետևում և սկսեցին կրակել սարն ի վեր:

Ուղեկցող սպան, որի ձին էլ խրտնեց ու առաջ ոստնեց,— վայր ընկավ ձիուց, բայց չնայած դժոխային ցավին, որ նա զգաց իր աջ բազկի մեջ, ձախ ձեռքով հանեց ատրճանակը պատյանից և նույնպես սկսեց կրակել:

Երկրորդ ֆուրգոնի ձիերը կատաղի նետվեցին առաջ, բայց մի քանի մետր առաջանալուց հետո, բեռնված ֆուրգոնը շրջեցին ճանապարհի վրա: Նրանք ևս ֆուրգոնը հանել էին ճանապարհից, բայց դեպի վեր, թեքության վրա, ուր և անիվներից մեկը կոճղի էր դեմ առել, և ահառած ձիերից մեկը կտրել էր լծասարքը՝ փախել, իսկ մյուսը՝ ներքևի կողմի ձին, քաշելով շրջել էր ֆուրգոնն ու ինքն էլ ընկել գետին, ճանապարհի կենտրոնում, այսպիսով փակելով մյուս ֆուրգոնների ճանապարհը:

Երեք պարտիզանների դեմ կրակ էին վարում ինը հոգի: Փոխհրաձգությունը մի առժամանակ շարունակ-

վեց երկուստեք անօգուտ, որովհետև երկու կողմերն էլ լավ պաշտպանված էին։

— Նռնակնե՛րը,— հանկարծ ձայն տվեց Վարդանյանը և նրա հետ Գրոմովն ու Կավալերիստը բարձրացրին իրենց նռնակները՝ մի ձեռքում շարունակելով պահել հրացանը։

Ժամանակի չնչին տարբերությամբ, իրար հետևից թռան երեք նռնակներ։ Ներքևում, հաջորդաբար, երեք պայթյուններ լսվեցին։ Ի զարմանս նռնակ նետողների, նռնակների պայթյունին հաջորդող վայրկյանին, հսկա լեզվակներով շանթասլաց բոց երևաց դիմադրող գերմանացիների մոտ գտնվող ֆուրգոններից մեկի վերևում, ու դրան հաջորդեց ահռելի պայթյունը, որի ձայնից դղրդ ընկավ ողջ անտառը և մի փոքր ուշ լսվեց արձագանքը՝ մի քիչ պակաս ուժով, և պայթյունի հետ, դարան մտած պարտիզանների տակ գետինն այնպիսի մի դիվական ուժով ցնցվեց, որ նրանք երեքն էլ փռվեցին մեջքի վրա։

Բռունցքաչափ հողի մի կոշտ ընկավ Գրոմովի գլխին ու փշրվեց՝ սոսկալի ցավ պատճառելով։ Նույն պահին պարտիզանների առաջ գտնվող մեծ քարերից մեկը պոկվեց տեղից ու գլորվեց ներքև, որ գնալով արագացրեց ընթացքը, և շուտով անհայտացավ կանգնած փոշու և ծխի ամպի մեջ։ Բայց դեռ բավականին ժամանակ լսվում էր նրա ձայնը՝ խուլ թնդյունների ձևով, որը գալիս էր ձորից ու կարծես նրա ամեն հուժկու զարկի հետ հառաչում էին հողն ու անտառը։

Առաջինը Վարդանյանը նստեց տեղում՝ աչքերը տրորելով, որովհետև փոշի էր թափվել նրանց մեջ, ու ձայն տվեց ընկերներին.

— Բարեկամնե՛րս, հո բան չի՞ եղել...

— Օ՜ֆ, գլուխս ծակեց,— ասաց Գրոմովը՝ նույնպես նստելով, ձեռքը դրած կոշտի կպած տեղը, որ ուռել էր մի ընկուզաչափ։

— Էս ի՞նչ բան էր, սա իհարկե մեր նռնակների

ձայնը չէր,— խոսեց և Կավալերիստը՝ նույնպես շտկվելով:

— Արկեր էին,— ասաց Վարդանյանը:— Բայց ասում ես՝ գլուխդ վնասվել է՞,— դիմեց նա Գրոմովին:

— Սաստիկ ուռել է,— ասաց Գրոմովը.— որ գլխիս չառավ, աչքերս պեծին տվին: Անտերն էսքան էր...—նա ձեռքերով ցույց տվեց իր գլխին կպած կոշտի չափը, ըստ որի, այն առնվազն մի փութ պիտի եղած լիներ:

— Ոչինչ, պարտիզանի գլուխ է, կդիմանա: Բայց հիմա տեսնենք, թե ներքևի «քաջերի» գլխին ինչ ուռուցքներ են դուրս եկել: «Առաջին օգնության» հասնենք,— ասաց Վարդանյանն ու ընկերների հետ դուրս եկավ դարանից:

Գերմանացիների կրակը դադարել էր: Երկնահաստ ծուխն ու փոշին բռնել էին շուրջը, բայց քամին ցրում էր այդ արհեստական մշուշը:

Երբ պարտիզանները հասան այն տեղին, ուր ճանապարհն էր, տեսան, որ այն լցված է քարով ու հողով և տեղ-տեղ՝ ջարդված փայտեղենի կտորտանքով:

Ֆուրգոններ ու ձիեր չէին երևում, մարդկանցից էլ, համարյա ոչինչ չէր մնացել...

— Լավ գործ է տեսել, խոսք չկա: Այս ճանապարհով առայժմ ոչինչ տեղափոխել չի լինի,— ասաց Վարդանյանը:

Հենց այդ ժամանակ պարտիզանները ձիու վրնջյուն լսեցին և նայելով ձայնի ուղղությամբ, նկատեցին հեռվում շրջված ֆուրգոնը, և նրա մոտ ընկած ձին:

Նրանք վազեցին այն կողմ: Ֆուրգոնի մոտ, այստեղ ու այնտեղ, արկղեր էին թափված, որոնցից բավականին քանակությամբ կային և ֆուրգոնի մեջ, ներքևի կողափայտի վրա կուտակված:

Ձին ընկած էր կողքի: Ֆուրգոնի շրջվելու ժամանակ նրա ոտքերը խճճվել էին լծասարքի մեջ ու նա չէր կարողացել նորից կանգնել: Այժմ, երբ պարտիզաննե-

րը մոտեցան, ձին նորից փորձեց կանգնել՝ ոտքերով խփելով լծափայտին ու վրշյուն արձակելով, գլուխը բարձրացրեց և ուժգին խփեց գետնին:

— Ձին մե՛ղք է, պետք է ազատել, խե՛ղճ անասուն,— անկեղծ կարեկցանքով ասաց Կավալերիստը:

— Իսկապես մեղք է, բայց հենց այդ էլ, այսինքն ընկնելը դրան փրկել է,— նկատեց Վարդանյանը՝ նույնպես մոտենալով ձիուն: Նրանք կտրտելով փոկերը, իսկույն ազատեցին ձիուն, որը ոտքի կանգնելով, փախավ ճանապարհով:

— Փախա՛վ, բայց ոչինչ, դե հիմա մի տեսնենք սրանց արկղերի բովանդակությունը,— ասաց Վարդանյանը:

Նրանք սկսեցին ստուգել արկղերը:

— Այ տղա, էս հո լուսիններ են,— ասաց Կավալերիստը, երբ բացելով արկղերից մեկը, տեսավ նրա մեջ լցրած լուսնաձև խմորեղենները:

— Ծաղ մի՛ք անի և միաժամանակ ուշադիր եղեք: Հնարավորին չափ մթերք վերցրեք, շուտ արեք, թողնենք հեռանանք,— ասաց Վարդանյանը:

— Ընկեր սերժանտ, սննդամթերքը թունավոր չէնի՞,— հարցրեց Կավալերիստը:

— Հազիվ թե: Իրենց համար են տանում, մանավանդ, որ այստեղ եղածը հրամկազմի բաժին է, ինչպես տեսնում եմ:

— Էլ ես տեղ չունեմ,—ձայնեց Գրոմովը՝ իր իրերի տոպրակը ամբողջապես լցնելով երշիկներով ու բուլկիներով:

— Անտեր ձին եթե չէր փախել, կբարձեինք,— խոսեց և Կավալերիստը՝ պահածոներ տեղավորելով իր տոպրակի մեջ, որից արդեն թափել էր եգիպտացորենի հացը:

— Ափսոս միայն ուտեստ է,— նկատեց Վարդանյանը:

— Ընկեր սերժանտ, էս արկղերինն ուրիշ բան է երևում,—ձայն տվեց հանկարծ Կավալերիստը՝ զննելով

Ֆուրգոնից բավականին հեռու ընկած և կոտրված երկու արկղ:

— Ի՞նչ է: Բայց շատ ենք մնում այստեղ...

— Էստեղ հագուստ է: Լավ շինելներ կան:

— Մի-մի հատ վերցրեք, մեկն էլ ինձ համար, ու եկեք այստեղ:

Վարդանյանն այդ ասելով, շարժվում էր մի արկղի կափարիչը բացելու վրա, որը մյուսներից ծանր էր երևում: Պարտիզանները շինելները վերցնելով, շտապեցին նրա մոտ: Վարդանյանն արդեն բացել էր արկղը, որը լի էր նռնակներով:

— Այս մեկն արդեն հրաշալի է: Նռնակներ էլ վերցրեք ու մա՛րշ:

Պարտիզաններից ամեն մեկը մի քանի նռնակներ վերցրին՝ կիսով չափ դատարկելով արկղը:

— Հիմա գնա՞նք,— հարցրին երկուսը:

— Գնանք, բայց ափսոս դալիս է մնացածին: Եկեք սննդամթերքի արկղերը ճանապարհից ցած գցենք:

Այդպես էլ արին: Շտապով արկղերը գլորեցին ցած, որոնք ընկան այնտեղ, քարերի և մացառների մեջ, իսկ մի քանիսն էլ գլորվեցին՝ ձորն ու փշուր լինելով:

— Նռնակներն էլ՝ այս մնացածը, ներքև շպըրտենք:

— Կպայթեն, ընկեր սերժանտ:

— Ոչինչ, թող պայթեն,— ասաց Վարդանյանը Գրոմովին, և սկսեց մնացած նռնակները նետել ձորը: Մյուս երկուսն էլ հետևեցին Վարդանյանին: Ի զարմանս նրանց, նետված նռնակները չէին պայթում:

— Երևի փչացած են,—կասկած հայտնեց Կավալերիստը:

— Չէ, բանն այն է, որ պայթուցիչները դրած չեն,— նկատեց Վարդանյանը՝ զննելով մի նռնակ:

— Ուրեմն մեր վերցրածն էլ բանի պետք չէ, ափսոս,— հարեց Գրոմովը:

— Շատ մի հուսահատվիր, դժվար թե առանց

պայթուցիչների տանելիս լինեն,— ասաց Վարդանյանը՝ արկղում որոնելով պայթուցիչները:

— Այս էլ ձեզ պայթուցիչ,— ուրախացած ձայնեց Վարդանյանը՝ մի թղթե տուփակ ցույց տալով ընկերներին, և ասաց,— էլ այստեղ անելու բան չունենք, մեզ գցենք անտառը:

***

Պարտիզանները բեռնված պարենով ու նռնակներով, և ամեն մեկը մի շինել վերցրած, գնում էին անտառով:

— Խմիչք էլ կար, ափսոս չվերցրի,— ասաց Գրոմովն իր հետևից եկող Վարդանյանին:

Նրանք արագությամբ խորացան անտառի մեջ:

— Հը, ո՞նց էր, տղերք,— ուրախ տոնով հարցրեց Վարդանյանը՝ երբ ճանապարհից բավականին հեռացել էին:

— Գերազանց է, ընկեր սերժանտ, էս առաջինը շատ հաջող էր,— պատասխանեց Գրոմովը:

— Հիմա մյուս հաջողությունն այն կլինի, որ դու քո քարայրները գտնես:

— Էս կողմերումն են, միայն բավականին տեղ պիտի գնանք:

— Ոչինչ, չտապենք: Ինչքա՞ն կլինի հեռավորությունը:

— Մի տաս, տասներկու կիլոմետր:

— Դե որ էդպես է, եկեք մի քիչ հանգստանանք,— ասաց Կավալերիստը:

— Չէ, վազո՛վ, վազո՛վ,— հրամայեց Վարդանյանը:

— Էստեղ էլ վազո՞վ, ընկեր սերժանտ,— ծիծաղելով, սակայն քայլերն արագացնելով, ասաց Կավալերիստը:

— Արդեն արշալույսը մոտ է. հիմա որ լավ թագստոց չգտնենք, մեզ կարող են նկատել: Իսկ պարտի-

զաններին բռնելու համար գերմանացիք ոչինչ չեն խընայում:

Հոգնածությունից ու բեռնվածությունից քրտինքի մեջ կորած, շտապ քայլերով ու ծանր շնչելով գնում էին նրանք: Շուտով մտան մի բացատ, ապա այնտեղից օձագալար մի շավիղով Գրոմովի հետևից գնացին լեռան գագաթը տանող ուղղությամբ: Նրանց առաջ բացվեց տափարակ մի փոքր տարածություն, որ ծածկված էր ընկած՝ փտող և մամռակալած ծառերով, որոնց կողքից մի քանի երիտասարդ ծառեր և շյուղեր էին աճել:

— Լա՛վ, կանգնենք մի քիչ հանգստանանք,— ասաց Վարդանյանը և նրանք կանգ առան:

Շուրջը լուռ էր, միայն զեփյուռն էր ծառերի ճյուղերը շարժում ու նրանց վրա մնացած մի քանի չոր տերևները միմյանց քսում, որոնք մեղմ սվսվում էին: Արդեն լուսադեմ էր, և չնայած լուսինը մայր էր մըտել, շուրջն ամեն ինչ երևում էր: Այստեղից նրանք տեսնում էին ձորի վրա փռված մշուշը և իրենց ոտքերի տակ տարածվող անտառի ծառերի կատարները:

— Ես սիրում եմ անտառը, անտառի կյանքն էլ մի ուրիշ քաղցրություն ունի, մանավանդ որսորդի համար,— խոսեց Գրոմովը:

— Հենց այստեղ, մի անգամ ձմեռը, էլի երեք ընկերներով էինք, մեր որսորդկոոպի նախագահի հետ: Մի լեռնային այծ խփեցինք, եղջյուրներն ըհը՛,— ցույց տվեց նա՝ ձեռքերը տարածելով:

— Դու որսորդի կյանքն ես ասում, բա հովվի՞նը: Հովիվն է վայելում սարերի ու անտառների իսկական քաղցրությունը: Հինգ տարի կոլխոզի հովիվ եմ եղել,— աչքերը փայլեցնելով ասաց Կավալերիստը և նստեց տապալված և բունը մամռակալած ծառի վրա:

— Պարտիզանական կյանքի քաղցրության մասին ի՞նչ կասեք, տղերք,— կատակեց Վարդանյանը:

— Չէ՛, էս էն չէ,— պատասխանեց նրան Կավալերիստը:

— Քաղցրությո՜ւն: Օյ տղա, դեռ զարմանում եմ,

486—8

թե գլուխս ոնց գլխացավ էն հողակոշտին։ Իսկ ականջներս էլ դեռ տժժում են...

— Մի տեսնեմ տղա՝ գլխիդ կողը,— ասաց Վարդանյանը և վերցնելով պիլոտկան Գրոմովի գլխից, սկսեց շոշափել նրա ցույց տված տեղը։

— Էս է՞, ասում ես՝ ըհը՛, էսքա՛ն։ Մի աղավնու ձվի չափ հազիվ է ուռել։ Մի քիչ էլ որ պաքսիմատ կամ բուլկի ուտես, կանցնի։

— Լավ բան ես ասում, դեմ չեմ, ընկեր սերժանտ,— ասաց Գրոմովն իր մանկական դիմագծեր ունեցող դեմքի վրա խաղացնելով մի լուսավոր ժպիտ։

— Բայց շինելներն էլ մի բան արժեն, հասարակը չիմանաք։ Երևի օֆիցերական են,— նկատեց Կավալերիստը և իր մոտ եղած շինելի օձիքից բռնելով, թափահարեց ու ողջ երկայնքով ցուցադրեց ընկերներին։

— Իսկապես լավն են, բայց դու ինչ որ շալիկ փոխող եղբայրների մասին էիր ուզում պատմել, մի ասա, այդ ի՞նչ պատմություն է,— հարցրեց Վարդանյանը։

— Վա՛հ, շալիկ փոխող եղբոր պատմությունը դուք մի՞թե չգիտեք... Մի անգամ, մի ջահել տղա մարդ է սպանում ու արյունոտված շալիկով, հետապնդվելով, փախչում է տուն։ Բռնվելու դեպքում նրան մահվան պատիժ էր սպասում։ Երբ տանը նրան այդ վիճակում տեսնում է եղբայրն ու տեղեկանում է կատարվածի մասին, ստիպում է նրան, որ շալիկը հանի։ Հանել է տալիս ու ինքն է հագնում։ Երբ հետապնդող՝ օրենքի մարդիկ տուն են լցվում, ինքն է ներկայանում որպես մարդասպան։ Առանց կասկածելու բռնում են նրան։ Հաջորդ օրը, երբ կախաղան են բարձրացնելիս լինում, նա՝ պարանը վզին, բայց դեռ չկախված, դիտում է ագահ հետաքրքրությամբ իրեն նայող ամբոխին և նկատելով մարդկանց մեջ տխո՛ւր, գունաթափ կանգնած իրեն եղբորը, բղավում է.

— Ազիզ աղբեր ջան. շալիկդ սրանից հետո մաքո՛ւր պահի, էլ փոխող չունես...

— Օ՛հ, այո՛, այո՛, սիրելի Իսաև, մենք շալիկ

փոխող եղբայրներ կլինենք,— գոչեցին Վարդանյանն ու Գրոմովը, երբ նա պատմությունն ավարտեց:

Մի առժամանակ նրանք այդ տպավորության տակ լուռ խորհում էին:

— Բերենք մեկական պապիրոս էլ քաշենք,— ասաց Կավալերիստը:

— Լավ,— ասաց Վարդանյանը և ձեռքը տարավ գրպանը՝ մի բան հանելու, բերանը կիսաբաց արավ և նորից ծածկեց այն ձևով, երբ մարդ ուզում է մի բան ասել և հանկարծ միտքը փոխում է:

Նա ձեռքը գրպանում, սկսեց իր շագանակագույն խոսուն աչքերով դիտել ընկերներին:

Այդ աչքերի մեջ ուշադիր դիտողը ծիծաղ կնկատեր, որը սակայն չէր արտահայտվում նրա վայելուչ դեմքի վրա, որովհետև Վարդանյանն այն աշխատում էր քողարկել՝ հոնքերը խոժոռելով: Նա ուզում էր սյուրպրիզ անել ընկերներին:

— Է՛, միայն թոզ է մնացել էս անտերի մեջ,— քրթմնջաց Գրոմովը՝ բացելով իր ծխախոտի տուփը:

— Ես էլ չունեմ, ոչի՛նչ, փաթաթիր եղածը, կքաշենք, մի հատ դուրս կգա,— նկատեց Կավալերիստը: Ապա նա դիմեց Վարդանյանին.— ընկեր սերժանտ, քեզ չունե՞ս:

— Ո՛չ, իմս էլ է վերջացել... Բա ո՞նց պիտի անենք, էս անտե՛ր ծխախոտի դարդը...

— Խնդրե՛մ, բարեկամներս,— ասաց Վարդանյանը լայն ժպտալով, և գրպանից հանեց մի դեղանկար ծխախոտի տուփ, բացեց ու զարմացած ընկերներին հրամցրեց ընտիր գլանակներ:

— Կեցցես, աղբեր, էս ո՞րտեղից,— հարցրեց Կավալերիստը:

— Ո՞րտեղից ենք գալիս...

— Բա ես էս ո՞նց էի կուրացել, չա՞տ ես վերցրել, թե էդ մեկն է:

— Մի քանի տուփ էր, բոլորը վերցրի,— պատաս-

խանեց Վարդանյանն ու ամեն մեկին մի-մի տուփ տվեց:

Նրանք ծխելուց հետո շարժվեցին տեղից:

— Եկե՛ք, քիչ մնաց, ա՛յ էն մեծ քարափի մեջ են, մի տասը կիլոմետր էլ գնանք, կհասնենք:

— Լա՛վ քիչ է... Բայց այնտեղ բարձրանալ չի լինի:

— Ճանապարհ կա:

Մի քանի կիլոմետր դժվարին, քարքարոտ և կարճ թեքերով ծածկված զառիվեր ճանապարհ անցնելուց հետո, արդեն հարթ տեղանքով սկսեցին քայլել նրանք ու վերջապես հասան Գրոմովի ցույց տված քարափի տակ, որը գրեթե ուղղահայաց էր պատի նման, և չափազանց բարձր, ատամնավոր գագաթ ուներ:

— Քարայրներն էս քարափի մյուս երեսին են,— ասաց Գրոմովն ընկերներին և մի նեղ կածանով, որն անցնում էր հսկա ժայռի դուրս ցցված բեկորների միջով, սկսեց բարձրանալ:

Վերջապես այդ վերջին ու ամենադժվար վերելքն ևս կատարելուց հետո, նրանք տեղ հասան:

Ժայռի հարավային լանջին, բարձրում, երևացին մի քանի սև, մեծ խոռոչներ:

— Էս էլ այրերը: Բայց ներքև չնայեք, գլուխներդ կպտտվի,— զգուշացրեց Գրոմովը՝ ձեռքը պարզելով:

Եվ իսկապես, նրանք, որ արդեն քարայրների առաջամասում գտնվող նեղ շերտով հարթ տարածության վրա էին արդեն, ժայռի ստորոտից գլխապտույտ բարձրության վրա էին գտնվում:

— Այ տղա, էս՝ սատանան էլ մեզ չի կարող գտնել,— ասաց Կավալերիձեն իր կարճ, սև բեղերը ոլորելով, որ միշտ անում էր գոհունակություն արտահայտելիս:

— Բա դուք ո՞նց գիտեք ձեր Գրոմովին...

— Գրոմո՛վ, ետ դառնալն էլ է պատիժ լինելու:

— Էլ ո՞ւր եք դառնում, ընկեր սերժանտ, եկել եք, մի քանի օր մնացեք, իմ հյուրերն եք,— կատակեց

Գրոմովը և հայտնեց, որ այդ երկու քարայրները, որ հաղորդակցություն ունեին միմյանց հետ, ուրիշ, գաղտնի ճանապարհ էլ ունեն, հակառակ ուղղությամբ, որով հարկ եղած դեպքում կարելի է փախչել։ Այս ինքը առաջինը մտավ մոտիկ քարայրը, և մյուսներն էլ հետևեցին։ Չնայած դրսում արդեն պարզ լույս էր, բայց քարայրում կիսախավար էր տիրում։

— Մեծ է՞,— հարցրեց Վարդանյանը։

— Էլ դու պրծար... Էս դեռ «կորիդորն» է, հիմա կմտնենք «սենյակը»,— պատասխանեց Գրոմովը և շարունակեց առաջ գնալ։

Այդ խոսքերը հենց նոր էր վերջացրել նա, երբ հանկարծ չան մնգստոցի նման ձայն լսվեց «սենյակից», և նա մթնում առկայծող, միմյանց մոտ գտնվող երկու կետ նկատեց։ Վախեցած ետ թռավ, մտածելով, թե գազան է...

— Էս ի՞նչ էր, տղերք,— նույնպես անհանգստացած, ասաց Կավալերիստը։

— Հրացանները մարտի պատրա՛ստ, մեկ-մեկ դուրս եկեք,— կարգադրեց Վարդանյանը՝ անսպասելի ձայնից նույնպես անհանգստացած։ Առանց իրեն կորցնելու և ավտոմատն առաջ պարզած, ընկերների հետ, որոնք իրենց հրացաններն էին ուղղել «սենյակի» կողմը, նա սկսեց ետ-ետ գնալ։

— Պապի ջան, եկա՛ն, շուտ վեր կաց փախչենք...— լսվեց հանկարծ մի մանկական երկյուղած ձայն՝ քարայրի խորքից։

— Ռուս մարդիկ են երևում, բալաս, մի վախենա,— ասաց մի ուրիշ՝ խռպոտ ձայն, և ապա բարձր շարունակեց.— աստծո մարդիկ, մի՛ք վախենա, առաջ եկեք, օգնե՛ք՝ եթե կարող եք...

Այդ ձայնին հաջորդեց քարայրի գրնգուն արձագանքը, որ ճշտորեն վերարտադրեց վերջին բառերը։

— Օհո՛, մարդիկ են,— ասաց Վարդանյանը։ «Ծուղակ չլինի՞», մտածեց նա միաժամանակ, և իր հերթին ձայն տվեց քարայրի խորքից խոսողին,— դե

շուտ, դուրս եկեք, մենք ձեզ ոչինչ չենք անի, գերմանացիներ չենք, դուրս եկեք քարայրից...

Վնդատոցը նորից կրկնվեց։

— Գալիս ենք, հարազատներ, գալի՛ս ենք, ա՛խ, բայց ուժս չի հերիքում,— լսվեց նորից ձայնը։

— Իսկ այդ ի՞նչ բան է, շուն ունե՞ք ձեզ հետ,— հարցրեց Գրոմովը։

— Շուն է, միք վախի, սա էլ է փախել... Միայն հալ չունի, որ ուզենա էլ, չի կարող կծել։

— Պապի ջան, վայ թե...— լսվեց նորից մանկան ձայնը։

— Ինչ կուզե լինի, բալաս, որ գերմանացիներ էլ լինեն, դուս պիտի գանք։ Թող մի անգամից խփեն վերջացնեն...

Պարտիզանները սաստիկ զարմացած և հետաքրքրված լսում էին այդ խոսակցությունը՝ դրսում, քարայրի առաջ կանգնած։

Մի երկու րոպեից հետո երևացին քարայրի խորհրդավոր բնակիչները։ Խավարամած մուտքից դուրս եկան երկու հոգի.— մի պատկառելի դեմքով, փառահեղ, ալեքավոր մորուքով ծերունի և մի վտիտ մանուկ։ Ծերունին, որ ոչխարի մորթուց՝ պատառոտած քուրք ուներ հագին, հազիվ էր ոտքերը քարշ տալիս։ Նրա աչքերը խորն էին ընկած ու կարծես հանգչող ճրագներ լինեին։ Նա ձեռքից բռնած բերում էր մանկանը, որը, գլխաբաց էր և այնքան հյուծված ու գունատ, որ թվում էր, թե հիմա կմեռնի։ Սակայն ամենից ուշագրավն այն էր, որ երկուսի հագուստն էլ ամբողջապես ներկված էր արյունով...

Նրանց ետևից դուրս եկավ մի շուն՝ մեջքի բուրդը թափված և փորը մեջքին կպած։

— Էլ ոչ ոք չկա՞,— հարցրեց Վարդանյանը՝ ցավակցող հայացքով դիտելով թշվառներին։

— Ոչ ոք,— ասաց ծերունին և նստեց այրի առաջ։ Մանուկը շարունակում էր կանգնած մնալ և հետաքրքրությամբ դիտել անծանոթ մարտիկներին։

Շունը մոտեցավ Վարդանյանին և աղերսող հայացք գցելով նրա դեմքին, սկսեց լիզել նրա կոշիկները:

— Դժո՛խք, օ՛, դժո՛խք, այս ինչերի ենք ականատես լինում,— խոսեց ինքն իրեն Վարդանյանը, իսկ նրա երկու ընկերները, շվարած և սևակնած, դիտում էին կենդանի դիակներին:

— Ո՞րտեղացի եք,— հարցրեց նրանց Գրոմովը:

— Գրոմով, դրա ժամանակը չէ, խոժոռ նայելով ընկերոջը, ասաց Վարդանյանը և սկսեց քանդել իր իրերի տոպրակի բերանը:— Մարդիկ մեռնում են, նախ պետք է նրանց կերակրել:

— Հա՛ց, ախ, բարի մարդիկ, մի մատի չափ տըվեք, եթե ունեք, ուտեմ, նոր մեռնեմ...

— Քեռի ջան, թե կա, ինձ էլ մի քիչ տվեք,— ասաց պապի մոտ նստած մանուկը:

Վարդանյանը հազիվ զսպելով արցունքները, իր տոպրակից հանեց մի քանի սպիտակ բուլկիներ և տըվեց ծերունուն ու տղային:

Շունը բերանը բացեց, ականջները խլշեց և ուրախություն արտահայտող ձայն արձակեց: Գրոմովը գրպանից հանեց եգիպտացորենի հացից մնացած մի կըտոր ու գցեց շանը:

— Փառք չաստվա՛ծ,— խաղաղ ժպտալով խոսեց ծերունին՝ Վարդանյանի ձեռքից վերցնելով ուտելիքը և ագահաբար մի մեծ պատառ բերանը գցելով, սկսեց ուտել:

Նրա ձեռքերը դողում էին և նա այնպես էր պահում բուլկիները, որ կարծես վախենում էր, թե ինչ որ մեկը կարող էր հանկարծ խլել իր ձեռքից:

Բուլկիներն արագությամբ սպառվեցին: Ծերունին ու թոռը երախտագիտությամբ շնորհակալություն հայտնեցին: Կավալերիստն ու Գրոմովը նրանց նորից ուտելիք տվին, և իրենք էլ սկսեցին ուտել: Վարդանյանը նստելով քարի վրա, ավտոմատն առած ծնկների մեջ, գլանակ վառեց և ծխելով սկսեց թախծոտ դիտել նրանց:

Նա նկատեց, թե ինչպես իր ընկերները նստած տեղերում սկսեցին ննջել, բուլկու կտորը վայր ընկավ Կավալերիստի ձեռքից և քունն անմիջապես հափշտակեց այն:

— Տղե՛րք, շինելների վրա պառկեցեք, մի քիչ քնեցեք, իսկ ես կհսկեմ, թեկուզ տեղներս լավ պաշտպանված է:

Կավալերիստն ու Գրոմովը բացեցին իրենց ծանրացած թարթիչները, որոնց վրա կարծես մի քանի կիլո ծանրություն էր ճնշում, և հարցական նայեցին Վարդանյանի դեմքին:

— Ասում եմ՝ պառկեցեք քնեք:

— Բա դո՞ւ, ընկեր սերժանտ,— ասաց Կավալերիստը:

— Ոչինչ, կարթնանաք, հետո էլ ես կքնեմ:

— Դու էլ քնի, բալաս, եթե ձայն լսվի, ես կարթնացնեմ,— ասաց ծերունին Վարդանյանին:

— Չէ, ոչինչ, հայրիկ, իմ քունը հիմա էնքան չի տանում:

Գրոմովն ու Կավալերիստը փռեցին գերմանական շինելները քարայրի մուտքի առաջ ու պառկեցին նրանց վրա, մի մասով էլ ծածկվելով և նախօրոք գլխների տակ դնելով իրերի տոպրակները, իսկ հրացաններն էլ դնելով իրենց կողքին:

Նրանք իսկույն խոր քուն մտան՝ քաղցր մշշացնելով:

Վարդանյանը նստած՝ դեռ շարունակում էր ծխել, տարված իր մտքերով: Նա ինքն էլ չիմացավ ինչպես, նայելով այդ կմախքացած մանկան դեմքին, մի դրվագ հիշեց իր հերոսական հայ ժողովրդի անցյալից:

Նա հիշեց այն, ինչ պատմվում է «Արտաշես և Արտավազդ» էպոսի մեջ: Նրան թվում էր, թե այդ մանուկը դայակի ձեռքով ազատված, դավադրաբար ըսպանված հայոց արքայի՝ Սանատրուկի սրի քաշված ընտանիքի վերջին շառավիղն է, կրտսեր արքայազն Արտաշեսը, որը փախցրվել է Հերի կողմերը, հովիվների

մոտ, և այդ ծերունին էլ մի հովիվ է, իսկ ինքը, Վարդանյանը, Սմբատն է, որ եկել է փրկելու ու խնամելու այդ մանուկին:

Ասյա նա զգաց, որ իր քունն էլ է անտանելի տանում և որպեսզի չքնի, սկսեց զրուցել ծերունու հետ:

— Հայրիկ, վաղո՞ւց է այս քարայրումն եք:

— Արդեն հինգ օր է:

— Իսկ ի՞նչպես եղավ, որ եկաք: Եվ այդ ի՞նչպես է, դուք վիրավո՞ր եք:

— Ո՛չ, վիրավոր չենք... Պատմելու բան է՞, որ պատմեմ, որդի, լեզվով չի պատմվի...

— Ո՞ր գյուղից եք, հեռո՞ւ է ձեր գյուղը և ե՞րբ են գրավել գերմանացիք:

— Մեր գյուղն այստեղից մոտ յոթ կիլոմետր հեռու կլինի և այս զուլումը մի քանի օր է, ինչ եկել է գլխներիս: Ես Թերեքի կազակներից եմ,— ակներև դժվարությամբ պատասխանեց ծերունին և մի փոքր լռությունից հետո, նայելով՝ սպասողական և կենտրոնացած Վարդանյանին, որը դյանակ դլանակի հետևից էր ծխում, ծերունին նրանից մի ծխախոտ խնդրեց և ձեռքը դնելով իր կողքին արդեն քնած տղայի գլխին, ծխելով շարունակեց խոսել՝ մի քիչ ծոր տալով, իր ցրված մտքերը դժվարությամբ խմբավորելով ու հարակցելով:

— Տղաս,— ասաց նա,— ես երկար եմ ապրել աշխարքիս վրա, լավ օրեր էլ եմ տեսել, վատ էլ, այնպես, ինչպես սարի գլխին ամպ էլ է չոքում և պարզ էլ է լինում...

— Բայց, որդիս, այն, ինչ ես տեսա, այս պատերազմի ընթացքում, վեր է իմ տեսած ու լսած ամեն բանից: Առաջ էլ էին կռվում: Հենց ես մի քանի անգամ կռիվ եմ գնացել, բայց չեմ տեսել, որ ժողովրդին, մանուկից սկսած մինչև ծերունին, սրի քաշեն:

— Ի՞նչ է, ձեր գյուղո՞ւմ էլ այդպիսի բան արի՞ն:

— Արին, բա չարի՞ն,—ասաց ծերունին լալահառաչ ձայնով:

Վարդանյանի քունը, որ սկսել էր տանել, բոլորովին փախավ: Զգաց, լեղիից դառն ու տհաճ ինչ որ բան ոչ միայն բերանում, այլև ողջ մարմնի մեջ ու նորից գլանակ վառեց: Նա խնդրեց ծերունուն, որ համառոտակի պատմի իրենց գյուղացիների ու հատկապես իրենց ընտանիքի հետ պատահած դեպքերը:

Ծերունին լացով սիրտը մի փոքր թեթևացնելուց հետո, շարունակեց.

— Բանն էսպես էր: Երբ մեր գյուղը գրավեցին, խեկ դա անակնկալ ու այնպես հանկարծակի եղավ, որ շատ քիչ մարդիկ կարողացան փախչել,— հենց գրավելու օրը, իրենց զորքն առաջ անցավ ու գյուղում միայն մի փոքր զորախումբ մնաց: Դրանք ընկան տները՝ խուզարկության: Ռեխները ծամռելով, իբր ռուսերեն էին խոսում,— նրանք ասում էին. «Զենք ենք որոնում, և թաքցրած մարդիկ: Կարմիր բանակայիններ թաքցրած կլինեք, որ մեզ թիկունքից խփեն»:

— Ասում էին, բայց դե ի՞նչ զենք ու բանակային: Փորացավները թալանն էր՝ խուզարկության անվան տակ: Ինչ լավ բան տեսան, քուրս քաշեցին, տարա՛ն, բայց գործը դրանով չվերջացավ... Մի չորս հոգի, զենքի մեջ կորած, մեր բակը մտան: Էդ ժամանակ ես էի տանը, երեխեն ու սրա հանգուցյալ մայրը, որին... Իսկ տղաս էս է՝ երկու տարի է, որ բանակումն է՝ Պետրով Վասիլիյ: Գուցե թե նրան հանկարծ տեսած լինես,— ասաց ծերունին՝ խամրած աչքերում հույսի շողեր խաղացնելով:

— Ոչ, հայրիկ, այդ անուն ազգանունով ընկեր չեմ ունեցել: Մի Պետրով ունեինք, բայց Վասիլի չէր, նրա անունը Վլադիմիր էր:

Ծերունին լուռ էր:

— Իսկ հետո՞, հայրիկ: Ասացիր, որ չորս զինվածներ եկան:

— Եկան: Ես վախից տան դուռը, պատուհանները պինդ փակել էի: Էս երեխան ու հանգուցյալ Նադյան,— այդպես էր հարսիս անունը,— վախից ատամ-ատամի

խփելով, կծկվել էին սենյակի մի անկյունում՝ դիվանի վրա, իսկ ես էլ պատուհանի փեղկի արանքից նայում եմ: Դրանք ինչ որ հաչալով, մոտեցան սենյակի դռանը, մի երկու անգամ աքացով ու ավտոմատի կոթով ուժեղ խփեցին՝ «Mach auf!»[1]) բղավելով: Բայց դե, ես հո չէի՞ գժվել, որ բաց անեի... Մեկ էլ խոզանոցից մեր վարազի ձայնը լսվեց՝ դրանց ձայնից էլ բարձր: Դրանք դռնից հեռացան ու տեսնեմ՝ գնում են ուղիղ դեպի խոզաբունը: Բակում Փաների տախտակներից մի խոզաբուն էի շինել ու մի լավ, քեֆիդ ուզած վարազ ունեի: Դու մի ասի, դրանք վարազի խրթխրթոցը լսել են... Էդ է՝ գնացին, ես էլ նայում եմ:

— Քացով խփեցին, դուռը կրնկահան արին ու դաշույնները հանելով, դռան առաջը կտրեցին: Ասի՝ տարա՛ն վարազը... Մեկ էլ վարազը դուրս պրծավ ու ավազակներից մեկը կողքից դաշույնով հարվածեց էնպես, որ աստծո անասունի ճղղոցը երկինք հասավ: Բայց դրա և մյուսների հարվածներից կենդանին չընկավ ու սկսեց փախչել բակի մեջ՝ արյուն չաղ տալով և ճղճղալով: Գերմանացիք ընկան ետևից. դե, ո՞ւր պիտի փախչեր, բակի դուռն էլ էդ ժամանակ ծածկած էր: Տեսա՝ գերմանացիներից մեկն ավտոմատն ուղղեց վարազին, բայց մյուս ընկերը ձեռքը շարժելով, արգելեց կրակել ու դրանից հետո չորս հոգով կալմեջ արին վիրավորված և կատաղած խոզին: Մեկը ձեռքը դցեց, ետևի մի ոտքը բռնեց, բայց վարազն էլի դուրս պրծավ ու էնպես կատաղությամբ հարձակվեց առաջը կտրած մի զինվորի վրա, որ վերջինս վախեցած ետ թռավ ու աչքդ բարին տեսնի, ընկավ ջրհորը, որը հենց կողքին էր գտնվում...

— Մեր ջրհորները՝ չգիտեմ, տեսել ե՞ս, թե չէ, շատ խորն են և ջուրն էլ առատ: Այնպես որ, հաշիվս վերցրի, թե ինչ եղավ ու էլ չնայեցի, թե գերմանացիներն ինչ են անելու, թաթերիս վրա վազեցի հարսիս մոտ:

---

1) Mach auf—բաց արա:

— Շուտ վե՛ր կաց, մեզ գցենք Ակիմի տունը,— ասում եմ նրան:

— Ինչի, հայրիկ, մի՞թե նրանց տունը մերից ապահով է,— ասում էր նա:

— Շո՛ւտ, շո՛ւտ, հիմա որտեղ որ է՝ մեր տունը հիմնահատակ կանեն, հրդեհ կտան, ապաստվել չկա··· Վարագը նրանցից մեկին Ջրհորը գցեց···:

— Ու մինչ գերմանացիները հավաքվել էին Ջրհորի չուրջը՝ այնտեղ ընկածին օգնելու համար, ես Հարսիս ու Թոռանս հետ դուրս եկա տանից՝ հետևի փոքր դռնով, դուռը կողպեցի ու շտապ մեզ գցեցինք մեր հարևան Ակիմի տունը:

— Դեռ նոր էինք դրանց տունը մտել, որ մեր տան կողմից կոտրատվող ապակիների ձայներ լսեցինք: Այդ մեր պատուհանների ապակիներն էին փշրում գազազածները: Իսկ Ակիմի տունն արդեն մաքրազարդել էին, այնպես որ աթոռ էլ չկար նստելու համար:

— Գլուխդ ինչ ցավացնեմ, տղաս, տեսա հարևանիս՝ խեղճ Ակիմը, որ ինձնից մի քիչ ջահել մարդ էր, ընկած էր հատակին, կիսաուշաթափ վիճակում, գլուխը ճզմված··· Ես հետաքրքրվեցի, թե այդ ի՞նչպես է պատահել, լացող կինն ու որդին պատմեցին, և պարզվեց, որ դրան մահվան դուռն են հասցրել ծեծելով, երբ չըտանելով անարգանքը, նա դիմադրել և ձեռք է բարձրացրել ֆաշիստներից մեկի վրա, որն ուզեցել է անպատվել Ակիմի գեղեցիկ աղջկան, հենց այնտեղ, ծնողների աչքի առաջ:

— Եվ այդպես, աղջկան տարել էին, իսկ հորը կիսամեռ էին արել ծեծելով, թողել-գնացել:

— Ես ու հարսս դրան և շուտ-շուտ ուշաթափվող կնոջն սկսեցինք օգնություն ցույց տալ: Շուտով դըրանց դուռը ծեծեցին: Սկզբից կարծեցինք, թե նրանցից կլինեն, բայց մեզ նման հարևաններ էին···

Նկատված է՝ կյանքի դժվար, ահավոր պահերին հարևան ու բարեկամ միմյանց գլխի են հավաքվում՝ փորձությունն ու վիշտը միասին կրելու: Եվ այդպես,

այդ գիշեր հարևանիս տունն ուղղակի կարծես մեռելատուն լիներ: Կանայք լաց էին լինում, անիծում, իսկ տղամարդիկ լուռ ծխում էին:

— Հիմա դու կասես՝ ինչո՞ւ չփախանք գյուղից:

— Ո՛չ, հայրիկ, ես գիտեմ, որ մասսայական փախուստն այնքան հեշտ չէ՝ այն էլ գերմանացիների ճանկից:

— Ճիշտ է, մենք էլ էինք այդպես մտածում, ասում էինք՝ «դե, կթալանեն, բայց հո չե՞ն կոտորելու: Իսկ եթե փախուստի դիմենք, լցվենք անտառը, կարող է՝ որիս հասցնեն, վնասեն»: Այդպես մտածեցինք և չարաչար սխալվեցինք, որովհետև եթե փախել էինք, գոնե տասից հինգը, կամ ասենք՝ երեքը կազատվեր, բայց ավա՜ղ, մեր ամբողջ գյուղից ես ու այս մանուկն ենք ողջ մնացել, մեկ էլ՝ առաջուց փախած մի երկու հոգի, բայց էն էլ հարց է, թե նրանք կա՞ն հիմա, թե ոչ...

— Ինչպե՞ս, ձեր գյուղացիներին բոլորին կոտորեցի՞ն... իսկ ի՞նչպես եղավ, որ դու Թոռանդ հետ կարողացար ազատվել:

— Ես կմեռնեմ, տղաս, գիտեմ, երկար կյանք չեմ ունենալու, ու չարժե էլ, որ այդքան աղետներ տեսնելուց հետո մարդ նորից ապրի: Միայն դու լսիր, լավ միտքդ պահիր: Խնդրել եմ աստծուց ,որ դու քո ընկերների հետ մի հնարքով ազատվեք— ողջ վերադառնաք՝ աչքերը ճամբին ձեր ծնողների մոտ և ամեն տեղ պատմեք, որ մարդիկ իմանան, թե ո՞վքեր են ֆաշիստները:

Վարդանյանը հառաչեց՝ հիշելով ծնողներին:

Ծերունին շարունակեց.

— Էդ գիշերը լուսացավ, ոչ էր լուսացել... Լուսաբացի հետ, փողոցից ճիչ ու վայնասունի ձայներ լսեցինք: Ակիմի պատուհանը կիսաբաց անելով, տեսանք, որ մեր տունն այրվում է, ուրիշ տներ էլ, գյուղը մի ծայրից հրդեհ էին տվել... Ու ժողովրդին առաջ արած, անխնա ծեծելով, մեր փողոցով քշում էին: Շուտով տեսանք, որ Ակիմի տան շուրջն էլ խոտ են թա-

փում: Թափեցին ու կրակը տվին... Մենք դուրս եկանք, մեզ էլ խառնեցին մյուսների հետ...

— Մեր ու մանուկ, ծերունի թե ջահել, իրար խառնած, չորս կողմից շրջապատած, ծեծելով ու ջարդելով, գյուղից դուրս բերին: Հայհոյում էին ու ծեծում և միաժամանակ գոռում էին. «Ռուսական խոզեր, դուք էդ քանի՞ գլուխ ունեք, որ գերմանացի եք սպանում և դիակը ջրհորը գցում: Դե սպանելը հիմա կտեսնեք»:

— Էղտեղ մատս կծեցի... «Անտեր վարազի հանած օյինն է»,— ասի: Ուզեցի մոտենալ մեծավորին, բացատրել... Մտքումս ասի՝ «Էս գեղականի, էսքան ժողովրդի արյան տակ մնելու փոխարեն, թող մենակ ինձ ու մերոնց սպանեն»: Բայց հենց ուզեցի մոտենալ, ավտոմատի կոթով էնպես խփեցին, որ հենց ընկնելու էի, եթե կողքիցս եկողները չէին բռնել: Ծեծվող կանայք ու մանուկները անասելի չխկան էին գցել, բայց թե քարերի սիրտը շարժվում էր, գերմանացիներինն էլ նույնպես...

— Պարտիզանություն եք անում, հա՞, ռուսական խոզեր, ոչինչ. կտեսնենք,— բղավում էր մեկը՝ անխնա հարվածելով...

— Ո՞վ է սպանել, ե՞ս եմ սպանել,— բղավեցի ես, բայց կամ աղմուկի մեջ ձայնս չլսեցին, կամ ինձ դըժվածի տեղ դրին:

— Այդպես մեզ քշեցին առաջ: Այս քարափից մի հինգ կիլոմետր հեռու, մեծ բացատ կա,— այնտեղ կանգնեցրին: Շուտով մի ավտո էլ եկավ՝ լիքը բահ բարձած: Բահերը շպրտեցին մեզ ու հրամայեցին, որ գերեզման քանդենք: «Քանդեք ձեր գերեզմանը, սատոր ռուսայի խոժամուժներ»,— բղավում էր մի օբերլեյտենանտ՝ մաքուր ռուսերենով:

— Շատերն ուշաթափվեցին: Մայրերն իրենց մանուկներին գրկած, էնպիսի մի վայնասուն էին գցել, որ աստված հեռու տաներ...

— Վերջապես նորից գլխովս անցավ այն միտքը,

որ հարցը պարզեմ, գուցե թե փրկվի անմեղ ժողովուրդը։

— Պարոն լեյտենանտ, մարդ չի սպանել ձեր զինվորին, խոզն է նրան ջրհորը գցել, իմ սեփական խոզը, պատիժը մենակ ինձ տվեք, գթացե՛ք սրանց․․

— Էդքան չեն հաչի, ցնդած ծերուկ, հիմա բոլորիդ որպես խոզերի, ինչ պետք է՝ կանենք․․․,— պատասխանեց մի գերմանացի՝ բահի պոչով գլխիս խփելով և ստիպեց, որ բահը վերցնեմ ու գերեզման քանդեմ մի քանի ուրիշ տղամարդկանց հետ։ Ես չվերցրի ու տեսա, թե ինչպես շուտով մյուս քանդողներն էլ բահերը գցեցին։

Մի համարձակ ձայն թնդաց մեր միջից այդ ժամանակ․

— Ֆաշիստ գազաննե՛ր, կերե՛ք մեր միսը, արյուն լափեցեք, վնաս չունի, ձեզ պատժող ձեռքեր դեռ կըգտնվեն, Կարմիր Բանակը դեռ ձեզ կտեսնի․․

— Օբեր լեյտենանտը, որ մի կարճահասակ, սպիտակ օձիքով և մաքուր սափրված մարդ էր, դերասանի նման ծիծաղեց այդ խոսքի վրա և ասաց․

— Կարմիր Բանակն այլևս գոյություն չունի։

— Ապա տեսնելով, որ քանդողներ չկան, բղավեց իր զինվորների վրա, որ ավտոյից գնդացիրն իջեցնեն։

Հրամանը կատարվեց։ Ապա էլի, հրամանի համաձայն, գերմանացիները ավտոմատները բռնած, շարվեցին մեր առաջ, մեզնից մի տասը մետր հեռու։

— Մի՞թե որոշել են կոտորել այսքան ժողովրդին,— մտածում էի ես և աչքերիս առաջը մթնում էր։ «Ֆոյե՛ր»[1]),— լսվեց օբեր-լեյտենանտի հրամանը։ Հրամանի հետ գնդացիրն ու ավտոմատները ճարճատեցին։ Հենց նույն վայրկյանին ես վայր ընկա, ինչ որ մեկը կողքիս կանգնածներից ճչալով ձեռքը գըցեց ինձ ու ինձ էլ իր հետ տապալեց։ Երեխան, որի ձեռքն ամուր բռնել էի, նույնպես վայր ընկավ, միայն

---

1) Կրակ!

ոչ ինձ էր գնդակ կպել, ոչ էլ Սերգեյին, այսինքն՝ թուխս: Նորից համազարկ տվեցին, ու ովքեր դեռ ոտքի վրա էին, այդ անգամին ընկան: Միաժամանակ մի քանիսը փռվեցին Սերգեյի ու ինձ վրա:

— Երեխան լաց էր լինում, իսկ ես սիրտ էի տալիս կամաց. «Սերգեյ, մի վախի, Սերգեյ, ձենդ կտրի՛, կիմանան...»

— Չգիտեմ՝ ահի՞ց, թե՞ հորդորանքից, նա ձենը կտրեց: Մեկ էլ էն լսեմ, որ աղմուկ-աղաղակ ընկավ Փաշիստների մեջ, ուժեղ կրակոցներ լսվեցին բավականին հեռվից և սրանք էլ մեր մոտից՝ ուրիշ ուղղությամբ, սկսեցին կրակել: Կռիվ սկսվեց: Միայն լսում էի, որ գերմանացիք «պարտիզան, պարտիզան» էին ասում...

— Ուրեմն դրանք պարտիզաններ էի՞ն,— հարցրեց Վարդանյանը:

— Այո, բայց ափսոս, ուշ էին հասել: Վերջապես կարծես պարտիզանները դրանց զոռ արին, որովհետև գերմանացիք կրակելով դեպի գյուղի կողմն էին գնում: Որոշ ժամանակից հետո կրակոցների ձայնը կտրվեց և երբ զգացի, որ մոտերքում էլ մարդ չկա, սիրտ արի և վրայիս դիակները մի կողմ հրելով, գլուխս բարձրացրի...

— Ժողովուրդն ամբողջապես կոտորված էր, միայն մի քանիսը դեռ ձեռք ու ոտք էին շարժում վերջին շնչում: Ես դուրս եկա նրանց միջից՝ ինձ հետ բարձրացնելով և երեխային, ու էդ մոմենտին աչքս ընկավ ողջ ուղեղը ցրիվ եկած հանգուցյալ հարսին, որին միայն հագուստից ճանաչեցի և այդպես վերցրի երեխային ու դուրս եկա սպանվածների միջից: Սերգեյին շալակելով, ինձ գցեցի անտառ ու սկսեցի վազել՝ ինքս էլ չիմանալով, թե ուր... Մեկ էլ, հետևիցս խշխշոց լսեցի: Սիրտս քիչ մնաց պատռվեր: Մտածեցի, թե գերմանացիներից կարող է լինի, բայց ետ նայեցի, որ ի՞նչ,— էս սատկածն էր,— ասաց ծերունին՝ ցույց տալով իր ոտքերի մոտ պառկած շանը, որն այդ ժամա-

նակ գլուխը թաթերին էր դրել ու պոչով երբեմն խը-
փում էր գետնին։

— Սա Հարեւանիս՝ Ակիմի շունն է և երեւի հենց ժողովրդի հետ եկել էր անտառ ու այդ դեպքից հետո էլ գյուղ չէր վերադարձել։ Այս անասունն էլ է փախել գերմանացիներից։ Այդպես, որոշ ժամանակ անտառի մեջ թափառելուց հետո, նստեցի ու միտք էի անում, թե արդյոք կոշմարի մեջ չե՞մ գտնվում, ինչպե՞ս կարող է իրական կյանքում այդպես բան լինել․․․

— Սակայն մտածեցի, թե ե՞րբ է մեր հողը դաժան թշնամու թաթի տակ մնացել, որ հիմա մնա։ Ռուս մարդը էն պտուղը չէ, որ վիզն օտարի լծի տակ դնի։ Ասի՝ մի առ ժամանակ չոլում դիմանամ, մինչև տեսնեմ՝ գլխներիս ի՞նչ է գալիս։ Գուցե էն վրա հասած պարտիզաններից պատահեն, գուցե շուտով, նորից մեր գյուղը Կարմիր Բանակը ետ վերցնի։ Ու որոշեցի, որ ապաստանի համար ամենալավ տեղն էս քարայրներն են, ու Թոռանս հետ եկա այստեղ։

— Տխո՜ւր էր քո պատմությունը, հայրիկ,— ասաց Վարդանյանը,— իսկ ի՞նչով ու ինչպե՞ս էք ապրել այդ չորս-հինգ օրը։

— Երկնքի թռչունների նման։

— Այսի՞նքն։

— Հատապտուղներով էինք կերակրվում։ Այ, էդ թփերը տե՞սնում ես,— ասաց ծերունին՝ ցույց տալով այրի առաջ աճած փոքր թփերը։

— Բավականին պտուղ կար դրանց վրա չորացած, բոլորը կերանք, բայց դե, դրանով թե ապրել լինի, մարդս էլ վար ու ցանքն ինչո՞ւ է անում։ Քաղցից արդեն այնպես ուժից ընկել էինք, որ աստծո կամքով դուք՝ մեր փրկիչներդ, եթե չէիք հասել, սովից անպայման մահանալու էինք․․․

— Կարմիր Բանակն այդ բոլորի տեղը կհանի, միայն մի քիչ համբերություն ու տոկունություն է հարկավոր, դու, հայրիկ, այդ բանում հավատացած

եղիր: Ստալինը չի թողնի, որ իր ժողովուրդը ոտքի տակ գնա:

— Հավատում եմ,— ասաց ծերունին, ապա հարցրեց.— տղաս, ինչպես տեսնում եմ, կարմիր բանակայիններ եք, բայց կներես ծերիս հետաքրքրությանը, դու հրամանքդ ի՞նչ ազգից ես, ինչպես և էս մի ընկերդ: Մեկը, տեսնում եմ, որ ռուս է: Ի՞նչպես է եղել, որ սրանց թիկունքն էք ընկել:

— Ես հայ եմ, հայրիկ, իսկ ընկերներիցս մեկը լեզգին է,— ասաց Վարդանյանը և ծերունու հետաքրքրությանը բավականություն տալու համար, մի քանի խոսքով պատմեց իրենց՝ զորամասից անջատվելու և գերմանացիների թիկունքն ընկնելու պատմությունը: Ապա նա սկսեց մտածել ծերունու այն խոսքերի մասին, որոնք վերաբերում էին պարտիզաններին:

«Ուրեմն այս կողմերում պարտիզանական խումբ է գործում, պիտի աշխատել նրանց հետ կապվել ու միանալ նրանց»:

— Առա՛, առա՛, վերջապես ես իմ վրեժը առա...— խոսեց հանկարծ քնի մեջ Կավալերիձեն:

— Տես, ինչ անհանգիստ քնի մեջ է, ուրեմն՝ անչափ չարչարանքներ էք կրել: Բայց այդ ի՞նչ է ասում,— հարցրեց ծերունին:

Վարդանյանը, որ մի քիչ հասկանում էր Կավալերիձեի մայրենի լեզուն, նրա խոսքերը թարգմանեց ծերունուն:

— Երազում Բյազիմին է տեսնում,— մտածեց Վարդանյանը, ապա մի քիչ ուշացումով, պատասխանեց ծերունուն.

— Վրեժի մասին է խոսում, բայց դրա վրեժը մի քիչ ուրիշ է... Մի շատ հետաքրքիր պատմություն: Այդ՝ իր անհատական վրեժի մասին է:

— Այդ ի՞նչ վրեժ է:

Վարդանյանն իր իմացածը՝ Կավալերիձեի վրեժի մասին, համառոտ պատմեց նրան:

— Ես էլ դեռ այդքանն եմ լսել: Գերմանացիները

որ գյուղը գրավեցին, դրա պատմությունը կիսատ մնաց:

Վարդանյանը ննջում էր: Վերջապես տեսնելով, որ չի դիմանում, մեկ մտածեց մեկին արթնացնել, սակայն միտքը փոխեց և ծերունուն ասաց.

— Հայրիկ, ես էլ չեմ դիմանում, ուզում եմ աչքս մի քիչ խփեմ, միայն դու պետք է լավ հսկես, ուշադիր լինես, որ կասկածելի ձայն լսելու դեպքում բղավես, իսկույն մեզ արթնացնես:

— Քնիր որդիս, հանգստացիր, ես կհսկեմ: Թեպետ վաղուց է՝ հրացան չեմ վերցրել, բայց զենք գործածելու մեջ հետիններից չեմ: Քնիր, ինչպես թե մորդ գրկում: Ապահով եղիր:

Վարդանյանը պառկեց շինելի վրա ու շուտով մուշ-մուշ քնեց, իսկ ծերունին մի հրացան վերցնելով հսկում էր:

***

Երբ պարտիզաններն արթնացան, ծերունին դեռ հսկում էր: Սերգեյը,— ծերունու թոռը,— մտել էր թփերի մեջ ու դանակով ոստեր էր կտրում, իսկ շունը պտտվում էր նրա շուրջը՝ ականջները երբեմն սրելով կտրվող ոստի խշշոցի կողմը:

— Ա՛յ քեզ քնել, արդեն երեկո է,— ասաց Վարդանյանը կավալերիստին ու Գրոմովին, որոնք նրանից շուտ էին արթնացել ու շինելների վրա դեռ պառկած, զրուցում էին:

— Հա, ընկեր սերժանտ, լավ քնեցինք,— գոհունակություն հայտնեց կավալերիստը և դիմեց Գրոմովին.— ինչպես տեսնում եմ, մեր խումբը մի պարտիզանով ավելացել է,— ասաց նա՝ ցույց տալով ծերունուն, որը հրացանը ձեռքին մոտեցավ Վարդանյանին, երբ նկատեց, որ նա արթնացավ ու նստեց տեղում:

— Ի՞նչ, կարծում ես դա մեզնից հետ կմնա՞, մի տես թե ինչ թիկունք ու կազմվածք ունի:

— Բայց խեղճը հազիվ է ոտքի վրա կանգնում, դրանից ի՞նչ պարտիզան դուրս կգա:

— Որ կերը մի քիչ տեղն անենք, էնպես կլավանա, որ էս սարերի գլխովն էլ եթե թռցնես, կթռչի ծերուկը: Բայց թե էս ինչի՞ են արյան մեջ կորած...

Վարդանյանը լսում էր նրանց խոսակցությունը՝ չնայած այդ ժամանակ խոսում էր ծերունու հետ:

— Ի՞նչ, այդ իմ մասին եք խոսո՞ւմ, տղերք,— դիմեց ծերունին զրուցողներին, երբ լսեց «ծերուկ» բառը:

— Քո մասին են խոսում,— նրանց փոխարեն պատասխանեց Վարդանյանը,— վիճում են, թե դու կարո՞ղ ես պարտիզան դառնալ, թե ոչ:

— Պարտիզա՞ն: Այսինքն՝ զենքը ձեռքիս կռվեմ նրանց դե՞մ: Օ՛հ, ես ծեր հիմարս, այդ մասին անգամ չեմ մտածել, այնքան եմ խենթացել ու ինձ կորցրել՝ նրանց պատճառած սարսափներից: Այս խեղճ որբի դարդն էլ մի կողմից է առել ինձ: Դուք, տղերք, նորից եք այդպիսով ինձ կյանք տալիս: Պարտիզան դառնա՜մ, իմ սեփական ձեռքով կոտորեմ նրանց, մի՞թե դրանից մեծ բախտ կարող եմ երազել: Դուք միայն ինձ զենք տվեք: Միք նայի, որ թուլացել եմ: Բավական է՝ նրանց նորից տեսնեմ զենքը ձեռքիս, որ իմ միջից ամեն թուլություն իսպառ կորչի:

— Շատ թունդ են վառել շները ծերին,— ասաց Կավալերիստը Վարդանյանին ու ավելացրեց,— բայց մենք քնեցինք ու չիմացանք, թե ինչ օյիններ են խաղացել ֆաշիստները սրանց գլխին: Այս արյունոտ շորերով և առանց վերքի, շատ հետաքրքիր բան է...

— Իսկապես, ընկեր սերժանտ, պատմել չես ուզե՞լ,— հարցրեց Գրոմովը:

— Արդեն պատմել է:

— Սիրելի ծերուկ, մեզ էլ պատմի քո պատմությունը,— դիմեց նրան Կավալերիստը:

Ծերունին կարծես վերացած, աչքերը խփել էր և գլուխն էր օրորում...

— Ոչ, թաղեք, տղերք, մեծ վիշտ է տեսել Թշվառ

մարդը և լավ չէ անվերջ նրան հիշել տալ: Նրա պատմածը ես կպատմեմ ձեզ...

— Դե պատմիր, պատմիր,— բացականչեցին տղաները երկուսով: Ծերունին ինչ որ գործով հեռացավ նրանցից:

— Ի՞նչ պատմեմ: Ֆաշիստների սովորական գազանություններից է,— ասաց Վարդանյանը և համառոտ պատմեց ծերունու պատմածը:

Արևն արդեն մայր էր մտնում: Հեռվից լսվում էր ճակատամարտի խուլ աղմուկը: Վարդանյանը մտածում էր այն մասին, թե ինչպես անի, որ կապ հաստատի այդ կողմերի պարտիզանների հետ ու մյուս կողմից՝ մի գնդացիր և զինամթերք ձեռք բերի:

— Ահա թե ինչ, հայրիկ, ես որոշել եմ այս քարայրները մեր հենակետը դարձնել, և մեր ձեռք բերած զինամթերքն այստեղ թաղցնել: Այնպես որ դու կլինես մեր մառանապաշարի պահեստապետը: Ես հույս ունեմ, որ այս բոլորը երկար չի տևի, մերոնք կհաղթեն, ձեր գյուղն էլ նորից ետ կվերցնեն ու այն ժամանակ դու կգնաս տուն...

— Տուն կգնամ ե՞ս: Մոխիր է հիմա իմ տան տեղը, որդիս... էլ ես տուն չունեմ:

— Ոչինչ, հայրիկ, քեզ հնար կտան, կօգնեն և դու նոր տուն կշինես, ավելի լավը: Կռիվը կվերջանա, որդիդ էտ կգա, վիշտը կմոռացվի, ոչինչ, բան չկա...

— Ա՛խ, մեռնեմ լեզվիդ, ամեն ինչ կանցնի, բայց սրտիս դարդը էն դարդերից չի... Միայն ես հիմի մի մուրազ ունեմ.— ինձ ուրիշ բան պետք չէ, միայն թե լսեմ, որ ռուսական սուրը հողից քշել էն նրանց ու հետո մեռնեմ...

— Կլինի՛, դու այդ կտեսնես,— ասաց Վարդանյանը և մի քիչ մտածելուց հետո, շարունակեց.— Ձեզ համար ուտելու պաշար կթողնենք: Ուզում եմ նաև զենք տալ: Ով գիտե, հանկարծ պաշտպանվելու կարիք կունենաք: Միայն, բացի այս երեք հրացանից, ուրիշը դեռ չունենք՝ չհաշված նռնակները: Ասում եմ՝ մի եր-

կու նռնակ թողնեմ: Դու գիտե՞ս սրանց օգտագործումը,— ասաց Վարդանյանը՝ մի նռնակ ցույց տալով նրան:

— Չէ, որդիս, իմ ժամանակը դրանից չէին տալիս մեզ,— ասաց ծերունին՝ ուշադիր զննելով նռնակը:

— Լավ, որ այդպես է, արի մի փոքր բացատրեմ:

Վարդանյանը ծերունուն սովորեցրեց նռնակ գցելը:

— Միայն լավ պահիր, որ հանկարծ երեխի ձեռքը չընկնի,— զգուշացրեց նա:

Արդեն ուշ էր, Գրոմովն ու Կավալերիստը սեղան բացեցին. մի շինելի վրա, և ապա բոլորը շրջանաձև նստեցին ու սկսեցին ընթրել:

— Սատանի ծարավ եմ, ուտելն ընդհատելով ասաց Կավալերիստը:

— Ջուրը մոտիկ է, այ էսպես գնա, էն քարի տակ աղբյուր կա,—ասաց ծերունին:

— Աղբեր, բախտ ունենք, էլի, հո զոռով չի,— ուրախ բացականչեց Կավալերիստն ու գնաց ծերունու ցույց տված ուղղությամբ: Շուտով նա վերադարձավ իր ջրամանով լի ջուր բերելով: Ապա նրանք բոլորն էլ մի առ ժամանակ շարունակեցին ուտել այն ընտիր ուտելիքները, որ պատրաստված էին գերմանական հրամկազմի համար:

Հանկարծ Վարդանյանը դիմեց ծերունուն.

— Հայրի՛կ, այստեղից ամենամոտ գյուղը ձերն է՞, թե ուրիշ էլ կա:

— Կա: Էսպես որ գնաս, մի չորս կիլոմետր հազիվ լինի, մի փոքր կազակական գյուղ կա,— ասաց ծերունին՝ ձեռքն արևելք պարզելով:

— Էլի գերմանացիների ձեռքին է, չէ՞:

— Նրանց ձեռքին է... Բայց ի՞նչի համար ես հարցնում:

— Ասում եմ հյուր գնանք գիշերը գերմանացիներին:

— Գիշերո՛վ լավ չէ, որդիս: Համ էլ՝ մի լավ հանգստացեք:

— Հանգստացանք արդեն: Բանակայինին այդքանն էլ բավական է: Միայն դու հիմա մի լավ նկարագրիր այդ գյուղի ճանապարհը:

Եդ գյուղի ճանապարհը ես շատ լավ գիտեմ,— մեջ մտավ Գրոմովը:

Վարդանյանը դարձյալ մտասուզվեց և մի քիչ հետո, երբ ընկերները վերջացրին ընթրիքը, խոսեց:

— Հիմա պատրաստվենք այդ գյուղը գնալու: Ինչ կերպ էլ լինի, մենք հենց այս գիշեր զենք ու զինամթերք պիտի ձեռք գցենք: Հատկապես գնդացիր: Միայն կարծում եմ, որ սա մի քիչ ավելի լուրջ գործ կլինի, քան գումակինն էր, որովհետև կամ պահեստ պիտի կտրենք և կամ որևէ պոստից փախցնենք: Այս դեպքում ինչպե՞ս պիտի գործել: Լավ պիտի հիշենք գիշերային գործողությունների կարգ ու կանոնը: Ամենակարևորն ի՞նչն է:

— Աղմուկ չբարձրացնելը,— ասաց Կավալերիստը:

— Ճիշտ է: Բացի այն, որ ամենափոքր թխկոց չբարձրանա՝ օբեկտին մոտենալիս, այլև չպիտի ծխել: Հրազենի պիտի դիմենք միայն ծայրահեղ դեպքում: Պիտի աշխատենք գործը վերջացնել սառը զենքով:

Ասենք՝ պահակին անզգաստելի հարվածեցիր, վիրավոր վիճակում բղավելով, նա կարող է գործը փչացնել: Ուրեմն, պետք է մի թաշկինակից-բանից՝ պատրաստ ունենալ, որ անմիջապես բերանը փակվի: Ուրիշ ի՞նչ ասեմ: Ես վստահ եմ ձեր քաջության: Ռուսկը, ասում են, քաղաքներ է վերցնում: Հիմա մենք այնպես պիտի անենք, որ գոնե մի գնդացիր վերցնենք: Այնուհետև, մյուս կարևոր խնդիրը,— կարող են մեկն ու մեկիս հանկարծ վիրավորել, կամ թե խիստ նեղել...

— Վա՛յ, սատված չանի,— բացականչեց ծերունին, որ նույնպես լսում էր:

— Կարող է պատահել: Եվ ահա այս դեպքում, մեր տված եղբայրության երդումը պիտի կատարենք... Ասենք թե՝ մեկիս վիրավորեցին: Այդ ժամանակ, ինչ ճարպկություն ու հունար ունենք, պիտի հանդես

բերենք, թեկուզ երեքս էլ ընկնենք այնտեղ, բայց աչքներս բաց, ընկերոջը թշնամու ձեռքը չպիտի տանք…

— Միանգամայն ճիշտ է, ընկեր սերժանտ,— հավանություն տվեց Գրոմովը:

***

Արևն արդեն մայր էր մտել: Վարդանյանն ու ընկերները հրաժեշտ տվին ծերունուն և փոքր Սերգեյին՝ նրանց համար ուտելիք ու երկու նռնակ թողնելով, ինչպես և թողեցին գերմանական շինելները: Նրանք նախօրոք մաքրելով իրենց զենքերը, լրիվ սպառազինությամբ ու պաշարով թողեցին քարայրը և եկած դժվարին կածանով իջան հսկա քարաժայռի ստորոտն ու այնտեղից ուղևորվեցին դեպի կազակական փոքրիկ գյուղը:

Ընկերներին դարձյալ առաջնորդում էր Գրոմովը:

— Սիրելիս, առանց քեզ, շատ դժվար կլիներ մեր բանն այս անծանոթ տեղանքում,— ասաց Վարդանյանը Գրոմովին՝ նրա կողքից քայլելով:

— Իհարկե, անծանոթ վայրում, այն էլ անտառում, մարդ ինչպես աչքերը կապած,— հարեց Կավալերիստը:

— Ծուղրուղո՛ւո՛ւ,— հանկարծ հնչեց անտառի լռության մեջ, ինչ որ տեղից և մի քիչ հետո մի ուրիշը՝ հակառակ կողմից:

— Ղո՛ւո՛ւ, ճիշտ այդ ձայների նման, արձակեց Գրոմովը և շուտով երկու տարբեր կետերից նրան պատասխան տվեցին:

— Կեցցե՛ս Գրոմով, իսկը աքաղաղի նման կանչեցիր: Բայց այս ի՞նչ է: Երևի այստեղ շատ մոտիկ գյուղ կա,— ասաց Վարդանյանը:

— Երևի,— ավելացրեց Կավալերիստը:

— Չէ, տղերք, էդ անտառի որձակ է:

— Ի՞նչ անտառի որձակ:

— Այսինքն՝ վայրենի որձակ։ Դրանցից շատ կան այս կողմերում, ինչպես և հավեր ու կաքավներ։ Գիտե՞ք դրանք հիմա ինչքան գեր են լինում, երկու մատ յուղ ունեն։ Միսն էլ այնքան համեղ է, որ կաքավի միսից չես տարբերի։ Որ մոտիկ լիներ, անպայման կխփեի։

— Կխփեի՞ր,— ասաց Վարդանյանը,— հետո էդ եղա՞վ...

Գրոմովը հասկացավ Վարդանյանի կշտամբական տոնով արտասանած բառերի իմաստը և ասաց.

— Այսինքն՝ եթե պարտիզան չլինեինք...

— Հա՛, մի մոռանա, հանկարծ չխաբվես՝ կրակես։

Այսպես զրուցելով գնում էին նրանք և այժմ քայլում էին դարձյալ անտառապատ մի բլրի վրայով, որի ստորոտում էր գտնվում գյուղը։

Հանկարծ մոտիկում, թփերի միջից խշխշոց լսվեց և պարտիզանները նկատեցին, թե ինչպես շարժվում են թփերը։ Պարզ էր, որ այնտեղ քայլում էր ինչ որ մեկը։

Պարտիզանները մեխվեցին տեղում՝ զենքերը պատրաստի բռնած։ Ապա Վարդանյանը նախօրոք պայմանավորված մի նշան տվեց ձեռքով, և ահա նրանք անմիջապես հեռացան միմյանցից և զգույշ, աշխատելով հնարավորին չափ թույլ ոտնաձայն բարձրացնել, նետվեցին ամեն մեկը մի ծառի հետև։ Չոքելով այնտեղ, դարաններից սկսեցին ուշադիր դիտել՝ զենքերը պարզած։

Թփերի միջից մի փոքրիկ եղնիկի ձագ դուրս նկավ ու դունչը ցցելով, սկսեց հոտոտել օդը։

Պարտիզանները ծիծաղեցին քթերի տակ և զմայլված, լուռ նայում էին նրան։ Գրոմովը մի տենդոտ շարժում արեց և հրացանի խզակոթը հենեց ուսին, բայց անմիջապես թողեց՝ հիշելով, որ կրակոցով կարող է մատնել իրենց տեղը։

Եղնիկի ձագը կարծես զգալով մարդկանց ներկայությունը, մի ոստյուն գործեց կանգնած տեղում՝ ետ

թռչելով ու վայրկենաբար հրջվելով, անհայտացավ նույն թփերի մեջ։

Պարտիզանները դուրս եկան ծառերի հետևից ու լուռ ժպտալով, շարունակեցին քայլել։

— Այ տղա, ես էլ ասացի՝ փաշիստ կլինի, տեսա՞ր անտերին, վայ, դունչդ ուտեմ, էն ինչքան լա՛վն էր,— առաջինը խոսեց Գրոմովը։

— Իրոք որ, լավն էր,— ասաց Վարդանյանն ու անմիջապես ավելացրեց,— տղերք, պայթուցիչները պատրաստ ունեցեք, թե չէ նեղ րոպեին, շտապելիս, երբեմն մարդ սխալվում է ու առանց դնելու է նետում նռնակը։ Հենց հիմա դրեք։

Պարտիզանները պայթուցիչները դրեցին նռնակների մեջ, ապա լուռ առաջ գնացին։ Շուտով փոքր թեքությամբ վայրէջք սկսվեց։ Նրանք արդեն քայլում էին մի հեղեղատի եզրով, որի միջով սևին տվող ջուր էր հոսում։

— Խաեղ էլ հանք կա։ Ջուրը հանքային է ու տեղացիք թթու ջուր են ասում,— հարկ համարեց ծանոթացնել Գրոմովը։

— Այ, գյուղն էլ հրեն, երևում է,— տեսնում ե՞ք,— շարունակեց նա։

Իրոք, այդտեղից, որտեղ վերջանում էր անտառը,— արդեն նկատելի էին մոտիկ գյուղի տների ու ծառերի սիլուետները։

— Շատ սիրուն գյուղ էր, բայց հիմի ո՞վ գիտի, թե ինչ են արել,— խոսեց դարձյալ Գրոմովը շշուկով։

Լուսինը, որ մինչ այդ լավ լուսավորում էր, ծածկվեց ամպերի տակ և սաստիկ մթնեց։

Պարտիզանները մոտեցան գյուղին։ Հանկարծ նրանց ուշադրությունը գրավեց գյուղի ծայրի մի տան առաջ, մթության մեջ երևացող լույսի փոքրիկ, կարմրին տվող մի կետ, որը երբեմն փոքր աղեղ էր գծում խավարի սև թավիշի վրա իջնելով կամ բարձրանալով, ու կանգ առնելով՝ առկայծում էր։

— Տեսնո՞ւմ եք, տղերք, լավ նայեցեք այն լույսի պեծլին,— ասաց Վարդանյանը:

Կանգ առան ու սկսեցին դիտել.

— Ի՞նչ պեծ է,— հարցրեց Կավալերիստը:

— Ո՞վ գիտի,— ասաց Գրոմովը:

— Ծխում են երևի,—նկատեց Վարդանյանը.—այո, անպայման, դա ծխախոտի կրակ է: Կնշանակի՝ այնտեղ գերմանացիք կան: Թե չէ՝ տեղացիները, եթե կան էլ, այս ժամանակ չեն համարձակվի տներից դուրս գալ ու դռանը ծխել: Եվ հենց կարող է պոստ լինել:

— Ես կարծում եմ, որ պիտի շրջանցենք այդ տան մոտից՝ կրակից հեռու անցնենք և մտնենք գյուղն ուրիշ կողմից, ապա որևէ բնակարան մտնելով, բնակիչներից մանրամասն տեղեկություններ վերցնենք դրանց օբեկտների, պոստերի ու պահեստների մասին,— կարծիք հայտնեց Կավալերիստը:

— Լավ բան ես ասում, միայն կարող ենք այդպիսով դայլերի ուղղակի բերանն ընկնել, ի՞նչ իմանաս, որ բնակարաններում զինվորներ չկան,— հակաճառեց Գրոմովը Կավալերիստին՝ նրա ծրագիրը վտանգավոր համարելով:

Վարդանյանը լսում էր նրանց ու մտածում էր:

— Տղերք ես կարծում եմ, որ մենք նախ պիտի մեծ զգուշությամբ հետախուզենք գյուղի ծայրի տան մոտերքը, ուր կրակն է երևում: Շարժվենք դեպի այդ տան կողմը, լսենք մոտիկից, ապա թե լուսինը դուրս եկավ, հնարավորին չափ դիտենք և նայած մեր տեսածին ու լսածին, ինչպես և հետագա դեպքերին, բաց մեր պայմանայնմ գործենք: Միայն լավ հիշեցեք մեր պայմանական նշանները:

Վարդանյանը հիշեցրեց առաջուց ասած իր նշանները, թե ձեռքի ինչ շարժումի դեպքում պիտի առաջ գնան, ինչ նշանի դեպքում պիտի հարձակվեն, հարվածեն կամ նահանջեն:

Տնակից, որի առաջ դեռ երևում էր կրակի կետը, մոտ չորս հարյուր մետր հեռու, մի փլված մարագի

պատի տակ կկզած, պարտիզանները վերջացրին իրենց ռազմական կարճ խորհրդակցությունը, և որովհետև լրիվ մութ էր, Վարդանյանի հրամանով կուզեկուզ, մի հարյուր մետր առաջ գնացին և կանգ առան: Ընդդիմադիր քամի սկսվեց: Պարտիզաններն ուրախացան, քանի որ դա կխանգարեր նրանց շարժումից այսպես թե այնպես առաջացած ձայների լսվելուն:

Վարդանյանը նշան տվեց: Նրանք զենքերը պատրաստի բռնած, պառկեցին ու սկսեցին լսել: Քամին այս անգամ ծխողի կողմից համաչափ քայլվածքի ձայն բերեց:

Վարդանյանը նորից նշան տվեց: Այս անգամ արդեն նրանք սողալով սկսեցին շարժվել, միմյանցից մոտ տասական մետր հեռու դասավորված և այդպես գնացին մոտ հիսուն մետր: Քամին ուժեղացավ: Շուրջը լուսավորվեց: Ամպերը քշվում և նոսրանում էին, և լուսնի լույսն արդեն թափանցում էր նրանց միջից:

Պարտիզաններն արդեն հիսուն մետրի վրա էին լույսի կետից: Նրանք մեխվեցին գետնին, որովհետև լուսինն ամբողջովին դուրս եկավ ամպերի տակից:

Պարտիզանները տեսան, թե ինչպես մի զինվոր, հրացանն ուսին, կարծես ճեմելով՝ գնում-գալիս էր և շարունակում էր ծխել: Նրա սվինը թույլ ցոլք էր տալիս լուսնի պաղ լույսից:

«Ուրեմն պոստ է... Եվ տես հիմարին, գիշեր ժամանակ ծխում է պոստում: Կարելի է ուղիղ բերանին խփել»,— մտածեց Վարդանյանը՝ նրան նայելով:

Պարտիզանները, որ շունչները պահած դիտում էին, նկատեցին, թե ինչպես զինվորը կրակը գցեց ու մի որոշ ժամանակ տեղում կանգնած մնալով, կարծես ննջում էր՝ մերթ ընդ մերթ գլուխը կախ գցելով և ապա ցնցումով ուղղելով:

Վարդանյանը նշան տվեց էլի մոտենալու: Նրանք փորսողով գնացին և այժմ պահակակետից միայն քսան մետր էին հեռու: Այդտեղից պարզ երևում էին և երկու թեթև գնդացրերի փողեր, որոնք դրված էին խր-

րամատում և որոնց վրա պահակ էր կանգնած այդ զինվորը:

Վարդանյանը տեսավ, որ պահակը ննջում էր, և այն է՝ ուզում էր նշան տալ ընկերներին՝ հարձակվելու, երբ հանկարծ պահակը նստեց:

«Այս լավ եղավ: Հիմա ավելի հանգիստ կզգա իրեն ու խոր կքնի»,— մտածեց Վարդանյանը՝ մի պահ հապաղելով հարձակման հրաման տալուց: Երբ նա ձեռքը տարավ գլխարկին՝ նոր ազդանշան տալու ընկերներին, մի ուրիշ դեպք լուրջ անհանգստացրեց նրանց երեքին ու ստիպեց Վարդանյանին՝ դարձյալ սպասել: Նրանք իրենց դարանից պարզ տեսան, թե ինչպես հակադիր կողմից մի ուրիշ զինվոր, ճիշտ իրենց նման գողեգող, գալիս էր դեպի պահակը: Նա անզեն էր երևում:

«Երևի սա էլ է պարտիզան»,— մտածեց Վարդանյանը:

Պարտիզաններն ուշադիր դիտում էին: Զինվորը, որ կարճահասակ մարդ էր, մոտեցավ քնածին և չոքեց նրա կողքին: Հրացանի փականակի թույլ չխկոց լսվեց, որից հետո նա վեր թռավ քնածի մոտից՝ ձեռքին ինչ որ բան շողացնելով, արագությամբ սկսեց վազել դեպի այն կողմը, որտեղից հայտնվել էր:

Քնածը վեր թռավ նրա ոտնաձայնից և վայրկենապես կանգնելով, ստուգեց հրացանը և տեսավ, որ փականակը չկա, բարձր թքեց:

— Այս՝ Շուվթեռլեն արավ... ասաց զինվորը, իր մայրենի լեզվով ու սկսեց խելակորույս վազել այն ուղղությամբ, ուր անհայտացավ փականակ փախցնողը:

Վարդանյանը իսկույն նշան տվեց և նրանք նետվեցին անտեր մնացած պահակակետի վրա ու հափշտակելով այնտեղ դրված երկու գնդացիրերն ու արկղներով փամփուշտները, նետվեցին անտառ:

Որոշ ժամանակից հետո, նրանք էլի հեղեղատի ափին էին: Անսպասելի հաջողությունից երեքի սիրտն էլ

ճխում էր և նրանք հուզմունքից ոչ մի բառ չէին փոխանակում երկար ժամանակ:

Պողպատի սառնության զգացումը և ուսին ճնշող ծանրությունը համոզում էին Վարդանյանին, որ ինքն ու ընկերներն առանց գլխացավանքի տեր են դարձել այդ զենքերին:

— Վազե՛լ, վազե՛լ,—կամաց հրահանգում էր նա ընկերներին, երբ նկատում էր, որ նրանք դանդաղեցնում են իրենց ընթացքը:

Պարտիզանները հեղեղատից բավականին հեռացել էին, երբ գյուղից մի քանի կրակոցներ լսվեցին:

Այդ կրակոցները տագնապի ազդանշան էին, որը տրվեց, երբ իմացվեց գնդացիրների անհայտացումը:

Վարդանյանը լսելով կրակոցները ու վախենալով, որ կարող են ջոկատ ուղարկել անտառ, ընկերներին զգուշացրեց, և նրանք երեքով ուղղակի մարաթոնյան վազք կատարեցին՝ չնայած իրենց բեռնվածությանը:

Մինչդեռ գերմանական զինվորները խմբերի բաժանված, ապարդյուն որոնումներ էին կատարում՝ մի մասն անտառի գյուղամերձ հատվածում, իսկ մյուս մասը՝ մոտակա տներում,— պարտիզաններն արդեն հասան իրենց ամրության «պարիսպների» տակ: Այդտեղ միայն նրանք մի փոքր շունչ առան, ապա սկսեցին վերելքը:

— Օ՜ֆ, շունչս կտրվեց,— ասում էր Գրոմովը՝ թևով ճակատից սրբելով հորդ քրտինքը:

Նրանք դեռ քարայրի մուտքից բավականին հեռու էին, երբ շունը ողջույնի հաչոցով նրանց դեմը ելավ և անմիջապես լսվեց Ծերունու ձայնը:

— Մենք ենք, հայրիկ,— անմիջապես պատասխանեց Վարդանյանը:

Ծերունին լսելով պարտիզանների ձայնը, ընդառաջ վազեց երեխայի նման ուրախացած և տեսնելով նրանց ավարը, ավելի ուրախացավ: Ապա բոլորը քարայրը մտան, որովհետև անձրև սկսեց: Նստեցին շինելների վրա, մութ քարանձավում և միայն այդ ժա-

մանակ սկսեցին մանրամասն տպավորություններ ու մտքեր հայտնել այդ դեպքի առթիվ:

***

Վարդանյանը դիմեց Կավալերիստին խնդրելով, որ նա իր վրեժի պատմությունը ավարտի:

— Իսկապես, սրանից էլ հարմար ժամանակ գուցե չունենանք, պատմիր, Իսաև,— խնդրեց և Գրոմովը:

— Պատմեմ, եղբայրներս, չնայած ծանր է ինձ համար այդ մասին խոսելը, բայց որ ասում եք, պիտի պատմեմ... Այսպես, բարեկամներս, ասացի, որ մայրս ու Գյուլումը՝ հարսս, իրենց մազերը պոկելով չոքեցին եղբորս՝ Ահմադի դիակի առաջ: Բարեկամ և հարևան, նույնիսկ օտարները ցավից ու ցասումից բղավում էին, ողբ ու սուգ անում: Իսկ ձիավորը, որ սպանեց յոթ տարի աքսորում մնացած ու հենց նոր վերադարձած եղբորս, ձին քշեց, անհայտացավ անտառի մեջ:

«Ո՞վ էր, ո՞վ էր այդ քյաֆուրը», աղեխարշ ձայնով մրմնջում էր ծեր հայրս՝ դիակի կողքին...

Բազմաթիվ ենթադրություններ էին անում մարդիկ, որովհետև կրակողը դեմքը սև շորով քողարկել էր և հնարավոր չեղավ նրան ճանաչել: Միայն մեր բարեկամներից մեկն այդ ժամանակ առաջ եկավ և հորս թևից բռնելով, ասաց.

— Թշվառ բարեկամս, սուգ անելով նրան էլ ետ չես բերի: Թշնամուդ ես ճանաչեցի: Սուգ անելը դու թող կանանց, հիմա մտածիր վրեժիդ մասին: Անմեղ թափված արյան դիմաց մինչև փոխարենը չառնես, այս հանգուցյալը չի հանգստանա գերեզմանում:

— Ո՞վ էր, ի՞նչպես ճանաչեցիր,—հարցրեց հայրս:

— Թեկուզ տասն անգամ էլ նա գլուխը սև շորով փաթաթեր, ես կճանաչեի,— խոսեց նորից մեր բարեկամը.— Այդ ոճրագործը Քյազիմն էր:

— Քյազի՞մը... Նա շատ քարշ եկավ Գյուլումի համար և վերջերս սպառնալիք էր տալիս, այո: Բայց

հոգիս ինչպե՞ս կորցնեմ, գուցե նա չէր,— ասաց հայրըս,— ես նկատեցի, որ ձին նրանը չէր…

Ճիշտ է, ձին նրանը չէր և հագուստն էլ փոխել էր, բայց ես նկատեցի, որ նա ձախլիկ կրակեց։ Իսկ մեր աուլում ու հարևան աուլներում, ձախլիկ կրակող մի մարդ չես գտնի, բացի նրանից։ Վերջապես էլ ի՞նչ թշնամի ունես դու՝ բացի նրանից…

— Ջունե՛մ, էլ չունեմ, մի քանի օր առաջ նա պարզ սպառնաց, որ Գյուլումին սպանելու է… Ասածն արավ, ոչ թե Գյուլումին, այլ մեզ բոլորիս սպանեց…

— Դե, էլ մի սգա, տղամարդը պետք մտածի վրեժի մասին,— նորից խոսեց մեր բարեկամը։

— Եվ այդպես, չերկարացնեմ, եղբորս դիակը տուն տարանք· մի օր սուգ անելուց հետո, հանձնեցինք հողին։

Անցավ մի քանի օր։ Ողջ ընտանիքով սև էինք հագել։ Մեր տունը լիքն էր բարեկամ ու հարևան մարդկանցով, որոնք գալիս էին մեզ մխիթարելու։ Ողջ գյուղը ցավում էր այդ դեպքի համար։

— Իսկ այդ Քյազիմը ինչացու էր,— հարցրեց Վարդանյանը։

— Քյազի՞մը,— ասաց Կավալերիստը՝ դեմքն այնպես խոժոռելով, ինչպես լեռնցու տանը, նրան տեսնելու պահին·

— Նա խանի ժառանգ էր։ Էդ ժամանակ նրա հայրն այլևս չկար ու ինքն էլ մի սովորական գյուղացու ապրուստով ապրող մարդ էր արդեն։ Հուղարկավորությունից անցել էր մի տասնհինգ օր։ Շուտով՝ մեզ մըխիթարողները գնացին իրենց գործին։ Մի օր, երեկոյան, երբ անտառից տուն վերադարձա, տեսա մեր տանը երկու անծանոթ մարդիկ կան, բաշլուղները կապած, յափունջի հագած։ Մեկը երիտասարդ էր, մյուսը՝ միջահասակ։ Դրանք հորս հետ նստած մեր թախտի վրա, սինին առաջները դրած, փլավ էին ուտում։ Կերան, վերջացրին։ Հայրս հրամայեց մորս, որ տան դու-

ռը փակի, ապա սկսեց շշուկով զրուցել ինձ անծանոթ մարդկանց հետ:

«Այդ բանի համար, դուք լավ իմացեք, որ ես ոչինչ չեմ խնայելու: Բացարձակ ասեք, ի՞նչքան եք ուզում: Ինչ էլ որ ուզեք, տալու եմ, միայն շուտ անեք»,— ասաց հայրս:

«Դե,— ասաց այդ ժամանակ՝ ինձ անծանոթ մարդկանցից մեկը՝ առանց հորս նայելու,— ինքդ էլ լավ գիտես, որ մեծ ռիսկի հետ կապված գործ է, չի իմացվի հաջողությունը: Ալլահը գիտի, թե ոնց կլինի... Ճակատագիրն էստեղ մեծ դեր ունի... Ես չեմ կարող գլուխս գովեմ, չնայած իմ գնդակը դեռ գետին չի ընկել ու քա՛նի անգամ վառած ճրագը Խուրշուդի ձեռքին գիշեր ժամանակ հարիր ոտքի վրա հանգցրել եմ՝ հրացանից կրակելով: Այդպես չէ՞, Խորշուդ»,— դիմեց նա արյուն կոխած, սարսափելի աչքերը հառելով դիմացը նստած ընկերոջ դեմքին: Ընկերը գլխով արեց:

«Ինչ վերաբերում է իբրև՝ Խուրշուդին, Խուրշուդ մի սաս, մի սալան բալասի սաս»,— շարունակեց նա, «հենց իմացիր, որ պատահած գազանի բերանը կճղի ձեռքերով: Շա՛տ սրտոտ է, միայն տեսնում ես, սրան էլ չեմ գովում. առհասարակ ես էդ խասիաթը չունեմ: Էն էլ իմացիր, որ էն ասածդ մարդն էլ պակաս սալան բալասին չի եղել, որ օրը ցերեկով ռիսկ է արել...

«Դե ես չեմ ասում, որ խաղալիք գործ է... Եթե ես էսպես զառամած ու թույլ չլինեի, էն ժամանակ ուրիշ էր: Մյուս տղես էլ էս փոքրիկն է: Ինչպես որ, ալլահը փորձանքը մի կողմից չի ուղարկում»,— ասաց հայրս և շարունակեց, մի պահ լռելուց հետո, «միայն իմ խնդիրքն էն է, որ դուք վճռողական հանձն առնեք, հիմա ասեք ձեր պահանջը: Երդվում եմ մորուքովս, որ եթե խղճի մոտ ասեք, մի բան էլ ավել եմ տալու...»:

Ես դեռ չէի հասկանում, թե բանն ինչումն է, ինչի մասին են խոսում: Երբ հայրս վերջացրեց, աչքերն արյուն կոխած արծվաքիթ մարդը մտածմունքի

486—10

մեջ ընկավ ու մի քիչ հետո գլուխը բարձրացնելով, ասաց. «Կտաս տասնհինգ ոչխար»։ Ու նայեց հորս, հետո ընկերոջը և դիմեց վերջինին.

«Ի՞նչ կասես Խուրշուդ»։ Խուրշուդը դարձյալ գլխով հավանության նշան տվեց։

«Տվի՛, աղբեր, տվի՛, միայն հենց վաղը գործի անցեք, հենց վաղն ինձ ցույց տաք նրա արյունոտ շորերը և նրա արյունով օծված ձեր դաշույնները, որ սիրտս հովանա... Տասնհինգ ասիք, տասնվեցը կըտամ, միայն չուշացնեք»։

«Էդ՝ դու հանգիստ կաց, դա մեր արհեստն է»,— խոսեց մեր հյուրերից ավագը։

Ապա հայրս սկսեց մանրամասն նկարագրել այն մարդուն, որին սպանելու էին մեր հյուրերը, և այդտեղ հասկացա, որ խոսքը Քյազիմի մասին է։ Մեր հյուրերը հավաստիացնելով, որ ամենաուշը երկու օրից Քյազիմի մահվան բոթը կտրվի, ոտքի կանգնեցին ու բարի գիշեր մաղթեցին։

«Հենց սպանեցիք, նույն օրը կստանաք»,— ասաց հայրս։ Նրանք գնացին։ Հայրս անմիջապես չոքեց նամազի և երկար աղոթք էր անում աստծուն...

Բավականին ուշ էր, երբ ես մտատանջվելով լսածներիս մասին, մտա տեղս։ Շուտով մերոնք էլ պառկեցին և լամպը հանգցրին։ Քունս չէր տանում, երկար շուռ ու մուռ էի գալիս տեղիս մեջ։

«Ուրեմն հայրս մարդիկ վարձեց, որ Քյազիմին սպանեն, իսկ միթե դրանով մեր սիրտը կհովանա, մի՞թե դա էն է, ինչ քո ձեռքով ես լուծում վրեժդ»,— մտածում էի ես և գտնում էի, որ դրանով՝ վրեժը լիակատար լուծված չի լինի։ Մի տեսակ՝ կիսատ լուծումն էր դա իմ աչքում։ Մյուս կողմից, չնայած իմ փոքր հասակին,— ես տասնչորս տարեկան էի,— ուրիշ բաներ էլ էի հաշվի առնում։ «Տասնվեց ոչխար խոստացավ»,— մտածում էի ես,— «իսկ մենք ընդամենը տասնութ հատ ունենք»։ Իսկ գիտեք, որ լեռնականի ապրուստը մեծ մասամբ անասնապահությունից է

կախված: Եվ մտածում էի. «Բացի այն, որ ուրիշն է սպանելու եղբորս սպանողին, դրանից հետո էլ ծեր ծնողներս և մենք բոլորս, հետին աղքատության դուռըն ենք ընկնելու»:

Մի միտք փայլեց իմ գլխում. «Ինչ, մի՞թե ես ինքս չեմ կարող այդ բանն անել: Հայրս զառամ է ու վստահ չէ իր ձեռքի և աչքի զորությանը, իսկ ես, փառք աստծու, էնքան էլ փոքր չեմ: Ինչո՞ւ կարող եմ եղբորս թողած հրացանով որս անել ու անտառում գայլ սպանել (այդ տարին ես մի գայլ էի սպանել), իսկ Քյազիմին չեմ կարող շան սատակ անել...»:

«Վա՜յ թե վախենաս...»,— ասում էր մի ներքին ձայն.— «Կարող ես հանկարծ վրիպել և Քյազիմը քեզ կտոր կտոր կանի...»: Բայց ես աշխատում էի ինձ քաջալերել.— «Ի՞նչ բան է վախը», արտասանում էի բարձր ձայնով՝ այդ զգացմունքն իմ մեջ ճնշելու համար:«Մի՞թե ես վախկոտ եմ, էլ ինչո՞ւ եմ գլխարկ դնում. էգուցվանից Գյուլումի գլխաշորը կապեմ...»: Հայրուր անգամ կրկնում էի ես այդ բառերը և իսկապես ես վախկոտ տղա չէի: Ընկերներիս շրջանում հայտնի էի որպես անվեհեր կռվող: «Եղբորդ վրեժը կառնես, նրանից հետո ինչ կուզե՝ անեն...»,— հիմա էլ այդ բառերն էի կրկնում ինքս ինձ՝ ուղղելով իմ խոսքերը:

Սկսեցի ծրագիր կազմել, թե երբ և ինչպես եմ անելու այդ: Մանրամասն ծրագիր մշակեցի, որը ինձ այնքան կատարյալ թվաց, որ մեկ ուզեցի վեր կենամ ու իսկույն գնամ, բայց մեկ էլ մտածեցի, որ կես գիշերին անմտություն է այդ բանը ձեռնարկելը: Դժվար կլինի նրան գտնելը: Եթե գնամ կորից կրակեմ, կարող է տնեցիներից մեկն ու մեկին կպչի նրա փոխարեն:

Այդ գիշեր համարյա աչք չփակեցի: Պատկերացնում էի, թե ինչպես եմ հանդիպելու նրան՝ երես առ երես... Մտածում էի, թե ինչ արտահայտություն պիտի տամ դեմքիս և ինչ պիտի ասեմ՝ նախքան զարկե-

տալը։ Երկար՝ ազդեցիկ բառեր էի ընտրում ու դարձվածքներ։ Բղավելով կասեմ՝ «մեռիր, թշվառ սրիկա»։ Բայց գտնում էի, որ դա այնքան էլ ազդեցիկ չէ։ Կամ թե՝ «սատկի՛ր, շուն, Ահմադի եղբոր գնդակից», բայց դա էլ էնքան սրտովս չէր։ Ապա հիշեցի, որ իսկական իգիթները նախ զգուշացնում են թշնամուն՝ նրա դեմ գնալիս։ Հիմա էլ սկսեցի մտածել, թե ի՞նչ պիտի ասել այդ իմաստով։— «Պաշտպանվի՛ր լակոտ, եթե կարող ես, լեշդ շներին եմ տալու հիմա...»,— Այս վերջինն ավելի դուր եկավ։

Այդպես մտքիս հետ ընկած, մեկ էլ տեղիցս վեր կացա ու թաթերիս վրա, որ մերոնք չարթնանան, մոտեցա պատի այն մասին, ուր կախված էր եղբորս որսի հրացանը։ Հրացանն իջեցրի ու կանգնեցի լուսամուտի առաջ, ուր ներս էր ընկել լուսնի լույսը։ Սկսեցի հրացանը զննել, նայեցի փողի մաքրությանը, ոտքը մի քանի անգամ ստուգեցի, ամեն ինչ կարգին էր։ Դրանից հետո վերցրի նախորդ օրը խոշոր կոտորակով լցրած փամփուշտները, մեկով հրացանը լցրի, մյուսները պահեցի մոտս։ Հրացանը նորից կախեցի և գնացի տեղս ու փամփուշտները լցրի շալվարիս գրպանը, պառկեցի։ Վերջապես լուսաբացին մոտ, քունս տարավ։ Բայց թե ինչ քուն էր, ամբողջ ժամանակ երազի մեջ էի։ Երազում տեսնում էի, որ արդեն սպանել եմ նրան, ողջ գյուղը ցնծում է ու բոլորն ինձ իգիթ են ասում։ Մեկ էլ արթնացա՝ մեկը վրայիցս քաշում էր վերմակը։

«Վեր կաց, ի՛նչ ես ճաշքուն տվել», լսեցի մորս ձայնը, «ձին տար ջրի, հայրդ տեղ գնաց»,— ասաց նա։

Իսկույն վեր թռա։ Նայեմ, որ արևն արդեն տուն է ընկել... Արագ արագ հագնվեցի, ինձ կըշտամբում էի, որովհետև որոշել էի ծեգին վեր կենալ։ Հագնվեցի ու առանց որևէ բան ուտելու, հենց որ մայրս դուրս գնաց, վերցրի հրացանը, նորից ստուգեցի գրպանիս փամփուշտները և վազեցի գոմը, ձին դուրս քաշեցի։ Մի շատ կրակոտ ձի ունեինք, Թռա

մեջքին ու բակից դուրս քշեցի, բայց ոչ թե դեպի գետը, այլ ուղիղ գյուղամեջ, ուր գտնվում էր Քյազիմենց տունը:

Լավ էր, մայրս բակից դուրս գալու ժամանակ չհանդիպեց, ու Գյուլումն էլ տանը չէր, թե չէ՝ կսկսեին հարց ու փորձը, թե հրացանն ուր եմ տանում:

Ինչարկե, դրա համար պատասխան ունեի, որ որսի եմ գնալու, միայն կարող էին ուշացնել, իսկ այդ ժամանակ րոպեն ինձ համար մի երկիր արժեր:

Գյուղամիջին, այդ դիրքով՝ հրացանով ու ձին նստած, իմ երևալը ոչ ոքի չզարմացրեց, որովհետև սովոր էին հաճախ տեսնել այդպես: Միայն երբ ձին քշում էի, նկատում էի, որ կանայք ու տղամարդիկ ինձ տեսնելով, ցավակցական խոսքեր էին ասում ու հառաչում՝ եղբորս հիշելով, և այդ բանն ինձ ավելի էր մղում տալիս: «Ոչ ու փուչ լինի քեզ նման եղբայրը, հենց նույն օրը պիտի դու այդ բանն անեիր»,— կշտամբում էի ինքս ինձ:

Վերջապես մոտեցա Քյազիմենց տանը: Ձին տան հետևի նեղ փողոցով քշեցի ու դուրս եկա մի փոքրիկ հրապարակ, որտեղ աուլի միակ, խողովակավոր աղբյուրն էր գտնվում: Աղբյուրից մի քիչ հեռու, ձիուս սանձը քաշեցի և սկսեցի դիտել Քյազիմենց տունը, որը հենց աղբյուրի մոտ էր գտնվում: Դա միհարկանի, սրբատաշ քարից կառուցված տափակ տանիքով տուն էր, որը հողե հատակով պատշգամբ ուներ, ինչպես մեր կողմի տների մեծ մասը: Տեսա, մի կին ավլում է պատշգամբը:

«Բալաս, ձին աղբյուրումն ես ուզում ջրե՞լ»,— հարցրեց ինձ այդ ժամանակ մի ուրիշ կին, որը իր կուլան աղբյուրի տակ էր դրել, «ինչի՞ չես գետը տանում»: «Զգիտեմ»,— անկապ պատասխանեցի ես ու շարունակեցի էլի դիտել:

«Ա՞խ, քոռանամ ես, Ահմադը մի ալամաթ աշխարհ արժեր, էն ի՞նչ տղա էր», սկսեց եղբորս մասին խոսել ջուր տանող կինը:

Այդ խոսքերն այնպես ազդեցին վրաս, որ քիչ մնաց լաց լինեմ, այն ինչ՝ այդ մոմենտին պետք էր դեմքիս հնարավորին չափ դաժան արտահայտություն տայի...

Մեկ էլ տեսա Քյազիմենց տանից մի տղամարդ դուրս եկավ՝ փափախը գլխին ու թիկունքը դեպի ինձ: Կանգնեց պատշգամբն ավլող կնոջ մոտ և սկսեց խոսել նրա հետ:

Սիրտս թունդ առավ, սկսեցի ողջ մարմնով դողալ: «Հը՞, սա է՞, թե չէ՛»,— մտածում էի ես: «Անա՛, էս Քյազիմը չի՞»,— հարցրի դեռ հառաչող կնոջը: «Բա սև շո՞ւնն է... ամա՜ն, ամա՜ն, փալաք»: Ես հրացանը ձեռքս առա ու ձին քշեցի: Ձիուս ոտնաձայնից տղամարդը դեպի ինձ դարձավ: Արդեն տաս-տասնհինգ մետր տարածություն էր բաժանում ինձ Քյազիմից: Քյազիմը կարծես չհավատալով աչքերին, մի պահ մնաց կանգնած՝ ապուշ կտրած ու ինձ ճանաչելով, և տեսնելով իրեն ուղղած հրացանս, փախչելու փորձ արավ, բայց ես հրացանը երեսս առա ու բղավեցի՝ «լակո՛տ» ու կրակեցի, բայց նրա վախեցած՝ փախուստի շարժումը խրտնեցրեց ձիուս, որը մինչ այդ հանգիստ կանգնած էր տակիս և միայն սանձն էր կրծում:

Քյազիմի ձեռքերի շարժումի հետ, երբ ես հրացանը քաշեցի, ձին ականջները ցցեց և ոտքով դոփեց գետինը: Ինձ թվաց, թե վրիպեցի, բայց տեսա, որ հրացանիս որոտի հետ «հարայ» բղավելով Քյազիմն ընկավ և ես անմիջապես բաց թողեցի ձիուս գլուխը և քշեցի դեպի տուն:

Դեռ նոր էի ձին գոմը տարել ու աչքերս չռած, սրտի դողոցով մտել տուն, որ հրացանը դնեմ տեղը, երբ հայրս մտավ տուն ու գրկելով ինձ, սկսեց համբուրել և իր արցունքներով թրջել դեմքս... Շուտով Գյուլումն ու մայրս էլ եկան հարևանի տնից: Նրանք էլ էին արդեն լսել և հորս նման արտասվում էին ուրախությունից: «Ի՞նչպես արիր, իմ իգիթ բալա, ինչպե՞ս մտածեցիր, ինչպե՞ս սիրտ արիր»,— ասում էր

հայրս՝ շարունակելով ինձ գրկում պահել: Մայրս էլ մի կողմից էր ձգում, որ ինքը գրկի: «Փառքդ շատ, ալլահ, հիմի որ արդեն Ահմադս հանգիստ կլինի, հիմի որ սրտիս կսկիծը մի քիչ թուլացավ»,— ասում էր հայրս: «Ապի, հիմի ինձ ի՞նչ կանեն»,— հարցրի ես հորս: Երկյուղս օրենքից էր: «Բա ես մեռած ե՞մ, որ քեզ բան անեն: Ինչ ունեմ, չունեմ՝ կծախեմ, օրենքի մարդկանց ոտքերը կընկնեմ, պաշտպանին կտամ, չեմ թողնի, որ քո մազին կպչեն»:

— Ողջ աուլում այդ ժամանակ թնդում էր իմ կատարած այդ քաջության լուրը: Տարածել էին, թե սպանել եմ Քյազիմին: Շուտով շնորհավորողներ էլ եկան, բայց մի քիչ հետո լուր ստացանք, որ Քյազիմը միայն վիրավորվել է... Ինչպես սառը ջուր մաղեին գլխներիս: Միայն ասում էին, որ ծանր է և կարող է մեռնել:

«Անտեր ձին արավ...»,— ցավով մտածում էի ես:

— Ձիուց պետք իջած լինեիր՝ կրակելիս,— նկատեց Գրոմովը:

— Իհարկե, երեխայի անփորձություն,— ասաց Կավալերիստը և շարունակեց պատմությունը.

— Շուտով տեղեկություն ստացանք նաև այն մասին, թե ինչպես Քյազիմը երդվել է, որ հենց առողջանա, ինձ սպանելու է: «Էդ լակոտին ուղարկելու եմ եղբոր հետևից»,— ասել էր նա: Վախեցած ծնողներս, հավատարիմ մարդկանց ձեռքով ինձ անմիջապես ուղարկեցին մի հեռու աուլ, ուր գտնվում էր իմ տատոնց տունը:

Անցավ մի տարի: Լսեցի, որ առողջացել է Քյազիմը: Մի օր հայրս եկավ և պատմեց, որ Քյազիմը լավանալուց հետո սպանել է գյուղսովետի նախագահին և բանդիտ է դարձել:

Ես վերադարձա տուն: Քյազիմին արդեն ուժեղ հետապնդում էին:

— Բայց շատ հետաքրքիր է, թե ի՞նչու նրան հենց

եղբորդ սպանությունից հետո չկալանավորեցին,— հարցրեց Վարդանյանը։

— Մի քանի ուրիշ կասկածելի մարդկանց հետ այդ դեպքից հետո Քյաղիմին էլ կալանավորեցին, սակայն շուտով բաց էին թողել, քանի որ չէր ապացուցվել, և որ գլխավորն է, հայրս չբողոքեց, մտածելով, որ կբանտարկեն ու կարող է մահվան պատիժ չտան, և այդպիսով մենք կզրկվենք վրեժ լուծելու հնարավորությունից։

— Իսկ ի՞նչպես եղավ, որ քեզ չբանտարկեցին,— ասաց Գրոմովը։

— Ես այդ ժամանակ տասնչորս տարեկան էի, դատի ոչ ենթակա։

Տարիք առնելու հետ, վրեժի զգացմունքն էլ էր մեծանում իմ մեջ։ Ես երդվում էի կերել, որ ի վերջո Քյաղիմն իմ ձեռքով պիտի գնա։ Բանդիտ դառնալու նախօրեին նա արդեն հայտարարել էր, որ ինքն է սպանել եղբորս և ասել էր, որ գյուղի բոլշևիկներին մեկ–մեկ պիտի կոտորի։ Հրացանն առած, հաճախ որսի պատրվակով ես շրջում էի անտառում՝ նրան որոնելով, բայց այդ ինձ չհաջողվեց... Վերջապես ինձ բանակ կանչեցին։ Բանակում էլ վրեժի միտքն ինձ հանգիստ չէր տալիս... Մնացած պատմությունն արդեն ձեզ հայտնի է։

***

Պարտիզանների քարայրից մոտ քսան կիլոմետր հեռու, գտնվում էր գերմանական մի համակենտրոնացման ճամբար։ Այդ ճամբարը փշալարային պարսպով շրջապատված բավական ընդարձակ տարածություն էր, որը առաջ գոմահանդ էր եղել ու Կ. գյուղի մոտ էր գտնվում։ Դեռ երևում էր ցանկապատի ներսում, նրա մի անկյունում հին գոմը, որն ավերակ էր արդեն։ Գոմի առաջ և թե ներսում, երկար տարիների ընթացքում կուտակված գոմաղբ էր գտնվում՝

հարդի մնացորդների հետ խառնված։ Դրսից նայելով մի պատը քանդված ու գարշահոտություն տարածող այդ շենքին, մարդ անմիջապես հիշում էր Ավգյան առասպելական ախոռը։ Ահա այդ շենքն ու նրա ընդարձակ բակն էին ընտրել գերմանացիները, որպես համակենտրոնացման ճամբար և այն լցրել էին վիրավոր ու առողջ գերի կարմիր բանակայիններով։ Իսկ փշալարպարսպից դուրս, այնտեղ մի քանի մանր շենքեր էին կառուցել փայտից՝ պահակների և պետի համար։

Այդ ճամբարը հիմնական ճամբարներից չէր, ինչպես իրենք՝ գերմանացիք էին ասում, այլ էվակուացիոն ճամբար, այսինքն դժոխքի նման մի բան, որտեղ ժամանակավորապես հավաքում էին ճակատի մոտակա հատվածներից վերցրած գերիներին և ապա ուղարկում խոր թիկունք։

Առավոտ էր։ Մղձավանջային գիշերին հաջորդելու էր եկել կոշմարային ցերեկը։ Նեխվող գոմաղբի վրա, տարբեր դիրքերով ընկած ու քնած գերի բանակայինները ելնում էին իրենց տեղերից և ուրվականների նման օրորվելով, դիմում էին դեպի ճամբարի մյուս մասը, ուր թափված էին ջարդված, ծամռված գերմանական ավտոների ու տանկերի կույտեր, որոնք սովետական ավիացիայի ռմբակոծությունից էին այդ վիճակին հասել։

Գերիներին հրամայված էր այնտեղ հավաքվել՝ ուտելիք ստանալու համար, որը տրվում էր օրը մի անգամ։

Երբ առողջ գերիները խմբվեցին այնտեղ, այդ ժամանակ բացվեց պարսպի մոտակա դուռը և երկու զինվորներ, կեղտոտ ու կանաչ ժանգով պատած պղնձե մի փոքր կաթսայի ունկերից բռնած, ներս բերին «կերակուրը», որից սակայն, գոլորշի չէր բարձրանում։

Բերողների հետ մտավ և մի սպա՝ կարմրած ու ճարպոտ դեմքով, ձեռքին մաուզեր սիստեմի ատրճանակ։

— Միսկաները պատրա՛ստ,— բղավեց նա ռուսերեն և կարգադրեց, որ գերիները շարքի կանգնեն։

Բանակայինները շարվեցին։ Նրանք մոտ հարյուր հոգի էին։ Կոնսերվի կեղտոտ ու ծռմռված տուփեր կային ոմանց ձեռքին, որ տրված էր նրանց՝ ամանների տեղ։

— Դե հիմա չոքել,— կարգադրեց սպան,— այդպես ավելի աչք շոյող կլինի, քան թե ցցվում եք։

Կանգնածներից ոմանք չոքեցին, իսկ մեծ մասը, չնայած անտանելի քաղցածությանը, այդ բանը չարավ։ Կանգնածները, որ գերադասում էին սովամահ լինել, քան ստորանալ, զայրույթից ատամներն էին կրճտացնում։

Սպան, որ գեստապոյի աշխատակիցներից էր, նկատելով զայրույթի ցույցը, ոտքը գետին խփեց և բղավեց՝ կարցե՛ր,— ըստ իր սովորության, մոռանալով որ այդտեղ կարցերներ չունեն։

— Մաուզերիս փողը կկոխեմ ձեր բերանները և այն ժամանակ ձեր ատամներն ավելի լավ ձայն կհանեն,— սպառնաց նա, ապա հրամայեց, որ կանգնածներին այդ օրն ուտելիք չտան ու բղավեց՝ անմիջապես հեռանալ դեպի գոմը։

Գնացին նրանք զայրույթից խեղդվող ձայնով կարճ հիշոցներ տալով՝ իրենց մայրենի լեզվով և աշխատելով՝ լսելի չանել։

Ստորացածները դեռ չոքած էին։ Օրերի քաղցը նրանց մեջ մեռցրել էր պատվի ու ինքնասիրության զգացմունքը և միայն ուտելու բնազդն էր այդ պահին իշխում նրանց մտքի ու կամքի վրա։

— Իսկ ճաշի «աղը» տե՞ղն է,— հարցրեց սպան կաթսայի մոտ չերեփը ձեռքին կանգնած զինվորին։

— Ճիշտ այդպես,— ասաց զինվորը կրունկները շխկոցով իրար խփելով ու կերակրոտ ձեռքով պատվի վերցնելով։

— Բավականին լցրի՞ր։ Ինչքա՞ն կլիներ։

— Ահա այսքան,— ասաց զինվորը ափերն իրար միացնելով:

— Այդ արդեն լավ է, կարգին կմարսեն,— ասաց սպան և հրամայեց, որ բաժանեն:

Այդ ճաշ կոչվածը քուսպից, սառը ջրով պատրաստած մի խյուս էր, որին ուշադիր նայողը կնկատեր մանր բյուրեղների նման փայլուն բաներ նրա մեջ:

«Աղը», որի համար այնքան հոգ էր տանում սպան, ոչ այլ ինչ էր, եթե ոչ սովորական ապակու մանր փշրանք, որը պիտի «նպաստեր» մարսողությանը...

Այդ իր՝ սպայի գյուտն էր: Նա արդեն փորձից գիտեր, որ այդ «աղով» եփված «կերակուրներն» այնպիսի արյունալուծ են առաջացնում ուտողների մեջ, որ նրանց կարիք չի լինում հիմնական ճամբարներ ուղարկել:

Վիրավորների մասին, որոնք առանց օգնության ընկած էին Թրքի կույտերի վրա ու զառանցում էին աղբի զազրելի գոլորշիները ներծծելով, ակնարկ անգամ չեղավ՝ ուտելիք տալու: Չէ՞ որ միևնույնն է, պիտի մեռնեին: Մանավանդ որ նրանց հնարավոր չէր աշխատեցնել այնպես, ինչպես առողջներին, որոնց ուժեղ պահակախմբով տանում էին քանդված կամուրջների, ճանապարհների և այլ կառուցումների համար աշխատեցնելու:

Գլխից վիրավոր մի բանակային, որը պապակվում էր ծարավից, նստելով տեղում, սկսեց ջուր խնդրել՝ կեղտոտ և արյունոտ բինտով կապված գլուխը թույլ կախ գցելով:

— Չկա՛, չե՛ն տալիս, սիրելի ընկեր,— ասաց նրա մոտ նստած մի ուրիշ գերի:

— Ա՜խ, ես մեռնում եմ, գոնե մի կաթ ջուր...

Ապա նա հայացք հածեց չուրջը և մոտիկում նկատելով մի փոքրիկ փոսում լճացած ջուրը, որ առաջին

օրը եկած անձրևից էր մնացել, կանգնեց, որ գնա... բայց նորից ընկավ՝ գլխապտույտ զգալով:

Այդ ժամանակ հրաման տրվեց առողջ գերիներին՝ առաջանալու ցանկապատի դռան մոտ: Երբ բոլորը գնացին, ծարավ վիրավորը տեսնելով որ չի կարող ոտքով գնալ մինչև անձրևաջուրը, սկսեց սողալ ու մի կերպ հասնելով այնտեղ, սկսեց ագահությամբ խմել կոշիկի հետքի մեջ հավաքված բաց շագանակագույն հեղուկը և հենց այնտեղ էլ ուշաթափ ընկավ՝ տարբեր դիրքով պառկած ու տնքացող ուրիշ վիրավորների մոտ:

Առողջ գերիներից մոտ քառասուն հոգու շարքի կանգնեցրին և ուժեղացրած պահակով, որը կազմված էր տասնհինգ լավ զինված զինվորներից, դուրս բերեցին ճամբարից:

Պահակապետին հատուկ հրահանգներ տվեց ճամբարի պետը, նշեց ուղղությունն ու ճանապարհի այն կետը, որտեղ պիտի տարվեին նրանք քանդված ճանապարհը վերանորոգելու:

Շուտով ապրանքատար ավտոյով բահեր, քլունգներ ու ձեռնասայլակներ բերին: Գերիներին կարգադրվեց բարձրանալ ավտո: Նրանք նստեցին՝ մի կերպ տեղավորվելով: Նրանց հետ նստեցին և հինգ պահակներ, իսկ մյուս պահակները մոտոցիկլետներով սկսեցին հետևել նրանց, երբ ավտոն շարժվեց:

— Հետո էլ ասում են ֆաշիստները վատ մարդիկ են: Տես, մինչև անգամ ավտոյով են տանում,— դառը հեգնանքով ասաց՝ այդ օրը չչոքելու համար հաց չըստացած մի գերի բանակային:

— Օ՜, շատ մեծահոգի են նրանք և չեն ուզում, որ մենք մեր գերեզմանները քանդելուց առաջ շատ հոգնած լինենք, ասաց մի ուրիշը, որ կարծում էր թե իրենց տանում են սպանելու:

— Դրա համար չեն տանում հիմա,— խոսեց մի երրորդը:

— Իսկ ի՞նչ գիտես,— հարցրեց առաջինը:

— Կարծեմ նման դեպքերում ձեռնասայլակների

կարիք չի լինում: Հավանական է, որ աշխատանքի են տանում:

— Շատ չխոսել, չի կարելի,— բղավեց պահակներից մեկը:

Գերիները լռեցին:

Կես ժամից հետո ավտոն ու մոտոցիկլետները կանգառան մեզ ծանոթ անտառի մեջ, ճանապարհի մի մասում, որը երեք պարտիզանների կողմից ավերվել էր: Նրանք՝ Վարդանյանն ու իր ընկերները, մոտ մի ամիս էր, որ գործում էին և այդ ճանապարհի կամուրջներից էլ էին պայթեցրել, որոնք նորից շտապ կարգով վերանորոգվել էին:

— Իջնե՛լ,— լսվեց հրամանը, որ տվեց ավտոյի կաբինից դուրս եկած պահակապետը:

Նախ իջան պահակները, ապա՝ գերիները:

— Գործիքները վերցնել,— լսվեց նոր հրաման:

Գերիները վերցրին գործիքները և սպասում էին կարգադրության, թե ինչ են անելու, չնայած տեսնելով քանդված ճանապարհը, ամեն մեկն արդեն իմացավ իր անելիքը:

Պահակապետը ռուսերենով դիմեց գերիներին.

— Փախուստի փորձի դեպքում փախչողը կխփվի տեղն ու տեղը: Ճանապարհը, որ ձերոնք են այսպես արել, պիտի մաքրեք ու վերանորոգեք, այնպես որ մի երկու ժամից հետո ավարտեք: Այլապես, վատ աշխատելու դեպքում մեղքը ձեր վիզը···

— Դե, գործի անցնել,— նորից բղավեց պահակապետը՝ նկատելով, որ դանդաղում են:

Գերիներն սկսեցին աշխատել, իսկ պահակախումբը երեք մասի բաժանված որոշ հեռավորությունից կիսաշրջանի մեջ առավ նրանց:

Նրանցից յուրաքանչյուրը հնգական հոգուց կազմված, բռնել էր ճանապարհի երկայնքով ընկած երկու հակադիր կետերը. իսկ երրորդ խումբը՝ ճանապարհի վերին կողմումն էր: Հսկողությունը շատ լուրջ էր կատարվում, որովհետև գերմանացիք գիտեին, որ

այդ անտառում պարտիզանական երկու խումբ է գործում: Վախենում էին նրանց հարձակումից:

Գերիների մի մասը ձեռնասայլակներով քար էր կրում, ճանապարհի ներքևի ձորի կողմը պատ շարելու համար: Ոմանք շարում էին, իսկ մյուսները բահերով ճանապարհի վրա լցված հողն ու քարերն էին հեռացնում:

Ծանր ձեռնասայլակի տակ քաղցից ու հյուծվածությունից ճկվելով, մի գերի բանակային, որը դանդաղ շարժվելու համար աքացի ստացավ պահակապետից, մտածում էր. «Իս անտեր գերությունը շատ վատ բան է եղել»...

Այդ գերին Սիմոնյանն էր:

Պատ շարողներից մեկը, մի բելոռուս երիտասարդ, երբ չարչարվում էր պատի վրա դրած մի մեծ քար մյուսների հետ ուղղելու, հանկարծ ինքն էլ չիմացավ, թե որտեղից մի փոքր, սպիտակ իր, նետված անհայտ ձեռքով, ընկավ իր ոտքերի տակ՝ հողի վրա:

Գյորգին, այդպես էր գերու անունը, իսկույն ոտքը դրեց նետվածի վրա ու մի ուշադիր հայացք ձգեց շուրջը: Ապա վերցրեց այդ իրը: Քարի կտորը մեջը դրած՝ փաթաթած մի թուղթ էր այն:

Կիսաշար պատի վրա թեքվելով, Գյորգին նոր դրած քարերի արանքում բացեց թուղթն ու սկսեց կարդալ.

«Ձեզ՝ գերիներիդ ազատելու փորձ է արվելու հիմա, մեր՝ պարտիզաններիս կողմից: Հայտնիր ընկերներիդ, բայց զգուշությամբ, թող պատրաստ լինեն, որ չփոթ ընկած պահին հնարավոր ձևով հարված հասցնեն պահակներին: Երբ կրակ սկսվի, իբրև թե վախից, թող բոլորը փախչեն ներքևի խմբի կողմը ու եթե կարող են, զինաթափ անեն այնտեղի պահակներին: Երկուսդ կթռչեք ներքևի կողմը, ձեզ զենք կտրվի:

«Պարտիզաններ»:

Պայծառացավ Գյորգու տխուր դեմքը: Նրա հետ

պատ շարող մյուս գերին նկատելով նրա ուրախությունը, խիստ զարմացավ.

— Ընկեր, այդ ի՞նչիդ վրա ես այդպես քեֆ-քեֆ լինում քեզ ու քեզ: Երևի ուրախանում ես, որ պատն արագ է բարձրանում: Չե՞ս ուզում հանդիպական պլան էլ վերցնենք:

Այդ բառերն ասող գերին, որ նախկին ստախանովական էր, ներքուստ խիստ զայրացել էր Գյորգու վրա:

— Հենց վերցնելու ենք, բարեկամ, միայն հիմա աշխատենք պլանին տեղյակ պահել բոլորին:

«Խեղճ մարդ, երևի գժվում է»,— մտածեց ստախանովականը՝ տեսնելով խոսակցի աչքերում գնալով ուժեղացող աշխույժն ու ուրախությունը:

— Կարդա՛, բայց զգույշ,— ասաց Գյորգին՝ Թուղթը հանձնելով նրան:

— Ահա թե ի՛նչ...— ժպտաց վերջինս, երբ ավարտեց ընթերցումը:— Դե, քար բերողներից սկսենք,— ասաց նա:

Եվ այդպես նրանք շշուկով հայտնեցին քար բերողներին, դրանք էլ՝ ճանապարհի վրա աշխատողներից մի երկուսին և շուտով, մեկը մյուսին ասելով բոլոր գերիները տեղյակ էին:

— Ասացեք, որ մոտենան ներքևի պահակներին, իբր թե այնտեղի փոս տեղերը լցնելու,— ասաց Գյորգին քարը իր մոտ դատարկող ընկերներին,— է՛նպես ափ ու հուպ կանեք, որ...

Այդ էլ հաղորդվեց: Ճանապարհ մաքրողները կարծես միմյանցից անկախ, չդադարելով աշխատելուց, մեղվի պարսի նման քաշվեցին ճանապարհի ներքևի մասում նստած պահակների կողմը և նրանցից ընդամենը մի երեք մետր էին հեռու:

— Է՛յ, հիմարի գլուխներ, նախ այն մասը մաքրեք, հետո սրանք,— բարկացած գոռաց պահակապետը առանց որևէ բան կասկածելու:

Գյորգին, Թուղթն իր ոտքերի մոտ ընկնելու վայր-

կյանքից, աչքերը չորս դարձած դիտում էր իրենց ներքև գտնվող տարածությունը, հուսալով նկատել, թե ո՞րտեղ են թաքնված պարտիզանները և արդյոք շատվո՞ր են: Նա նկատեց, թե ինչպես իրենց կիսավարտ պատի հյուսիսային կողմում գտնվող մեծ քարի հետևից մի մարդ դուրս թռավ՝ գերմանական սկավառակավոր թեթև գնդացիրը ձեռքին ու կատվի ճարպկությամբ, կուզեկուզ, մի քանի ոստյուն կատարեց և հասնելով պատի մոտ, պառկեց այնպիսի դիրքով, որ աննկատելի էր վերևում աշխատողների ու պահակների համար:

Նրա տեղավորվելու հաջորդ վայրկյանին մի ուրիշը, նույնպես գնդացրով, էլի արագությամբ կուզեկուզ վազելով, դիրք մտավ առաջինից մի քանի մետր հեռու, ճանապարհի քանդված, բայց դեռ պատ չշարած եզրի մոտ, մի քարի ետև և այնտեղից մեկնելով գնդացրի փողը պահակների ուղղությամբ, որոնք կանգնած էին ավտոմատները ձեռքերին, սկսեց կրակել գնդացրից:

Նույն պահին սկսեց ճարճատել և մյուս գնդացիրը, որի գնդացրորդը նշան էր վերցրել պահակախմբի այն պահակներին, որոնք գերիների մյուս կողմումն էին:

Համաձայն պարտիզանների կարգադրության, Գյորգին ու նրա հետ պատ շարող ընկերը վայրկենապես թռան պարտիզանների կողմը և հանդիպեցին մի երրորդ պարտիզանի, որը փութկոտ շարժումով նրանց մեկական հրացան տվեց ու ինքը ձեռքն առնելով ավտոմատը, մոտիկում հարմար տեղավորվելով, սկսեց կրակել՝ զենք ստացած երկու գերիների հետ միասին:

Ներքևի պահակների մոտ ամբոխված գերիները անասելի աղմուկ-աղաղակ բարձրացնելով, իբրև թե սարսափից, վազեցին շվարած պահակների վրա:

Պահակապետը, որ շոֆերի հետ այդ խմբի մեջ էր, մի սրտոտ տղամարդ էր: Նա անմիջապես կռահելով, թե ինչ պատահեց, առանց իրեն կորցնելու հրամայեց անխնա կոտորել բոլորին, և ինքն առաջինը կրակ

բաց արեց ավտոմատից՝ արդեն իրենց վրա թափվող գերիների ուղղությամբ: Նրա կրակոցներից մի քանիսն ընկան, բայց մինչ մյուսներն էլ կհասցնեին կրակել, գերիներն արդեն նրանց մոտ էին: Սկսվեց կատաղի ձեռնամարտ, որն արագությամբ վերջացավ հօգուտ գերիների, որոնք հափշտակեցին քարով ջախջախված կամ խեղդամահ արված պահակների ավտոմատները: Մինչ նրանք կհասցնեին դիրք մտնել, ընկան մի այլ դիպուկ կրակի տակ: Այդ պարտիզանների գնդակներից մի կերպ ազատված չորս պահակներից մեկն էր կրակողը, որն իր ընկերների հետ հարմար դիրք էր գրավել քարերի հետևում և կատաղի պաշտպանվում էր: Գերիները պառկեցին:

Նրանցից ազատվել էին երեսուներկու հոգի, որոնցից այժմ զինված էին ութ մարդ, որոնք երեք պարտիզանների հետ կրակում էին դիմադրող պահակների դեմ: Դիմադրող գերմանացիները հույս ունեին, որ յուրայիններից այդ կողմերով շարժվող ուժերը կհասնեն իրենց օգնության:

Պատից մի քիչ հեռու դիրք մտածը, որ Վարդանյանն էր, տեսավ որ իզուր փամփուշտ են փչացնում: Քարերի պաշտպանությանն ապավինված գերմանացիները, որ սկսել էին փամփուշտ խնայել, անխոցելի էին այնտեղ: Նա հրամայեց Գրոմովին ու Կավալերիստին նռնակներով գործել: Մինչ Կավալերիստը վայր դնելով ավտոմատը, ձեռքը տարավ իր նռնակներին, և Գրոմովը նույնպես պատրաստվեց նռնակ նետելու, գերմանացիների կողմից մի նռնակ թռավ Գրոմովի ուղղությամբ: Նրա բեկորներից սպանվեց Գյորգու հետ պատը շարող գերին և Գրոմովը թեթև վիրավորվեց թիկունքից: Վարդանյանն ինքը մի նռնակ նետեց, որը սակայն կպավ քարերին ու անօգուտ պայթեց:

Նետեց և Կավալերիստը: Նռնակը հեռու ընկավ: «Перелет»,— բացականչեց Գյորգին:

Ճանապարհին դիրք մտած զինված գերիներից մեկը սողալով անցավ պաշտպանվող գերմանացիների

թեր և անակնկալ հարվածեց նրանց։ Երեքը խփվեցին, իսկ մեկը ոտքի կանգնեց ու զենքը նետելով, ձեռքերը վերև բարձրացրեց։ Ազատագրվածներն ու պարտիզանները ոտքի կանգնեցին, Վարդանյանը գնդացիրը ձեռքին վազեց դեպի Կավալերիստն ու Գրոմովը, որոնց մոտ պայթել էր գերմանական նռնակը։ Նա ուրախության հուզմունքով տեսավ, որ իր երկու բարեկամներն էլ ոտքի կանգնեցին։ Ապա նայեց ազատագրվածների կողմը և տեսնելով որ նրանք ծեծում են գերմանացուն, հրամայեց, որ ձեռք չտան։

— Գրոմովի վերքը կապեցեք, իսկ ես տնօրինեմ,— ասաց Վարդանյանը Կավալերիստին ու գնդացիրն ուսին դրած գնաց, կանգնեց ճանապարհի մեջտեղում։ Զգուշության համար նա պահակներ նշանակեց։

— Էլ ի՞նչ կհրամայեք, ընկեր պետ,— խանդավառ գոչյուններով շրջապատեցին ազատագրվածները Վարդանյանին։

— Մոտոցիկլետներն ու ավտոն ձորը գցել։

Բոլորը, բացի գերի պահակին հսկող երկու հոգուց և ճանապարհը հսկողներից, նետվեցին մեքենաների կողմը։ Գյորգին, որ մասնագիտությամբ շոֆեր էր, իսկույն գործի գցեց ավտոմեքենան ու ղեկանիվը շրջելով ձորի կողմը, բաց թողեց։ Սակայն տեսնելով ընտիր մոտոցիկլետները, ափսոսեց ու չթողեց բոլորը ձորը գցել և դրանցից մեկը վերցնելով՝ դուրս բերեց ճանապարհից ու բավականին հեռացնելով, մի փոսի մեջ պահեց՝ քողարկելով ճյուղերով ու մացառներով, մտածելով որ կարող է պետք գալ։

Վարդանյանը կարգադրեց վերցնել սպանված գերմանացիների սպառազինությունն ու իրերի տոպրակները։ Ազատագրվածներից երկուսը, որոնք զբաղված էին մի ծանր վիրավորի վերքը կապելով, հայտնեցին, որ նա մահացավ։

Վարդանյանն ուզում էր կարգադրել, որ թողնեն ճանապարհն ու մտնեն անտառ, երբ ձիերի դոփյուն լսվեց մոտիկից։ Երևացին երկու հեծյալ գերմանացի։

Դեռ միամիտ՝ նրանք քշում էին ձիերը: Երբ մոտ հարյուր մետրի վրա էին, Վարդանյանը Գրոմովի ու Կավալերիստի հետ կրակ սկսեց նրանց ուղղությամբ: Հեծյալներից մեկը խփվելով կախվեց ձիուց, սակայն գետին չընկավ: Ըստ երևույթին՝ ոտքը մնաց ասպանդակի մեջ: Իսկ մյուս հեծյալն անմիջապես շրջեց ձին ու վայրագորեն մտրակելով հետ սլացավ: Մեռածին քարշ տալով երկրորդ ձին հետևեց նրան:

Ազատագրվածները գնում էին անտառով, Վարդանյանի կարգադրությամբ՝ միմյանցից որոշ տարածության վրա և ուշադիր, զենք ունեցողները՝ այն պատրաստ բռնած: Մի երկուսն էլ բահեր էին վերցրել: Նրանք բոլորը ցնծությամբ էին համակված ու ամենաչնչին բառերն անգամ խանդաղատանքով էին փոխանակում միմյանց հետ: Զնայած օրերի քաղցին ու գերմարդկային տանջանքներին, նրանք աշխույժ էին գնում դժվարին ճանապարհը:

Նրանք տանում էին իրենց հետ և գերի պահակին: Կավալերիստն ու Գրոմովը առջևից էին գնում: Վարդանյանը գնում էր վերջից՝ շրջապատված մի քանի ազատագրվածներով և զրուցում էր նրանց հետ:

Երբ հասան անտառի այն տեղը, ուր ընկած էին մամռապատ ծառերը, Վարդանյանը մի փոքր դադար տվեց մարդկանց և ինքը գնդացիրը հենելով ծառի բնին, սկսեց ծխել: Նրան մոտեցավ մեկը՝ երախտագիտության և շնորհակալության այն արտահայտությունն աչքերում ու մաշված դեմքին, որ ունեին այդ պահին բոլոր ազատվածները՝ Վարդանյանին ու նրա ընկերներին նայելիս: Մոտենալով, բանակայինը մի պահ լուռ նայեց Վարդանյանի վեհություն և ազնվություն արտահայտող դեմքին, որն իրեն շատ ծանոթ թվաց: Վարդանյանն էլ սկսեց նրան դիտել՝ ինչ որ ծանոթ գծեր նկատելով, բայց դեռ երկմտելով:

«Սա նա է... Սա նա է»,— մտքի մեջ կրկնում էր բանակայինը՝ գնալով ավելի համոզվելով: Ճամբարային կոշմարից բթացած նրա հիշողությունը կարծես

պայթառանում էր։ Վերջապես միմյանց լուռ դիտելուց հետո առաջինը Վարդանյանը խոսեց.

— Սիրելի ընկեր, երևի բա՞ն ունես ինձ ասելու։

Վարդանյանի ձայնն արդեն վերջնականապես համոզեց նրան. բանակայինը թևերը տարածելով գրկեց Վարդանյանին ու սկսեց հեկեկալ։

— Ընկեր Վարդանյան, մի՞թե չես ճանաչում Սիմոնյանին,— ասաց նա։

— Ի՞նչ, դու Սիմոնյանն ե՞ս... Ախր տեսնում եմ, որ ծանոթ դեմք է։ Բայց այնքան ես փոխվել, որ...— ասաց Վարդանյանը և համբուրվեց իր հին բանակայինի հետ։

Գրոմովըն ու Կավալերիան էլ երբ իմացան թե ով է բանակայինը, մոտ վազեցին ու նույնպես համբուրվեցին նրա հետ և սկսեցին հարցերի կարկուտ թափել։

— Իսկ Զավարյա՞նը, Եղինեբաշվիլի՞ն, հարցնում էր Վարդանյանը։

— Դրանց էլ եմ սաղ սալամաթ թողել ֆրոնտում։

— Լեյտենանտ Գրիգորյա՞նը։ Անշուշտ նրան էլ բան չի պատահել...

— Լեյտենանտը խփվեց...

— Ի՛նչ ես ասում, վա՛յ հազա՛ր ափսոս,— հառաչելով բացականչեցին Գրոմովն ու Կավալերիան միաբերան։ Վարդանյանը թաշկինակը տարավ աչքերին։

— Իսկ ի՞նչպես եղավ,— հարցրեց Վարդանյանը։

Սիմոնյանը, որ իրոք չէր տեսել, թե ինչ հանգամանքներում էր այդ կատարվել, քանի որ տանկերի հարձակման ժամանակ այնպես էր ահաբեկվել ու կպել խրամատի հատակին, որ եթե իմանար տանկը գալու է իրեն ճզմի, էլի անզոր կլիներ դեթ խրամատը փոխել,— որոշեց իր ադատարարներին բավարարելու համար ստեղծագործել...

— Այսինքն դա, տղերք, էսպես պատահեց էն ժամանակ, երբ, այսինքն, որովհետև, շատ ուժեղ կռիվ

էր, մեր գլխի վրա շարապլենի տրաքեց ու ա՛ռ հա կտաս խեղճ լեյտենանտին:

Վարդանյանն ուզում էր էլի հարցեր տալ, բայց տեսնելով որ շատ են ուշանում, որոշեց քարայրում շարունակել խոսակցությունը Սիմոնյանի հետ և խմբին շարժվելու հրաման տվեց:

Դարձյալ նույն կարգով սկսեցին գնալ: Գերմանացի պահակին, որն այժմ գերի էր, տանում էին կենտրոնում, չորս հոգով շրջապատած: Նրան արդեն խուզարկել էին և մոտից վերցրել բրաունինգը, թղթերն ու հանձնել էին Վարդանյանին:

Գնում էր այդ գերին, գլխահակ ու մտածում էր մարդկային բախտի փոփոխականության մասին:

Մի երկու ժամ առաջ, այն մարդիկ, որոնք այժմ տանում էին իրեն, իր և ընկերների տրամադրության տակ գտնվող թշվառ արարածներ էին և իրենք՝ նրանց կենաց ու մահվան բացարձակ տնօրինողները, ավա՛ղ ինքն է հիմա մի խղճուկ գերի...

Նա ամբողջապես կլանված էր այն մտքով, թե ինչպես են վարվելու իր հետ պարտիզանները և ահա մտքերի հարակցման օրենքով նրա հիշողության մեջ վերակենդանացան այն բազում դեպքերը, որոնք վերաբերում էին իրենց՝ գերմանացիների վերաբերմունքին դեպի գերիները:

Հիշեց գերի կարմիր բանակայինների գանակոծություն, հաշմելու և տանջամահ անելու շատ ու շատ դեպքեր, որոնց մեջ հաճախ ինքը մասնակցություն էր ունեցել:

Նա առաջ երբեք փորձ էլ չէր արել այդ մասին մտածել: Միայն այժմ, երբ նա՝ այդ ֆանատիկ նացիստը նեղն էր ընկել և անհուսության լաբիրինթ էր թվում անտառը, որով քայլում էր ինքը պարտիզաններով շրջապատված ու հոգու աչքով տեսնում էր իր գլխին կախված ահեղ հատուցման դամոկլյան սուրը, միայն այժմ նա սկսեց մտածել իրենց արարքների մասին...

Ու նրան վաղուց լքած առողջ բանականությունը կարծես մի պահ այցի եկավ՝ նրան գոռ ճշմարտության խոսքեր ասելու և նա այս անգամ սկսեց մտածել բանական մարդու նման...

«Նրանք ինձ անպայման կսպանեն և հազիվ թե խղճան. մենք, որ արհամարհել ու գլխատել ենք մեր մեջ այդ զգացմունքը՝ խիղճը, ունե՞նք իրավունք այդ նրանցից պահանջելու և ի՞նչ ենք ցանել, որ ինչ հնձենք հիմա...»

Վերջապես երեք պարտիզանները իրենց ազատագրած մարտիկների ու գերու հետ հասան իրենց «միջնաբերդը»։

Ծերունին մնաց շվարած, երբ տեսավ Գրոմովի ու Կավալերիստի հետևից շարանով եկող մարդկանց։ Նա սկսեց հարցեր տեղալ, և արդեն տեղ հասած Վարդանյանը՝ կարճ բացատրեց նրան գործի էությունը։ Քարայրների առաջ բոլորը նստեցին՝ բացի Վարդանյանից, նրա երկու ընկերներից ու գերմանացուն հսկող բանակայիններից։ Վարդանյանն ու նրա ընկերները որպես տան տերեր, սկսեցին հոգ տանել «հյուրեր»-ի մասին։ Իսկույն մի երկու շինել փռեցին, որոնց վրա սեղան բաց արին բերած ուտելիքներից։

— Ների՛ք, տղերք ջան, դեռ մի կշտացեք, հետո մանրամասն կզրուցենք,— ասաց Վարդանյանը գորովալից ձայնով։

Ծերունին արդեն զրուցում էր Գյորգու հետ։ Հարցրեց, թե արդյոք Պետրով ազգանունով ընկեր չի՞ ունեցել... Փոքրիկ Սերգեյը զարմացած դիտում էր նորեկներին։

— Գերուն էլ հաց տվեք,— կարգադրեց Վարդանյանը և Ֆրիցը, որ ռուսերեն հասկանում էր, զարմացած մի հայացք գցեց Վարդանյանի դեմքին՝ չհավատալով իր լսածին։

— Ի՞նչ գերի,— ասաց ծերունին՝ հետ նայելով։

— Սա՛, գերմանացի՞ եք բռնել,— գոչեց նա ձեռքի պատառը գցելով ու դադարեցնելով ուտելուց։ Նրա աչքե-

քը փայլեցին ատելության կրակով և նա ցնցվելով, ոտքի կանգնելու մի շարժում արեց...

— Հանգիստ, հայրիկ, նա մեր գերին է և դեռ պետք է մեզ,— ասաց Վարդանյանը՝ նկատելով ծերունու դեմքի արտահայտությունը ու կռահելով նրա ցանկությունը:

— Պե՛տք է մեզ... — հեգնանքով կրկնեց ծերունին. — իսկ ինչի՞ կարող է պետք գալ գերմանացին: Դու, որդիս, եթե հարգում ես իմ ծերությունը, եթե սրտիդ մեջ մի փոքր գութ ունես, թույլ տուր ինձ...— ասաց նա ոտքի կանգնելով ու ձեռքը գցելով մոտիկ դրված նռնակին:

— Հանգստացիր, հայրիկ,— ասաց Վարդանյանը ձեռքը նրա ուսին դնելով,— ես հասկանում եմ քեզ, բայց մենք դեռ նրան պիտի հարցաքննենք:

— Հարցաքննե՛նք, հարցաքննե՛նք, — դժգոհելով կրկնեց ծերունին և Վարդանյանիստիպմամբ նստեց էլի, բայց հաց չկերավ, թեպետ քաղցած էր:

— Տնաշեն, ձեռքդ նռնակին գցեցիր, ի՞նչ է, չլինի՞ ուզում ես մեզ էլ նրա հետ հոգոց հանգուցյալոց անել: Ինձ տուր տեսնեմ,— ասաց Վարդանյանը և ուտելու հետ միաժամանակ հետաքրքրությամբ իրենց նայող բանակայինների աչքի առաջ նռնակն առավ նրա ձեռքից, մտածելով, թե ատելության ինքնամոռացման մեջ ծերունին կարող է հանկարծ նռնակը նետել գերու վրա...

Գերին հաց չկերավ և միայն ծխում էր:

— Հ՛ը, չո՛ւն, ո՞նց ես հիմի,— բացականչեց ագատադրվածներից մեկը հանկարծ և մի քար վերցնելով շպրտեց գերու ուղղությամբ:

Վարդանյանը բարկացավ:

— Ինչ պատիժ որ պետք է, կտանք, դրանք ավելորդ բաներ են:

Ոմանք սկսեցին ծխել ու զրուցել, նույնիսկ կատակներ անել միմյանց հետ: Վարդանյանը զրուցում էր Սիմոնյանի հետ, և Գրոմովն ու Կավալերիձեն լսում

էին նրանց՝ իրենք էլ երբեմն հարցեր տալով: Նրանց շուրջն էին հավաքվել շատերը:

Վարդանյանը նկատելով որ ուտելը վերջացրին, դիմեց ընդհանուրին.

— Ընկերնե՛ր, հիմա կարող եք հանգստանալ, ովքեր ուզում են կարող են քնել: Իսկույն ոմանք հենց իրենց նստած տեղում պառկեցին՝ ավտոմատ ունեցողները այն դնելով իրենց կողքին, ոմանք էլ գնացին այս ու այն կողմ և շուտով եկան մի մի քար բերելով՝ բարձի փոխարեն գլուխների տակ դնելու համար:

— Էն թփի մոտ ընկածն էլ ինձ տուր, միայն տես, փափուկ քար լինի,— ասաց մեկն իր ընկերոջը՝ Գյորգուն, որը քարը տվեց նրան ու ինքն էլ պառկեց ընկերոջ մոտ՝ նախօրոք հարմարեցնելով իր «բարձը»:

Վարդանյանը նստեց մեծ քարայրի մուտքից մի քիչ հեռու, մի ժայռի բեկորի վրա, նախօրոք պահակ դնելով՝ քնածներին հսկելու համար և Գրոմովին կարգադրեց, որ գնդացրերը մաքրի Կավալերիստի հետ: Ապա դիմեց գերմանացի գերու մոտ կանգնած պահակներին.

— Ընկերներ, դրան ինձ մոտ բերե՛ք:

«Երևի պիտի քննի»,— մտածեց ծերունին, որ այդ ժամանակ կանգնած էր Վարդանյանի մոտ և մտածմունքի մեջ ընկած, խոսում էր ինքն իրեն բարձր ձայնով:

Լսելով Վարդանյանի կարգադրությունը, նա ավելի մոտեցավ և սկսեց դիտել պահակներին ու գերմանացուն:

Գրոմովն ու Կավալերիստն էլ հետաքրքրված, գնդացրերը ձեռքերին, մոտեցան նրանց:

Արդեն կեսօր էր ու չնայած աշնանային ցուրտ եղանակին, այդտեղ, այրերի առաջամասում բավականին տաք էր, որովհետև տեղն արևահայաց էր և ուշ աշնան անզոր արևի ճառագայթները, որ չէին կարողանում պայքարել արդեն զգացվող մոտալուտ ձմռան շնչի դեմ, այդտեղ քամուց պաշտպանված փոքր տարածության վրա տաքացրել էին քարաժայռերը և

կարծես մի յուրովի գարուն էին ստեղծել շրջակայքի ընդհանուր դառը ցրտի մեջ, այնպես, ինչպես իրենք՝ պարտիզանները իրենց ազատած ընկերներով, սովետական հողի այդ փոքրիկ կտորի վրա, մի ծաղկաբեր գարուն էին ներկայացնում՝ շուրջը, թշնամու նվաճած տարածություններում մոլեգնող գերմանական բուք ու բորանի մեջ...

— Ռուսերեն կարծեմ պիտի գիտենաս, «ազնվա-զարմ» պարոն, մի խոսիր տեսնենք,—դիմեց Վարդանյանը գերուն՝ աչքերը մի քիչ կկոցելով, որովհետև արևի շողերը նրանց մեջ էին ընկնում:

Ֆրանցը,— այդպես էր գերու անունը,— գլխով արավ ի նշան այն բանի, որ ռուսերեն գիտե, բայց միաժամանակ զարմացավ ու անակնկալի եկածի արտահայտությամբ սկսեց ինքն էլ Վարդանյանին դիտել:

Նրան զարմանք պատճառեց Վարդանյանի լեքսիկոնի մեջ գործածված և չեշտված սատիրայով արտասանված բառը ու ընդհանրապես՝ այդ սերժանտի (Ֆրանցը արդեն գիտեր, որ Վարդանյանը սերժանտ է) վերցրած բարձր ոճը:

«Իսկ սրանց մասին մեզ ասում էին, որ կիսավայրենիների հետ ենք գործ ունենալու. խնդրե՛մ, համեցեք, ինձ հետ մի հասարակ սերժանտ է խոսում...»— անցավ նրա մտքով:

— Նու, պատմիր, թե ո՞ր գյուղում են ձեր զորամասերը. գերիներին ի՞նչ տեղերում և ի՞նչպես էք պահում, ինչպես և՝ տվյալ գյուղի ձեր օբեկտների տեղերի ու եղած ուժերի մասին: Մենք լսում ենք:

Ֆրանցը մի պահ լուռ էր, ապա աչքերը գետնից բարձրացնելով, մի թռուցիկ հայացք գցեց իրեն շըրջապատողների վրա, բերանը բացեց ինչ որ բան ասելու մտադրությամբ, սակայն էլի չարունակեց լուռ մտածել:

— Ի՞նչ է, չե՞ս ուզում ոչինչ ասել. գուցե միայն դոչես...

— Է՛հ, թողեք, պարոն սերժանտ,— ասաց Ֆրանցը, ձեռքով արհամարհական շարժում անելով, որը վերաբերում էր «հայ Հիտլեր» բառերին, Փյուրերի նկատմամբ ունեցած նրա նոր մոտեցման պատճառով:

Սակայն Վարդանյանն այդ արհամարհական ձեռքի շարժումն ու դիմախաղն իրեն ուղղված համարեց և բարկացավ դերու անբարտավան վարմունքի վրա:

— Ասա ինձ ձեր օբեկտների, ուժերի և մյուս հարցերի մասին մանրամասն, այլապես տեսնո՞ւմ ես: (Նա մատով ցույց տվեց իրեն շրջապատած մարդկանց), այլապես, քեզ հենց հիմա կտամ սրանց ձեռքը ինքնադատաստան անելու: Տեսնում եմ, որ շատ հիմարներից չես ու կարող ես պատկերացնել, թե ինչ ձևով նրանք վերջ կտան քեզ:

— Նրան մե՛զ հանձնիր, մե՛զ հանձնիր,— աղաղակեցին այնտեղ խմբված պարտիզանները:

Ծերունին, որ իրեն հազիվ էր զսպում, ավելի մոտեցավ ու ամբողջ ուժով բռունցքի մի հարված հասցրեց Ֆրանցի դեմքին, այնպես, որ արյուն եկավ նրա քթանցքներից և բղավեց.

— Շո՛ւն, յոթնապատիկ շուն գերմանացի, ասելու ե՞ս, թե չէ...

Ֆրանցն առանց ծպտուն հանելու, ընդունեց հարվածը, միայն մի ձեռքն անմիջապես տարավ դեպի արյունոտված քիթը, իսկ մյուս ձեռքով գրպանից հանեց թաշկինակը և դրեց քթին:

Մինչ այդ նա տատանվում էր՝ բավարարե՞լ Վարդանյանին, թե ոչ: Եղավ նույնիսկ մի պահ, որ որոշեց իր իմացածն ասել, գուցե դրանով որոշ թեթևություն մտցներ իրեն սպասվող պատժի մեջ, բայց ծերունու հարվածից հետո, որը միահամուռ հավանության արժանացավ մնացածների կողմից, բացի Վարդանյանից, որոշեց այլևս ոչինչ չասել:

Վարդանյանը մարդկանց հանգստացնելու համար, որոնք բռունցքներ ու խզակոթեր էին ճոճում գերմանացու գլխին, ստիպված եղավ բղավել.

— Իսկույն հեռացեք... Այդպես չի կարելի:

— Ինչ անելու էք, շուտ արեք,— վերջացրեք,— ասաց այդ ժամանակ Ֆրանցը՝ դիտելով իրենց հազիվ զսպող նախկին գերիներին:

— Այդ արդեն չեղավ, մենք կստիպենք քեզ, որ տեղեկություններ տաս, իսկ հիմա ես քեզ մի առժամանակ հնարավորություն կտամ լավ մտածելու և կշռադատելու: Եթե դրանից հետո էլ չասացիր, այն ժամանակ մեղքը քո վիզը,— ասաց Վարդանյանը և կարգադրեց պահակներին, որ գերուն հեռացնեն:

Ապա նա դիմեց Կավալերիստին, որ գերու պահակներին փոխի, որովհետև արդեն բավականին ժամանակ էր, ինչ կանգնած էին նրանք:

— Ընկեր սերժանտ, բեր դրան այրում բանտարկենք,— ասաց Գրոմովը:

— Միևնույն է, ուր կուզե լինի, միայն լավ հսկել:

Ֆրանցը խնդրեց պահակներից, որ բնական կարիքի համար իրեն թույլ տան մոտենալու քարափի եզրին: Պահակները նրան տարան այդ ուղղությամբ: Ծերունին դեռ շարունակում էր Ֆրանցին դիտել՝ չանթալի հայացքով: Դիակների տակից հարություն առած այդ մարդու մեջ վրեժի զգացմունքը եռում ու քլթքլթում էր և ելք էր որոնում՝ ծերունուն զրկելով ինքնատիրապետման կարողությունից:

«Սերժանտը շատ է փայփայում սրան»,— մտածում էր նա, բռունցքներն այնպես սեղմելով, որ եղունգները քիչ էր մնում մխրճվեին ափերի մեջ: «Պետք է իժի ծնունդին հենց տեղն ու տեղը... Այնինչ...»,— մտածում էր նա:

Եվ հանկարծ ծերունին ասես գերբնական մի հարվածով տեղից պոկված, նետվեց քարափի եզրին՝ պահակների մոտ կանգնած Ֆրանցի վրա և գոչելով՝ մեռիր շան մահով, շուն գերմանացի,— նրան ուժգին հրեց... Հավասարակշռությունը կորցրած Ֆրանցը ձեռքը գցեց ծերունու փեշից՝ նրան ևս տանելով իր հետ: Պահակների աչքերի առջև գերին գահավիժեց

գլխապտույտ բարձունքից ու ծերունու հետ, քարերին զարնվելով, ջախջախված ընկավ ստորոտում:

Պահակների աղմուկից շատերն արթնացան և Վարդանյանի հետ հապճեպ խմբվեցին այն տեղում, որտեղից տապալվել էին երկուսը: Վարդանյանն իսկույն իմացավ բանի էությունը և բղավելով՝ անմիջապես ըշտապել այնտեղ, ինքն առաջինն սկսեց շավղով վազել դեպի ժայռի ստորոտը:

Երբ նրանք տեղ հասան, երկուսն էլ անշնչացած էին: Ցրանցն ընկած էր բերանքսիվայր, բազուկները փռած, կարծես մեռած ժամանակ էլ հողի անհագուրդ ծարավ ուներ և իր բեկված բազուկներով ուզում էր գրկել գետինը:

Ծերունին կողքի էր ընկել և թվում էր, թե դիտում է իր ոխերիմների այդ շառավիղին, դեմքը սևակնած երկնքի նման մռայլ ու շրթունքներն առաջ ձգած, կարծես ուզում էր թքել Ցրանցի դիակի վրա: Մահն անգամ նրանց չէր հաշտեցրել...

Այդ պատկերը դիտողների վրա այնպիսի անջինջ տպավորություն էր գործում, որ ինչքան էլ հորդահորդ հոսեր Լետան՝ մոռացության գետը, նրանք այդ բանը չէին մոռանալու:

— Օ՛, ծերուկ, օ՛, սիրելի հայր, ինչո՞ւ այդքան անխոհեմ գտնվեցիր, մի՞թե այլ ձևով չէր կարելի,— ասաց Վարդանյանը՝ նայելով նրա դիակին:

Մյուսները լուռ և զարհուրած էին: Հենց այդտեղ նրանք գերեզման փորեցին և հուղարկավորեցին ծերունուն: Սրան հողով ծածկեցեք, զարշահոտությունն չտարածի,— ասաց Վարդանյանը գերմանացու մասին և ինքը հեռացավ:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

***

Ցուրտ ու խոնավ եղանակ էր: Քամուց քշվող անձրևաբեր ամպերը, որոնք անցնում էին այբերի հրա-

կա քարաժայռի կատարով, հազիվ էին հասցնում անձրևի բարակ ու շեղակի ընկնող շիթեր գցել գետին: Քամու թուլացման պահերին աշնանային անուրախ անձրևն սկսում էր ավելի հորդ շռփշռփել:

Քարայրների առաջից, ներքև՝ անտառին նայող այդ ժամանակ կնկատեր, թե ինչպես այստեղ ու այնտեղ, հատկապես ձորերի վրա, տարբեր խտության մշուշ էր նստել, որից շղարշվել էին ցրտից դողացող մերկ ծառերը: Երկնքի աչքը չէր ցամաքում, կարծես ինչ որ անմեկին վշտից և ստիպում էր մարդկանց էլ տխրել:

Պարտիզանների քարայրի օձագալար շավղի վրա՝ այդ ժամանակ պահակ կանգնած երկու պարտիզաններ անձրևից պաշտպանվելով գրանիտե հսկա ժայռերի տակ, հսկում էին ու թախծում: Մյուս պարտիզանները մեծ այրի մեջ էին: Այրի ընդարձակ մասում կրակ էին արել ու բոլորվել շուրջը՝ ոմանք նստած, մյուսները թեք ընկած: Այրի առաստաղում գտնվող ճեղքերից ծուխը հաջողությամբ դուրս էր գնում և միայն վերևի մասումն էր, որ մի փոքր շերտով նոսր ծուխ էր հավաքվել: Նախօրոք հավաքած չոր փայտը այնպես ջերմ ու պայծառ էր վառվում, որ նրան հառած բոլոր աչքերը շողում էին դյութանքից:

Բորբոքվում էր կրակը, այդ հնամենի գեղեցկուհին, որն այն հին, մթամած դարերում, աստվածների երկնային կապույտ պալատից առևանգվելուց ի վեր գուցե ոչ ոքի այնպես ու այնքան բերկրանք չէր պատճառել, որքան հիմա, իր շուրջը նստած— տաքացող, տառապանքներից հյուծված և ցրտի հանդեպ շատ ըզգայուն դարձած այդ մարդկանց, որոնք նոր էին ազատվել ֆաշիստական գերությունից:

Եվ այդ մարդիկ այնպիսի զմայլանքով էին նայում կրակին, ինչպես կնայեր ամեն մեկը իր սիրած անուշ աղջկան:

Դրսում ոռնում էր քամին, և նրա հոսանքը ներխուժելով այրի անցքից բվվում էր այնտեղ:

Վարդանյանը, որ նույնպես նստած էր կրակի մոտ իր երկու ընկերների հետ, մի կողմից ունկնդրելով քամու ձայնին և նայելով կրակին, համակվել էր քաղցր տխրությամբ... Նա իրեն հանձնել էր խոհերի և հուշերի վարար հորձանքին: Նա այդ պահին մտքով գնացել էր իր ծննդավայրը և հայրենիքի հետ էր:

Նա հիշում էր ծնողներին և հինգ եղբայրներին, որոնք բոլորն էլ Հայրենական պատերազմի ճակատներում էին գտնվում: Ապա մտաբերում էր իր մանկությունը և այն օրերը, երբ քույրերով ու եղբայրներով խմբվում էին հայրենի օճախի կրակի շուրջը՝ ձմռան ցուրտ գիշերներին ու լսում էին մի կողմից գուլպա գործող և զմրուխտահյուս հեքիաթներ պատմող իրենց նանին:

«Եվ ի՞նչ են անում հիմա իմ ծեր ծնողները, արդյոք կարողանո՞ւմ են լավ աշխոր վաստակել»,— շարունակում էր մտածել նա: Ապա նրա միտքն ուղղվում էր իր նոր ազատագրված ընկերների կողմը: «Գործը հիմա, այսպիսի մի համալրում ստանալուց հետո անշուշտ ավելի հաջող կգնա, միայն թե խեղճերը շատ են հալից ընկած: Բայց ոչինչ. մի երկու օր էլ լավ հանգիստ կտամ, որից հետո արդեն կսկսենք»:

— Տղերք ջա՛ն, դե մի պատմե՛ք, ախր իմանանք, պատմեք ձեր գերությունից, այդ մեզ շատ հետաքրքիր է: Խոսեցե՛ք,— ասաց Վարդանյանը:

— Հիմի էս երեխի բանը ո՞նց ենք անելու,— խոսեց Կավալերիստը՝ ձեռքով ցույց տալով փոքրիկ Սերգեյին, որը նստել էր Գրոմովի մոտ և գլուխը դրել էր նրա ծնկին: Նրան խաբել էին, թե պապը գնացել է գյուղ, որ հաց և այլ ուտելիքներ բերի:

— Զգույշ խոսիր, կարող է գլխի ընկնել,— շշուկով ասաց Վարդանյանը:

— Քնած է, ընկեր սերժանտ:

— Իսկապես, ես էլ չգիտեմ, թե ինչպես ենք անելու: Մնում է, որ մեզնից մեկին թողնենք դրա մոտ

արշավանքների գնալիս: Վերջապես այստեղ մենք մի պահակի կարիք միշտ ունենք:

— Լավ բան ես ասում, ընկեր սերժանտ, էդ հենց իմ բանն է, մեջ մտավ Սիմոնյանը՝ կրակին պարզած ձեռքն ափով շրջելով ներքև:

— Այ, մերդ չմեռնի Սիմոնյան, պաշտոնը գտավ,— ծիծաղելով ասաց Գրոմովը:

— Լա՛վ, թող այդպես լինի, դու կմնաս,— ասաց Վարդանյանը, մտածելով, որ նա հազիվ թե կռիվներում՝ հարձակումների ժամանակ շոշափելի օգուտ տա... Ապա մի քիչ մտածելուց հետո ավելացրեց,—սակայն, միշտ չէ, որ դու պիտի մնաս, դու է՛լ պիտի մասնակցես մեր հարձակումներին և եթե վերջ չտաս քո այդ վախկոտությանը, ես քեզ չեմ ների...

— Լա՛վ, ընկեր սերժանտ,— պատասխանեց Սիմոնյանը հոգոց քաշելով:

— Ի՞նչ պատմենք, ընկեր պետ,—ասաց Գյորգին,— ամեն մեկս այնքան ապրումներ ենք ունեցել, որ երբ ուզում ես այդ մասին խոսել, չես իմանում, թե ինչից սկսես:

— Ինձ շատ հետաքրքիր է Ֆրոնտի մասին,— ասաց Կավալերիստը՝ մի փայտի կտորով խառնելով կրակը:

— Ասում ես դու ո՞ր դիվիզիայից ես և ե՞րբ եք ճակատ մտել,— շարունակեց Կավալերիստը, դիմելով Գյորգուն:

— Ես N դիվիզիայից եմ և ճակատ մտանք Մոզդոկի ուղղությամբ. էն քանիսի՞ն էր... հա, հիշեցի, հոկտեմբերի 20-ին, առավոտյան:

— Դու ուրեմն N դիվիզիայի՞ց ես, ասել կուզի դուք մեր թևումն էիք: Մերն 87-ն էր.— ընդմիջեց Սիմոնյանը:

— Ի՞նչ, ուրեմն դու վերջերս եկած համալրման մե՞ջ էիր,— հարցրեց Գյորգին իր հերթին:

— Ո՞ր համալրման:

— Ամսի 20-ի:

— Հա է՛, հա՛...

— Ասել կուզի հարևաններ ենք եղել։ Հետո մեր ու ձեր զորամասերը միացան։ Հիշում ես, որ մի օր դուք նեղն էիք ընկել, մեր գունդը օգնության եկավ։ Ախր մենք, գիտե՞ս, արդեն գվարդիական կոչում ունեինք։

— Գիտե՛մ, գիտե՛մ,— գլուխը հանդիսավոր շարժելով ասավ Սիմոնյանը, չնայած այդ մասին առաջին անգամն էր լսում։

— Ասում եք Փրոնտից պատմենք է՛լի, ընկեր պետ,— դիմեց հիմա էլ Վարդանյանին Գյորգին։

— Լավ կլիներ։

— Հետաքրքիր բաներ շատ պատահեցին, միայն աչքովս մի բան տեսա՛, գուցե սրանք էլ տեսած լինեն,— ասաց նա համակենտրոնացման ճամբարի իր ընկերների մասին,— մի բան տեսա, որ երբեք չպիտի մոռանամ...

— Այդ ի՞նչ էր,— հետաքրքրվեցին բոլորը։

— Մի չտեսնված քաջություն էր ու անողն էլ ո՞վ,— մի աղջիկ...

— Աղջի՞կ,— հետաքրքրվեց Գրոմովը։

— Աղջիկ եմ ասում, բայց թե հենց իմացիր մի գումարտակի դեր կատարեց։

— Սպանեցիր, դե ասա տեսնենք ի՞նչ արավ,— ասաց Վարդանյանը։

— Ինչ արա՞վ... գերմանական էս–էսականների մի զորամաս մեր ուղղությամբ մի օր հոգեբանական գրոհ սկսեց...

Գյորգին պատմեց Ցողիկի հետ կապված դեպքի մասին, որին ականատես էր եղել։

— Էդ աղջկան ես էլ եմ տեսել,— մեջ մտավ Սիմոնյանը և պատմեց, թե ինչպես է աղջիկն իրեն մի քանիսի հետ ետ դարձրել, երբ նրանք հոգեբանական գրոհից մի քիչ վախեցած՝ ուզեցել էին «նոր հարմար բնագիծ գրավել»։

— Ա՛յ քեզ աղջիկ, ուրեմն բոլորից առաջից էր գնում ու դրությունը փոխեց հօգուտ մե՞զ,— ասաց

Վարդանյանը, որ հիացել էր անծանոթ աղջկա քաջության մասին լսած պատմությունից:

— Վերջը գերի՞ ընկավ, թե սպանվեց,— հարցրեց Կավալերիստը:

— Էլ լավ չիմացանք, միայն թե, էդտեղ դրանց սևը տվինք, քո ուզածի պես լավ ջարդ տվինք և ահագին էլ գերի վերցրինք: Դաշտի ժամանակ բոլորի բերանի խոսքն էդ էր՝ էդ աղջիկը: Տեսնեիր, թե ինչքան էին ափսոսում: Կարծես ամեն մեկը իր հարազատ քրոջը կորցրած լիներ: Ոմանք ասում էին, թե սպանվել է, բայց կային հավատացնողներ, որ տեսել էն, թե գերի ընկավ:

— Միայն՝ աղջիկ եմ ասում, մի էդ առյուծ էր և ոչ թե աղջիկ: Նրա արածներից մի բան էլ տեսա...

Եվ այստեղ Գյորգին պատմեց Ցողիկի նռնակը նետելու մասին:

— Էս չլինի՞ թե էն աղջկա մասին է,— հարցրեց նոր պարտիզաններից մեկը իր մոտ նստած ընկերոջը, որի հետ միասին էին գերվել ու գերմանացիների թիկունքը բերվելիս տեսել էին, թե ինչպես մի գերի կապված աղջկա ուժեղ պահակով տանում են և այնպես էր պատահել, որ նրան հետո էլ էին տեսել:

— Էդ քո ասածը հո հայ չէր,— հարցրեց խոսողներից մեկը Գյորգուն:

— Կարծեմ:

—Գլխին էլ կապույտ, ծաղկավոր թաշկինակ կապած՝ բինտի վրայից, երևի գլխից վիրավոր էր...

— Ճիշտ է, ճիշտ:

— Իսկ սիրունությո՞ւնը:

— Էս կրակը քեզ օրինակ...

— Հա՛, ասել կուզի մենք էլ ենք տեսել դրան:

Եվ այդ վերջինն սկսեց պատմել, թե ինչպես ու ինչ պայմաններում են տեսել նրան:

— Մի շատ հետաքրքիր դեպք էլ պատահեց այդ աղջկան մեր տեսնելու ժամանակ,—սկսեց իր պատմությունը մի այլ պարտիզան:— Էդ որ պիտի պատմեմ,

486 -12

շատ մեծ ռիսկի հետ կապված գործ էր, միաժամանակ շատ սրտաշարժ... Գերմանացիները մեզ՝ մի տասը հոգի գերիների պահակներով շրջապատած՝ իրենց թիկունքն էին բերում։ Մեկ էլ տեսնենք մեր մոտով մի կապավոր աղջիկ են տանում՝ նույնպես գերի։ Նրան ուղեկցում էին երեք պահակներ։ Երբ մենք դրանց հասանք, հենց այդ ժամանակ գոռոցը երկինքն առավ։ Բոլորս սկսեցինք վերև նայել, բայց պահակները մեզ ստիպեցին անմիջապես մոտիկում գտնվող մեծ, երկար խրամատը մտնել։ Մտանք, պահակներն էլ մեզ հետ։ Գերի աղջկան էլ, որ ձեր ասած աղջիկն էր, նույնպես բերեցին այդ խրամատը և մենք այդտեղ, գերմանացիների մերձավոր թիկունքում ականատես եղանք մի ուժեղ օդային մարտի։ Մոտ տասը ինքնաթիռ մեր ինքնաթիռներից կռվի էին բռնվել գերմանական տասնըհինգ կործանիչների հետ։ Չգիտեմ՝ տեսած կա՞ք, երբ գառ փախցնող շները կռվում են իրար հետ, էդ ձեզ օրինակ։ Հենց էն տեսակ՝ վնգալով թռիչքներ էին գործում, շեղակի թռչելով իրար տակից ու վրայից անցնում ու գռ՛ռ՛, գռ՛ռ՛, դրա՛ տա՛ տա՛ տա՛,—կրակում էին։ Ծուխն ու բոցը երկինքն առել էր։ Մեկ էլ տեսանք, մերոնցից մի օդանավ խփվեց ու պտտվելով պոչի կողմից սև ծուխ թողնելով, սկսեց ընկնել։ Օդաչուն անմիջապես իրեն գցեց ինքնաթիռից։ Պարաշյուտը բացեց ու սկսեց հանդարտ իջնել։ Մեզ հսկող պահակներն այդ տեսնելով ավտոմատները երեսներն առան, բայց դեռ մի գնդակ էլ չէին արձակել, երբ թշնամու օդանավերի դեմ կռիվը շարունակող մեր օդանավերից երեքը ներքև սլացան ու պարաշյուտի շուրջը պտույտներ գործելուց կրակ սկսեցին՝ նրան պաշտպանելով ու հնար չտվին ոչ մեր պահակներին, և ոչ էլ էդ տեղանքով շարժվող թշնամու մանր խմբերին՝ վնասել պարաշյուտով փրկվող օդաչուին։ Էդպես դրան կրակե օղակով պաշտպանած օդանավերը նրա հետ իջնում էին...

Հետաքրքրությունս էնքան ուժեղ էր, որ չնայած

խփվելու երկյուղին, գլուխ էր բարձրացնում խրամատից ու նայում էր:

— Այդպես, օդանավերն իջան ու ի՛նչ արին... Նըրանցից մեկը վայրէջք կատարեց, իսկ երկուսն էլ պաշտպանում էին: Վայրէջք կատարածը վերցրեց ողջառողջ իջած օդաչուին և նորից թռավ, էն երկուսն էլ նրա հետ վերև սլացան: Վերև սլացան ու էլի շարունակեցին կռիվը: Մերոնք երկու գերմանական օդանավ կործանեցին, մյուսներին փախուստի մատնեցին և վերադարձան: Էդ բանն էնքա՛ն, էնքա՛ն ազդեց ինձ վրա, որ ուրախությունից խրամատում լաց եղա... Դրանից հետո մեզ՝ գերիներիս, էդ աղջկա հետ բերեցին էս կողմերում մի գյուղ կա, կարծեմ էն իք են ասում, անտերի անունը լեզվիս ծերին է, վերջը չեմ հիշում, մեզ բերին էդ գյուղը:

— Սարի Յո՞ւրդ,— հարցրեց Կավալերիստը:

— Չէ: Տղամարդկանցս փակեցին մի բացօթյա արգելարանում, իսկ աղջկան տարան մոտիկ մի շենքի նկուղում բանտարկեցին ու դուռն էլ թեթև գնդացիրը ձեռքին մի պահակ դրեցին: Մեզ երկու օր էստեղ պահելուց հետո բերեցին համակենտրոնացման ճամբարը:

Վարդանյանի վրա այդ պատմությունները, հատկապես Ցոլիկի մասին պատմածը, մեծ տպավորություն գործեց: Նա ջերմ համակրանքով լցվեց դեպի այդ հերոս աղջիկը և որոշեց նրան ազատելու փորձ անել՝ նախօրոք ստուգելով, թե նա արդյոք էլի այն գյուղո՞ւմ է գտնվում, որի մասին Վարդանյանը եզրակացրեց, որ դա Ծեր ինդուշենց գյուղն է: Սակայն իր այդ որոշման մասին առայժմ ոչինչ չասաց ընկերներին:

Այդ պատմություններից մյուսներն էլ պակաս չէին զմայլվել:

— Ա՛յ ընկերություն, ա՛յ ջանասիրություն,— ասում էր մեկը՝ իրենց ընկեր օդաչուին փրկած օդաչուների մասին:

Այնուհետև պարտիզաններն սկսեցին կատակներ անել, զանազան դեպքեր հիշել իրենց թիկունքային ծա-

ռայուլթյունից և ճակատից։ Ապա Վարդանյանը կարգադրեց, որ կոնսերվներ բացեն ընթրելու համար։ Երբ հավալերիստը մի ուրիշ պարտիզանի հետ սկսեց բացել պահածոների տուփերը, Գրոմովը նկատեց, թե ինչպես նրանց մոտեցած Սիմոնյանը անսահման երջանկության արտահայտությամբ դիտում էր նրանց աշխատանքը։ Գրոմովը ձայնը մեծ վարպետությամբ կեղծելով և նմանեցնելով Սիմոնյանի ձայնին, գոչեց,
— ընկե՛ր լեյտենանտ, ինչո՞ւ մարտիկին մի հրացան է հասնում, իսկ կոնսերվ բաժանելիս երկուսին եք մեկը տալիս...

Այդ բառերը իր՝ Սիմոնյանի երբեմնի ասած բառերն էին։ Նա այդ ասել էր մի անգամ մինչ ճակատ մտնելը, բանակայիններին պահածո բաժանելու ժամանակ, դժգոհելով, թե ինչու յուրաքանչյուրին մի–մի հատ չեն տալիս։

Բոլորը ծիծաղեցին այդ կատակի վրա և սկսեցին գովել Գրոմովին՝ ձայնն այնքան վարպետորեն կեղծելու և նմանեցնելու համար։

Ընթրելուց հետո Վարդանյանն սկսեց զրուցել իր նոր ընկերների հետ՝ իրենց առաջիկա անելիքների մասին։

— Սիրելի բարեկամներս, ձեզնից ամեն մեկը պատկերացնում է, թե ինչ պիտի անի։ Դուք, ձեր մաշկի վրա փորձել եք արդեն՝ ճաշակելով գերմանացիների պատճառած բոլոր դաժանությունները ու գազանությունները։ Կարծում եմ, որ այսուհետև մեզ հետ միասին կշարունակեք այն պայքարը, որ մինչև հիմա մենք երեքով էինք մղում։ Կարծում եմ, որ մեր հետագա գործունեությունն ավելի արգասավոր ու արդյունավետ կլինի։

— Պատրաստ ե՛նք,— միաբերան գոչեցին ազատվածները։

— Հրամայիր, ընկեր պետ, դուք նոր կյանք եք տվել մեզ, դուք մեզ գերեզմանից եք հանել ու հարություն տվել։ Մենք մեր ստացած այդ թանկ պարգևը

պետք է ի սպաս դնենք հայրենիքին,— խոսեց Գյորգին:

— Կեցցես, բարեկամ,— հավանություն տվին Գյորգու ասածներին շատերը:

Ես մի ուրիշ բան էլ ունեմ ասելու,— ասաց Վարդանյանը,— ես, սիրելիներս, սերժանտ եմ և խնդրում եմ ձեզ, որ եթե կա ձեր մեջ որևէ մեկը միջին հրամկազմից, թող հանձն առնի մեր խմբի ղեկավարությունը: Ես պատրաստ եմ նրան ենթարկվել, ինչպես և բոլոր մնացածները:

Վարդանյանի այս հայտարարությունը դուր չեկավ Կավալերիստին, որովհետև Վարդանյանը նրա աչքում, մանավանդ վերջին մի քանի հաջող օպերացիաներում իր հանդես բերած խելքի ու հնարագիտության և քաջության պատճառով այնքան էր բարձրացել, որ նրա համոզմունքով իր սերժանտը մայորի խելք ուներ... Կավալերիստը զինվորական աստիճանները լավ չգիտեր ու կարծում էր, թե ամենաբարձր աստիճանը մայորինն է:

— Է՛ է՛, ընկեր սերժանտ,— վերջապես չկարողանալով իր ահաճությունը թագցնել,— ասաց Կավալերիստը:

Վարդանյանը, որ կենտրոնացած սպասում էր իր տված հարցի պատասխանին, ուշադրություն չդարձրեց այդ միջամտությանը:

— Ո՛չ, մեր մեջ միջին հրամկազմից մարդ չկա,— գոչեցին շատերը,— դո՛ւ ես մեր պետը:

Գերիներից Գյորգին, որ նորավարտ լեյտենանտ էր, մտածում էր, որ ինքն անշուշտ ռազմական գիտելիքներով մի սերժանտից շատ ու շատ բարձր կլինի, բայց գտնում էր, որ Վարդանյանն իր մարտական բարեմասնություններով, պայծառ խելքով և նամանավանդ այն հմայքով, որ ձեռք էր բերել գերիներին ազատելով,— ամենահարմարն էր իրենցից ղեկավար լինելու համար: Ուստի և, նա իր մասին ոչինչ չասաց և

միայն որոշեց իր գլխելլիքներով օժանդակել սերժանտին:

— Դե լավ, համաձայն եմ, ես կլինեմ, եթե ավագ ընկեր չկա,— ասաց Վարդանյանը:

— Կեցցե՛ մեր պետը,— որոտընդոստ ձայն տվեցին բոլորը, դղրդացնելով քարայրը:

— Ես էլ շնորհավորում եմ ձեզ, սիրելի ընկերներ, ձեր պարտիզան դառնալու համար,— ասաց Վարդանյանը:

— Ես որոշել եմ մարդիկ ուղարկել այն գյուղը, որտեղ ձեզնից տեսնողներ են եղել գերված հերոս աղջըկան: Մանրամասն տեղեկություններ ստանալուց հետո, եթե նա հիմա էլ այնտեղ է և կենդանի է, ուզում եմ, որ մենք նրան ազատենք:

— Պետք է, պետք է ազատել,— միաբերան համաձայնություն տվին պարտիզանները:

Վարդանյանը հայտնեց, որ մտադիր է որևէ մեկի հետ Գրոմովին ուղարկել հետախուզության: Գրոմովը սիրով հանձն առավ, իսկ Գյորգին խնդրեց, որ իրեն ուղարկեն նրա հետ:

Վարդանյանը փոխեց այրի առաջ կանգնած պահակներին, որից հետո, արդեն կես գիշերին, պարտիզանները խոր և անուշ քուն մտան կրակի կողքին:

***

— Արի՛, քիչ մնաց, գյուղը երևում է, էս է՝ անտառն էլ արդեն վերջացավ:

— Իսկ դու, ընկեր Գրոմով, ասում ես՝ ճանապարհները լավ գիտե՞ս— հարցրեց Գրոմովի հետ անտառով գնացող Գյորգին:

— Իհարկե գիտեմ: Եթե մութ գիշեր էլ լիներ, ես դարձյալ կգտնեի: Ասենք՝ դու չգիտես, որ մենք՝ ես, ընկեր պետն ու կավալերիստը հենց այս գյուղումն էր, որ մնացինք գերմանացիների թիկունքում, ինչպես որ բարեկամս, դու հանդիպատ եղիր:

— Տես, այստեղ ճանապարհ կա, հիմա ի՞նչ անենք, ա՞յս ճանապարհով գնանք, թե՞...— նորից խոսեց Գյորգին:

— Ճանապարհից անպայման հեռու պիտի շարժվենք, քանի որ մեզ հրաման է տրված հարձակում չըգործել և մարտի չբռնվել: Հիմա մեր խնդիրը միայն այն է, ինչ ասաց ընկեր պետը:

Գյորգին ու Գրոմովը շուտով դուրս եկան անտառից և հեռանալով ճանապարհից, կարճ գծով ուղղություն վերցրին դեպի գյուղը, որը թաղված էր ծառերի մեջ ու հեռվից մի պուրակի տպավորություն էր գործում:

— Էս անտեր քարերն էլ քոռի նման ոտքերիս են կպչում,— կատակով շշնջաց Գրոմովը՝ երբ ոտքն առավ մի քարի:— Իսկ դու ուշադիր եղիր, եթե ձայն լսես, իսկույն ինձ ասա:

Նրանք զգուշությամբ, ավտոմատները բռնած, մոտենում էին գյուղին: Չնայած որոշ խորտուբորտությունների, տեղանքը,— ըստ մեծի մասին հարթ էր:

Երբ նրանք բավականին մոտեցել էին գյուղին, հանկարծ խոսակցության ձայներ լսեցին.

— Կա՛ց, պառկի՛ր, ականջ դնենք,— շշնջաց Գրոմովը· և պառկեց: Գյորգին հետևեց նրան: Նրանք ըսկսեցին լսել և դիտել: Բան չէր երևում: Միայն էլի ձայներ էին գալիս: Կարծես զրույց էին անում ոչ այնքան հեռվում:

— Gut, gut, es ist richtig[1],— լսվեցին մեկի գերմաներեն արտասանված բառերը:

Պարտիզանները նկատեցին, որ խրամատների հողաթմբեր են երևում:

— Նրանք են: Հավանաբար պաշտպանություն է,— ասաց Գյորգին:

— Ի՞նչ պաշտպանություն, չէ՞ որ այս նրանց թի-

1) Լավ, լավ, դա ճիշտ է:

կունքի կողմն է և ոչ ճակատի,— շատ ցածր ձայնով ասաց Գրոմովը:

— Այո՛, բայց իմացիր, որ Թիկունքի կողմն էլ են պաշտպանություն բռնում, ինչպես մեզ մոտ էր: Մի՞թե չես հիշում: Այդ նրա համար է, որ հակառակորդի դեսանտների դեմ կռիվ անեն:

Նույն գծի վրա նրանք ուրիշ խրամատներ էլ նկատեցին և էլի ձայներ լսեցին: Գրոմովը համոզվեց, որ իրոք, այդ պաշտպանություն բռնած զորամաս է և ոչ պահակներ, ինչպես ինքն էր ենթադրում:

— Պիտի շրջանցել,— կամաց ասաց Գյորգին:

— Ճիշտ է, էլ հնար չկա: Միայն, մեր տղա, ուղիղ բերաններն էինք ընկնելու, եթե չէին խոսել...

Կես ժամից հետո, այդտեղից բավականին հեռու մի տեղից նրանք հասան գյուղին և թաքնվեցին ծայրամասային խրճիթներից մեկի բակում, խոտի դեզի հետևում:

— Մտնենք խրճիթը,— ասաց Գյորգին Գրոմովին:

— Չէ, մի շտապի, հանկարծ կարող են շներից լինել:

Նրանք շարունակեցին դիտել ու լսել: Ոչ մի կասկածելի բան չէր երևում շրջակայքում և ձայներ չէին գալիս: Արդեն գրեթե կես գիշեր էր, երբ պարտիզանները որոշեցին մտնել մոտակա խրճիթը:

Գյորգին մնաց դեզի մոտ՝ ավտոմատը պատրաստ բռնած, շուրջը հսկելով, իսկ Գրոմովն արագությամբ մոտեցավ դռանը և դուռը բախեց:

— Кто там Мари?— լսվեց ներսից մի կանացի ձայն:

— Я,— պատասխանեց Գրոմովն աղջկա ձայնով՝ մտածելով առանց երկարացնելու դուռը բացել տա:

Ձայներ կեղծելու վարպետ Գրոմովի խորամանկությունն անցավ... Ներսից խոսող կինը կամ լավ ուշադրություն չդարձրեց և կամ Գրոմովի ձևացրած ձայնը պատահմամբ նման էր նրա ձայնին, որին սպասում էին ներսում, և ահա շուտով մեկը դուռը բացեց

և առանց նայելու ներս մտնողին, գնաց դեպի սենյակի վերին մասում դրված մահճակալը:

Գրոմովը ներս մտավ: Սենյակում կիսախավար էր և առարկաները հազիվ էին որոշվում պատուհանի փեղկերի ճեղքից ընկած լուսնի թույլ շողերով: Գրոմովն անմիջապես որոշեց հանգամանքից օգտվել և դուրս գալով, ձեռքով նշան արավ ուշադրությամբ և անհանգստությամբ դեպի դուռը դիտող Գյորգուն: Նա էլ եկավ ու երկուսով ներս մտան:

Գրոմովը շոշափելով գտավ դռան փականը և այն չխկացրեց, իբր թե փակեց:

Այդ պահին պարտիզաններին մի բան էր միայն անհանգստացնում: Վախենում էին՝ թե կինը, որ պառկել էր արդեն ու տնքտնքալո՞վ շուռ ու մուռ էր գալիս անկողնում, հանկարծ զգալով իր սխալը, վախից ազմուկ աղաղակ չգցի և գործն այդպիսով փչացնի: Սակայն գործն ինչպես հաջող սկսվել էր, շարունակեց էլի հաջող ընթանալ: Կինը նկատեց, որ սենյակում երկու հոգի կան և նորից խոսեց.

— Որդի, հեռինդ, էդ ո՞վ է:

— Մերոնցից է, պարտիզան է,— ցածր, բայց էլի առաջվա ձայնի երանգով պատասխանեց Գրոմովը:

— Քիչ բարձր ասա, ձայնդ էլ կարծես նորից փոխվել է, ի՞նչ է, նորից մրսե՞լ ես...

— Ես եմ Մարիի հետ, մայրիկ, պարտիզան եմ, ձեզ հյուր եմ եկել, չվախենաս,— արդեն իր ձայնով, խոսեց Գրոմովը և մոտեցավ կնոջ մահճակալին՝ բարևելով նրան:

Կինը նստեց տեղում և բացականչեց.

— Պարտիզա՛ն... Վայ, եկած ճանապարհիդ մեռնեմ, դե ասա՛ Վանյայիցս մի տեղեկություն ունե՞ս, թե ոչ...

— Վանյան էլի այնտեղ է, միայն մենք եկել ենք մի քիչ պաշար տանենք: Եվ ես մենակ չեմ, մեր ընկերներից մեկն էլ է եկել ինձ հետ:

— Մարի, դե շարժվիր հարազատիս համար ուտե-

լիք հանի, քաղցած կլինի, ի՞նչ ես տնկվել էդտեղ փայտի նման,— դիմեց կինը հեռվում կանգնած Գյորգուն և ապա էլ՝ Գրոմովին.— այս անգամ ինչո՞ւ Վանյաս չեկավ:

— Դե, չհարմարվեց, հերթով ենք գալիս, միայն Մարին ախր դուրս գնաց, իսկ էս կանգնածը հետս եկած պարտիզանն է...

— Ի՛նչ ես ասում, հապա ինչո՞ւ մոտ չի գալիս:

— Մի քիչ ամաչկոտ է: Գյորգի, մոտ արի,— ձայնեց Գրոմովը:

Գյորգին մոտեցավ՝ կիսախավար սենյակում մի աթոռի կպչելով: Հասավ կնոջ մահճակալին ու սիրալիր բարևեց՝ միաժամանակ հազիվ զսպելով ծիծաղը:

— Դե նստե՛ք, նստե՛ք, ախ էն մեռածը ո՞րտեղ կորավ,— ասաց կինը, Մարիի հասցեին և սկսեց հագնվել, իսկ պարտիզանները նստեցին մահճակալից հեռու, աթոռների վրա:

Հագնվելուց հետո կինը, որ պառավ էր, սկսեց շատ բարեկամաբար զրուցել պարտիզանների հետ: Նա հետաքրքրվում էր իրենց գյուղացի պարտիզաններով ու բացի Վանյայի մասին շատ հարցեր տալուց, ուրիշ անուններ էլ էր հիշատակում: Պառավի հարցասիրությանը պարտիզանները շինծու պատասխաններով լրիվ բավարարում էին:

— Ինչո՞ւ չեկավ, է՛,— նորից բարկացավ պառավը զրույցն ընդհատելով և վեր կացավ ու ինքն իր հետ խոսելով սկսեց պարտիզաններին կերակրելու հոգ տանել:

Պարտիզանները նստել էին կիսախավարում, աթոռների վրա և ուրախությունից ժպտում էին:

— Ես քու բալեքը թաղեմ, Հիտլեր, մի լույսը ինչ է, լույսից էլ զրկվեցինք: Դե մութը տեղը արի պուլիկը գտի... Տեսնես որտե՞ղ է դրել անզգամը:

Շուտով պառավը սեղան բացեց և պարտիզաններին հրավիրեց մահճակալի մոտ գտնվող սեղանի շուրջը տեղ բռնելու:

Գրոմովն ու Գյորգին իրենց ավտոները մոտեցրին սեղանին և սկսեցին հաց ու պանիր ուտել, որը դրել էր պառավը նրանց համար։

Նրանք ուտում էին և հարցեր էին տալիս պառավին.

— Մայրիկ, շտաբի տեղը հիմի ո՞րտեղ է։

— Էլի ասում են, որ հին տեղն է։

— Այսինքն էն իքի մո՞տ...

— Ես լավ չգիտեմ, որդի ջան։

— Իսկ զորք շա՞տ կա հիմի էստեղ։

— Դա էլ չգիտեմ։ Ո՞վ է սիրտ անում տնից դուրս գա գյուղամեջ։

— Բա ո՞նց իմանանք։

— Դե էս․է՝ Մարիս կգա։ Թե էդ ո՞ւր կորավ... Լվացք է անում ախր ավազակների համար, նա շատ բան գիտի, բոլորը կասի...

Պառավի խոսքերն ուրախացրին պարտիզաններին։ Մի քիչ հետո ոտնաձայն լսվեց։ Պարտիզաններն զգաստացան և անմիջապես ձեռքերը վերցրին մինչ այդ իրենց ոտքերի արանքը դրած ավտոմատները։

Ոտնաձայնը կանգ առավ դռան առաջ և մեկն սկսեց բաց դուռը բախել։

— Խենթացել է շան աղջիկը։ Դե արի, էլի՛,—ձայն ավեց պառավը ներսից։

Դուռը բացվեց, ներս մտավ մի երիտասարդ կին, որը պառավին մայրիկ անվանեց, ապա նկատելով կանգնած երկու ավտոմատավորներին, հարցրեց.

— Ովքե՞ր էք։

— Իսկը և իսկը այսօր դժվել ես։ Քեզ հետ եկած պարտիզաններն են, ովքե՞ր են, — պատասխանեց մայրը։

— Պարտիզաննե՞ր։ Վայ դուք բարո՛վ եք եկել։ Վանյան ինչո՞ւ չեկավ,— ասաց Մարին առաջանալով և բարևեց նրանց։

Պարտիզանները նրան էլ սիրալիր ողջունեցին և շարունակեցին ուտելն ու զրույցը։

Նրանք իրենց գաղտնիքը Մարիի մոտ բացեցին:

— Ի՞նչ եք ասում, զարմացած բացականչեց աղջիկը,— ուրեմն դուք Վանյաենց՝ իմ եղբոր խմբից չե՞ք...

— Չէ, բայց մենք էլ ենք պարտիզաններ, այնպես որ միանգամայն հանգիստ եղիր: Մենք էլ քո եղբայրներն ենք և եկել ենք մի խնդրի համար,— ասաց Գյորգին:

Պարտիզանների խնդրանքով աղջիկն սկսեց մանրամասն տեղեկություններ տալ: Նա բավականին տեղեկություններ ուներ, որովհետև ինչպես մայրն էր ասել, աշխատում էր այդ գյուղի գերմանական շտաբի լվացքատանը:

— Ուրեմն ասում ես՝ էգպլիսի գերի աղջիկ տեսե՞լ ես:

— Տեսել եմ, եղբայրներ, ճիշտ ձեր ասածի նման: Հենց այսօր էլ տեսա: Էլի պահակով նկուղից տարան քննության: Ուղղակի արևելյան գեղեցկուհի է: Միայն չգիտեմ, թե ի՞նչ է արել, որ այդքան երկար ու բարակ քննում են և ուժեղ հսկողության տակ են պահում, ինքն էլ մի հասարակ կապավոր է...

— Շատ լավ: Հիմա պատմիր, թե դրանց շտաբն ինչ տեղում է, ուժեղ պահպանություն ունե՞ն, թե ոչ, շա՞տ զորք կա գյուղում, նաև այն նկուղի տեղը, որտեղ բանտարկված է աղջիկը:

— Աղջիկը հենց շտաբի նկուղում է բանտարկված: Երևի ուզում եք փրկել նրան: Դժվար կլինի: Ափսոս, որ ողջ խմբով չեք եկել: Էլի ամենահարմար ժամանակն այսօր է, որովհետև, գյուղում եղած առանց այն էլ փոքր զորախմբի մի մասն այսօր գնացել է պարտիզանների դեմ կռվելու, նրանց բռնելու:

— Ո՞ր կողմն են գնացել,— անհանգստացած հարցրեց Գյորգին:

— Այդ չգիտեմ:

«Հանկարծ մերոնց կողմը գնացած չլինե՞ն»— մտածեց Գրոմովը:

Վարդանյանի տված առաջադրանքն արդեն կատարված էր։ Պարտիզանները մի որոշ ժամանակ էլ զրուցեցին Մարիի հետ, իմացան Վանյայի պարտիզանական խմբի մոտավոր տեղը և շնորհակալություն հայտնելով թանկագին տեղեկությունների համար, վերջապես հրաժեշտ տվին։ Գրոմովը գյուղին լավ ծանոթ լինելով, Մարիի ասածների հիման վրա տեղերը պատկերացնում էր։

Երբ շնորհակալության ջերմ խոսքեր ասելով պարտիզաներն ուզում էին գնալ, Մարին ու մայրը թախանձագին խնդրեցին, որ իրենց ներեն...

— Ինչի՞ համար,— ապշած հարցրեց Գրոմովը։

— Նրա համար, որ ուտելու բան չունենք հետներդ դնելու։

— Շատ շնորհակալ ենք։ Ինչ է, մենք դրությունը չգիտե՞նք։ Ձեր արած լավությունն ամեն բանից վեր է,— ասացին պարտիզանները.— եթե գործներս հաջող գնա, մենք ինքներս ձեզ կօգնենք սննդամթերքով։

Նրանք դուրս եկան այդ տնից՝ չեմքին թողնելով մորն ու աղջկան, որոնք հայացքով ճանապարհ էին գցում անսպասելի հայտնված ցանկալի հյուրերին և մաղթանքի բառեր էին շշնջում, որ նրանք հաջողությամբ տեղ հասնեն։

Գրոմովն ու Գյորգին նույն ճանապարհով, առանց արկածի հանդիպելու, հասան «միջնաբերդը», երբ արդեն լուսադեմ էր։ Երբ հետախույզները քարայր մտան, այնտեղ մարդիկ դեռ քնած էին՝ բացի Վարդանյանից ու Կավալերիստից։

— Հը՞, ողջ եք, թե աղջիկ,— դիմեց Վարդանյանը նրանց։

Հետախույզները չհասկացան հարցի իմաստը և հարցական նայեցին Վարդանյանին։ Վարդանյանն զգաց, որ հայկական ասացվածքը բառացի թարգմանել էր ռուսերեն և ծիծաղեց,— այսինքն՝ ասում եմ, գործը հաջող անցա՞վ։

Գրոմովն սկսեց պատմել։ Երբ հասավ այն տեղին,

թե ինչպես է որպես աղջիկ զրույց արել պառավի հետ, լանդներն սկսեցին ծիծաղել:

— Հիմի ես ծեծում եմ դուռը, նա էնտեղից՝ «ты Мари?» «Да конечно я, мамаша»— ասում եմ ես մի քիչ ծոր տալով, միայն ծիծաղս էլ սատանի գալիս էր···

— Ուրեմն այդպես, ասում ես դա նրանց մոտ լըվացք անող է, և աղջիկն այնտեղ է, իսկ զինվորների մեծ մասը գնացել են պարտիզանների դե՞մ, հրաշալի, թող նրանք հեռվում պարտիզաններ որոնեն, իսկ մենք հենց այսօր, բայց ոչ ցերեկով, այդ դժվար կլինի, հենց այս գիշեր նրանց այցի կգնանք: Եթե անգամ աղջկան փրկելը չհաջողվի, այսինքն հանկարծ տեղափոխած լինեն, գոնե շտաբը կկարենք թղթեր ու զենքեր ձեռք կբերենք: Հենց հիմա պիտի ծրագիր մշակվի այդ գործի համար,— ասաց Վարդանյանն ավելի ոգևորվելով:

Ապա նա հարցրեց, Գրոմովին, թե՝ ծերուկի տան մոտերքո՞ւմն էր այդ տունը, թե ոչ:

— Չէ, գյուղի մյուս ծայրին է, ու շտաբն էլ նրա մոտերքում է:

Ախր մենք մեր ձեռքի տակ այդ գյուղի պլանն ունենք,— ասաց Վարդանյանը՝ նրանց տեղեկությունները լսելուց հետո:

Նա գրպանի թղթերը քրքրելով, դեռ թույլ ցոլքով այրվող խարույկի լույսով գտավ որոնածը և բացելով սկսեց ուշադիր զննել:

Կավալերիստը, Գրոմովն ու Գյորգին ևս սկսեցին դիտել պլանը՝ Վարդանյանի կողքերին կկզելով: Ըստ ձեռք բերված տեղեկությունների նրանք պլանի վրա ճշտեցին գերմանական շտաբի ու մյուս օբեկտների տեղերը, որից հետո Վարդանյանը հայտնեց իր ծրագիրը հարձակման մասին: Բառերը որոշակի, շեշտված ու հատ—հատ արտասանելով, նման այն բանակի գեներալին, որը քարտուղարին թելադրում է առաջիկա ճակատամարտի դիսպոզիցիան:

***

Ն. գյուղը, որ գրավված էր գերմանացիների կողմից, քնել էր արդեն: Քնել էին տներում բանի տեղավորված գերմանական զինվորները, ինչպես և բնիկ, այժմ սակավաթիվ բնակիչները, որոնց Գերմանիա չէին քշել՝ անպետք համարելով աշխատանքների համար: Արթուն էին միայն զանազան օբեկտների պահակները և գյուղի հարավում պաշտպանություն բռնած զինվորների հերթափոխը: Դեռ չէին քնել և շտաբի աշխատակիցներից ոմանք, ինչպես և շտաբի պետը:

Շտաբը գտնվում էր գյուղի կենտրոնական փողոցի վրա, ծայրամասին մոտ, միահարկ, բայց ընդարձակ մի շենքի մեջ: Բակում ընկած էր փողը կոտրված մի զենիթային հրանոթ, որի մոտ այդ ժամանակ մի զինվոր էր կանգնած՝ երկու ձիերի սանձերից բռնած: Ձիերից գոլորշի էր բարձրանում: Այդ ձիերով քիչ առաջ շտաբ էին ժամանել պարտիզանների դեմ ուղարկված պատժիչ ջոկատի պետն ու իր սպասյակը: Ջոկատի պետը եկել էր շտաբի պետին զեկուցելու իրենց արշավանքի արդյունքների մասին:

Սենյակներից մեկում, որի երկու պատուհանները նայում էին փողոցի կողմը, կարմիր մահուդով ծածկված գրասեղանի վրա մի մեծ և գեղեցիկ լամպ էր վառվում՝ զարդանկար ճենապակե լուսամփոփը վրան: Սենյակի պատուհանները ծածկված էին թավիշե թանձըր վարագույրներով: Սենյակում, սեղանի առաջ նստած էր մի զինվորական՝ երկաթե խաչը կրծքից կախած և սիգարը սեղմած ատամների մեջ: Նա գրում էր: Սեղանի վրա անկարգ թափված էին բաց ու ծալած քարտեզներ, ծրարների մի կույտ՝ մարմարյա թանաքամանի մոտ, իսկ սեղանի մի ծայրում դրված էր հեռախոսը:

Սպան, որ աշխատում էր, գերմանական բանակի մայոր էր և պաշտոնով՝ այդ շտաբի պետը: Նա գըլխաբաց էր: Նրա բավականին գեղեցիկ ու առնական

դեմքին, որի վրա, ի դեպ, մի երկար սպի կար՝ երկու տարի առաջ աղջկա պատճառով մենամարտելուց հիշատակ մնացած, միանգամայն հակապատկեր էին ներկայացնում գլխի մազերը, որոնք հիշեցնում էին կիսաայրված խոտի խուրձ, չնայած այն բանին, որ մայորն ամեն օր բավականին ժամանակ էր հատկացնում, ինչպես ինքն էր ասում, իր անիծյալ մազերի հարդարման համար: Սակայն ո՛չ օծանելիքները, և ո՛չ սանրերն ու խոզանակները չէին կարողանում այդ մազերն ինչպես հարկն է կարգավորել և նրանք հաղթական կերպով էլի ցցվում էին այս ու այն կողմ, խառնվում իրար՝ մեծ վիշտ պատճառելով մայորին, որը կոկետ կնոջ չափ իր արտաքինի նկատմամբ բծախնդիր ու չքամոլ անձնավորություն էր:

Նա ընդհատեց գրելը և գլուխը բարձրացրեց՝ լսելով դռան բախյունը:

— Herein[1]),— ասաց նա սիգարը բերանի մի անկյունից մյուսը տեղափոխելով:

Ներս մտավ պատժիչ ջոկատի պետը, որը հենց նոր էր իջել ձիուց և «Heil Hitler» ասելով պատվի առավ:

— Heil, bitte nehmen sie Platz[2]),— ասաց շտաբի պետը, և սպան նստեց սեղանի մոտ, բազմոցի վրա՝ մի կողմ հրելով մետաքսե բարձը:

— Նո՞ւ, հաջողությո՞ւնը,— ասաց շտաբի պետը:

— Հաջողություն չկա, պարոն մայոր:

— Հաջողություն չկա՞,— բարկացկոտ կրկնեց մայորը.— պարոն կապիտան, ես ստիպված եմ զեկուցելու բարձր հրամանատարությանը, որ դուք այստեղ, եթե այսպես կարելի է ասել, մի մանեկեն եք և ոչ գերմանական պատվարժան սպա... Պարտիզանները ձեր քթի տակ...

— Բայց, պարոն մայոր...

— Ոչինչ չեմ ուզում լսել: Դուք ապաշնորհ հրամա-

1) Մտեք:

2) Խնդրեմ, նստեցեք:

նատար եք: Դուք իմ ռեպրեսիաներից հետո պարտի-զանների տեղը ցույց տալու գործը հանձն առած, տե-ղանքին լավ ծանոթ մարդկանց չկարողացաք ինչպես հարկն է օգտագործել: Դա վկայում է ձեր ռազմական մտքի տկարության մասին: Ես չեմ կարող հանդուր-ժել, որ հայրենիքի ու ֆյուրերի կամա թե ակամա դավաճաններն անպատիժ մնան:

— Մեծահոգի եղեք, պարոն մայոր, էլի ժամանակ տվեք, գուցե վաղը մեզ հաջողվի: Խնդիրն այն է, որ մեզ առաջնորդող մարդիկ, թավուտների մեջ մեզ խճճելուց հետո իրենք փախչելու փորձ արին: Մեկին հաջողվեց փախչել, երկուսին խփեցինք և այդպիսով դարձյալ չհաջողվեց պարտիզանների բները գտնել: Վ.աղը ես ուզածդ օյինը կդնեմ այստեղ մնացած խո-զերի գլխին և նորից կարշավեմ:

— Ինչ կուզեք արե՛ք, դուրս եկեք ձեր մաշկից, գլուխներդ խփեցեք քարերին, բայց հաջորդ անգամ նման զեկույցով չներկայանաք: Ես ձեզ էլի եմ ժամա-նակ տալիս: Այժմ կարող եք գնալ:

Կապիտանը ոտքի ելավ ու հրաժեշտ տալով կո-տրված սրտով թողեց սենյակը: Բակում, դեռ քրտնած ձիերին մոտ ածող սպասյակին հրամայելով, որ էլի ձիերին պտտեցնի, ապա տանի ա-մի որոշ ժամանակ հետո, ինքը դիմեց մոտիկ տունը, որտեղ տեղավոր-խոռը, ինքը դիմեց մոտիկ տունը, որտեղ տեղավոր-վել էր:

Կապիտանի գնալուց հետո գայրացած մայորը ե-լավ տեղից և սկսեց անց ու դարձ անել սենյակում: Նրան մեծ տհաճություն էր պատճառել պարտիզաննե-րի դեմ կատարված ապարդյուն արշավանքը: Որոշելով որևէ բանով հանգստացնել իր ջղերը, նա հիշեց, որ այդ երեկոյան հեռախոսով իրեն հրաման էր տրվել դիվիզիայի շտաբից՝ իր մոտ արգելափակված «Ժաննա դ'Արկին» վաղն ուղարկելու հարևան գյուղը, դիվիզիայի շտաբ, քննության համար: Վճռեց նախքան ուղարկե-լը մի քիչ զվարճանալ այդ «Լորելայի» հետ. ինչպես իր մտքում անվանում էր մայորը գերի Ցոլիկին, որն

486—13

արդեն մի քանի օր էր, ինչ գտնվում էր իր տրամադրության տակ ու չնայած բոլոր խստություններին ու բռնություններին, հրաժարվում էր ցուցմունքներ տալուց։

Այժմ նա որոշեց քանի իր ձեռքին է այդ «Լորելլայը», բռնի կամ խաղաղ վայելել նրան։ Այդ մտքից լայնացան նրա ռունգերը, և որովհետև անասելի վավաշոտ մարդ էր, արդեն մտովի պատկերեց այն հաճույքը, որի մոլի սիրահարն էր նա և տոփանքից դողաց ողջ մարմնով։

Նա զանգահարեց։ Սենյակ մտավ ռումինացի ըսպասյակը, որ կրունկներն ուժեղ չրխկացնելով՝ «Հրամայեցեք» — գոռաց, պատվի վերցնելով ու ապուշի հայացքով նայելով տիրոջը։—Իսկույն վառիր պրիմուսը և երշիկ տապակիր,— հրամայեց մայորը։

— Վառել պրիմուսը և երշիկ տապակել,— կրկնեց կարգադրությունը ռումինացին ամպագոռ ձայնով։

Մայորն ստուգեց գոտուց կախված մաուզերը և դուրս եկավ սենյակից։ Նա դիմեց դեպի աղջկա բանտը՝ մի խոնավ ու փոքր նկուղ, որտեղ արգելափակված էր Ցոլիկը։ Մոտենալով պահակին նա հրամայեց դուռը բաց անել։ Մայորը գլուխը դռնից ներս կոխելով դուրս կանչեց գերուն, որը նստած էր խոնավությունից ցեխ դարձած ու բորբոսնած հողե հատակին։

Մայորը պատյանից հանեց մաուզերը և Ցոլիկին առաջ գցելով, պահակի հետ տարավ իր սենյակը։ Ապա պահակին հրամայեց, որ սպասի միջանցքում և զգաստ հսկի ու ոչ ոքի թույլ չտա դռանը մոտենալ։

— Ճիշտ այդպես, հսկել, ոչ ոքի թույլ չտալ դռանը մոտենալու,— կրկնեց պահակը և դուրս եկավ սենյակից ու կիսախավար միջանցքում կանգնելով սկսեց ծոծրակը քորել, իսկ մի քիչ հետո՝ դռան բանալու անցքով նայել ներս։

«Մայորի միտքը ծուռն է, մտածեց նա,— ախր մի քիչ առաջ քննեց։ Է, թող քեֆ քաշի...»

— Շուտ կլինի՞,— հարցրեց մայորը սպասյակին, երբ աղջկա հետ մնաց սենյակում:

— Շուտով պատրաստ կլինի, պարոն մայոր,— նորից կրունկներն աղմուկով իրար խփելով և բերանում մի բան պահած մարդու ձայնով, պատասխանեց ռումինացի սպասյակը: Նա բերանն էր դցել երշիկի մի մեծ կտոր, որը տիրոջ ներս մտնելու ժամանակ չէր հասցրել կուլ տալ:

— Դե, սեղան պատրաստիր,— ձեռքերը շփելով հրամայեց մայորը առանց նրան նայելու, ապա ռուսերենով դիմելով դռան մոտ կանգնած գունաթափ դեմքով Ցողիկին, որն իր գեղանի աչքերը կկոցել էր լույսից, առաջարկեց նստել բազմոցին:

Աղջիկը ոտքի վրա հազիվ էր կանգնում: Նրա գլխի վերքը բորբոքվել էր բժշկական օգնություն չստանալու հետևանքով և կիսաքաղց վիճակից ու ապրումներից սաստիկ թուլացել էր: Բայց նա չընդունեց մայորի հրավերը և շարունակեց կանգնած մնալ:

Մայորը նրա թևից քաշելով տարավ դեպի բազմոցը և հրեց վրան: Թուլացած աղջիկն ակամայից նստեց:

Մայորը դարձավ արդեն սեղանը պատրաստած և կոնյակի շիշն ու բաժակը այնտեղ դնող սպասյակին ու հրամայեց դուրս գնալ: Սպասյակն անմիջապես թողեց սենյակը: Մայորը մաուզերը դրեց սեղանին՝ տապակած երշիկի ու բուտերբրոդների ափսեների մոտ և սկսեց մի այնպիսի հայացքով դիտել աղջկան, որ կարծես այդ պահին նրա աչքերից կեղտաջուր էր թափվում: Նա իր տռփալի հայացքով կարծես ուզում էր հիպնոսել Ցողիկին և նրան նույնպես տրամադրել: Ի դեպ, մայորն իր հայացքի զորության մասին այն կարծիքն ուներ, որ գեղեցիկ սեռի ոչ մի անհատ ի վիճակի չէ ընդդիմանալու, երբ ինքը տրամադրված նայի: Նա այդ փորձել էր Ֆրանսիայում և իրենց նվաճած մյուս երկրներում: Այդ խնդրի մասին զրուցելով մտերիմ սպաների հետ և պարծենալով իր հաջողու-

թյուններով, նա հաճախ դասեր ու խորհուրդներ էր տալիս նրանց, թե ի՞նչպես պիտի նայել կնոջ աչքերին: Նման խոսակցությունները նա եզրափակում էր անթիվ անգամներ կրկնած իր ֆրազով, որն իրեն ուղղակի հանճարեղ մի միտք էր թվում.— «Կնոջ աչքերին այնպես պիտի նայե՛ս, որ նա ուղղակի հղիանա...»

Եվ հիմա նա իր «ներքին կրակի հրասյունն» ուղղել էր Ցոլիկի դեմքին, բայց զարմանում էր, որ չի կարողանում նույնիսկ նրա հայացքին արժանանալ:

Աղջիկն այնպիսի անտարբեր ձևով էր նստել, որ կարծես մայորը գոյություն չուներ նրա համար:

«Ի՜նչ սքանչելի դիմագծեր... Անտիկ Հելլադան է կարծես մարմնավորված այս էգի մեջ»,— մտածում էր դեռ լուռ նրան դիտող մայորը, իրեն համակած ցանկասիրությունն ու աղջկան բռնաբարելու անզուսպ մղումը մի կերպ զսպելով: Նա ուզում էր նրան համոզել և այդպիսով ավելի քաղցր դարձնել հաճույքը:

Եվ նա հենց համոզելուց էլ սկսեց: Նստելով Ցոլիկի կողքին, կպավ նրան ու թևից բռնեց՝ ինչ որ մրմնջալով: Աղջիկը զարշանքով մի մի հայացք գցեց նրա դեմքին ու ոտքի կանգնեց: Մայորը նույնպես կանգնելով և դեռ հույսը չկտրած՝ սկսեց խոսել:

— Ես, Թանկագինս, իմ կարիերայի զոհման գնով քեզ կազատագրեմ, կամուսնանամ քեզ հետ, և մենք շուտով, պատերազմից հետո, կապրենք իմ վիլլայում, որը մտադիր եմ կառուցել տալ Ղրիմում, Սև ծովի ափին, խաղողի այգիների մեջ...

Ցոլիկն իրեն համակած անհուն զզվանքից ու զայրույթից քիչ էր մնում խեղդվի և չանթացայտ աչքերը պտտեցնում էր սենյակում ինչ որ բան որոնելով: Նրա հայացքը կանգ առավ սեղանին դրված մաուզերի վրա և նա մի քայլ արավ դեպի սեղանը:

Աղջկա բոլոր շարժումներն ուշադիր դիտող մայորի հայացքից չվրիպեց ոչինչ և նա վերցրեց հրազենը սեղանից:

Այդ ժամանակ, դրսում ուրիշ իրադարձություն-

ներ էին կատարվում: Շտաբի դիմացի կիսավեր շենքի
պարսպի ուղղությամբ զինված մարդիկ էին սողում
շղթա կազմած: Նրանք մոտ տասնհինգ հոգի էին:
Նրանցից մի քանիսն արդեն մտել էին շտաբի բակը և
թաքնվել այնտեղ՝ հաստաբուն ծառերի ետևում: Նը-
րանցից երկուսը, որ ավելի մոտ էին շենքի անկյունին,
իրենց թաքստոցից պարզ տեսնում էին դեռ համաչափ
քայլերով գնացող եկող զինված ժամապահին, որը
հասնելով շենքի հակադիր ծայրին ու շրջվելով՝ գա-
լիս այնքան էր մոտենում իրենց, որ դարանակալները
պահում էին իրենց շունչը, մտածելով որ կլսի:

Երբ պահակն արդեն երկրորդ անգամ, պարտի-
զանների դարան մտնելուց հետո մոտեցավ կոճղին,
թաքնված մարդկանցից մեկը, որ Կավալերիստն էր,
ձեռքով հրեց կողքինին՝ հասկացնելով, թե լավ րոպե
է: Սակայն կողքինը, որ Վարդանյանն էր, բացասա-
կան շարժում արավ, ու երբ պահակը շրջվեց, այս ան-
գամ արդեն ինքը Վարդանյանը հրեց Կավալերիստին
և նրա հետ վայրկենապես դուրս ցատկեց թաքստոցից
ու դաշույնով հարվածելով ժամապահի թիկունքին,
դաշույնը թողեց մարմնի մեջ ցցված և ձեռքը գցեց
բերանին: Հաջորդ վայրկյանին, Կավալերիստը հար-
վածեց ժամապահին՝ կրծքի տակից: Պահակն առանց
ծպտուն հանելու, տապալվեց գետին:

— Սրա հաշիվը վերջացած է,— շշուկով ասաց
Վարդանյանը արդեն իրենց մոտ եկած մյուս երկուսին
և կարգադրեց, որ պարսպի տակ դիրք մտածները տե-
ղափոխվեն շտաբի բակը և պառկեն ծառերի ու թմբերի
հետևում՝ մինչև հաջորդ ազդանշանը:

Մարդկանցից մեկը, որ գերմանական շինել էր հա-
գել, նախօրոք ստացած հրահանգի համաձայն սկսեց
պահակի նման համաչափ քայլել շենքի առաջ:

Վարդանյանն ու Կավալերիստը մոտենալով շտաբի
պետի պատուհանին, սկսեցին վարագույրի ճեղքից
դիտել ներս: Նրանք տեսան, թե ինչպես սպան ինչ որ
ասելով ձեռքը գցեց սենյակի մեջտեղում կանգնած

աղջկա վզին և քաշելով դեպի իրեն, համբուրեց: Աղջիկը երկու ձեռքով ուժեղ ետ հրեց սպային և թքեց ուղիղ նրա երեսին:

Կատաղած սպան մի ձեռքով մաքրելով թուքը և ինչ որ բղավելով, մյուս ձեռքով բարձրացրեց մաուզերը և ուղղեց աղջկա ճակատին...

«Կսպանի»,— անցավ Վարդանյանի մտքով և նա իսկույն գրպանից հանելով ատրճանակը, նշան վերցնելով կրակեց: Մայորն ընկավ, Ցոլիկը վախեցած ճիչ արձակեց ու վազեց դեպի սենյակի անկյունը: Կրակոցն ու ճիչը լսելով, միջանցքում, դռան մոտ պահակ կանգնած զինվորը ենթադրեց, թե մայորն սպանեց աղջկան ու չհամարձակվեց ներս մտնել: Սակայն լսելով կոտրվող ապակիների ձայնը (այդ ժամանակ Վարդանյանը Կավալերիստի հետ արդեն կոտրում էր պատուհանը) նա ներս մտավ. հենց այդ ժամանակ, սակայն, Կավալերիստը խփեց նրան իր ավտոմատից կրակելով:

Վարդանյանի ազդանշանով պարտիզանների մի մասը խուժեց միջանցքը և սկսեց կոտորել սպիտակեղենով տեղերից դուրս թռած շտաբայիններին:

Հենց առաջին կրակոցի ժամանակ գյուղի արևելյան մասից գնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակ սկսվեց, լսել էին և ռուսական ուռայի հուժկու ձայներ և մարտական կանչեր:

Պատուհանն արդեն ջարդած Վարդանյանն ու Կավալերիստը մի երկուսի հետ սենյակ թռան: Վարդանյանի հրամանով Կավալերիստը պատուհանով դուրս բերեց Ցոլիկին, որը գլխի ընկնելով, թե ինչ է կատարվում, իրեն արդեն հավաքել ու սրտապնդվել էր:

Կավալերիստը նրան սենյակից դուրս բերելով վազեց ձիերի կողմը և նրանցից մեկի սանձը կտրելով ցատկեց վրան, ապա մի ձեռքով պահելով սանձը և զսպելով ձիուն, վար թեքվեց մի քիչ ու աղջկան ասելով՝ «Նստի՛ր»,— ձեռքը գցեց նրա գոտկատեղից, օգնեց նստելու և առնելով իր գավազը, սլացավ դեռ

դարանում եղող իրենց մի քանի ընկերների մոտով, դուրս եկավ փողոց, քշեց գյուղից դուրս, անտառի ուղղությամբ:

Իրենց սենյակներից դուրս թափված շտաբի աշխատակիցներն ու սպաները, որոնք սպիտակեղենով էին, զենքը ձեռքներին, սակայն խուճապահար եղած ու մըթնում չիմանալով՝ ում վրա են կրակում, աննպատակ մի քանի անգամ կրակեցին՝ ցանկանալով իրենց առաջ երևացող կասկածելի ստվերների արանքից ճողոպրել և դուրս փախչել, սակայն հենց այդտեղ հնձվեցին մի քանի ավտոմատներից տրված կարճ հերթերից: Պարտիզաններից ևս երկու հոգի ընկան:

Միջանցքը մաքրելուց հետո պարտիզանները մըտան սենյակները և այնտեղ վառվող, ներս քաշած լամպերի լույսով սկսեցին հափշտակել ձեռքերն ընկած թղթերը, զենքերը, պարենը:

Վարդանյանը Գյորգու հետ մաքրազարդեց մայորի կաբինետը՝ վերցնելով եղած բոլոր թղթերն ու քարտեզները և անմիջապես դուրս եկավ սենյակից ու հեռանալու ազդանշան տվեց:

Նույն պահին փողոցի կողմը հսկող պարտիզաններն սկսեցին կրակել: Ճարճատեց և գնդացիրը: Դիմացից, գյուղամիջի կողմից նույնպես կրակոցներ էին լսվում:

Մոտիկ տներից դուրս թափված սպաներ ու զինվորներ էին դրանք, որ գալիս էին շտաբի կողմը, սակայն գնդացրային և ավտոմատային ուժեղ կրակի հանդիպելով նրանք խուճապի մատնվեցին և անկարգ կրակելով ցրվեցին՝ դիրքեր գրավելու համար:

Գյուղի մի այլ մասում դեռ լսվում էին ուժեղ կրակոցներ, որոնք սակայն, գնալով հեռանում էին: Այդ կրակողները և «ուռռա» բղավողները նույնպես պարտիզաններն էին՝ Գրոմովի գլխավորությամբ, որոնք Վարդանյանի կարգադրությամբ վերցրել էին գնդացիրներից մեկը և ավտոմատներ ու անզենների հետ միասին մոտեցել էին գյուղին՝ հակառակ ծայրից,

և շտաբի մոտից լսված առաջին կրակոցների հետ աղմուկ ու կրակ էին սկսել, միաժամանակ շտապ հետ քաշվելով՝ պահակակազմի ուշադրությունը շեղելու նպատակով:

Շուտով պարտիզանները դաշտում էին գտնվում: Վարդանյանի կարգադրությամբ նրանք դադարեցրին կրակն ու ամենայն արագությամբ սկսեցին վազել դեպի անտառ: Իսկ գյուղի միջից դեռ աննպատակ կրակում էին:

***

Մոտ կես ժամ հետո պարտիզաններն արդեն անտառում էին և շուտով հավաքվեցին պայմանավորված տեղում: Նրանց հետապնդողներ չկային: Վարդանյանն ստուգեց մարդկանց և ցավով տեսավ, որ երեք հոգի չկան: Նա հրամայեց անմիջապես դեպի քարայրը դիմել, սակայն այդտեղ մի մեծ դժվարություն ստեղծվեց: Մինչ այդ որոշ չափով լույս երկինքն այժմ բոլորովին մթնեց և դժվար դարձավ գտնել քարայրի ճանապարհը:

Այդ հանգամանքը, ինչպես և այն միտքը, թե կավալերիստն արդյոք հաջողությամբ կարողացա՞վ փախցնել աղջկան, սաստիկ անհանգստացնում էր բոլորին:

Պարտիզանների միջից մի քանի թույլ հառաչներ ու հեծեծանքներ լսվեցին:

— Ի՞նչ է, այդ ո՞վ է,— ցածր ձայնով հարցրեց Վարդանյանը:

— Ես եմ, ընկեր պետ, ոչինչ, մի թեթև վիրավորվել եմ,— ասաց մեկը:

— Ես է՛լ, ես է՛լ,— ձայն տվին նաև ուրիշ երկու հոգի:

— Ախ, սիրելիներս, հո շատ ծանր չե՞ք,— հարցրեց Վարդանյանը: Խորհուրդ տալով պատռել շապիկները և կապել վերքերը, նա ինքը պատռելով իր շապկի փեշը, կապեց նրանցից մեկի ձեռքի վերքը:

— Տղերք, զգույշ, լավ լսեցեք ու պատրաստ ե-
ղեք,— ասաց Վարդանյանը կամաց ձայնով և հանկարծ զգաց, թե ինչպես մի փափուկ բան սկսեց քսմսվել իրեն ոտքերին:

Վարդանյանը երկյուղով ներքև նայեց և նկատեց, որ դա ծերունու շունն է...

— Սատկես դու,— ասաց Վարդանյանն ու շոյեց նրա գլուխը.

— Այդ ի՞նչ է,— հարցրեց Գրոմովը:

— Շունն է:

— Շո՞ւնը, էլ ի՞նչ դարդ ունենք...

— Ինչպես թե...

— Հիմա նա մեզ տեղ կհասցնի,— ասաց Գրոմովն ուրախ եղանակով և նույնիսկ մի դեպք պատմեց իր որսորդական կյանքից, թե ինչպես մի անգամ մութ ժամանակ էլի մոլորվել է անտառում և իր որսի շունը առաջնորդել է իրեն մինչև տուն:

— Շարժվեցե՛ք, շունն էլ կշարժվի ու նրա հետևից կգնանք:

Պարտիզանները գնացին Գրոմովի հետևից, որը կրնկակոխ հետևում էր շանը՝ հաճախ ձեռքով շոշա-
փելով ու շոյելով նրա մեջքը: Բավականին տեղ շունը նրանց տանում էր շավղով, հանկարծ կանգ առավ և ուղիղ գծով վազեց դեպի աջ: Բոլորը կանգ առան վա-
րանմունքով:

— Էդ էլ քո շունը: Հիմի է՞լ գնանք ետևից,— տրտնջաց Գյորգին:

— Նապաստակի հոտ առավ Երևի, ոչինչ, էլի կգա,— հանգստացրեց Գրոմովը և շանը կանչելու շվվոց արձակեց:

Մի քիչ հետո հևալով վերադարձավ շունը ու մի երկու անգամ կեղծավորաբար քսմսվելով Գրոմովի ոտքերին, էլի շարունակեց ընթանալ՝ ագին մեջքի վրա ոլորած:

Մի երկու ժամ հետո նրանք արդեն քարափի մո-
տերքումն էին: Շունը քայլքից հանկարծ վազքի անցավ

ու կորավ նրանց մոտից: Տղաներն ստիպված եղան էլի կանգ առնել, և չնայած Գրոմովի բոլոր ջանքերին, որ նա թափում էր շանը հետ կանչելու համար, իր խմացած բոլոր տեսակի շվոցներն արձակելով հնար չեղավ նրան ետ բերել:

Սակայն շուտով շատ մոտիկից և բարձր տեղից պարտիզանները մի ուրիշ սուլոց լսեցին և դրանից մի քիչ անց՝ հաչի ձայն:

— Տղե՛րք, նրա հաչի ձայնն էր,— շշնջաց Վարդանյանը:

— Ո՞ւմ:

— Կավալերիստի:

— Հապա մի ձայն տանք,— առաջարկեց Գրոմովը:

— Իսա՞և,— ձայն տվեց Վարդանյանը:

— Ես եմ, ընկեր սերժանտ,— մթնում պարզ հնչեց Կավալերիստի ձայնը:

— Եկե՛ք ուղիղ, արդեն քարափի տակ եք,— շարունակեց նա:

— Իսկ շունն էդտեղ եկա՞վ, հարցրեց Վարդանյանը:

— Մոտս կանգնած է:

— Դե մի հետ ուղարկիր,— ձայնեց Գրոմովը:

— Եկողը չի, մնում է որ ես գամ ու հետս բերեմ...

Տղաներն սկսեցին շարժվել ձայնի ուղղությամբ, իսկ Կավալերիստն էլ շան ուղեկցությամբ վերևից ընդառաջ եկավ: Մի քանի րոպեից հետո բոլորը քարայրումն էին:

— Հաջող տեղ հասա՞ք,— հարցրեց Վարդանյանը Կավալերիստին՝ դեռ շավղի վրա:

— Շատ հաջող, ընկեր սերժանտ,— պատասխանեց նա և մի քանի խոսքով պատմեց: Առանձին արկածներ չէին պատահել, միայն այրի մոտ, ձիուց իջնելուց հետո ձին փախել էր...

Քարայրում դարձյալ վառվում էր խարույկը: Կրակի կողքին տղաները տեսան իրենց ազատած Ցողիկին,

որը նրանց քարայր մտնելու ժամանակ վեր կացավ նստեց պառկած տեղից ու ժպտաց իր ազատարարներին։

— Էլ բոլորովին չվախես, քո՛ւյրս, քառասուն հսկա եղբայրների քույր ես դու հիմա։ Գերմանացիները չէ, որ վիշապներն էլ փորձ անեն նորից քեզ մեր ձեռքից խլելու, չեն կարողանա,— ասաց Վարդանյանը զվարթ ու մոտեցավ նրան, ձեռքը բռնեց և ողջունեց։ Ձեռքն այրվում էր կարծես, այնքան ջերմ էր այն։ Վարդանյանը նկատեց խուլ խարույկի լույսով, թե ինչպես պղտորված են աղջկա աչքերը, և թե ինչպես միայն քաղաքավարությունից է նա աշխատում նստած մնալ։

— Դու հիվանդ ես քույրս, մի քիչ հաց կեր և պառկիր, հանգստացիր,— ասաց Վարդանյանը քնքշանքով ու գորովանքով։

— Շատ շնորհակալ եմ, ես ոչինչ... Մի քիչ, միայն գլխիս ցավն է ինձ սպանում։ Չնայած վերքը, որ դեռ ճակատում եմ ստացել, այնքան էլ մեծ չէ, բայց ինձ թվում է, որ բորբոքվել է վերջին անգամ ինձ ծեծելուց հետո...

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Վարդանյանը։

— Ցողիկ։

— Ցողի՞կ։ Այդ հո հայի անուն է, չլինի հա՞յ ես...

— Այո, հայ եմ։ Իսկ դո՞ւք։

Ինքն էլ չիմացավ, թե ինչու, Վարդանյանն զգաց, որ իր աչքերը լցվեցին և իրեն մի կերպ զսպելով ասաց.

— Ես էլ եմ հայ։

— Շատ ուրախ եմ, որ այստեղ եղողների հետ միասին, մեր հայ ժողովրդի պատիվն այդպես բարձր ես պահում,— ժպտաց աղջիկը։

«Սա քաջության հետ կարգին խելք էլ ունի։ Ես էլ ասում էի՝ դալի-տալի է...»— մտածում էր Սիմոնյանը՝ լսելով նրան։

— Դու ե՞րբ գերի ընկար,— հարցրեց մի պարտիզան։

— Վերջերս, գերմանացիների կատարած մի հոգեբանական գրոհի ժամանակ:

— Մի պատմիր էլի, թե ի՞նչպես եղավ,— շարունակեց հարց տվողը:

— Չէ՛, վերջ, վատ է զգում իրեն, Թողեք լավանա, հետո կպատմի,— ընդմիջեց Վարդանյանը:

— Իսկապես, Թողեք,— ձայնեցին և ուրիշները:

— Դե մի հալա կեր, քաղցած կլինես,— ասաց Գրոմովը՝ իր տոպրակից ուտելիք հանելով և դնելով Ցոլիկի մոտ, շինելի վրա:

Պարտիզաններից ամեն մեկը ուրևէ փաղաքշական խոսքով կամ ուտելիք տալով նրան աշխատում էին ուրախացնել աղջկան: Նույնիսկ Սիմոնյանը մոտենալով ասաց.

— Հիշո՞ւմ ես, սեստրա, որ ասի՝ փախի՛, էկան, բայց դու բոլորիս ետ տվիր...

Ցոլիկը Թախծոտ ժպտով նայեց նրան ու գլխով արավ և ավելացրեց.— Դու այն «հերոսն ե՞ս...»: Սիմոնյանն զգալի շիկնեց... Շատ ստիպելուց ու խնդրելուց հետո, Ցոլիկը միայն կես բուլկի կերավ, ապա ջուր խնդրեց և խմելուց հետո պառկեց մի քանի շինելներից պատրաստված տեղում, խարույկին մոտիկ: Նա անհանգիստ շարժումներ էր անում պառկած տեղում և անքուն էր:

Վարդանյանը տխուր Թառանչ արձակեց: Իսկ աղջիկը դիտում էր Վարդանյանին և նրան Թվում էր, Թե մշուշի միջից է տեսնում տղայի դեմքը, որը զարմանալի կերպով հիշեցնում էր Գրիգորյանին... Ցոլիկը շուտով սկսեց անկապ բառեր արտասանել: Վարդանյանը ձեռքը դրեց նրա ճակատին և ձայն տվեց խարույկի մոտ նստած ու մյուսների հետ հիվանդի կողմը նայող Գրոմովին:

— Գրոմով, մի սա Թրջիր, ինձ տուր,— ասաց նա՝ իր Թաշկինակը պարզելով նրան: Վերցնելով Թաց Թաշկինակը, Վարդանյանն այն դրեց զառանցող աղջկա

Ճակատին ու նստեց նրա մոտ՝ վշտահար դիտելով տանջվող հիվանդին:

— Ծանր է երևում, վայ թե հանկարծ...—ասում էր Գյորգին իր մոտ նստած Կավալերիստին:

— Ո՞վ գիտե ինչքա՜ն են չարչարել,— իր միտքն էր հայտնում մի ուրիշը:

Տաքության մեջ տանջվող Ցողիկին մերթ թվում էր, թե իբր ինքը խրամատումն է, մահացու վերք ըս- տացած Գրիգորյանի մոտ, նրա գլուխը գրկած, մերթ իբր թե գրոհի է գնում: Այն պահին, երբ նա շրջվեց՝ դեմքով դեպի կրակը և լույսի ճառագայթներն ընկան աչքերին, նրան թվաց՝ թե հրափայլ հագուստով, եր- կու գաճաճ, մինչև ոտքները հասնող մորուքավոր ծե- րունիներ դուրս եկան կրակից, վազեցին իր կողմը ու սկսեցին միմյանց մորուքից քաշելով կռվել իրար հետ: Վարդանյանը լսելով աղջկա զառանցանքները, միաժա- մանակ մտածում էր այն մասին, որ շատ լավ կլինի, եթե ինքը մի հնարքով հաջողացնի և աղջկան ուղարկի սովետական կողմը՝ շտաբից գրավված թղթերի հետ միասին:

«Այնտեղ նրան հիվանդանոց կուղարկեն և կփրկվի: Այլապես՝ այստեղ գուցե մահանա...»

Նա միջոցներ էր մտածում, թե ինչ կերպ կարելի է այդ գործը գլուխ բերել: Նա գիտեր, որ առաջին գը- ծից անցնելը հանաք բան չէ և այն էլ մի հիվանդի, ոտքի վրա հազիվ կանգնող անձնավորության...

Վարդանյանն իր այդ խորհրդածություններին մասնակից արեց ընկերներին: Նրա մտահղացումը բո- լորն էլ հավանեցին ու նրա հետ սկսեցին միջոցներ մը- տածել:

— Ա՛յ թե ձի լիներ մեր տրամադրության տակ,— ասաց Կավալերիստը:

— Ձին չի օգնի, ձիով դժվար կլինի,— նկատեց Վարդանյանը:

— Իսկ ի՞նչ կասեք, ընկեր պետ, եթե մենք այդ

բանը մեքենայով անենք: Ասենք՝ մոտոցիկլետով,— հարցրեց Գյորգին:

— Իսկ մոտոցիկլետ ո՞րտեղից,— հարցրին մի քանիսը:

— Մոտոցիկլետ կա...

— Իսկապես, հեռատես մարդ ես, Գյորգի, չմոռացեցիր, որ բոլոր մոտոցիկլետները փչացնենք,— խոսեց մի ուրիշ պարտիզան, հիշելով որ նա մի մոտոցիկլետ է պահել իրենց ազատագրվելու օրը:

— Բայց ո՞վ կղեկավարի,— հարցրեց Վարդանյանը:

— Ես հմուտ եմ այդ գործում, ընկեր պետ,— ասաց Գյորգին:

— Իսկապե՞ս, թերևս մոտոցիկլետով հնարավոր լինի, քանի որ այդ բանի համար առաջին հերթին մեծ արագություն է հարկավոր,— նկատեց Վարդանյանը,— բայց ուրիշ շատ դժվարություններ ու հարցեր կան, որոնց մասին պետք է մտածել նախքան այդ լուրջ քայլը ձեռնարկելը: Օրինակ, ուղեկալում բռնվելու խնդիր կա: Եթե այդ էլ, ասենք, հաղթահարվի, ճակատի գծում կրակի տակ ընկնել կա...

— Ուղեկալի պահակների հետ մենք կարող ենք «զրույցի բռնվել» և նրանց զբաղեցնել,— ասաց Գրոմովը:

Բոլորը մտածում էին, ապա Վարդանյանն սկսեց դիտել իրենց գրաված քարտեզները, որոնք մեծ մասամբ այդ տեղերի քարտեզներն էին:

— Ճանապարհն առանց ուրիշ բնակելի կետ մտնելու, անտառից դուրս գալուց հետո, մի քանի պտույտներ է տալիս և ուղիղ մտնում է առաջին գիծը: Միայն մի տեղ ուղեկալ ունի, ինչպես նշանակված է այստեղ,— հայտնեց Վարդանյանը՝ քարտեզն ուսումնասիրելուց հետո:

— Այդ արդեն հաջողություն է,— նկատեց Գյորգին և Կավալերիստի ու մի քանի ուրիշ պարտիզաննե-

րի հետ մոտեցավ Վարդանյանին և նույնպես սկսեց զննել նրա ծնկներին դրված բաց քարտեզը:

Մնում է հետախույզներ ուղարկել՝ ճանապարհը ուսումնասիրելու,— ասաց Գրոմովը:

Նրանք որոշեցին հաջորդ օրը այդ նպատակով մարդիկ ուղարկել:

Վերջացնելով և հաստատ որոշում ընդունելով, նրանք պառկեցին քնելու:

***

Անտառով անցնող ճանապարհի այն մասի մոտ, որը ավերվել էր Վարդանյանի խմբի կողմից, հաջորդ օրվա գիշերը պարտիզանները դարձյալ դարան էին մտել:

Ճանապարհն արդեն պատրաստված էր և պարտիզանները տեսնում էին, թե ինչպես երբեմն ավտոներ կամ մոտոցիկլետներ են անցնում տարբեր ուղղություններով:

— Պիտի այն պահին շարժվեք, երբ նորից ճակատի ուղղությամբ գնացող մեքենաներ անցնեն: Այդ ավելի նպատակահարմար կլինի,— ասաց Վարդանյանը կավալերիստին ու Գյորգուն, որոնք Գրոմովի հետ կանգնած էին այն տեղում, ուր թագցրված էր մոտոցիկլետը:

— Իսկ դու, քույրս հիմա ի՞նչպես ես զգում քեզ,— դարձավ Վարդանյանը Ցոլիկին, որին բերել էին քարայրից և արդեն նստեցրել մոտոցիկլետի զամբյուղի մեջ՝ նրա մոտ տեղավորելով մի տոպրակի մեջ դրված այն բոլոր կարևոր թղթերը, որոնք ձեռք էին բերել գերմանական շտաբից:

— Ոչինչ, շնորհակալ եմ, հիմա մի քիչ ավելի լավ եմ:

— Լավ լինես... Ամենաուշը մի քանի ժամից արդեն մերոնց կողմում կլինեք:

— Եթե միայն հաջողվի:

— Անպայման կհաջողվի, հույսը երբեք չպետք

կորցնել, Թիկնապահներդ էլ կարգին քաջեր են, հույս ունեցիր, քույրս:

Ուղեկալի մոտ արդեն հիմա մերոնցից կլինեն և ըստ անհրաժեշտության կգործեն: Ինչ վերաբերում է ճակատի հատվածին, ճանապարհը համարյա թևով է անցնում, մի խոսքով հաջողության հավանականությունը շատ մեծ է: Խնդրում եմ հենց որ լավ լինես, իմ ասած հասցեով նամակ գրես մերոնց. իսկ մենք, ո՞վ գիտե, գուցե նորից տեսնվենք, այն էլ Երևանում...

— Հուսանք, եղբայրս,— դուք էլ իմ հասցեն խընդրեմ չմոռանաք...— պատասխանեց Ցոլիկը ժպտալով և ուղղեց իր հագած գերմանական շինելի օձիքը:

— Կարգին փաշիստներ եք դարձել հա՛,— կատակեց Գրոմովը՝ խոսքն ուղղելով Կավալերիստին ու Գյորգուն, որոնք ծպտվել էին:

Ճակատի ուղղությամբ մի մարդատար ավտո անցավ և նրա ետևից էլ՝ երկու մոտոցիկլետ:

— Դե՛, ժամանակն է, բարեկամներս, մեզ չմոռանաք,— ասաց Վարդանյանը և շշուկով մի քանի վերջին խորհուրդներ տվեց ու նշան արավ, որ մոտոցիկլետը հանեն թագստոցից:

Մեքենան հանեցին ճանապարհի վրա: Ապա Վարդանյանն ու Գրոմովը գրկախառնվելով իրենց ուղեվորվող ընկերների հետ, բարի երթ մաղթեցին նրանց: Սըրտառուչ հրաժեշտ տվին և Ցոլիկին, որը շնորհակալության ջերմ խոսքեր ասաց, ապա Կավալերիստը ձեռքի գնդացիրը վերցրած, բարձրացավ մոտոցիկլետ և նստեց Ցոլիկի կողքին, իսկ Գյորգին անմիջապես գործի գցեց մեքենան, ավտոմատն ուղղեց ուսին և գլխարկը վերցնելով, վերջին հրաժեշտ տվեց բոլորին, նստեց, ապա արագընթաց մոտոցիկլետն առաջ վարեց:

Ճանապարհից մի քանի ոլորաններ անցնելուց հետո պարտիզանների մոտոցիկլետը դուրս եկավ անտառից: Գյորգին նկատեց իրենցից մի քիչ առաջ անցած ավտոն ու մոտոցիկլետները, որոնք ավելի փոքր արագությամբ էին ընթանում:

Շուտով ծպտված պարտիզաններն աչքից կորցրին

Թշնամու մեքենաները և նրանց փոխարեն տեսան մի գորշ մասսա, որը դանդաղ շարժվում էր խճուղով: Ընդհուպ մոտենալով, պարտիզանները տեսան, որ այն մի փոքր զորախումբ է, որը ճանապարհ տալով արդեն իրեն մոտից անցած մեքենաներին, շարունակում էր գնալ խճուղու ձախ եզրով:

Շուտով զորասյունը շատ ետ մնաց, և էլի երևացին առաջից գնացող մեքենաները: Միաժամանակ, բավականին հեռվում, խճուղու վրա երևաց այս ու այն կողմ ճոճվող մի կարմիր լույս:

Առաջից գնացող մեքենաները դանդաղեցրին իրենց ընթացքը և հասնելով լույսին, կանգ առան, որովհետև այդտեղ էր գտնվում գերմանական ուղեկալը:

Պահակը կարմիր լապտերի լույսով ազդանշան տալով, կանգնեցրեց ընթացող ավտոմեքենան՝ փաստաթղթերը ստուգելու համար: Այդտեղից արդեն սըկըսվում էին գերմանական դիրքերը:

Երբ ավտոն կանգ առավ ու նրանցից մի քիչ հեռու կանգ առան մոտոցիկլետները, բացվեց ավտոյի կաբինի դուռը և այնտեղից մի բարձրաստիճան զինվորական գլուխը դուրս հանեց:

Ժամապահը լապտերի լույսով դիտելով նրա ազդեցիկ դեմքն ու կրծքին փայլող նշանշանները, անմիջապես ճանաչեց ճակատի այդ հատվածի իրենց հրամանատարին, և ձգվելով, պատվի վերցրեց՝ «Heil Hitler»․ գոչելով:

Զինվորականը պատասխանեց նրա ողջույնին ու գոհունակություն հայտնեց լավ հսկելու համար, ապա կարգադրեց, որ մոտոցիկլետներն էլ բաց թողնի և նշան տվեց շոֆերին շարժվելու:

— Ճիշտ այդպես, ձերդ... ություն,— գոչեց պահակը, երբ արդեն ավտոն շարժվել էր տեղից:

Գյորգին նկատելով որ կարմիր լույսի մոտ կանգ առան իրենց առաջից գնացող մեքենաները, մինիմալ արագություն հաղորդեց իր մեքենային և կանգ առավ նրանցից ոչ այնքան հեռու: Ապա տեսնելով նրանց

շարժվելը նորից, Աբեվ ընթացք վերցրեց, մտածելով այդ միջոցով պահակին հարկադրել չկրակելու, քանի որ կրակելու դեպքում վտանգ կստեղծվեր և մյուս մեքենաների համար:

Ի զարմանս Գյորգու և ընկերների ուղեկալի պահակը ոչ միայն չկրակեց, այլև կանգնելու ազդանշան էլ չտվեց՝ այդ մոտոցիկլետն ևս համարելով գլխավոր հրամանատարի ավտոմեքենային հետևողներից: Կավալերիստը, որ արդեն պատրաստվել էր կրակին կրակով պատասխանելու, ձեռքերում ամուր սեղմելով թեթև գնդացիրը, տարակուսած վար բերեց զենքը:

Այսպիսով, պարտիզանների մոտոցիկլետը մտավ խճուղու այն հատվածը, որն անցնում էր դիրքերի դասավորության միջով: Այդ դիրքերը ձգվում էին մոտ չորս կիլոմետր խորությամբ:

Ուղեկալից մոտ երկու կիլոմետր անցնելուց հետո սպայի ավտոմեքենան և մոտոցիկլետները դուրս եկան խճուղուց ու նրա մի ճյուղով շարժվեցին դեպի ձախ:

Գյորգին շարունակեց ընթանալ առաջ: Գիշերվա այդ պահին ճակատում գրեթե լռություն էր տիրում, ինչպես այդ հաճախ է պատահում, երբ երկուստեք դադարում են կրակելուց ու մեծ մասամբ հետախույզներն են գործում: Պարտիզանների մոտոցիկլետն աղմկելով խորացավ թշնամու դասավորության մեջ և հասնելով հրթիռներով լուսավորված տեղամասին նկատելի դարձավ թե՛ գերմանացիների և թե՛ սովետական զորքի համար:

Մոտոցիկլետի անսպասելի հայտնվելն այդ ուշ պահին, առաջավոր գծում, հույժ կասկածելի թվաց մոտիկ խրամատում պառկած գերմանական սպային, և նա առանց այլևայլության տեսնելով հակառակորդի կողմն ընթացող մեքենան, ավտոմատից սկսեց կրակել նրա ուղղությամբ:

Կավալերիստն անմիջապես շրջվեց կրակի կողմը և իր բառերով ասած, սկսեց գնդացիրը «ժարիտ անել»:

Կրակոցներն ուժեղացան։ Սովետական դիրքերից լսելով հրաձգության ձայնը և ենթադրելով, որ դա թշնամու սովորական խարդախություններից է, սկսեցին հարվածել իր իսկ կրակով իրեն հայտնաբերած սպայի խրամատին, ու փոխ-հրաձգություն սկսվեց առաջավոր դիրքերի միջև։

Մինչ այդ մոտոցիկլետն ընդհուպ մոտեցավ սովետական և գերմանական սահմանագծին։ Գերմանական դիրքերից արձակված գնդակները սուլում էին պարտիզանների շուրջը։ Գյորգին գնալով ավելի մեծ արագություն էր հաղորդում մեքենային։

Հանկարծ կավալերիստը մի հառաչ արձակեց և ընդհատեց կրակը։ Թշնամու գնդակը նրան խոցեց ուսից և նա այլևս ի վիճակի չէր կրակելու։ Գնդացիրը նրա ձեռքից ընկավ մոտոցիկլետի մեջ։ Նույն պահին մոտոցիկլետի վրա սկսեցին կրակել սովետական դիրքերից։ Ամենայն հավանականությամբ նրանք կընկնեին յուրայինների գնդակներից, եթե երջանիկ պատահականությամբ մոտոցիկլետը շուտով չընկներ մեռյալ,— այսինքն՝ չգնդակոծվող տարածության մեջ։

Ճանապարհն այդտեղից գգալի թեքություն ստացավ և ընկավ մի բնական գոգավորության մեջ։ Գըն-դակներն արդեն բարձրից էին անցնում և պարտիզանները տեսնում էին լուսատու գնդակները, որոնք սուրում էին իրենց գլխավերևում։ Լինելով ռազմական փորձի և նուրբ ըմբռնողության տեր անձնավորություն, Գյորգին օգտագործեց վայրկյանը՝ արագությունը նվազեցնելով մինիմումի։

Ցոլիկը թույլ տնքոցներ էր արձակում, որը միանում էր կավալերիստի մերթ ընդ մերթ արձակած զայրացած թառանչներին։ Գյորգին տեղեկացավ ընկերների վիճակի մասին։

— Ուզո՞ւմ ես՝ կապենք, եթե արյունը շատ է գալիս,— ասաց նա կավալերիստին։

— Ոչ, դրա ժամանակը չէ, բամբակ եմ սեղմել վրան, դու քշելուն նայիր, շուտ անենք...

— Բայց որ կապեինք, լավ կլիներ, թող ես փորձեմ,— ասաց Ցոլիկը՝ գլխի թաշկինակը քանդելով:

— Ձի ուղի, հետո, շատ ենք ժամանակ կորցնում, քշիր, ինչո՞ւ կանգնեցիր,— ասաց նա՝ միաժամանակ դիմելով Գյորգուն:

— Հա, հիմա արդեն լա՛վ կքշես, ճանապարհն այստեղ քանդված է,— քրթմնջաց Գյորգին և հուզված շուրջը նայեց, երբ մի քիչ էլ առաջ գնալուց հետո նկատեց խճուղու պայթեցված կամուրջը:

Հասնելով քանդված կամուրջին նա մոտոցիկլետն արգելակեց ու ձեռքն առավ իր ավտոմատը և հարցական նայեց ընկերներին, որով կարծես ուզում էր ասել, թե հիմա ի՞նչ անենք...

— Ոտքով գնանք, մենք պետք է որ հիմա մերոնց կողմում լինենք,— ասաց Կավալերիստը:

Հենց նոր էր նա շշուկով արտասանված իր խոսքը վերջացրել, երբ քանդված կամուրջի քարերի ետևից հանկարծ միանգամից տասը կարմիր բանակայիններ դուրս թափվեցին և շրջապատեցին ծպտված պարտիզաններին՝ հրացաններն ուղղելով նրանց:

Այդ Կարմիր բանակի զորամասից ուղարկված մի հետախուզական ջոկ էր, որ խնդիր էր ստացել կենդանի լեզու ձեռք բերել: Ջոկի պետը մեզ վաղուց ծանոթ Թոշակի խնդիրն էր: Նա իր ջոկով մի փոքր անցել էր առաջին գծից՝ մոտենալով այն տեղամասին, ուր ենթադրվում էր, որ հրթիռներ արձակող գերմանացիների խրամատներ պիտի լինեն:

Իրենց թաքստոցից նա նկատելով դանդաղորեն դեպի իրենց շարժվող մոտոցիկլետը, որոշեց, որ այդ անպայման դիվերսիայի նպատակով ճակատի գիծն անցնող մոտոցիկլետ է և հրամայեց մարտիկներին, որ մեքենան քանդված կամուրջին հասնելուն պես, ժամանակ չտան՝ նրան ուղղությունը փոխելու...

Այժմ նայելով այդ երեք, իր կարծիքով, գերմանացիներին, որոնք գցել էին զենքերն ու ձեռքերը վեր էին

բարձրացրել, նա ուրախությունից քիչ էր մնում տեղում թռչկոտի:

«Ա՛յ, բախտս բանեց, ոչ թե մեկ, այլ երեք հոգի բռնեցի. և այն էլ ոչ թե ինչ որ հասարակ զինվորներ, այլ մոտոցիկլետով ճակատն անցնող դիվերսանտներ», — մտածում էր նա:

— Մենք հանձնվում ենք, բայց մենք գերմանացիներ չենք,— իրենց հերթին Թոշակի խնդրից ավելի ուրախացած ասացին երեք ծպտյալները:

— Տես սրիկաներին,— բարկացավ Թոշակի խնդիրը,— ուզում են մեր գլուխը պտտեցնել... Ռուսերեն են խոսում... Բոլոր շպիոններին ես հինգ մատիս նման գիտեմ: Լռե՛լ և այլևս ոչ մի խոսք: Թե մեկ էլ ասեք էք գերմանացիներ չենք, երեքիդ էլ այստեղ կխփեմ առանց շտաբը հասցնելու:

— Ախր, բարեկամս, փորձ արավ բացատրվել այս անգամ արդեն կավալերիստը:

— Լա՛վ, թող մեզ տանի շտաբ,— կամաց ասաց Ցողիկը:

— Պա՛, պա՛, պա՛, այս մեկն էլ կին է երևում:

Պարտիզանները տեսնելով որ այդ ջոկի հրամանատարին բան հասկացնել չի լինի, որոշեցին առ ժամանակ լռել և միայն խնդրեցին, որ իրենց անմիջապես շտաբը տանեն:

— Հանգիստ եղեք, տանելու ենք,— ասաց Թոշակի խնդիրը և հրամայեց իր մարդկանց, որ խուզարկեն նրանց: Խուզարկությունից հետո Ցողիկի և ընկերների խնդրանքով թույլատրվեց կավալերիստի վերքը կապել, որից հետո հետախույզները Թոշակի խնդրի հրամանով երեքի ձեռքերն էլ կապեցին ու վերցնելով նրանց զենքերը տոպրակի թղթերի հետ միասին, տարան:

***

Հետախույզները Թոշակի խնդրի գլխավորությամբ «կենդանի լեզուներին» հասցրին դիվիզիայի շտաբը: Թոշակի խնդիրը զեկուցեց հերթապահ լեյտենանտին

ու խնդրեց հայտնել դիվիզիայի հրամանատարին, որ իրենց ընդունի;

Հետախույզների մի մասին դրսում թողնելով, Թոշակի խնդիրն իր հետ վերցրեց երկու հոգի և ծպտվածներին շրջապատած, հերթապահ լեյտենանտի առաջնորդությամբ, նրանք ներս մտան դիվիզիայի հրամանատար Մելիքյանի կաբինետը։

Գնդապետ Մելիքյանը, որ մի աժդահա և լայնաթիկունք մարդ էր, կանգնած էր գրասեղանի մոտ և որոտընդոստ ձայնով խոսում էր հեռախոսով, իսկ սենյակի վերին անկյունում դրված մի ուրիշ գրասեղանի առաջ նստած մի մայոր, իր մոտ՝ սեղանին թեքված կապիտանի հետ ինչ որ նշումներ էր անում քարտեզի վրա։

Ընդարձակ սենյակը պայծառ լուսավորված էր մեծ լամպի լույսով, որը կախված էր առաստաղից։ Մի պատի տակ աթոռներ կային դրված, այդ նույն պատից երկու քարտեզների վերևում կախված էր Ստալինի մեծադիր նկարը՝ մարշալական հագուստով։

Թոշակի խնդիրը մարդկանց հետ ներս մտնելով պատվի առավ՝ դեմքով դառնալով դեպի Մելիքյանը։

Մելիքյանն առանց հեռախոսի փողը դնելու՝ գլխի շարժումով ողջունեց նրան և ձեռքով նշան արավ, որ սպասի,— ապա ավարտելով հեռախոսով տված իր հրամանը և լսափողը վայր դնելով, նա նայեց եկածներին։

— Ընկեր գնդապետ, կենդանի լեզու ձեռք բերելու համար կատարված հետախուզության ժամանակ ...— նորից պատվի վերցնելով ու դռան մոտից մի քայլ առաջանալով, զեկուցեց Թոշակի խնդիրը․ Մայորն ու կապիտանն ևս ընդհատելով իրենց աշխատանքը սկսեցին ուշադիր լսել։ Երբ Թոշակի խնդիրը վերջացրեց զեկուցումը, Մելիքյանը ժպտալով նրան մոտ կանչեց և ձեռքը դնելով ուսին, ասաց․

— Դու, եթե չեմ սխալվում, դասակդ կորցրած լեյտենանտն ես, չէ՞...

— Ճիշտ այդպես, ընկեր գնդապետ:

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, տեսնում եմ, որ լավ ես գործում և եթե այդպես շարունակես, ես հարց կհարուցեմ...

— Ընկեր գնդապետ, ինձ խնդիր էր տրված մի «լեզու» բռնել: Ինչպես տեսնում եք...

— Լավ է, շատ լավ է, ժպտալով շարունակեց Մելիքյանը և դառնալով «գերիներին», ուշադիր դիտելով նկատեց, որ նրանցից մեկը, որ աղջկա դիմագծեր ուներ, հազիվ էր ոտքի վրա կանգնել, գլուխը կպցրած պատին և աչքերը խփած, իսկ երկրորդի ուսից արյան մի բարակ շիթ էր ձգվում...

Մելիքյանը կարգադրեց նրանց նստել՝ ցույց տալով աթոռները: Ուղեկցող բանակայիններին և Թոշակի խնդրին կարգադրեց՝ սպասել դրսում:

Բանակայիններն իրենց բռնած գերմանական թեթև գնդացիրն ու ավտոմատը՝ թղթերով լի տոպրակի հետ դրեցին սեղանի մոտ՝ հատակին և Թոշակի խնդրի հետ դուրս գնացին:

— Նու, թարգմա՞ն կանչենք, թե՞ ռուսերեն լավ գիտեք,— դիմեց Մելիքյանը «գերիներին»:

Գյորգին ոտքի կանգնելով, պատվի առավ և լայն ժպտալով, սկսեց զեկուցել:

— Ընկեր գնդապետ, մի փոքր թյուրիմացություն է: Մենք երեքս էլ ձեր դիվիզիայի մարտիկներից ենք և այս աղջիկն այն հայտնի կապավորն է...— Ու Գյորգին մանրամասն պատմեց ամեն ինչ:

Մելիքյանը մայորի ու կապիտանի հետ զարմացած լսում էր նրան՝ սկզբում դեռ հավատ չընծայելով: Ապա կարգադրեց կապիտանին՝ բացել տոպրակը: Թղթերի, դոկումենտների ուսումնասիրությունից և մանրամասն հարցաքննությունից հետո ամեն ինչ պարզվեց...

— Ահա թե ի՛նչ,— հայրական խանդաղատանքով լի իր խոշոր աչքերը հառելով երեքի վրա ծիծաղելով ասաց Մելիքյանը, երբ համոզվեց ճշմարտության մեջ: Բայց դուք երկուսդ վիրավորված եք: Իսկ այդ սերժանտը, որ այնտեղ գործում է, մեր անհայ

տացած սերժա՞նտն է, Վարդանյա՞նը,— հարցրեց Մելիքյանը:

— Այո:

— Հայ է՞,— հարցրեց մայորը:

— Այո՛,— պատասխանեց Մելիքյանը:

— Բայց, ընկեր գնդապետ, ըստ այս թարմ և շատ արժեքավոր տեղեկությունների, ես կարծում եմ, որ մեր ընդունած հարձակման պլանը պիտի փոփոխվի,— ասաց մայորը՝ շարունակելով գերմանական շտաբից գրավված քարտեզների ու հրամանների ուսումնասիրությունը և մի քարտեզ վերցնելով մոտեցավ Մելիքյանին ու բերանից հանելով ծխախոտը, մատը դնելով քարտեզում եղած նշումների վրա, շարունակեց,— հակառակորդի այս բնագիծն ուժեղ պաշտպանված է և նոր դոտեր են կառուցել այստեղ...

— Այո՛, այո՛, ընկեր մայոր,— գլխով դրական շարժում արավ Մելիքյանն ու վերցրեց հեռախոսափողը՝ նոր կարգադրություններ անելու:

Ապա իսկույն, նա նորից զանգահարեց, և երբ ներս մտավ մի բանակային, կարգադրեց կանչել հերթապահ բժշկին և ուտելիք բերել: Եկավ հերթապահ բժիշկը և հենց այնտեղ կապեց Կավալերիստի վերքը՝ քթի տակ ինքն իրեն խոսելով, թե գնդակը վերքի մեջ է մնացել: Ապա նա փոխեց Ցոլիկի գլխի վիրակապը, որից հետո նրանց ուտելիքներ մատուցվեց:

Երբ պարտիզանները Ցոլիկի հետ միասին հաց էին ուտում, Մելիքյանը ներս կանչեց Թոշակի խնդրին, որը ներս մտնելով, պատվի առավ և զարմանքով լի մի հայացք գցեց «դիվերսանտների» վրա, որոնք կարծես խրախճանքի էին նստել:

«Վա՜յ բա՛խտ, այս անգամ է՞լ...»,— մտածեց նա:

— Բարեկամ, բանից պարզվում է, որ դու՝ գայլաձուկ բռնելու փոխարեն, եթե կարելի է այսպես ասել, ուրիշ «որս» ես գցել ուռկանդ... Բայց ոչինչ, զգաստությունդ գովելի է: Հիմա կարող ես գնալ քո մարդկան-

ցավ. խսկական դայլաձկներ կրունես և հաջողության դեպքում անձամբ կներկայանաս ինձ ...

—Ինչպե՞ս թե, ընկեր գնդապետ, ուրեմն սրանք...

— Պարտիզաններ են:

Ցոլիկը նայելով Թուշակի խնդրին, զգաց որ ծանոթ դեմք է, բայց չկարողացավ հիշել, թե ով է: Թուշակի խնդիրը պատվի վերցնելով, մորմոքվող սրտով գնաց սենյակից:

Մելիքյանը տեսնելով որ իր հյուրերն ուտելը վերջացրին, ասաց.

— Հիմա ձեզ հագուստ կտրվի: Կկարգադրեմ, որ հիվանդանոց տանեն ձեզ երկուսիդ: Ինչ վերաբերում է Ձեզ,— ասաց նա դիմելով Գյորգուն,— ես Ձեզ մի ամիս արձակուրդ եմ տալիս:

— Ընկեր գնդապետ, ինձ արձակուրդ հարկավոր չէ:

— Հրամայում եմ,— ասաց Մելիքյանը և Գյորգին ժպիտով համաձայնվեց:

— Ինչ վերաբերում է չքանչաններին՝ կտրվի,— շարունակեց Մելիքյանն ու նորից զանգը խփեց:

Մելիքյանը հրաժեշտ տվեց երեքին, որոնք պատվի վերցնելով ու գնդապետի ձեռքը սեղմելով լեյտենանտի հետ դուրս եկան սենյակից:

***

Ձյուն էր գալիս, սակայն եղանակն այնքան տաք էր, որ ձյունի փաթիլներն ընկնելով գետին անմիջապես հալվում էին, ամենուրեք՝ դաշտերում ու ճանապարհներին գոյացնելով մի զզվելի ցեխ:

Արդեն կեսօրից անց էր, երբ Կ. գյուղում գտնվող զորամասից մի քանի ավտոներ դուրս եկան՝ լի զինավոր կարմիր բանակայիններով: Ավտոներն սկսեցին խճուղով ընթանալ՝ ուղղություն վերցնելով դեպի երկաթուղային կայարանը, որը վեց ժամվա հեռավորության վրա էր գտնվում:

Ավտոների յուրաքանչյուր ուժեղ ցնցումի հետ ճըչում էին ծանր վիրավորները, իսկ համեմատաբար թեթևներն աշխատում էին այնպես անել, որ իրենց վիրավոր անդամներին կպչող չլինի, ու երբ չնայած նախազգուշական միջոցներին, կպչող էր լինում նրանց վերքերին, նրանք սեղմում էին իրենց ատամները՝ աշխատելով ծանրերի նման չխվան չգցել:

Վերջից ընթացող ավտոյի մեջ էին գտնվում Կավալերիսոն ու Ցոլիկը: Նրանց գերմանական տարազն արդեն փոխված էր և երկուսի վերքն էլ լավ վիրակապված, սակայն անչափ թույլ էին զգում իրենց:

Կավալերիսոի ուսի մեջ մնացած գնդակը դեռ չէին հանել, իսկ Ցոլիկի վերքի բորբոքումը շարունակվում էր:

Կավալերիսոը մտքում հայհոյում էր շոֆերին, թե ինչու մի քիչ հանգստ չի քշում և, իսկապես, շոֆերի խելքը կարծես գլխին չէր, որովհետև հանկարծ այնպես էր արգելակում մեքենան, որ վիրավորներն ուղղակի միմյանց գլխի էին թափվում ճչալով, ապա անմիջապես մեծ արագություն էր վերցնում:

Վիրավորներն այդ պահերին ամենաբազմազան տիպի հայհոյանքներ էին ուղղում շոֆերի հասցեին:

Հանկարծ շոֆերը մեքենան կանգնեցրեց, դուրս եկավ կաբինից ու բղավեց.

— Հապա, տղերք, իջե՛ք:

— Ի՞նչ պատահեց,— ձայն տվին միանգամից շատերը:

— Իջե՛ք, շուտ իջե՛ք, տեսնեմ կխամուշտակս հո տակներիդ չի՞ մնացել,— ասաց շոֆերը երերալով և կրծքով հենվեց բորտի տախտակին:

— Քշի՛ր, հետո կգտնենք,— գոչեց նրա օգնականը՝ նույնպես կաբինից իջնելով ու աչքով արավ զարմացած վիրավորներին և ցուցամատով խփեց իր կոկորդին, հասկացնելով, որ ընկերը խմած է:

— Լա՛վ, լա՛վ, հետո կգտնես: Եթե տակներիս լի-

նի, հո չի՞ կորչելու,— խաղաղությամբ ուզեց գործը վերջացնել մի վիրավոր:

— Ի՛նչ, չուտ, գիտե՞ք ինչ կիսամուշտակ է, տրաֆեյնի է, հասկանում ե՞ք, տրաֆեյնի... Տակներից որ մնա, կարյունոտեք:

«Դե հիմա էս սրիկային Ֆյադլիմի օրը մի գցի»,— մտածում էր կատաղությամբ նրան նայող Կավալերիստը:

— Նո՛ւ, վերջ տուր հիմարությանդ և մեքենան քշիր, ապա թե ոչ,սպառնաց նրան մի վիրավոր լեյտենանտ՝ ձեռքը տանելով ատրճանակին:

— Ես էլ ունեմ, ո՞ւմ ես վախեցնում, ես հերոս եմ,— եղավ հարբածի սպառնալի պատասխանը:

— Ապուշ, չա՞տ ես հիմարություններ անելու,— բղավեց վիրավոր լեյտենանտը և պատյանից հանեց ատրճանակը:

— Սատկացրու դրան,— բղավում էին վիրավորներից ոմանք:

— Ես հիմա կքշեմ, ընկեր լեյտենանտ,— միջամտեց շոֆերի օգնականն ու լեյտենանտին բռունցքով սպառնացող շոֆերին քաշելով և համոզելով, մի կերպ գցեց կաբինը՝ խոստանալով իր կիսամուշտակը տալ նրան, ինքը նստեց ղեկի մոտ:

— Դե փափախ հավաքի,— բղավում էր շոֆերը ներսից:

— Ի՛մ աղբեր, հավաքելու եմ, մաջալ տուր, կռիվը վերջանա...

Շոֆերը կարծես համաձայնվեց սպասել... Եվ օգնականը գործի գցեց մեքենան ու սկսեց վարել:

Մեքենան հիմա համեմատաբար քիչ ցնցումներ էր գործում:Վերջապես երեկոյան դեմ այդ մեքենան էլ մյուսների հետ մտավ մի գյուղ, ուր հիվանդանոց կար: Ծանր վիրավորներին սանիտարներն իջեցրին այդտեղ, որոնց թվում և՝ Ցողիկին ու Կավալերիստին:

***

Փետրվարյան մի բուք գիշեր, Պրոխլադնի կայարանը մտավ սանիտարական գնացքը։ Երբ վայող հեռագրաթելերի ձայների միջից կայարանում լսվեց գնացքի աղմուկը, սպասարանից կառամատույց շտապեցին վիրավոր բանակայինները՝ իրենց ուղեկցողների հետ միասին։ Նրանց մեծ մասն արդեն եղել էին դաշտային հիվանդանոցներում և այժմ շատերը մասնագիտական բուժման համար ուղարկվում էին ուրիշ հիվանդանոցներ։Կային և այնպիսիները, որ ապաքինվելուց հետո արձակուրդ էին գնում։

Գնացքը վիշապաձայն փնչալով կանգ առավ։ Անմիջապես բացվեցին վագոնների դռները, վիրավորներին ուղեկցողները սկսեցին նրանց տեղավորել՝ լուսաքողարկման պատճառով ամայի թվացող, բայց իրոք լուսավոր ու տաք վագոններում, որոնց մեջ ուրիշ կայարաններից նստած շատ վիրավորներ կային։

Մի վագոնի մոտեցան Կավալերիստն ու Ցողիկը, որոնք կայարանում հանդիպել էին միմյանց։ Նրանք արդեն երկու ամիս պառկել էին տարբեր հիվանդանոցներում ու դեռ լրիվ չէին բուժվել։ Ցողիկն ուղեգիր էր ստացել Երևանի մի գոսպիտալի հասցեով, իսկ Կավալերիստը Մախաչկալա էր գնում։ Կայարանում նրանք խնդրեցին ուղեկցողին, որ իրենց մի վագոնում տեղավորի, պատճառաբանելով, թե հարազատներ են։ Նրանք գիտեին, որ քիչ ժամանակ էր մնում բաժանվելու, գուցե և ընդմիշտ, և ահա նրանք, որ ոչ այնքան սովորական մարտական արկածներ էին ունեցել միատեղ և այդ պատճառով բարեկամական համակրանքի սերտ կապերով կապվել միմյանց հետ, ուզում էին գոնե մի քիչ ևս միասին լինել։

Նրանց թույլ տվեցին միասին տեղավորվելու և նրանք վագոն բարձրանալով, մտան մի կուպե։

Կուպեի օդը հագեցած էր յոդի ու այլ դեղորայքի

հոտով: Այստեղից ու այնտեղից լսվում էին հառաչանքներ: Ցոլիկը պառկեց, իսկ Կավալերիստը նստեց:

Չնայած վագոնում եղող տհաճ հոտին ու հառաչանքներին, ուրախ տրամադրություն էր իշխում վիրավորներից շատերի մեջ:

«... Վերադա՛րձ, տո՛ւն, ընտանիք»,— այս մտքերով էին տարված շատերը և ծխում ու զրուցում էին նրանք՝ կատակներ անելով ու ծիծաղելով.

— Отец утку давай,— ձայն տվեց հանկարծ վերևի պոլկայում պառկած մի վիրավոր: Վիրավորներին սպասարկող ծերունուց նա միզաման էր ուզում:

Ծերունին հեռու էր գտնվում և ահա մոտից անցնող քույրերից մեկը տվեց նրան բաղանման ապակյա ամանը:

— И мне водку давай,— ձայն տվեց փոքր ինչ անց մի ուրիշը մոտիկից, որը ոտքից էր վիրավորված:

— Ես քեզ օղի ո՞րտեղից տամ հիմա,— ասաց զարմացած քույրը:

— Ուտկա է ուզում այդ ուզբեկը,— բացատրեց նստածներից մեկը և բոլորը ծիծաղեցին: Իրոք, նա օղի չէր ուզում:

Թե կավալերիստի և թե Ցոլիկի ուշադրությունն առաջին հերթին կուպեն մտնելուց հետո գրավեց մի փոքրիկ, հինգ-վեց տարեկան խարտյաշ մազերով աղջիկ, որը նստած էր աջ թևը բինտով վզից կապած մի բանակայինի մոտ: Բանակայինը տեղավորվել էր պատուհանի մոտ, գլուխը դրել էր պատուհանի առաջամասի փոքր սեղանին և քնել էր:

Հետաքրքրված՝ Ցոլիկն ու Կավալերիստն սկսեցին հարցեր տալ փոքրիկ աղջկան, որը սակայն ամաչելով մատը բերանն էր դրել ու բոլոր հարցերին պատասխանում էր միայն մի բառով՝ չգիտեմ...

Գնացքը շարժվեց: Ցնցումից արթնացավ քնած բանակայինն ու գրպանից հանելով ծխախոտի տուփը, սկսեց չարչարվելով մի ձեռքով ծխախոտ փաթաթել:

Ցոլիկը, որ նրա գլխմաց էր տեղավորված, խնդրեց, որ ինքը փաթաթի:

Վիրավորը տարիքով մարդ էր: Նա ոտքի ելավ ու մոտենալով Ցոլիկին, թուղթն ու ծխախոտի տուփը տվեց նրան և մի պահ ուշադիր դիտելով ասաց,— աղջիկս, դու հայ չե՞ս:

— Հայ եմ:

— Վա՛յ, ես քեզ մատաղ, դե հայերեն խոսի էլի՛, ախր ես էլ եմ հայ...

Կավալերիստը նրան ուշադիր դիտելով վեր թռավ տեղից և իր առողջ ձեռքը դցելով նրա պարանոցով, գրկեց և ուրախացած բացականչեց:

— Սիրելի Զավարյան, մի՞թե էս դու ես...

— Վա՛հ, կավալերի՞ստ,— իր հերթին, ոչ պակաս զարմանալով և ուրախացած բացականչեց վիրավորը: Նա սկսեց զարմացած դիտել կավալերիստին, որին վաղուց Վարդանյանի ու Գրոմովի հետ անհետ կորած էին համարում ինքն ու ընկերները:

— Այ մարդ, դե պատմի՛ր, ախր էս ո՞րտեղից լույս աշխարհք ընկար, մենք էլ ասում էինք... Վարդանյանից ու Գրոմովից որևէ տեղեկություն ունե՞ս, թե էնպես կորան տղերքը:

— Ողջ են, շատ լավ են, դու ձեզնից պատմիր, չնայած արդեն մի քիչ լսել եմ: Ափսո՛ս Գրիգորյան...

— Ափսոս ափսոսի պե՞ս, էնքան ծառայել եմ, բայց Գրիգորյանի նման լեյտենանտ օլմազ... Ասում ես Վարդանյանից ու Գրոմովից տեղեկություն ունե՞ս:

— Դեռ հալա Սիմոնյանից էլ...

— Ի՛նչ ես ասում...

Ցոլիկը լսելով կավալերիստի և անծանոթ բանակայինի զրույցը լեյտենանտ Գրիգոր Գրիգորյանի մասին, որով այդ մոմենտին զբաղված էր իր միտքը, մնաց խենթացածի նման և արցունքները հազիվ զսպելով, հարցրեց Զավարյանին.

— Դուք նրա բանակայինն էք եղե՞լ:

— Հա բա, աղջիկ ջան, մեր լեյտենանտն էր: Նա

էն օրը խփվեց, երբ գերմանացիք տանկերով մեծ հարձակում գործեցին ու հետո հոգեբանական գրոհ եղավ: Բայց էդ ինչի՞ ես էդպես լաց լինում, չլինի՞ բարեկամ է եղել քեզ:

— Դուք ուրեմն Մոզդոկի ուղղությամբ էի՞ք ու այդ օրը մասնակցում էի՞ք,— արցունքները մաքրելով և պառկած տեղից նստելով, հարցրեց Ցողիկը:

— Ես հենց էդ օրն եմ վիրավորվել: Ախր նրանք որ հոգեբանական գրոհի էկան, ու մենք հակահարձակման անցանք, բոլորիս առաջից մի աղջիկ էր գնում... Աղջիկ, էն ի՜նչ աղջիկ էր... Ուռաա քաշեց ու դրանց վրա քշեց... էդ ժամանակ, ախր չասի, լեյտենանտի խփվելուց հետո ես էի հրամանատարությունը ինձ վրա վերցրել ու հակառակի պես գնդացիրը տեղափոխելիս արկը կպավ մեր գնդացրին, համ գնդացիրը շարքից դուրս էկավ, համ էլ երկու գյուղացական տղա ունեինք, նրանք մահացան: Ես էդ բանը տեսնելով, մնացած բանակայիններիս հրամայեցի, որ որպես հետևակային գործեն ու ինքս առաջ ընկա ուռաա բղավելով: Բղավում էինք ու կրակում, կրակում էինք ու բղավում, իսկ էդ ասլանի ծուռ աղջիկն էլ դարձյալ առաջներից էր գնում...

— Ցրից կկանգնե՞ր, որը փչացավ, որը գերի ընկավ, երբ ավինամարտի մտանք: Մի էրկուսին գլխովս չպրծեցի ու աշխատում էի, որ մոտենամ էդ աղջկան՝ օգնության համար: Աղջիկ որն է՝ աջ ու ձախ կոտորում էր, մինչև անգամ դրոշակը տանողին սատկացրեց... Միայն մտածում էի, թե կկորվի մեզանից ու կնեղեն, քու արևը գիտենա, հենց էդպես էլ եղավ... Նրան օգնության հասնելուս ժամանակ բահով էլ մեկին հողոց հանդուցելոց արի ու էդտեղ վիրավորվեցի:

— Մենք հաղթեցինք, միայն ուրախ չէինք հաղթանակից հետո. ինչպես թե կրակ լիներ վառվելիս գլխներիս վրա, որովհետև աղջկան շները գերի էին տա-

րել: Մինչև հիմա էլ քթածակներիցս ծուխ է դուրս գալիս էն աղջկա կորուստը մտաբերելիս:

Կավալերիստը, որ ժպտում էր Զավարյանի պատմության ժամանակ, հարցրեց:

— Հիմա որ էդ աղջկան տեսնես, կճանաչե՞ս:

— Գլուխս չեմ կարող գովել, քանի որ երեսը կարգին չտեսա:

— Քո ասած աղջիկը սա է, Զավարյան...

— Ի՛նչ ես ասում, այ մարդ, էսօր դու որոշել ես ինձ գժվացնե՞ս...

— Ախր ի՞նչպես թե, աղջիկ ջան, ինձ մի բան հասկացրու,— դիմեց Զավարյանը Ցողիկին՝ ոչ մի կերպ չհավատալով, որ նա այն աղջիկն է, որովհետև հերոսուհուն արդեն նահատակված էր համարում:

— Ճիշտ է ասում, ես եմ, հայրիկ ջան,— արցունքների միջից տխուր ժպտալով և Զավարյանի դեմքին նայելով ասաց Ցողիկը և հանգամանորեն պատմեց այն օրվա դեպքերը:

— Վա՛յ, ես էն հողին ու ջրին մեռնեմ, որ քեզ նման բալա է ծնել,— բացականչեց զգացված Զավարյանը և մոտենալով նրան, ասաց,— Թող ճակատդ համբուրեմ: Ուրեմն Գրիգորյանը քո նշանածն է՞ր:

— Պիտի լիներ, հայրիկ ջան...

Ասաց Ցողիկն ու նորից սկսեց արտասվել:

Մի առժամանակ բոլորը լուռ էին, ապա երբ Ցողիկը մի քիչ հանգստացավ, նորից վերսկսվեց զրույցը: Զավարյանի խնդրանքով Կավալերիստն սկսեց պատմել Վարդանյանի, Գրոմովի ու իր գլխով անցած դեպքերը, որոնք հիացմունք պատճառեցին Զավարյանին:

«Այ քեզ Կավալերիստ»,— մտքում կրկնում էր Զավարյանը՝ նրան ունկնդրելով և հաճախ գլխով անելով:

— Հայրիկ, դե մի ասա, այդ ի՞նչ աղջիկ է, որ նստած է մոտդ ու քեզ պապա է ասում, չնայած երևում է, որ ռուսի աղջիկ է, քոնը չէ,— հարցրեց Ցողիկը:

— Սրա պատմությունը, աղջիկ ջան, մի քիչ երկար է։ Ճակատ մտնելուս նախօրյակին ես պատահմունքով մտա սրանց տուն՝ բլինդաժը կրակ տանելու համար։ Էս էրեխեն էնպե՜ս մի ընդունեց ինձ, վազելով գիրկս ընկավ՝ «պապա ջան» բղավելով, որ շատ ազդեց սրտիս վրա։ Էն մարդը կհասկանա, որ հինգ երեխա ունի։ Սիրտս ավելի լցվեց, երբ սրա հանգուցյալ մայրը բացատրեց, թե հոր սև գիրն էկել է, ու էրեխեն ինձ հոր տեղն է դրել... Էդտեղ ես երդվեցի իմ մեջ, որ եթե բախտ ունենամ աշխարքիս վրա ու պատահի, կրակի բերանից ետ վերադառնամ, անպայման մեկ էլ այցի գնամ էդ ընտանիքին։ Վիրավորվելուց հետո երկու ամիս պառկեցի սրանց հարևան գյուղի հիվանդանոցում ու երբ էս երկու օրը նոր ուղեգիր ստացա, թույլտվություն վերցրի ու նորից գնացի սրանց տունը։ Եվ ի՜նչ տեսա... էս խեղճ դառնուկի մայրը մահացել էր ու էրեխեն մնացել էր անտեր։ Հարևաններից իմացա, որ մոտիկ ազգական կամ բարեկամ չունի և հենց էնտեղ որոշեցի սրան որդեգրել։ Ասի՝ տանը հինգն ունեմ, թող դառնան վեցը։ Ասի՝ սա որ ինձ հայրիկ է ասել, նամարդություն կլինի անտեր թողնելը... Վերցրի, հետո բերի, բացատրեցի ու խնդրեցի։ Թույլ տվին, որ հետո բերեմ։

Վիրավորներին սպասարկող քույրերից մեկը մոտավ կուպեն՝ մատուցարանը ձեռքին և ընթրիք բաժանեց այնտեղ եղողներին։

Ցոլիկը հրաժարվեց ուտելուց, որովհետև ախորժակը չուներ ու խորասուզվեց մտքերի մեջ։

«Ի՜նչ հիանալի ու մեծ սիրտ ունի այս բանակայինը», մտածում էր նա Զավարյանի մասին՝ անդրադառնալով երբ մանկանը որդեգրելու նրա պատմությանը։

«Այդ հենց իմ ժողովրդի մեծ ու ջերմ սրտի մարմնավորումն է», շարունակում էր մտածել նա։ Ապա Ցոլիկի միտքը վերստին դառնում էր իր անհատական

486—15

կյանքի տրագեդիային, իր կարևոր և գերագույն վըճռին:

Ապա նա նորից էր մտածում Գրիգորի անդարձ կորստի մասին: Այդ դեպքից հետո, անցած ժամանակամիջոցում, դժբախտ ժամերին իր միտքը շարունակ կլանող պեսսիմիստական՝ լինել չլինելու հարցը այժմ նորից գլուխ բարձրացրեց վշտի կրակից լափվող նրա ուղեղում:

Երբեմնի շատ գեղեցիկ, իսկ այժմ մաշված ու հյուծված դեռատի այդ աղջիկը հարց էր տալիս իրեն, թե արդյոք արժե՞ նրանից հետո ապրել... Ավելի լավ չէ՞ կտրել կյանքի հետ կապող և այժմ արդեն մահու չափ պատճառող բոլոր թելերը, այրել բոլոր կամուրջները հետևում և դիմել այն ափը, ուր հավերժական մոռացումն ու անէությունն է թագավորում... Բայց մի ներքին ձայն, սկզբում երկչոտ, սակայն գնալով ավելի ազդու, լռել էր անում իրեն ու այլ հարցեր էր առաջադրում: «Մի՞թե կյանքում միայն զույգերի սիրո մեջ է երջանկությունը: Արդյոք չկա՞ և մի ուրիշ սեր, չկա՞ մի այլ հանդրվան, ուր հնարավոր լինի խարսխել իր կյանքի նավը»:

Դա մատաղ հոգու խորքերից եկած այն ոսկյա լարերի ազդեցիկ ձայնն էր, որոնք չափից ավելի պինդ են ձուլված կյանք կոչվածի հետ, ամեն մի առողջ ու երիտասարդ մարդու մոտ:

Վշտի կրակում ավելի մաքրված աղջկա հոգին ելք էր որոնում, և նա մտածում էր, որ կարելի է բոլորանվեր սիրով, ամբողջ էությամբ նվիրվել մերձավորներին ու հարազատներին և ժողովրդյան այն սուրբ գործին ու պայքարին, որը մղվում է հանուն բարու և ազնվության հաստատման, երջանկության հաստատման համար՝ ամբողջ աշխարհում:

«Եվ մի՞թե դա երջանկություն չի բերի մարդուն...»

Ապա նա նորից էր հիշում Գրիգորին՝ խրամատում

ընկած ու մտածում էր նրա կիսատ մնացած դիսերտացիայի մասին...

«Ճիշտ է, կիսատ մնաց, նա, անկախ իրենից, չպաշտպանեց իր փայփայած դիսերտացիան «Պուշկինի և Թումանյանի արվեստի մասին», բայց նա իր կյանքը դրեց այն հոյակապ ու գալոց բոլոր դարերի հետ առնչվող դիսերտացիայի մեջ, որն այնպե՜ս հաջողությամբ պաշտպանում են Սովետական Հայրենիքի ժողովուրդները, հերոսական ռուս ժողովրդի գլխավորությամբ... Ապա նա մտածում էր Վարդանյանի և նրա ընկերների մասին:

Մտքերով տարված՝ նրա քունը տարավ և կես քուն, կես արթուն, նրա ականջին ընկավ մի շատ քաղցր, թախիծով լի երգի ձայն, որի ջերմությունից կարծես հալվեց աղջկա սիրտը պատող սառույցը:

«Նանիկ բալա, Նանիկ, հասնենք Հայրենիք...»— երգում էր Զավարյանը՝ փոքրիկ աղջկան իր գիրկն առած, որն իր խարտյաշ գլուխը հենել էր նրա կրծքին ու քնել էր:

— Ա՛խ, Հայաստան հասնենք, էլ բան չեմ ուզում,— ասաց Զավարյանը՝ երգն ընդհատելով ու դիմելով կավալերիստին:

— Իմ մուրազն էլ էն է, որ շուտով Մախաչկալա հասնենք և առողջանալուց հետո գնամ, էլի միանամ Վարդանյանի պարտիզանական խմբին,— պատասխանեց կավալերիստը:

Ապա լռություն տիրեց և միայն լսվում էր սանիտարական գնացքի անիվների թեթև աղմուկը:

Գնացքը սլանում էր առաջ ու առաջ՝ կայարան կայարանի հետևից թողնելով, սլանում էր և ժամանակի անկանգ վիթխարի էքսպրեսը, որի ընթացքն սկիզբ ու վախճան չունի և որի կարգավորիչի մոտ, այդ ժամանակ կանգնած մարշալական հագուստով մարդը իր գերբնական, վիթխարի լուսարձակների հզորություն ունեցող աչքերը հառած գալիք դարերին, անցած ու ներկա օրերի արնաներկ մուժի միջով վարում էր այդ

մեքենան՝ մարդկությանը երջանիկ ափեր տանելու համար...

***

... Մայիսյան առավոտ էր: Երևանյան չքնաղ գարունը արբեցնող բույրեր էր սփռել վաղորդյան օդում: Հորիզոնում արդեն բավական բարձրացած զվարթ արևը ոսկեղեն մատներով հավաքում էր անտես ձեռքով՝ այգիների գունաճոխ ծաղկունքի տերևների կանաչ ծովի վրա գիշերով շռայլորեն թափած հակինթները...

Գարնան հանդեսն էր, ցնծում էր բնությունը: Մեղուները՝ դեղին ու նարնջագույն փոշով բեռնված, ցողաշաղախ ոտերը փայլեցնելով մխրճվում էին ծաղկե բաժակների մեջ ու քաղցր բզզում... Թռչունները ճռվողյունով սեր էին երգում՝ ճյուղից ճյուղ թռչելով:

Նորքի այգիներից մեկում, այդ առավոտյան մի ծերունի էր աշխատում: Նա զբաղված էր ծառերը ջրելով: Տեսնելով որ բավականին ջուր լճացավ թթենու տակ, նա բահով ջուրն ուղղեց դեպի մոտիկ խնձորենին, ապա կզակը հենելով բահի կոթին, որ բռնել էր մի ձեռքով ու ծաղկած կեռասենու նման գլուխը փոքր ինչ խոնարհելով, սկսեց մտասույզ դիտել առվակի անաղմուկ հոսող պղտոր ջուրը, միանգամայն անտարբեր՝ շուրջը ծավալված բնության հանդեսի ուրախ ձայներին:

«Չի համաձայնվում, բայց շատ սխալ է, ջահել է ասենք, պետք է համոզել...»— մտածում էր նա:

— Ցողի՛կ, եկ այստեղ,— հանկարծ ձայնեց ծերունին:

— Գալիս եմ, հայրիկ,— հնչեց զրնգուն պատասխանը․ ապա, սանդուղքներով արագ իջավ Ցողիկը և վիթի հմայիչ քայլվածքով դիմեց դեպի հայրը:

Նա թեթև սարսռաց շավղով անցնելիս, հարմոնիկ դիմագծերը փոքր ինչ ցնցելով, երբ ծառի ստորին ճյուղից մի ցողոտ ոստ քսվեց դեմքին, սակայն միա-

ժամանակ անբացատրելի ուրախ զգացում ունեցավ, որից աչքերը ճառագայթեցին:

Այդ՝ երկրորդ գարունն էր նա դիմավորում Թիկունքում իր անփոխարինելի կորստից հետո, և կրծքում անթեղված վիշտը գնալով մեղմանում էր կարծես:

Ցոլիկը մոտենալով հորն ու նկատելով վերջինիս ամչախոհ հայացքը, ինքն էլ ամչացավ:

— Աղջիկս, շատ եմ մտածում և գտնում, որ դու սխալվում ես...— ասաց հայրը, երբ Ցոլիկն արդեն իրեն մոտ էր:

«Ձեռք չի քաշում, դարձյալ նույն բանը»,—մտածեց աղջիկը՝ կռահելով հոր միտքը, և նրա դեմքը հրդեհվեց արչալույսի վարդագույնով:

— Ախր անցյալ օրն էլի եկել էին...

— Ձեմ ուզում, հայրիկ, հո պարտադիր չէ՞...

— Ի՞նչու, աղջիկս...

— Ձեմ ուզում, հայրիկ, ամուսնանալու մասին ես չեմ մտածում ու շատ եմ խնդրում ինձ հանգիստ թողնես:

— Որդի, էդպես ո՞նց կլինի...

Ցոլիկը մի քիչ լռելուց հետո ասաց.

— Հայրիկ, ես հիմա հիվանդանոց եմ գնում: Ընկերուհիներիցս մեկը զանգահարեց, ասում է՝ նոր բերած վիրավորների մեջ մեկը կա, ինձ է հարցնում: Գնամ մի տեսնեմ՝ ո՞վ պիտի լինի, մեր բարեկամների՞ց, թե՞ իմ ընկերներից:

— Հա՛, որ էդպես է, շուտ արա գնա. միայն ասածիս մասին լավ մտածի:

Ցոլիկը գնաց, իսկ հայրը դեռ նայում էր առվակի ջրին և մտածում:

✻✻✻

«Ո՞վ կարող է լինել», հարց էր տալիս ինքն իրեն Ցոլիկը, փութկոտ քայլելով զառիվար ճանապարհով. «Անպայման չորս ազգանուն տվեց՝ «կարծեմ Վա-

բույան է, կարծեմ Վարդումյան, կարծեմ...»— ա՛յ դու գետնի տակն անցնես քո «կարծեմներով»․ խակ և խակ ցնդած...

Եվ այսպես, Ցոլիկը մտքում ընկերուհուն հանդիմանելու հետ միաժամանակ, շարունակում էր ենթադրություններ անել. «Իսկ եթե հանկարծ Վարդանյան լինի...»

Այդ անվանն անդրադառնալիս, նա տարամերժ զգացումներ էր ունենում. ուրախանում էր, որ կտեսնի նրան, ով իր պատիվն ու կյանքը փրկեց, տխրում էր մտածելով, թե արդյոք ի՞նչ վիճակում կգտնի նրան, որից վաղուց ոչ մի տեղեկություն չուներ, չնայած մի երկու անգամ նամակով դիմել էր նրա ծնողներին՝ տեղեկություն խնդրելով, բայց Վարդանյանի ծնողները ոչինչ չգիտեին։

Ցոլիկն աշխատում էր վերհիշել Վարդանյանի դեմքը, սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ, այդ բանը փորձելիս Գրիգորյանի պատկերը վերակենդանացավ նրա հիշողության մեջ...

Ցոլիկն այդ իր երևակայության պատրանքն էր համարում ու գտնում էր, որ Վարդանյանի դեմքը հիշելու իր անզորությունը առաջանում է նրանից, որ ինքը զգաստ աչքերով չի դիտել նրան։

«Եթե նա լինի, ինչքա՞ն ու ի՞նչ կերպ պիտի հատուցեմ մեծ երախտիքը...»

Ցոլիկը հասավ հիվանդանոց, ճեպով բարձրացավ աստիճաններով, գտավ հերթապահ քույրերից մեկին, որը միջանցքում, պատուհանի մոտ կանգնած զրուցում էր հենակավոր մի վիրավորի հետ և նրանից տեղեկանալով, թե որ պալատում են տեղավորել նոր բերված վիրավորներին, խալաթ հագնելով շտապեց այնտեղ։

Երբ մտավ պալատ, հենց դռների մոտ հանդիպեց իրեն զանգահարող ընկերուհուն և հարցրեց, թե որտեղ է պառկած իրեն հարցնող վիրավորը։

Ընկերուհին ցույց տվեց և ասաց.

— Ջանիկս, ես դեռ չեմ էլ խոսել այդ տղայի հետ, է՛, քանի ժամ է՝ քնած է:

Ցողիկը մոտեցավ ցույց տված մահճակալին և իսկույն այլայլվեց՝ դիտելով քնած վիրավորի դեմքը:

«Այս Գրիգո՞րն է հարությունն առել...»— շնչահեղձ մտածեց Ցողիկը ու աշխատեց տարբերիչ գծեր նկատել այդ դեմքի և զոհված Գրիգորյանի դեմքի միջև: Այդ դիմագծերը մի քիչ ավելի կոպիտ և լայն էին ու վերջապես այտին եղող փոքրիկ, մազոտ խալը ահավատչյան էր այն բանի, որ դա Գրիգորը չէր...

«Ո՞րտեղ եմ տեսել... այո, քարայրում, այնտեղ... Վարդանյանն է...»— եզրակացրեց Ցողիկը և խորին հուզմունքով նստեց մահճակալի մոտ դրված աթոռին՝ հայացքը չկտրելով քնած վիրավորի դեմքից:

Հանկարծ տղան արթնացավ և շուրջը նայելով, ձախ ձեռքով կրծքից հետ նետեց վերմակը, որի տակից երևաց բազկից կտրված և բինտով կապված թևը...

Ցողիկը տեսնելով կտրված ձեռքը, սկսեց հեծկլտալ:

— Ինչու ե՞ս լալիս,— ասաց Վարդանյանը՝ վարանելով:

— Չե՞ս ճանաչում,— մրմնջաց աղջիկը արցունքոտ աչքերը գորովալից հառելով նրան:

Տղան տխուր ժպտաց՝ ճանաչելով Ցողիկին ու ձեռքը պարզեց՝ ողջունելու համար:

Աղջիկն այդ ձեռքը սեղմեց իր երախտապարտ սրտին և թրջեց արցունքներով:

— Ինչո՞ւ գոնե ձերոնց չէիր գրում,— հարցրեց Ցողիկը:

— Պատմությունը շատ երկար է,— ասաց Վարդանյանն ու ջուր խմելուց հետո սկսեց պատմել իր կյանքի «Ողիսականը»: Նա պատմեց իր պարտիզանական խմբի հարձակման մասին՝ գերմանական համակենտրոնացման ճամբարի վրա, ինչպես և այն մասին, թե ինչպես այնտեղի գերիներին ազատելուց հետո իրենք միացել են մեր առաջավոր զորամասերին:

Ունկնդրելով Վարդանյանին ու հայացքով սուզվելով նրա բիբերի մեջ, Ցողիկին նորից համակեց պատրանքը: Նրան թվում էր, թե դա Գրիգորն է, որ նա չի զոհվել, և որ դա մի չար երազ է եղել միայն...

... Դրսում, հիվանդանոցի պատուհանի մոտ, ծառի ծաղկափթիթ ճյուղին՝ թռչունները սեր էին երգում ու այդ զգացմունքը, որ Ցողիկը ցավագին ճիգերով, սեփական սրտի դեմ ոգորելով աշխատել էր խեղդել իր մեջ Գրիգորյանի կորուստից հետո, այժմ ընդվզեց, ելավ ափերից՝ գարնան վարարած ջրերի նման... Նրա սիրուն աչքերն այնպես ջերմին էին նայում Վարդանյանի դեմքին, որ տղան մոռանում էր վերքի կսկծալի ցավերը: Այդ կյանքն ինքն էր բազկատարած ընդառաջում նրան, կյանքը, որի հանդեպ մի փոքր սառել էր Վարդանյանը՝ ձեռքը կորցնելուց հետո:

Եվ այդպես, այդ առավոտյան երբեմնի գերված աղջիկը նորից «գերվեց», ի տրիտուր դրան, ինքն էլ մի կորիճ «գերի» վերցնելով...

Շուրջը գարուն էր:

Պատ. խմբագիր՝ Հ. ՄԿՐՏՉՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՖ 02344. Պատվեր 486. Տիրաժ 3000. Տպագր. 15 մամ. Հեղ. 9,8 մամուլ. Հանձնված է արտադրության. Ստորագրված է տպագրության 15/IV—1947 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչ. Վարչ. № 1 տպարան, Լենինի, 65 Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029348

ԳԻՆԸ 10 Ռ․

A II/29348